

Վ. Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅ

ԳՐԱՎՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՅ



002 (479.25)



Վ. Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅ

ԳՐԱՆՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՅ



A $\frac{1}{25419}$



Գրախոս և խմբագիր՝ բանասիրական գի-
տությունների դոկտոր, պրոֆեսոր Ս. ՍՍ.ՐՆՅԱՆ

Վարդանյան Վ. Մ.

վ 301 Հայ գրահրատարակչության պատմությունից.— Եր.:
Հայաստան, 1987.— 192 էջ, նկ.:

Հենվելով նորահայտ հարուստ արխիվային փաստաթղթերի վրա,
հեղինակը ներկայացնում է Թիֆլիսի և Կովկասի հրատարակչական
ընկերությունների կատարած գրական դերը՝ հայ հասարակական
կյանքի, մշակույթի, գրականության, արվեստի, գիտության, ազ-
գային արժեքների ստեղծման ու զարգացման պատմության մեջ:

Քննարկված է հրատարակչական ընկերությունների վարած գրա-
կան բաղադրականությունը, հանգամանորեն բնութագրվում ու վեր-
լուծվում է նրանց զործունեությունը ըստ մշակույթի պատմության
գլխավոր օղակների՝ ղեկավարվողական գրականություն, բանասյու-
սության, պատմագրության, թարգմանական գրականության:

Նախատեսվում է բնթերցող լայն շրջանների համար:

4501000000

4 701 (01) 87 156—87

ԳՄԴ 76.1Դ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բարեգործական ընկերությունների կազմավորումը հայ իրականության մեջ տեղի ունեցավ XIX դարի սկզբին: Դա ազգության ձևավորման պատմական պրոցեսի յուրահատուկ էթնիկական կոնսոլիդացիայի արտահայտություններից մեկն էր, ուրով բուրժուականացող հասարակությունը ժողովրդի տնտեսական, սոցիալական, կուլտուրական ու բարոյական կյանքի կազմակերպման հաստատություններ է ստեղծում, նպաստելով ազգի ընդհանուր առաջադիմությանը: Ըստ իրենց կոնկրետ բնույթի ու ծրագրերի այդ ընկերությունները բազմազան էին՝ հայրենասիրական, ուսումնասիրաց, վարժապետական, ընթերցասիրական, կրթասիրական, հրատարակչական, գրաշարների, թատերական, աշխատասիրաց, մարդասիրական, որբախնամ և այլն: Եղև ինչպես կրոնական ընկերություններ՝ «Ս. Մսկեանց ընկերություն» (Եվդոկիա), «Ի սէր Յիսուսի Աղքատացելոյն ընկերություն», «Ս. Ստեփանոսի Նախավկայի ընկերություն» (Ադրիանապոլիս), «Ամենայն որբոց ընկերություն» (Մարզվան) և այլն: Ինչպես նկատել է պատմաբան Ե. Պողոսյանը «թուրքահայերը ստիպված էին յահաճախ իրենց դպրոցներու պաշտպան ընկերութիւններու անունը կնքել կրոնական կամ բարերարական տիտղոսով մը՝ կասկածանքի ու հալածանքի շնթարկելու համար»¹: Ավելիքն, եղև ինչ ընկերություններ, որոնք, երկյուղ կրելով սուլթանական բռնակալությունից ու տիրող կարգերից, գործել են առանց հիշատակելու իրենց անունն ու տեղը, հիմնադրման թվականն ու կանոնադրությունը: Այսպես, 1861 թ. Պոլսում

¹ «Հանդես ամսօրյա», 1951, էջ 538:

հիմնադրված «Գրասիրական հրատարակչական ընկերությունը» որոշում է շրջապարակել իր անունն ու նպատակը, որպեսզի շանցնի «...այնպիսի ազգային ընկերությանց տխուր կարգին, որոնք անուամբ միայն եկան, դացին, անհետացան...»¹։ Ղալաթիոյի «Հայ գրական ընկերությունը», որի նպատակն էր «Ածանցնել օգտակար գրքեր տպել և զլիաժորապես դաւառոց մեջ ընթերցանութիւնը վարդացնել», նպատակադրվում է «...բոլորովին անծանօթ մնալ ու աշխատել առանց հայտուելու...»²։

Ինչպես վկայում են փաստերը, մշակութային ընկերություններ կազմակերպողներն ու ղեկավարները եղել են դարի առաջադեմ գործիչներն ու անվանի գրողները, որոնք ցանկանում էին նոր ուղղություն ու բովանդակություն տալ ազգի լուսավորությանը։ Այսպես, Արեւտահայաստանում մի շարք ընկերությունների հիմնադրումը կապված է Միքայել Նալբանդյանի, Հարություն Սվաճյանի, Գարեգին Սրվանձեղյանի, Մկրտիչ Պեշիկթաշլյանի, Մաթեոս Մամուրջանի, Երվինար Արփիարյանի, Գրիգոր Զլիլնիկոյանի, Սիպիլի, Գրիգոր Օսյանի և ուրիշների անվան հետ։

Ազգային ընկերություններից շատերը հետապնդում էին ուսումնական հաստատությունները պահելու, նյութական օժանդակություն ցույց տալու կամ ազգային կրթությանն ու լուսավորությանը նպաստելու նպատակ։ Նման ընկերությունների կազմակերպումը կապված էր որոշակի դժվարությունների հետ՝ անհրաժեշտ էին համեմատաբար նյութական մեծ միջոցներ, համախմբել գրողներին ու թարգմանիչներին, ստեղծել տպարան և այլն։

Առաջին հայ հրատարակչական ընկերությունը հիմնվել է Պոլսում՝ 1812 թ. Հովհաննես Տյուղյանի նախաձեռնությամբ և հայտնի է «Արշակունյանց ընկերություն» անվամբ։ Նրա նպատակն էր «...ձեռվեհեռնե եկածին չափ ջանդ բնենե, ստակ՝ խարն չինալին, որչափ պետք ըլլալ տան, որ եղած ուսումնական գրքերուն վրալ, տահա ալ լնորանոր գրքեր շինել տան գիտնոց,— ու տպել տան, որով իր ազգը կարէ ան շատէն քիչը կարգայ սորվի, իմաստութեան անոյշ համը առնէ»³։ Իր կարճատև գո-

¹ «Հանդես ամսօրյա», 1957, էջ 345։

² Նույն տեղը, 1953, էջ 606։

³ «Դրասկ Բիզանդիան», Վենետիկ, 1813, № 1, էջ 8։

յության ընթացքում (ընդամենը յոթ տարի) ընկերությունը, որոշ գրքերի տպագրությունից բացի, հրատարակեց «Ազգասերը», այլև հոգաց «Դիտակ բիւզանդական» և «Նշանակ բիւզանդական» պարբերաթերթերի ամբողջ ծախսը:

«Արշակունյաց ընկերությունը» ունեցաւ իր հետևորդները: Տարիներ անց՝ 1841 թ. մարտի 1-ին, դարձյալ Պոլսում, բացվեց «Ուսումնական ընկերությունը», որի նպատակների մասին հետևյալն է ազդարարում ընկերության կանոնադրության «Նախաշաղիղդ». «Հայոց գրականութիւնը ընտիր ուսումնական մատենաներու կողմէ պակասութիւն մը չունենալով թէև Եւրոպայու մշակեալ լեզուներուն հետ կրնայ մրցիլ բայց խրթին ըլլալովին ու առ հասարակ ժողովուրդն ալ գրաբառ լեզուին տեղեակ չըլլալով, մէջիդին գիրք կարգաւը օգտակար ու զուարճալի ըլլալուն տեղը՝ կերելի որ ձանձրացուցիչ բան մը կըլլայ, որով ազգերուս մեջ չէ թէ միայն գիտութիւնը առաջ չերթար, այլ մանաւանդ մեր գրականությանը ու հեղինակներուս յարգն այլ չենք կրնար ճանչնար: Այս գլխաւոր պակասութիւնը տեղ-տեղ քանի մը անկանոն աշխարհաբառ ու զատ տաճկեւլար գրքեր շարագրողներու՝ յորդոր ըլլալով... Բանի մը հոգի մեկ տեղ ժողովրդելով՝ ամէնն ալ հայերեն խօսել կարծելով, մէկմէկու խօսք հասկընալու բարգմանաւ չեն կրնար գտնար... Եւ որովհետև ասանկ ազգու երկիւղը ամեն ազգասէրները արքնացնելով զգայացնելու է, անոր համար Պոլսոյ մեջ Բանի մը հայրենակիցներ մեկ ըլլալով՝ Ուսումնական ընկերություն մը հաստատեցին, ջանքով ու ստրկով կենդանացնելու համար ուսումը»¹ Ջեոքի տակ չունենալով համապատասխան նյութեր, դժվարանում ենք ասել, թե քանի՞ տարի գոյություն ունեցավ ընկերությունը և ի՞նչ բնույթի գրքեր հրատարակեց: Սակայն, ելակետ ընդունելով նրա կանոնադրությունը, կարող ենք ասել, որ ընկերության գործունեության հիմքում դրված էին ազգային գաղափարախոսության և մշակույթի զարգացման, նոր գրական լեզվի մշակման, անմիջապէս լեզուն միասնական դարձնելու հարցերը:

1850—60-ական թվականներին Արևմտյան Հայաստանում նոր թափ է ստանում լուսավորական և ազգային ազատագրական շարժումը՝ կապված նոր թանգիմաթի (1856 թ.) և 1860

¹ «Հանդես ամսօրյա», 1957, էջ 331:

Թվականին հաստատված Աղգային սահմանադրության հետ: Այդ օրենսգրքերով թուրքական կառավարությունը խոստանում էր իր տերիտորիայում բնակվող այլազգիներին տալ ազատություն: Հիշյալ տարիներին ստեղծվում են երեք հրատարակչական ընկերություններ. «Ընթերցասիրաց» (1852), «Տպագրական» (1859), «Գրասիրական» (1861), որոնք նշանակալի շահով նպաստեցին հայ դպրոցի և կրթության բարեկարգմանը:

Բեղմնավոր է եղել հատկապես Պեշիկթաշում հիմնված «Հայկադյան ընկերության» գործունեությունը, որը բարձր գնահատականի է արժանացել ժամանակի հայ պարբերականների կողմից: Այսպես, «Զեփյուլը» խոսելով բազմաթիվ ընկերությունների մասին, որոնցից շատերը սնկի պես բուսել և անհետացել են, օրինակելի ընկերություն էր համարում «Հայկադյանը», որն իր հաշվին շուրջ 24 տարի տպագրել է «Նախակրթական գրքեր և էժան ծախել»: Ըստ ընկերության կանոնադրության, նա պետք է գործեր տասը տարի, և եթե գործը հաջողություն ունենար՝ դարձյալ տասը տարի, իսկ եթե ոչ՝ ապա իր ունեցած գրքերն ու հավաքված գումարը պարտավոր էր բաժանել կարիքավոր հայկական դպրոցներին: Ընկերությունը հիմնականում հրատարակում էր տպագրության միջոց շտնեցող գրողների գործերը և հնարավորության դեպքում նրանց վարձատրում:

Ընկերությունը հրատարակում էր գերազանցապես դասագրքեր: Այսպես, մինչև 1863 թ. լույս է ընծայել «Առաջնորդ հայ ընթերցանության կամ նոր քերական», «Թուադիտություն համառոտ», «Քերականական վերլուծություն», «Անգլիացի Պետրոս», «Բարոյական Պլուտարխիայ» (Բ և Գ հատոր):

70-ական թվականների ռուս-թուրքական պատերազմին հաջորդած քաղաքական ռեակցիայի պայմաններում որոշակի անկում ապրեց մշակութային ընկերությունների գործունեությունը: Եթե մինչև 80-ական թվականներն արևմտահայ տպագիր խոսքն ուներ որոշ ազատություն՝ գրաքննության բացակայության պատճառով, ապա 1880 թվականին օսմանյան կառավարությունը ստեղծում է գրաքննչական կոմիտե: «...Որեւէ գիրք, — գրում է Վրթանէս Փափաղյանը, — տպագրելուց առաջ պետք էր ներկայացնել գրաքննիչներին: Սա կարող էր ձեռագրի մեջ ջնջել ուղածը, ամբողջ աշխատությունը արգիլել հրատարակելու և ձեռագիրն

էլ գրտվել. և, կամ, հաճախ իր թելադրածը ավելացնել ձեռագրի մեջ և ստիպել տպելու: Օրենք. չկար. և եթե կար՝ ձեռնար միայն: Քմահաճույքն ու սուլթանի կամքն էր օրենքը: Սուլթանին սիրելի դառնալու և կասկածի տակ ընկնելու սարսափի շափով՝ ցենզուրական խստություններն ավելանում էին օրեցօր»¹:

Վիճակը չփոխվեց նաև երիտթուրքերի օրոք: «Ազատամարտի» վկայությամբ, 1910 թ. մարտին Պոլսի հայ ինտելիգենցիան հինկելով տեղական պայմաններից ու պահանջներից, աննշան փոփոխություն է մտցնում «Կովկասի հայերին գրքերի հրատարակչական ընկերության» կանոնադրության մեջ և նույն սկզբունքով ստեղծում «Թուրքահայ հրատարակչական ընկերություն»²: Նորաստեղծ ընկերությունը ցանկանում էր «Տալ ժողովրդին իր իմացական պահանջներուն համապատասխան լատագոյն դործերը, դիւրամատչելի դիւներով, այս կերպով սատարել՝ հայ գրողին արժանիքին և աշխատութեան գնահատումին»³: Ընկերության առաջ դրված խնդիրները իրականացնելու նպատակով, նրա կազմակերպիչները գտնում էին, որ «...պետք է խթանել հայ գրողներու նախաձեռնության ջիղերը՝ և հավաքական եռանդով անցնել դեպի գործնական աշխատություն»⁴:

Այդ ընկերության միջոցով արեւմտահայ մտավորականությունը ցանկանում էր ոտնակոխ արված իր իրավունքները պաշտպանել և նպաստել հայ ժողովրդի մշակույթի զարգացմանը: Նրա առաջին նիստին, յւր քննարկվել և ընդունվել է կանոնադրությունը, մասնակցել են ժամանակի անվանի մտավորականները և ընկերության վարչության կազմում ընտրել Գրիգոր Զոհրապին, Սիպիլին և այլոց: Ալ. Շիրվանզադեն և Զ. Նոայանը Փարիզից ողջունել են այդ նախաձեռնությունը ու իրենց պատրաստակամությունը հայտնել՝ ամեն կերպ աջակցել նորակազմ ընկերությանը⁵:

Սակայն հարցը այլ լուծում է գտնում շովինիստական գա-

1 Վ. Փափազյան, Գրականության մասին, 1962, էջ 238:

2 «Ազատամարտ», 1910, № 287:

3 Հայոց հրատարակչական ընկերություն, Կանոնադիրը, Պոլիս, 1910, էջ 3:

4 «Ազատամարտ», 1910, էջ 283,

5 Նույն տեղը, էջ 308:

շահարներով ու գործելակերպով առաջնորդվող երիտթուրքերի «իթթիհատ» կուսակցության պարագլուխների կամքով: Հետամուտ արևմտահայերի ազգային-ազատագրական պայքարը ճնշելու և ազգային մշակույթի զարգացումն արգելափակելու քաղաքականությունը, որի հետևանքով նկրտումները հանգում էին հայ ժողովրդի ֆիզիկական ոչնչացմանը, նրանք այնպես են խմբագրում ընկերության կանոնադրությունը, որ հայ մտավորականները հարկադրված եղան հրաժարվել իրենց նախաձեռնությունից: Այսպես, ընկերության կանոնադրության երկրորդ հոդվածը՝ «Ընկերությունը պիտի հրատարակի հայերեն ինքնուրույն և թարգմանված ամեն տեսակի գրքեր, բացի դասագրքերից», երիտթուրքերի կողմից խմբագրվել է հետևյալ կերպ. «Թարգմանություններու մեջ ընկերությունը կարելի եղածի շափ լայն տեղ պիտի տա թուրք հին և նոր գրականությանը՝ հայերուն ծանոթացնելու ծառայող ընտիր հեղինակներու, նկատի ունենալով, որ ատիկա օգտակար է ցեղային համերաշխությունը ամրապնդելու, ինչ որ իդեալ պետք է ըլլա ամեն ճշմարիտ օսմանցու...»:

Ըստ երկրորդ հոդվածի «Ընկերությունը պիտի ունենա կենտրոնական գրատուն մը Պոլսո մեջ և մասնաճյուղեր՝ թե՛ Թուրքիո, և թե՛ արտասահմանի համար զատված կենտրոններու մեջ, զլիափորաբար ուժ տալու համար ընկերության հրատարակություններուն տարածումին»: Վերջին բառը՝ «տարածումին» ջնջել և ավելացրել են հետևյալ պարբերությամբ. «Եվ օսմանյան ցեղերու համերաշխության ծառայող հրատարակություններու տարածումին»: Համաձայն կանոնադրության 35-րդ հոդվածի՝ խմբագրական մասնաժողովը գրքերի քննարկման և մրցանակաբաշխման հարցերում ազատ կարող է դիմել ձեռնահաս անձանց, իսկ ըստ խմբագրվածի «խմբագրական մասնախումբ կրնա նաև խորհրդակցել թուրք գրականության կարկառուն դեմքերուն հետ, այն հրատարակություններու ու մրցանակներուն համար, որոնք սահմանված պիտի ըլլան իր ծրագրին ցեղային համերաշխության ծառայող նպատակը իրագործելու»¹:

Բերված փաստերը հաստատում են, որ երիտթուրքերի որդեգրած «Թուրքիան՝ թուրքերի համար» նշանաբանն իր արտահայտությունն է գտել նաև մշակութային քաղաքականության

¹ «Հորիզոն», 1911, № 32, № 33:

ասպարեկում, ժողովուրդների համերաշխության անվան տակ թաքցնելով մեծապետական շովինիզմի բռնության իրավունքը:

Այդ իսկ պատճառով, ինչպես գրում է Պոլսի թղթակիցը, «թուրքահայ մտավորականության մեծագույն մասը ինքզինքը հեռու կը պահէ անիկե (հրատարակչական ընկերությունից — Վ. Վ.), որովհետեւ հրատարակչականը համազգային հիմնարկություն մը դարձած տեսնելու իրենց իդեալը չիրականացավ»¹: Այդ ընկերության գործունեությունը ավարտվեց Զապէլ Եսայանի «Ավերակներու վրայ» երկի հրատարակությամբ (1911), որից հետո լուծարքվեց:

2.

Արեւելյան Հայաստանում ազգային մշակութային ընկերությունների ստեղծման գաղափարը մտահոգել է դեռեւս մեծ լուսավորիչ խաչատուր Աբովյանին, ընկերություններ, որոնք բարեգործական նախաձեռնումներին ակնատես էր եղել Եվրոպայում ուսանելու տարիներին և որոնց արձագանքներն արդեն նշմարվում են արեւմտահայ ազգային օջախներում: Սակայն իս. Աբովյանի այդ ցանկությունը նրա մի շարք երազանքների նման մնաց անկատար: Ներեւա Աշտարակեցուն հասցեագրած իր նամակներից մեկում իս. Աբովյանը դառնությամբ գրում է. «Պոլսում, Զմյուռնիայում անտերունչ ազգը կազմում է ընկերություններ, ինքնահորդոր զոհաբերությամբ դպրոցներ է բաց անում բարբարոսների ժանիքների մեջ, էջմիածնում ազգի հավատի և լույսի աղբյուրին կից մեծանում են Գոմշագյուլը և բարեգարդում են անասունների գոմը... որպեսզի վանքի գոմեններն ու էջերն... զովանան լճերի մեջ և պարարտանան մեծակառույց գոմերի մեջ»²:

19-րդ դարի 50—60-ական թվականներին Անդրկովկասի տնտեսական և քաղաքական կյանքում տեղի են ունենում մեծ փոփոխություններ ու տեղաշարժեր: Քայքայվում են ֆեոդալական կարգերը, զարգանում են կապիտալիստական հարաբերությունները, ուժեղանում է գյուղացիների և քաղաքի մանր

¹ «Հորիզոն», 1911, № 39:

² Դիվան իս. Աբովյանի, հատոր 2, էջ 52:

արտադրողների շահագործումն ու քայքայումը: Հասարակական դարպացումը բնականաբար առաջադրում է ազգային լուսավորության, մշակույթի, դպրոցի, լեզվի, գրականության նորոգման պահանջը, որն ուղեկցվում է մամուլի, հրապարակախոսության վերելքով և թատրոնի ու մշակութային կրթական հիմնարկների և ընկերությունների ստեղծմամբ¹:

Ժամանակի ամենատառաջագնաց պարբերականը՝ «Հյուսիսափայլը» առանձնահատուկ սրովթյամբ էր արժարժում ժողովրդական լուսավորության, դպրոցի դեմոկրատացման, գրականության, լեզվի, հայրենական գիտության ու արվեստի հարցերը: Ստ. Նազարյանն ու Մ. Նալբանդյանը ազգային լուսավորության հարցը դնում էին սկզբունքային, արմատական վերափոխությունների դիտակետից, հասարակական միտքը շիկացնելով պահպանողական ու կղերական ուղղությունների դեմ դադափաբական կրքոտ բանավեճով: Այս իմաստով նրանք առանձնահատուկ նշանակություն էին տալիս մշակութային ընկերությունների գործունեությանը, առաջադրել խնդիրների ու հեռանկարների կենսագործման հիմնավոր ծրագրեր:

Այսպես, 1860 թվականի նոյեմբերին լինելով Պոլսում, Նալբանդյանը տեղի առաջագնաց գործիչների հետ մասնակցում է ընկերությունների հավաքույթներին, անդամագրվում բարեգործական ընկերությանը և, որ ամենակարևորն է, լեզալ «Ընթերցասիրաց» ընկերությանը կից ստեղծում ընդհատակյա ընկերություն՝ կաղմակերպչական ու քաղաքական որոշակի ուղղությամբ: Ըստ բանասեր-պատմաբան Ալպոյաճյանի, Նալբանդյանի այդ գաղտնի ընկերությունը ծրագրել էր ազատագրել Կիլիկիան²: Հետևելով Մ. Նալբանդյանի խորհրդին, Հ. Սվաճյանը «Մեղուի» էջերում հանդես է գալիս ինչպես ազգային-ազատագրական դադափարների, այնպես էլ մշակութային ընկերությունների ստեղծման և միավորման պրոպագանդայով³:

¹ Այդպիսի կաղմակերպություններից էին Ալեքսանդրապոլի «Հատիճի վանքի և հոգևոր դպրոցի ընկերությունը» (1850), Նոր Նախիջևանի «Մարդասիրական ընկերությունը» (1853), Էջմիածնի (1860), Ալեքսանդրապոլի (1862), «Ընթերցասիրական ընկերությունները», 1860 թ. Թեոդոսիայում և 1861 թ. Թիֆլիսում բացված «Կիրականօրյա դպրոցների խնամող ընկերությունները» և այլն:

² Հ. Սվաճյան, Հրապարակախոսություն, 1960, էջ 17—20:

³ Տե՛ս «Մեղու», 1860, № 170—172, 1861, № 122, 123 և այլն:

1862 թ. արտասահմանից վերադառնալով Պետերբուրգ, Մ. Նալբանդյանը, ինչպես վկայում է Գ. Պատկանյանը, ցանկանում է հայերի շրջանում կազմակերպել ընկերություն և հանգանակված նյութական միջոցները օգտագործել ազգի լուսավորության ու տնտեսական բարեկարգման նպատակին¹:

1860—1870-ական թվականներին Պետերբուրգում, Բաքվում, Թիֆլիսում, Երևանում, Շուշիում, Նոր Նախիջևանում, Ալեքսանդրապոլում և այլուր հիմնադրվում են ընկերություններ՝ կրթասիրական, բարեգործական, մարդասիրական, որբախնամ և այլն: Այդ ընկերությունները գերադանցապես ղեղավել են ազդային-կրթական և բարեգործական նախաձեռնումներով: Ինչպես վկայում են արխիվային փաստաթղթերը, հատկապես ղեկավարողներին կից կազմակերպված ընկերությունների գործունեության բնույթը փոխվում է 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո ստեղծված քաղաքական իրադրության, նոր կազմակերպված հեղափոխական ընկերությունների ազդեցության տակ²: «Բազմաթիվ օրինակներ ապացուցում են,— գրել է Կովկասյան դպրոցական շրջանի հոգեբարձուն Երևանի գիմնապիտալի դիրեկտորին,— որ հեղափոխական կազմակերպությունները ծնունդ են առնում այսպես կոչված ինքնակրթական ու ինքնազարգացման խմբակներում, որոնք երևան են գալիս աշակերտների շրջանում, մեծ մասամբ միջնակարգ դպրոցների բարձր դասարանների աշակերտության մեջ:

Սովորաբար այդպիսի խմբակները ծնունդ էին տալիս շարամիտ պրոպագանդիստներին: Նրանք գրադարաններում կազմակերպում են հավաքույթներ և ժողովներ՝ կարդացածի մասին ճառեր ասելու, դատողություններ անելու համար և այլն»³:

Հայտնի է, որ 70-ական թվականների ռուս-թուրքական պատերազմից հետո «հայկական հարցի» միջազգային քննարկումները ձախող ելք ունեցան: Եվրոպական դիվանագետները ավելի շատ զբաղված էին իրենց ներքին հակասություններով, քան հայ ժողովրդի ճակատագրով: Հայ առաջագեմ գործիչները,

¹ Աշ. Հովհաննիսյան, Մ. Նալբանդյանը և նրա ժամանակը, հ. 2, էջ 216:

² Հեղափոխական ընկերությունների մասին մանրամասն տե՛ս Մ. Ներսիսյան, Նարոդնիկական խմբակներն Անդրկովկասում, Երևան, 1940, և Վ. Պարսամյան, Հայ ազատագրական շարժումների պատմությունից, Երևան, 1958:

³ Հայկ. ՍՍՀ, ՊԿՊԱ, գ. 1813, էջ 11:

սակայն, չհուսահատվեցին և շկորցրին Արեմտյան Հայաստանի աղատագրական հեռանկարը և ավելի ակտիվորեն սկսեցին պրոպագանդել աղատասիրական գաղափարներ, ձեռնամուխ լինել գաղտնի և ոչ գաղտնի ընկերութունների կազմակերպմանը: Գր. Արծրունին հանդես է գալիս ոչ միայն միացյալ ընկերութուններ ստեղծելու գաղափարի պաշտպանությամբ (գրում է մի շարք առաջնորդողներ), այլև «Մշակում» հատուկ սյունակ է տրամադրում այդ ընկերութունների օգտին տրվող նվիրատվութուններին¹: Նա ազդի երկու հատվածների միջև կապի ստեղծման լավագույն միջոցը համարում էր մշակութային ընկերութունները: Այդ նպատակով նա մեծապես աջակցում էր 1876 թ. ապրիլի 15-ին Կ. Պոլսում Մ. Զեքալի, Մ. Փուրթուռլալյանի, Արփ. Արփարյանի և այլոց ջանքերով «Արարատյան բնկերության» կազմակերպմանը²:

«Մշակի» խմբագրի ցուցաբերած աջակցության մասին ընկերության տեղեկագրում գրված է. «Գրիգոր Արծրունին իր առաջնորդող հոգովածներով հրավեր կկարդար Ռուսիո Հայոց իրեն աղդեցութունը շնորհել Արարատյան ընկերության բարգավաճման. ուրախ ենք, որ պ. Գրիգոր Արծրունիսյ հրավերը ոչ միայն անխելի չը մնաց, այլև մեծ ընդունելութուն գտավ ռուսաբնակ հայոց մեջ, և քիչ ատեն Տփղիս, Ալեքսանդրոպոլ, Մոսկով, Բաղու, Փոթի, Սիմֆերոպոլ, Երևան, Ախլխա, Մատրաս, Սարատով, Պետրովսկ, Ղուբա, Սլավեանկա, Մեծ Ղարաքիլիսա, Վերին Ագուլիս, Դավալունման գյուղեր, Մոսկվա, Սեն, Բեթերպուրկ և այլն «Մշակի» էջերն լեցուցին իրենց նվիրատվությամբ: Դպրոցական հարկի տակ գտնվող պատանիք և աղջկունք Հայաստանի իրենց հասակակից եղբարք և քրեք վիճակին վրա խանդաղատյաք՝ եռանդեմբ մտանակցեցան նվիրատվության... կարծես Կ. Պոլիս ու Տփղիս, հայության այս երկու մեծ կենդրոններ Վասպուրական աշխարհի և Տավրոսի լեռանց լուսավորության համար առաջադիմության պայքար մը հարուցին»³:

Ազդի մեջ լուսավորութուն տարածելու նպատակով ստեղծ-

¹ Տե՛ս «Մշակ», 1876, № 35, 54, 67, 1880, №№ 69, 104, 115, 118:

² Ի դեպ, այդ ընկերության կազմակերպիչները Մ. Նալբանդյանի հիշատակը հավերժացնելու նպատակով մեռողի երկու ընկերութունը կոչել նրա անվամբ:

³ Տեղեկագիր «Արարատյան ընկերության», Կ. Պոլիս, 1879, էջ 5—6:

վող ընկերությունները տեղիք էին տալիս ընդհանուր ոգևորության: Այսպես ախալցխացի Նզիսաբեթ Մամիկոնյանը «Մշակին» ուղղված նամակում գրում է. «Ննդրում եմ բարեհաճեք բնդունել այս իմ ուղարկած 10 ուրբին «Արարատյան ընկերության» համար... Իմ կարծիքով անհրաժեշտ է և այսօր ամեն ինչ ազգասեր հայի այդպիսի չֆնաղ ընկերությանց համար ձեռք ձեռքի տված աշխատել և շինայել ձեռքից եկած օժանդակություներ... Գրիշ ունեցողը բող շինայի իր գրիշը... Լեզու ունեցողը բող խոսի, խրախուսե... փողի տե՛ր անձը բող մի փոքր եովորականից ավելի նվիրի, մտածելով, որ օտարին չէ տվածը...»¹:

Սակայն, ազգային առաջադեմ մտավորականության ջանքերը ալլատարր ու մասնավոր ընկերությունները միավորելու ուղղությամբ ալլակու էլ անկատար մնաց մինչև 19-րդ դարի 80-ական թվականները: «Համակրելի ձգտումներ ունեցող ընկերությունները բաղմանում էին,— գրում է Լեոն,— նրանք բոլորն էլ դիմում էին հասարակության, մի տեսակ մրցություն էին առաջ բերում. առանձին-առանձին ջլատված ուժերով գործելու ձգտում էին հանդես բերում: Կյանքը ցույց էր տալիս, որ այդ ջանքերը որքան էլ ինքնըստինքյան ազնիվ լինեն, չեն կարող առանձին շոշափելի արդյունք տալ, մի արդյունք, որ մասնավանդ համապատասխաներ ժամանակի արտադրած մեծ ու լայն պահանջներին»²: Հարցի կարևորությունը ժամանակին ընդգծում էր Գ. Արծրունին: «Զենք հավատում» առաջնորդող հողվածում³ պահանջ առաջադրելով ստեղծել մի այնպիսի համազգային մարմին, որն իր մեջ կենտրոնացներ ազգի կարող և ընդունակ ուժերը և գործեր ազգի ամբողջության համար՝ առանց կրոնի ու դավանանքի խտրության: «Մշակի» խմբագրի ջանքերով 1880 թ. հունիսի 1-ին տեղի է ունենում «Արարատյան», «Դպրոցասիրաց» և «Կիլիկյան» ընկերությունների միացումը՝ Այդ կապակցությամբ թերթը տպագրում է նորաստեղծ «Միացյալ ընկերությունից» ստացված հետևյալ հեռագիրը, «Զեռ (Արծրունու— Վ.Վ.) ջանքերը պսակվեցան երեք ընկերությունների միացությունը սկզբունքով ընդունված է պաշտոնապես»⁴:

¹ «Մշակ», 1879, № 18:

² Լեո, Գրիգոր Արծրունի, հ. 3, 1965, էջ 108:

³ «Մշակ», 1879, №№ 41, 43, 44:

⁴ «Մշակ», 1880, № 147:

Այսպիսով, բարեգործական և այլ ընկերությունների ստեղծումը 19-րդ դարում մեծապես նպաստում է հայ ժողովրդի կուտուրական ու տնտեսական բարեկարգությանը, աղգային պահպանությանն ու մշակույթի զարգացմանը: Նյութական և բարոյական աջակցությունը, ահաիվ մասնակցությունը բարեգործական սկզբունքով հիմնված տարբեր ընկերություններին՝ լավագույն ապացույց էին հայ ժողովրդի աղգային բարձր խնքնազիտակցության ու գաղափարական հասունացման:

19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայ մշակութային ընկերությունների շարքում առանձնահատուկ տեղ են գրավում Թիֆլիսի և Կովկասի հայ հրատարակչական ընկերությունները: Ինչու՞մ առաջագնահատում ենք հայ մշակույթի օջախներ, այդ ընկերությունները, ուսական և արտասահմանյան գրողների ստեղծագործությունների հրատարակման և տարածման միջոցով, հայ իրականությանը հաղորդակից դարձրին համաշխարհային գրականության, արվեստի ու գիտության հայտնություններին, նպաստեցին աղգային գրականության և մտավոր զարգացման առաջընթացին:

Հիշյալ ընկերությունների բեղմնավոր աշխատանքն ամենից առաջ պայմանավորված էր ժամանակի անվանի գրողների՝ Լ. Պատկանյանի, Ղ. Աղայանի, Պ. Պոռչյանի, Բաֆֆու, Հովհ. Հովհաննիսյանի, Հովհ. Թումանյանի, Ալ. Շիրվանզադեի, Ալ. Մատուրյանի, Ավ. Խաչակյանի, Նար-Դոսի, Դ. Դեմիրճյանի և հասարակական հայտնի գործիչներ ու թարգմանիչներ Գ. Բարխուդարյանի, Տ. Նազարյանի, Փ. Վարդանյանի, Հովհ. Խան-Մասեհյանի, Մ. Աբեղյանի և այլոց ակտիվ աշխատակցությամբ ու գործունեությամբ: Նրանք հրատարակչական ընկերությունները դիտել են որպես պետականությունից զուրկ հայ ժողովրդին առաջավոր գաղափարներով դինոդ և նրա մտավոր վերածնությանը նպաստող մարմին:

Թիֆլիսի և Կովկասի հայերեն գրքերի հրատարակչական ընկերությունների գործունեությունը տակավին չի դարձել առանձին ուսումնասիրության առարկա: Սույն աշխատությունը առաջին փորձն է այդ ուղղությամբ և նպատակ ունի պատմական տեսանկյունով բացահայտելու և արձեքավորելու այդ ընկերությունների նպաստը հայ գրականության, թարգմանական արվեստի, գրական կապերի և առհասարակ հայ հասարակական մտքի զարգացման գործին:

Աշխատանքի համար, որպես սկզբնաղբյուր, օգտագործել ենք
Երևանի, Լենինգրադի, Թբիլիսիի պետական կենտրոնական
ստատմական արխիվների և Հայկական ՍՍՀ կուլտուրայի մի-
նիստրության գրականության և արվեստի թանգարանի այն
Պոնդերը, որտեղ պահպանվել են այդ ընկերությունների գոր-
ծունեությունը բացահայտող վավերագրեր, ընկերությունների
հրատարակած գրքերն ու տեղեկագրերը, ինչպես նաև ժամա-
նակի պարբերական մամուլը:

Սակայն այդ ընկերությունների գործունեության հանգամա-
նալից քննությանն անցնելուց առաջ թերևս անհրաժեշտ է ընդ-
հանուր ակնարկ տալ արևելահայ հրատարակչական այլ ըն-
կերությունների մշակութային գործունեության վերաբերյալ:

ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ՀՐԱՏԱՐԱԿԶԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայ գրքի տպագրության ասպարեզում մի ուրույն տեղ է հատկացվում 80-ական թվականներին ձևավորված «Սանկտ-Պետերբուրգի համալսարանի արեւելյան լեզուների կից հայկական ուսանողական կազմակերպություն» հրատարակությանը: Այդ կազմակերպության առավել ակտիվ անդամներից էին Սարգիս Կուկունյանը, Նփրեմ Տեր-Հակոբյանը, Հմայակ Նազարյանը, Թադևոս Զաքարյանը, Ալեքսանդր Նազարյանը և ուրիշներ: Ունենալով նարոդնիկական ուղղություն, ուսանողական միությունը միաժամանակ իր գործունեության առաջնակարգ նպատակներից մեկն էր համարում արեւմտահայերի ազատագրությունը և արդեն 80-ական թվականներին առաջադրում էր նախապատրաստական մի ծրագիր, որի իմաստը հանդում էր ազգային-ազատագրական հեղափոխական շարժման գաղափարին: Այս իմաստով ծրագրի հեղինակներին միանգամայն հուսալի ուղեցույց էր ներկայանում Բուլղարիայի փորձը: «Մենք,— հայտարարում էին նրանք,— թեև ինքներս ոչինչ չենք ասում, քարոզություն չենք անում, բայց մեր տված գրականությամբ այն դաստիարակությունն ենք տարածում, որ թուրքահայերի ազատությունը կարող է այն կերպով լինել, ինչ կերպ հղել է բուլղարացիների ազատությունը»¹:

Ըստ էության ազգային ազատագրության գաղափարական այս ծրագիրը որոշակի ուղղություն էր թելադրում ուսանողական կազմակերպության հրատարակչական քաղաքականությանը, հայ ընթերցողին տրամադրելով այնպիսի գրքեր, որոնք քարոզում են պայքար և ազատասիրություն: Այսպես, 1886-ին ուսանողական միության հրատարակությունը լույս է ընծայում

¹ Լեո, Անցյալից, էջ 243:

Շիլլերի «Օուլեանի կույսը», մեկ տարի հետո՝ 1887-ին նույն հեղինակի «Վիլհելմ Տելլի» արձակ շարադրանքը, բուլղար ահա-նավոր գրող Լյուբեն Կարապետովի «Բուլղար ավազակապետը», Ուրիշի գերեզմանի վրա առանց արտասուքի են լաց լինում», «Նեղա», «Դանշո» վիպակները, լեհ նշանավոր արձակագիր Տեոդոր Եժի «Հուսադեմին» վեպը, Վ. Կորոլենկոյի «Մենաքեմ Գամաղաղու պատմությունը», Վ. Սատրապորսկու «Յրինի» և մի քանի այլ գրքույկներ:

Պետերբուրգի ուսանողների հրատարակությունները հիմնականում էժանագին (2, 3, 5 կոպեկ), փոքրածավալ բրոշյուրներ լին, և արտացոլում էին օտար բռնակալության դեմ բուլղար, լեհ ու ռուս ժողովուրդների ազատագրական պայքարի դրվագները: Նրանց տպագրած գրքույկներից շատերը ունեցան երկբորդ հրատարակություն, մի բան, որ ապացուցում էր նման պրակտիկության կարիքը հայ լինելիքողների շրջանում: Այս իրողությունը հետագայում արժանահիշատակ նշանակությամբ է մերհիշում Հովհ. Թումանյանը. «Ո՞վ չի հիշում էն ժամանակվա Պետերբուրգի ուսանողության տենդագին գործունեությունը և նրանց հրատարակությունները՝ «Դանշո», «Բուլղար ավազակապետը», «Շամիլի դատաստանը» և նման հրատարակությունների էն շարքը, որ տասնյակ հազարներով ցրվում էին մեր հասարակության մեջ»¹:

«Բուլղար ավազակապետը» վիպակը բարձր է գնահատել նաև Ղ. Աղայանը: Նրա կարծիքով այն «...գեղարվեստական տեսակետից կարող է օրինակելի լինել մեր բոլոր անճաշակ վիպագրողների համար»²: Սակայն Պետերբուրգի ուսանողության ոչ բոլոր հրատարակություններն են արժանացել գովեստի: Նրանք, առաջնություն տալով երկի գաղափարական ուղղվածությանը, հաճախ նվազ ուշադրություն էին դարձնում գեղարվեստական արժեքին: Այսպես, 1887 թ. Ղ. Աղայանը ծանոթանալով միության հրատարակած «Ուրիշի գերեզմանի վրա առանց արտասուքի են լաց լինում» պատմվածքի հետ, «Աղբյուր» հանդեսում տպագրում է գրախոսություն և իրավացիորեն քննադատում այդ ստեղծագործության սյուժետային անհաջող կառուցվածքը, գործողության չպատճառաբանված զարգացումը: Դեմոկրատ

¹ «Հորիզոն», 1913, № 240

² Ղ. Աղայան, Երկերի ժողովածու, հ. 3, 1968, էջ 143:

պրողը գտնում էր, որ պետք է մանուկների և ժողովրդի համար հրատարակած գրքերի վրա «ավելի լուրջ ուշադրություն դարձնել», մինչդեռ ընթերցողը չի կարող զաղափար կազմել, թե վերահիշյալ պատմվածքը «...մի հեղինակություն է արդյոք, թե մի թարգմանություն կամ փոխադրություն... որոշ կերպով չի երևում, թե ի՞նչ կյանքից է առնված, արդյոք բուլղարական թե հայկական, թե՞ երկուսից միանգամայն»¹:

Պետերբուրգի հայ ուսանողների կազմակերպության հրատարակչական գործը թեև ունեցավ կարճատև կյանք՝ ընդամենը չորս տարի (1886—1890) և լույս ընծայեց շուրջ երկու տասնյակի հասնող գրքույկներ, այնուամենայնիվ դրանք որոշակի դեր խաղացին հայ աղատագրական շարժման պատմության մեջ, նպաստեցին հայրենասիրական, ազատասիրական գաղափարների տարածմանը և ողջ սրբությանը դրեցին սուլթանական բռնակալության ճիրաններից հայ ժողովրդի ազատագրման խնդիրը: Միանգամայն ճիշտ է պատմաբանի այն ընդհանրացումը, թե «ուժեղ էր Պետերբուրգի հայ ուսանողության ազդեցությունը, որ թեև առանձին հեղափոխական մարմնի միջոցով չէր երևան գալիս, բայց իր գրական պրոպագանդայով էր ժողովրդականանում, մի պրոպագանդ, որ ձգտում էր ընտելացնել հայերին բուլղարական հայդուկային հեղափոխության ձևերին և գործնականապես էլ պատրաստվում էր հայդուկային արշավանքներ ձեռնարկել թուրքաց Հայաստանում»²:

Մյուս կողմից թարգմանելով և տպագրելով օտար գրողների ստեղծագործությունները, ուսանողական կազմակերպությունը հայ հոգևոր կյանքը հարստացնում էր համաշխարհային գրականության արժեքներով, նպաստում հայ ժողովրդի գրական մշակութային կապերի ամրապնդմանն ու զարգացմանը:

Ուշադրության արժանի է 1879 թվականին Շուշիում Տ. Նազարյանի բացած հրատարակչական գրասենյակը: Նա հրատարակել է Ն. Տեր-Ավետիսյանի «Քնար խոսնակը» և իր թարգմանությամբ լույս է ընծայել Հ. Սենկևիչի «Պոզնանի ուսուցչի օրագրից» պատմվածքը, որը, ի դեպ, լեհ նշանավոր գրողի հայերեն առաջին գրքույկն էր: Տ. Նազարյանը տպագրե-

¹ Ղ. Աղայան, Երկերի ժողովածու, հատ. 3, 1963, էջ 135:

² Առ, Թրքահայ հեղափոխության գաղափարախոսությունը, հ. 2, Փարիզ, 1935, էջ 9:

լ, Ինչ. Դոգերի երկու մանրամասն, Կ. Անխր-Շահնազարյանի «Ղըլըցի կընանուց պընը փեշակը» կենցաղագրական երգիծա-
պատումը, ապա նաև դանիացի հանճարեղ հեքիաթագիր Ան-
դերսենի «Սոխակը» և «Խոզարածը ու արքայադուստրը» հե-
քիաթները:

Տ. Նազարյանի գրասենյակի հրատարակած գրքերը ցույց են
տալիս «Աղբյուրի» և «Տարաղի» ապագա հրատարակիչ խմբա-
ցրի գրական նախասիրություններն ու զեղագիտական ճաշակը:
«Արձագանքը» անդրադառնալով Տ. Նազարյանի հրատարակու-
թյուններին, գրում է. «Լույս տեսած վիպակների լեզուն շատ կեն-
դանի է, բնական, պարզ, հասկանալի. շինծու խորթ դարձվածք-
ներ, որոնցով լիքն են մեր մանկական գրքերը, սոքա ամենեկին
չունեն... տիպը մաքուր է...»¹:

Շուշու գրական սուղ միջավայրը ի վիճակի չէր ապահովելու
հրատարակչական գրասենյակի արգասավոր գործունեությունը:
Ստեղծված փակուղուց դուրս գալու նպատակով Տ. Նազարյանը
դիմում է նորաստեղծ «Թիֆլիսի հայերեն գրքերի հրատարակ-
չական ընկերությանը», խնդրելով օգնության կարգով ուղարկել
իրեն ընկերության կողմից ընդունված կամ մերժված ձեռագրե-
րից²: Սակայն հայրենի քաղաքում հրատարակչական գործ ծա-
վալիլու ակնկալություններն ապարդյուն եղան: Մի կողմից նյու-
թերի պակասը, մյուս կողմից «Գործ» ամսագրի հրատարակիչ,
Նազարյանի քեռու՝ Սիմոն Հախումյանի, նկատմամբ ցարական
ցենզուրային վարչության կիրառած հալածանքները³ հարկա-
պարտ էին նրան 1882 թ. տեղափոխվել Թիֆլիս՝ ավելի լայն
ժրագրով շարունակելու գրքերի հրատարակման գործը: Սակայն
ույստեղ ևս Տ. Նազարյանը չկարողացավ իրականացնել իր ցան-
կությունը, որովհետև այդ օրերին ավելի էին խստացել ցեն-
զուրային օրենքները: Ի վերջո, նրան Կովկասի փոխարքան մերժեց
գիրք տպագրելը⁴: Նազարյանը հարկադրված ձեռնամուխ եղավ
«Աղբյուր» պարբերականի հրատարակման գործին, որի առա-
ջին համարը լույս տեսավ 1883 թ.:

¹ «Արձագանք», 1882, № 1, էջ 6:

² Հայկ. ՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 30, գ. 13, Թ. 18:

³ Ս. Հախումյանի «Գործ» հանդեսի մասին մանրամասն տե՛ս «Հայ պար-
բերական մամուլի պատմությունից», հ. 1, Երևան, 1963, էջ 219—338:

⁴ Նառ-Դոս, Քսան տարի և հինգ ամյակ Աղբյուր, Թիֆլիս, 1908, էջ 5:

Գրքերի հրատարակման գործում որոշ դեր է կատարել նաև Քաքվի մարզասիրական ընկերությունը: Հնարավոր է, որ այդ ընկերությունը ավելի լայն գործունեություն ունենար, եթե իշխան Գուլիցինը դրշի մի հարվածով չարգելեր նրան հրատարակչական գործունեությամբ զբաղվել:

Հայկական հրատարակչական կենտրոն ունենալու անհրաժեշտության հարցը առավել սրությամբ դրվում է 20-րդ դարի սկզբին: Թարգմանական գրականությունը համարելով ժողովրդի կուլտուրականության որոշման չափանիշ, ազդային գրականության ու լիզվի զարգացման ազդակ, ընթերցողի աշխարհայացքի բնույթի մեջ և գեղարվեստական ճաշակի դաստիարակման լավագույն միջոց Վահան Տերչանը, Պողոս Մակինցյանը, Յուլիա Խաչատրյանը 1911 թվականի նոյեմբերին Մոսկվայում կազմակերպում են «Պանթեոն» հրատարակչական ընկերությունը, որը նպատակ էր դրել հայ ընթերցողին մատուցել ուսու և համաշխարհային դասական գրողների առաջնակարգ երկերը ընտիր թարգմանությամբ և շքեղ հրատարակությամբ¹: Նորաստեղծ ընկերությունը մտադիր էր առաջին հերթին լույս ընծայել Լեոնտոսովի, Լ. Տոլստոյի, Դոստոևսկու, Ջեյմսի, Գոբկու, Հաուսամանի, Արթուր Շնիցլերի և այլոց ստեղծագործությունները:

«Պանթեոնը» ձգտում էր իր շուրջը համախմբել ժամանակի լավագույն թարգմանիչներին: Նման ծրագրի իրականացումը պահանջում էր նյութական մեծ միջոցներ: Չնայած պարբերական մամուլը ողջունեց «Պանթեոնի» ստեղծումը և հուսաց «...որ մայրենի գրականությունը սիրող հասարակությունը կօժանդակի զլուխ բերելու ծանր ու պատասխանատու և միաժամանակ էլ կարևոր և անհետաձգելի գործը»², բայց և այնպես նրա կողմ լայն արձագանք չունեցավ: Ձեռք բերած գումարով հնարավոր եղավ հրատարակել միայն մի քանի գրքեր, որոնք լավ ընդունվեցին հասարակության կողմից:

Հրատարակչական ուրույն քաղաքականություն էր վարում «Քաքվի հայոց կուլտուրական միությունը»: Միությունը, որ հիմնվել է 1906 թվականին, ըստ էության դավանում էր մանր-բուրժուական քաղաքական մի հայեցությունը, որը հավակնում էր սոցիալ-տնտեսական կյանքի բարելավում քաղաքական պայ-

¹ Տե՛ս «Հորիզոն», 1911, № 259:

² Նույն տեղը:

քարից կտրված, իր «Բաքու» օրաթերթի (ռուսերեն) ու «Զանգ» շաբաթաթերթի միջոցով քարոզում էր մի յուրօրինակ անարխո-սինդիկալիզմ՝ կոչ անելով բանվորներին համախմբվել արհես-տակցական միություններում:

Միության հրատարակած գրքերի բովանդակությունը հիմնա-կանում սահմանափակվել է պատմական անցյալով: «Դրվագ-ներ հայոց պատմութունից» մատենաշարով նա 1910—1912 թվականներին լույս է ընծայում Վրթ. Փափազյանի «Լերտաշես Երկրորդ», «Դագիկ Երկրորդ», «Վարդանանց պատերազմը», «Սահակ և Մեսրոպ», «Թորոս իշխան», «Լևոն Երկրորդ», Մ. Առաքելյանի «Տրդատ և Գրիգոր լուսավորիչ», «Վահան Մա-միկոնյան», Մ. Ղազարյանի «Մամիկոնյան իշխաններ, Մուշեղ և Մանվել» գրքույկները, երոնց բովանդակությանը ծանոթանա-լով՝ Ստ. Շահումյանը գրում է. «Վ. Փափազյանը պատմագետի դերում» հոգվածը, շեշտելով, որ այդ դրվագներում չկան ամ-բողջ դիտելիքներ» և «...պատմական աշխարհայացք, պատմա-կան տեսակետ, որի օգնությամբ նա (հեղինակը— Վ.Վ.) կա-րող լինի քննադատորեն վերաբերվել իր նյութին և իր գրվածքը կրթական ու զարգացուցիչ ազդեցություն ունենա ընթերցողի վրա»¹:

Միությունը հրատարակել է նաև հնչակյան «ձախերին» պատկանող Երվանդ Պալյանի «Մ. Նալբանդյանի անտեսական լեռնիան» գրքույկը: Բացի այդ, Բաքվի միությունը հեղափո-խության վերելքի ու ռեակցիայի տարիներին փորձում էր ագ-րարային հարցը լուծել գյուղատնտեսության մեջ ժամանակի գիտություն ու տեխնիկայի նվաճումների ներդրման ճանապար-հով և այդ նկատառումով հրատարակում է «Բամբակի մշա-կույթը», «Բուսական աշխարհ», «Հացահատիկների մարգային կուլտուրան» և նման բրոշյուրներ, ինչպես նաև «Ոգի Հայաս-տանի» և «Արտաշեսի հուղարկավորությունը» գունավոր նկար-ները:

Միությունը «Պատանեկան գրադարան» մատենաշարով տպա-չրել է գերազանցապես թարգմանություններ: Սակայն այդ թարգմանությունները այն աւտիճանի տառացի, խրթին ու բռնազբոսիկ են, որ ժամանակի գրախոսողն ուղղակի առաջար-

¹ Ս. Շահումյան, Գրականության մասին, 1948, էջ 140:

կում էր անհասպաղ «ազատել պատանիներին նման թարգմանություններից և հայ գրական լեզուն նման գոհարներից»¹։

Մեր խոսքը «Բաքվի հայ կուլտուրական միության» տպագրած գրքերի մասին ցանկանում ենք վերջացնել Ստ. Շահումյանի բնութագրությամբ. «Միության... ղեկավար հայ ինժեներները Բալասանի և Սև քաղաքի նստվածային փողոց սեպագծ ու թթվուտներից ժանգոտած, իրենց խղճերը հանգստացնելու համար, ղբաղվում են հրեմն աշղ տեսակ «Աղգոգուտ» ձեռնարկություններով և ուղում են վառ պահել հայոց աղգի մեջ հայրենասիրական ու եկեղեցական զգացմունքները»²։

Բաքվի կուլտուրական միության աղղեցության տակ էր գործում Միսակ Խոստիկյանցը։ Վերջինս 1912—1913 թվականներին հայ գրերի գյուտի 1500-ամյակի և տպագրության 400-ամյակի առթիվ լույս է ընծայում մի շարք կրոնական բնույթի գրքույկներ («Խնչ է կրոնը և ինչ է բարոյականությունը», «Խնչ է աստվածաշունչը», «Բնագիտության և կրոնական աշխարհայացք» և այլն), ձգտելով քրիստոնեության պրոպագանդայով աշխատավորությանը կտրել սոցիալ-դեմոկրատական կուսակցության աղղեցությունից, նրա նկատմամբ ուժեղացնել բուրժուական կուսակցությունների աղղեցությունը և բթացնել դասակարգային ինքնագիտակցությունը։

20-րդ դարի սկզբին Անդրկովկասի բանվորական շարժումը ինկադիսում է զարգացման նոր փուլ։ Պրոլետարիատը տարերային պայքարից անցնում է կազմակերպված պայքարի և տնտեսական պահանջների հետ միասին առաջադրում է նաև քաղական պահանջներ։ Սոցիալ-դեմոկրատները բանվոր դասակարգին դաստիարակում էին պրոլետարական ինտերնացիոնալիզմի ոգով, բարձրացնում նրա քաղաքական ակտիվությունն ու դասակարգային ինքնագիտակցությունը։ Այս իրողությունը բնականաբար առաջադրում է մարքսիստական գրականության հրատարակության անհրաժեշտությունը։ Ուշագրավ է, որ հայերեն լեզվով մարքսիստական գրականություն ունենալու հարցը ժամանակին արժանացել է Պլեխանովի և Լենինի ուշադրությանը։ Այսպես, 1903 թ. հոկտեմբերի 20-ին Ժնևից Կովկասյան միութենական կոմիտեին ուղարկած նամակում նրանք

¹ «Լումա», 1909, № 1, էջ 66—67։

² Ստ. Շահումյան, Գրականության մասին, 1948, էջ 167։

պրում են. «Մենք այժմ հռանգուն մտածում ենք աշխատել վրայական և հայկական դրականության հրատարակության կազմակերպման մասին: Այդ գործին ձեռնամուխ են եղել ձեռնահաս բնկերներ. փող հույս ունենք ճարել: Հարկավոր է օգնություն և՛ գրականությամբ, և՛ միջոցներով:

Կովկասի ընկերներին հղում ենք ողջույն և ջերմորեն ցանկանում ենք հաջողություններ աշխատանքի մեջ»¹:

Կովկասի հայ բոլշևիկները, բարձր գնահատելով տպագիր խոսքի դերը մասսաների կազմակերպման ու դաստիարակման գործում, ձեռնարկում են հրատարակչական օջախի կազմակերպմանը: Ականավոր մանկավարժ, հրատարակիչ և թարգմանիչ Ստեփան Լիսիցյանի վկայությամբ, Ստեփան Շահումյանի անմիջական ցուցումով 1903 թ. կազմակերպվում է «Ստ. Լիսիցյանի և ալլոց» հրատարակչական ընկերությունը, որի հրատարակչական պլանը նախապես համաձայնեցվում է Շահումյանի հետ²: Չնայած այդ ընկերությունը երկար կյանք չունեցավ, բայց կարողացավ «Հայ բանաստեղծներ» ընդհանուր խորագրով տպագրել Հովհ. Թումանյանի լեզենդները, «Սասունցի Դավիթը», «Անուշը», Լևոն Շանթի «Լեռան աղջիկը», Ղ. Աղայանի մի շարք հեքիաթները, Վոյնիչի «Բոռը», էկրման-Շաթիրյանի «Մի գյուղացու պատմությունը», Կ. Մարքսի «Վարձու աշխատանք և կապիտալ» աշխատությունը՝ Ստ. Շահումյանի թարգմանությամբ: Շուտով ցարական կառավարությունը արգելափակում է ընկերության գործունեությունը և նրա դրամագլուխը (5000 ռուբլի) և տպագրած գրքերը, ինչպես հավաստում է Ստ. Լիսիցյանը, Շահումյանի խորհրդով դրվում են նոր կազմակերպվող «Կովկասի հայերեն գրքերի ընկերության» տրամադրության տակ³:

Ռեակցիայի տարիներին ու նրանից հետո տպագրվող գաղափարազուրկ, էժանագին, շովինիստական գրականության դեմ պայքարելու միջոցներից մեկը աշխատավոր ժողովրդի առօրյան, նրա պայքարը պատկերող ստեղծագործությունների տպագրումն ու տարածումն էր: Այդ գործում իր արժանի ավանդն ունի հայ պրուլետարական գրականության հիմնադիր Հակոբ

1 Վ. Ի. Լենին, *Երկեր*, հ. 34, էջ 199:

2 Տե՛ս, Ստ. Լիսիցյանի անձնական արխիվ, ինքնակենսագրություն:

3 Նույն տեղը, էջ 56:

Հակոբյանը: Նրա ջանքերով 1913 թվականին Թիֆլիսում կադմակերպվում է «Տպագրական բանվորների ընկերությունը», որի միջոցներով անվանի հեղափոխական-բանաստեղծը հրատարակում է «Նոր դրադարան» մատենաշարը:

Ընկերության շուրջը համախմբվեցին արձակագիրներ Մ. Արադին, Մ. Պետրոսյանը, Մ. Մելիքյանը, դրամատուրգ Ա. Վարդանյանը և այլ գրողներ, որոնց համատեղ ջանքերով որոշակի վերելք ունեցավ հայ պրոլետարական գրականության տարածումը: Նշանակալից էին, օրինակ, «Կարմիր մեխակներ» և «Բանվորի ալբոմ» գրական ամսանախները, որոնք ընդգրկում էին հայ առաջին պրոլետարական գրողների երկերը:

Հ. Հակոբյանի վկայությամբ, Շահումյանն առաջինն էր, «որ նամակով ողջունեց ու ընդգծեց առաջին հայ պրոլետարական գրական-հեղարվեստական օրգանը»¹:

Այդ հրատարակությունները արժանացան բոլշևիկյան մամուլի ջերմ վերաբերմունքին: Գրականագետ Ա. Կարինյանը 1914 թվականին «ПРАВДА» թերթի էջերում տպագրում է երկու գրախոսություն: Նրա կարծիքով «Կարմիր մեխակները» հաջող է կազմված: Հայ բանաստեղծ Գորկին՝ Հ. Հակոբյանը, արտաքուստ անկիրք, բայց խոր զգացմունքով ներշնչված տողերում նկարագրում է հզոր ֆաբրիկան, մեքենաների շուինդը, հնոցի բոցը, բանվորների ուրվականները և այն անլուրի որոտը, որ աշխույժ պոռթկումներ ու ձգտումներ է ներշնչում: «Նոր դրադարանի» հրատարակությունը հայ բանվորների մեջ անկասկած հաջողություններ կունենա: Հայ առաջավոր բանվորները պետք է ուժը ներածին չափ օգնեն ապարանական բանվորների սկսած գործին, դրանով աջակցելով պրոլետարական լայն հրատարակության տարածմանը»²:

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Թիֆլիսի և Կովկասի հայ հրատարակչական ընկերությունների կողքին հայտնվեցին նաև մասնավոր մի շարք հրատարակիչներ՝ Գ. Բարխուդարյան, Փ. Վարդանյան, Հ. Գենջյան, Մ. Թումանյան, Հ. Աղաբաբ և ուրիշներ, որոնք սակայն սահմանափակվում էին ավելի նեղ շրջանակներում և ի վիճակի չեղան դառնալու համազգային հրատարակչական օջախներ:

¹ Հ. Հակոբյան, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 284:

² Ա. Կարինյան, «Գրական-բանաստեղծական հոլովածներ», Երևան, 1962,

ԹԻՖԼԻՍԻ ԵՎ ԿՈՎԿԱՍԻ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Առաջին հարցը, որ ծագում է հրատարակչական այս կամ այն ընկերության գործունեությունը գնահատելիս այն է, թե հաճարակական ինչ ծրագիր և նպատակ է հետամտել նա: Թիֆլիսի և Կովկասի հրատարակչական ընկերությունների նպատակն ու խնդիրները այս իմաստով միանգամայն հստակ էին ու պատմականորեն արգասավոր՝ նպաստել հայ գրականության և թարգմանական արվեստի զարգացմանը, պրոպագանդել նորը, առաջադիմականը, արտահայտել ազատասիրական ու հայրենասիրական գաղափարներ:

Թիֆլիսի հայերեն գրքերի հրատարակչական ընկերության ստեղծման պատիվը պատկանում է Նատալյա Տեր-Մարկոսյանին: Նա առաջին կին ուսուցիչներից և թարգմանիչներից է: Ծնվել է 1861 թվականին Թիֆլիսում, արհեստավորի ընտանիքում: 1878 թվականին փայլուն գնահատականներով ավարտելով Գայանյան դպրոցը, նշանակվել է նույն դպրոցի հայոց լեզվի դասատու: Վաղ հասակից կորցնելով հորը, Ն. Տեր-Մարկոսյանը, որպես ավագը երեխաներից, իր վրա է վերցնում մորը և եղբայրներին խնամելու հոգսը: Մասնավոր դասեր է ստանձնում հարուստների տներում և միաժամանակ զբաղվում մանուկների համար ընթերցանության գրքերի թարգմանությամբ:

Տասնութամյա Նատալյան մանկավարժի իր ոչ մեծ փորձից պիտեր, թե ինչպիսի անփոխարինելի դեր է կատարում գեղարվեստական գիրքը երեխայի հոգեկան աշխարհի ձևավորման գործում: Համաշխարհային գրականությանը հայտնի էին մանուկներին պիտանի շատ գրքեր, որոնք սակայն անհայտ էին մնում հայ իրականությանը: Յղած գրքերը, ինչպես նկատում է Տեր-Մարկոսյանը, «մեծ մասամբ խրենց հրաշալի կեղծիքներով ավել-

լի մանուկների հրեակայությունն են զրդուում, քան նրանց մշտ-
քին սնունդ տալիս և ամեն օր դանգատներ են լսվում, թե ծնող-
ների և թե դաստիարակների կողմից, որ իրենց հրեխանների ու
սանիկների ձեռքը տալու համար զրքեր չեն կարող գտնել¹։ Եվ
Ն. Տեր-Մարկոսյանը մի խումբ երիտասարդների հետ որոշում է
նվիրատվության ճանապարհով որոշ գումար հավաքել ու դրա-
նով մանկական զրքեր հրատարակել։

Այս խրախուսելի գործում նրան առաջնորդում էին երեք
սկզբունք. «խոր ընտրություն կատարել նշութի մեջ. զգուշու-
թյուն՝ լեզվի մեջ և վայելչություն՝ զրքի արտաքին տեսքի կող-
մից»։ Եվ ահա, 1879 թվականին Ն. Տեր-Մարկոսյանի թարգմա-
նությամբ լույս է տեսնում ուսման կազմի Ավենարիուսի «Բա-
վամազ մեղոս» գրքուկը, որը առաջնորդում էր մանուկ ընթեր-
ցողին «Ամենքը մեկի, մեկը՝ ամենքի համար» սկզբունքով։ Թարգ-
մանը հին ոչինչ չէր խնայել զրքուկը ընթերցողին գրավիչ ու
հաճելի դարձնելու համար։ Տպագրված է ընտիր թղթի վրա,
սլաոկերազարդ, և այդ տեսակետից հղակի է ժամանակի ման-
կական գրքերի աղբատիկ ֆոնդում։ «Բավամազ մեղուին» հա-
ջորդում է «Կարմիր լապտեր» խորագրով գրքուկը, որն ուներ
առաջինի բոլոր արժանիքները։

Անցյալ դարի 80-ական թվականներին քաղաքակիրթ աշ-
խարհում մեծ սպիտակ հանեց Բիշեր Ստոուի ազատասիրական
դադափառներով համակված «Քեռի Թոմասի տնակը» վեպը։ Այն
իր արձագանքը գտավ նաև հայ իրականության մեջ։ Որպես
ժամանակի առաջավոր մարդկանցից մեկը, նատալյան որոշում
է թարգմանել այդ գրքուկը և հայ մանուկներին ծանոթացնել
ամերիկյան ստրուկների ծանր վիճակին ու պայքարին։ Մեծ դժ-
վարություններով նա թարգմանում է այդ գործը և հրատարա-
կում, որը և արտակարգ ընդունելության է արժանանում։

Կարիքն ու զրկանքն ի վերջո իրենցն անում են. տակավին
երիտասարդ, Ն. Տեր-Մարկոսյանի առողջությունը սկսում է
բայցալվել. հրեում են թոքախտի նշաններ։ Ժամանակակիցնե-
րից մեկը գրում է. «Շատերը պիտեն, որ հիվանդության միջո-
ցին նա զրկված էր կարևոր դեղերից. մինչև անգամ օրերով քաղ-
ցած էր մնում։ Բայց երբեք, ինչպես և առաջ էր անում, նա
այդ մասին ոչ ոքի ոչինչ չէր ասում և անտրտունջ տանում էր

¹ «Փորձ», 1880, № 3, էջ 124։

այդ զրկանքները»: Այդպես էլ հնարավորություն չունեցավ
խրականացնելու իր գեղեցիկ մատչդացումները:

Նատալյա Տեր-Մարկոսյանը մահացավ 1881 թվականի սեպ-
տեմբերի 17-ին, 20 տարեկան հասակում: Նրա մահը խոր վիշտ
պատճառեց ժամանակի հա առաջավոր մտավորականությանը:
Նրա մասին ցավակցական շատ խոսքեր են տպագրել «Մշակ»,
«Մեղու Հայաստանի», «Փորձ», «Աղբյուր» պարբերականները:
Ջնգամ նրա մահվան երկրորդ տարելիցին «Աղբյուր» հանդեսը
ափսոսանքով նշում, թե «այսօր, երբ սկսում են դուրս հոսել
«Աղբյուրի» առաջին կաթիլները, չկա էլ նա, որը զեռ երկու տա-
րի առաջ ջանում էր ճանապարհ բանալ «Աղբյուրի» համար, որով
հանդուցյալը ցանկանում էր մասամբ հագեցնել իր սանիկների
ժարավը»¹: Ն. Տեր-Մարկոսյանի ամենամեծ երախտիքը հրա-
տարակչական ընկերության ստեղծումն էր:

1879 թ. սեպտեմբերի 11-ին Գր. Արծրունու թատրոնի շեն-
քում Աբգար Հովհաննիսյանի նախագահությամբ տեղի ունեցավ
«Թիֆլիսի հայերեն դրքերի հրատարակչական ընկերության»
հիմնադիր նիստը, որ քննարկվեց ու ընդունվեց ընկերության
կանոնադրությունը²:

Թե ինչ նպատակ ունեն ընկերությունը և ինչի էր ձգտում նա,
հաստակ կերպով շարադրված է հիմնադիր ժողովի արձանագրու-
թյունում, որը բերում ենք նույնությամբ. 1. «Հրատարակչական
ընկերությունը, իբրև իրական պահանջների ծնունդ՝ պետք է ուշք
դարձնի գլխավորապես մեր ժողովրդի ներկա-բաղմակողմանի
կարիքներին գրականության միջոցով գոհացում տալու վրա: Հայ
ժողովուրդն ունի բազմաթիվ ծխական և թեմական դպրոցներ,
մոտ 14 հազար սովորողներով: Այդ դպրոցների համար հարկա-
յվոր են լավ կազմված դասագրքեր, մանավանդ ընդհանուր զար-
դացուցիչ առարկաներից. գրականության, պատմության և բնա-
գիտությունների: Հայ մանուկ սերնդի համար հարկավոր են
մանկական-պատանեկան ընթերցանության ընտիր գրքեր. ուսու-
ցիչներին և դաստիարակներին ընտիր՝ կլասիկ մանկավարժական

¹ «Աղբյուր», 1882, № 10, էջ 31:

² Չնայած կանոնադրությունը պետության կողմից վավերացվեց 1880 թ.
հունվարի 31-ին և այժմ գրականության մեջ ընկերության հիմնադրումը բն-
դուրում են 1880 թվականը, սակայն նրա գործունեության սկիզբը պետք է
հաշվել 1879 թվականից, երբ սկսել է աշխատել Նատալյա Տեր-Մարկոսյանի
առեղծած խմբակը:

գրվածքներ: 2. Հայ Հափահաս բնթերցողների կոնտինգենտը մեղ մոտ կազմված է գլխավորապես միջին կրթություն ունեցող և մեծ աստամբ հայոց գաղտցներում ուսած ինտելիգենցիայից և գրագետ հասարակ ժողովրդից: Ընթերցանության ընտիր գրքերի պահանջը ահագին է, մինչդեռ մեր գրականության մեջ եղած պաշարը շատ շնչին. այստեղից առաջ է գալիս կարեւորություն, որ ընկերութունը ուշք դարձնի և Հափահասների համար ընթերցանության գրքեր հրատարակելու վրա: Զափահասների ընթերցանության գրքերը կարելի է բաժանել երեք գլխավոր տեսակի.

ա) բեկեթիստական գրվածքներ, մանավանդ այնպիսիք, որոնք ունեն որոշ հառաջադեմ հասարակական ոգի և կլասիկներ:

բ) գիտական գրքեր, որոնք բացատրում են բնությունը և տիեզերքը, և՛

զ) գործնական նպատակներին ծառայող գրքեր, որոնք պետք է օգնեն ժողովրդին հասկանալ յուր իրավունքները, բարոյական յուր ֆիզիկական և տնտեսական դրությունը: Այս նպատակով և ետք է հրատարակվեն զանազան իրավաբանական և օրենսդրական գրքեր, բժշկական բրոշյուրներ և գյուղատնտեսական հրատարակություններ:

3. Մեր ժողովրդի և հայրենիքի ուսումնասիրության վրա մեր գրականութունը քիչ ուշադրություն է դարձնում: Հրատ. ընկերության նպատակներից մեկն էլ պետք է լինի զարկ տալ այդ ուսումնասիրությանը: Ժողովրդի և հայրենիքի թե՛ ներկայի և թե՛ անցյալի հետ ծանոթանալ և նոցա ուսումնասիրելու նպատակով խմբագրական մասնաժողովս կձևանարկի «Ժողովրդական նշութի» ժողովածուների: հրատարակությունը, ինչպես և աշխարհագրական, պատմական և հայրենագիտական գրվածքներ լույս ընծայելը»¹:

Հիշյալ ծրագիրը իրագործելու համար վարչութունը առաջնորդվում էր երկու հիմնական սկզբունքով՝ հայ հեղինակների ինքնուրույն ստեղծագործութունների հրատարակում և օտար գրականութունից մարգամանված երկերի հրատարակում: Անշուշտ, հրատարակչական ընկերության գործունեութունը իր մասնակիին հսկայական առաջադիմական քայլ էր հայ ժողովրդի մտավոր զարգացման բնագավառում:

Նման լուրջ և պատասխանատու գործը ընկերության որոշ անդամներ ցանկանում էին իրագործել միայն անդամավճար-

¹ Հայկ. ՍՍՀ ՊԿՊԱ 30, գ. 8, թ. 25—26:

«ԻՅԼԻՍ ԸՆԹՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԵՆ ԳՐՈՒԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ»

ԲՈՒՋԷՒ ՄՅՈՒՅ



ՈՎՄԱՍ ԵՂԲՕՐ ՏՆԱԿԸ

ԳՐԱՆ. Տ. ԳՅԼՄԷՐԻ

Թարգ. Օր. Ն. Տէր—Մարկոսեանցի Ըրն

ՁԵՂ

ԻՅԼԻՍ

Եղեանքեան Մարկոսեանցի Բայազետեմ

1880

Թիֆլիսի հրատարակչական ընկերության առաջին գրքի շապիկը:

ներից գոյացած գումարով: Սակայն անդամների պահանջով կանոնադրության մեջ մտցվեց այն կետը, որ ընկերության նշանակալից միջոցները կազմում են վաճառած գրքերից ստացված հասույթը և ընկերության անդամների ուժերով կազմակերպված ներկայացումներից, համերգներից, հրապարակային դասախոսություններից գոյացած գումարը¹: Ընկերությունը հույս չէր կապում հայ բուրժուազիայի, նրանից սպասվելիք նպաստների ու հանգանականությունների հետ: Բացի այդ, ընկերության անդամները միաձայն որոշում են, որ ընկերության ղեկավար մարմիններում (վարչության և խմբագրական մասնաժողովում) ընտրված ընկերները աշխատեն հասարակական կարգով: Այս որոշումը նյութական մեծ օժանդակություն էր ընկերության համար:

Արդ. տեսնենք, ի՞նչ սկզբունքով է աշխատել Թիֆլիսի հրատարակչական ընկերությունը: Կանոնադրության համաձայն ընկերության գործերը ղեկավարում էին նրա վարչությունը և խմբագրական մասնաժողովը, որոնք ընտրվում էին ընդհանուր ժողովում՝ փակ (զառնի) քվեարկությամբ, երկու տարի ժամկետով: Ըստ որում, առաջին տարվա վերջին յուրաքանչյուրի կողմից դուրս էին մնում երեքը, և նրանց տեղը ընտրվում էին նորերը, երկրորդ տարում՝ մնացած երեքը և նախագահները: Սակայն կանոնադրությունը չէր բացառում երկու տարուց հետո նույն անձերի վերընտրությունը նույն պաշտոնում:

Ընկերության վարչությունը կազմված էր յոթ հոգուց. նախագահ, փոխնախագահ, քարտուղար, գանձապահ, գրասպահ և երկու անդամ: Այդ կազմով վարչությունը հիմնականում վարում էր ընկերության տնտեսական գործը, ղբադվում էր ընկերության գրքերի տպագրության և իրացման հարցերով, հսկում նրա որոշումների ու կարգադրությունների կատարմանը, վճարում հոնոյար և պահանջված դեպքում սրակս իրավական անձ պաշտպանում ընկերության շահերը: Բացի այդ, վարչությանը վերապահված էր բանակցություններ վարել հիմնարկ-ձեռնարկությունների ու հեղինակների հետ: Կարճ ասած, կազմակերպական և տնտեսական հարցերի լուծումը գրված էր ընկերության վարչության վրա:

¹ Տե՛ս, Թիֆլիսի հայերեն գրքերի հրատարակչական ընկերության կանոնադրությունը, էջ 1:

խմբագրական մասնաժողովը, որը նույնպես բաղկացած էր յետ հոգուց (նախագահ, քարտուղար և հինգ անդամ) զբաղվում էր միայն գրքերի ընտրության, խմբագրման և հոնորարի շափի որոշման հարցերով: Առանց խմբագրական մասնաժողովի գիտության վարչությունը չէր կարող տպագրել որևէ գիրք կամ պատկեր կանխավճար ու հոնորար: Ինչպես տեսնում ենք, ընկերության բարոյական կողմի պատասխանատվությունը դրված էր խմբագրական մասնաժողովի վրա:

Վարչության և խմբագրական մասնաժողովի նախագահներն իրենց գործունեության համար հաշվետու էին միայն ընդհանուր ժողովին: Ընկերության ղեկավար օրգանների նախագահներն իրարից անկախ հրավիրում էին նիստեր, քննարկում հուղող հարցերը և կազմում արձանագրություն՝ ներկա գտնվող բոլոր անդամների ստորագրությամբ: Նիստը օրինական էր հաշվվում, երբ ներկա էին ամենաքիչ հինգ անդամ: Վարչության և խմբագրական մասնաժողովի միջև տարաձայնության դեպքում (մի բան, որը հաճախակի էր պատահում), այն լուծում էր ընդհանուր ժողովը, որը տեղի էր ունենում տարեկան մեկ անգամ, կամ արտակարգ՝ ոչ պակաս, քան հինգ անգամների առաջարկությանամբ: Ընդհանուր ժողովը օրինական էր ճանաչվում, երբ ներկա էին ընկերության անդամների մեկ հինգերորդը: Սակայն, եթե հրավիրված ընդհանուր ժողովը տեղի չունենար անդամների ահամանված թվից պակաս լինելու պատճառով, և այն կրկնվեր երկրորդ անգամ, ապա ընդհանուր ժողովը համարվում էր օրինական՝ անկախ ներկա գտնվողների թվից:

Ընդհանուր ժողովը, լինելով ընկերության ղեկավար մարմինը, քննարկում էր վարչության և խմբագրական մասնաժողովի տարեկան հաշվետվությունները, ընտրում նրանց կազմը, հաստատում ծախսած գումարը, որոշում կայացնում վարչության և խմբագրական մասնաժողովի հետագա անելիքների վերաբերյալ: Նա փաստորեն վերահսկում էր իր ընտրած օրգանների աշխատանքը:

Իսկ ո՞վ կարող էր լինել ընկերության անդամ:

Ընկերության անդամ կարող էին լինել նրանք, ովքեր կմուծեին տարեկան հինգ ռուբլուց ոչ պակաս անդամավճար՝ անկախ սեռից, տարիքից, հավաստիքից ու ազգությունից: Չնայած անդամների իրավունքները նույնն էին, բայց և այնպես նրանք բաժանվում էին երեք խմբի՝ աշխատակից, մշտական և պատ-

վավեր, նման բաժանմամբ ընկերությունը ցանկանում էր պայմաններ ստեղծել հնարավորին չափ շատ նյութական միջոցներ հայթայթել հօգուտ ընկերության: Այսպես, եթե աշխատակից անդամները մուծում էին տարեկան հինգ ուրլի, ապա մշտական անդամը պարտավոր էր մուծել հարյուր ուրլուց ոչ պակաս, իսկ պատվավոր անդամ էին ընտրվում ընկերության ընդհանուր ժողովի կողմից միայն նրանք, ովքեր իրենց հեղինակությանմբ կամ հասարակական դիրքով կարող էին օգտակար լինել ընկերությանը:

Ընկերությունը չէր սահմանափակվում հասարակության բոլոր խավերից ներգրավմամբ և դեմոկրատական ընտրություններով: Նրա բոլոր անդամներն ունեին ընտրելու և ընտրվելու իրավունք: Նրանք էին քննարկում ու վճռում հարցերը, մտցնում առաջարկներ, քննադատում աշխատանքների մեջ եղած թերություններն ու սխալները:

Թիֆլիսի ընկերությունը ձգտում էր իր աշխատանքում ներգրավել ոչ միայն Ռուսաստանի տերիտորիայում բնակվող հայերին, այլև արտասահմանի հայությունը: Այդ նպատակով նորակազմ ընկերությունը պարտավորեցնում է վարչության նախագահին լինել Պոլսում: Աբգար Հովհաննիսյանը մեկնելով Պոլիս, կազմակերպում է մասնաժողով, տալիս նրանց հանձնարարություններ¹, սակայն, վերահաս քաղաքական ունեցիակի պայմաններում հնարավոր չեղավ իրականացնել այդ մասնաժողովի գործունեությունը:

Այսպիսով, ընկերությունն իր գործունեության հիմքում դնելով աշխատանքի համագեմտիկատական սկզբունքը և մի կողմ թողնելով փաշատիրությունն ու բարեգործությունը, արմատապես տարբերվում էր 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին հայ իրականության մեջ գոյություն ունեցող բոլոր տիպի բուրժուական ընկերություններից և ձգտում էր պահպանել համալգային-դեմոկրատական ուղղությունը:

Եվ շնայած հրատարակչական ընկերության ստեղծումը համակրանքով ընդունեցին հայ մտավորականները անկախ նրանից, թե ինչ հասարակական հոսանքի էին պատկանում, այնուամենայնիվ աննկատելի շմանցին այս կամ այն հոսանքի նկրատումները հրատարակչական ընկերության գործունեությունը են-

¹ «Փորձ», 1880, № 11—12, էջ 181:

թարկելու իր կազմակերպական ու գաղափարական սկզբունքներին:

Իրողությունն այն է, որ ընկերության կազմակերպման ալի-
ոթիվ նախաձեռնողներից են եղել լիբերալ-պահպանողական «Ար-
ձագանք» ջաքաթաթևերի խմբագիր Աբգար Հովհաննիսյանը,
սոցալին-պահպանողական, «Մեղու Հայաստանի» թերթի խմբ-
ագիր Պետրոս Սիմոնյանը, ազատամտականների պարագլուխ,
«Մշակ» թերթի խմբագիր Գրիգոր Արծրունին: Ընկերության
ստեղծման նկատմամբ անտարբեր չմնացին նաև էջմիածնի
պաշտոնական օրգանը՝ «Արարատ» ամսագիրը, ինչպես նաև նա-
րոգնիկական գաղափարներով առաջնորդվող ինտելիգենցիան,
որը որոշակի ազդեցություն ուներ ժամանակի հասարակական
մտքի վրա:

«Մեղու Հայաստանին» ընկերության ղեկավար մարմինների
ընտրության նախօրյակին տպագրած առաջնորդողում նշելով,
որ «ընկերության բարոյական և մտավոր արդյունքը կախում
ունի խմբագրական ժողովից, որի գործն է տպագրելիք գրքերի
ընտրությունը» և, խորհուրդ էր տալիս, հուշում, որ «ընկերու-
թյան խմբագրական անդամների ընտրությունը լինի մեծ զգու-
շությամբ», որպեսզի ընտրված անձինք «տպագրելիք գրքերի
ընտրության մեջ չսխալվեն»¹: Այնուհետև թերթը գրում է, որ
անհրաժեշտ է «նորին օժույթյան վեհափառ կաթողիկոսին ամե-
նայն հայոց և տեղույս թեմակալ արքեպիսկոպին ընդունել ըն-
կերության պատվավոր անդամ և խնդրել նորին օժույթյան հայ-
րական օրհնություն ընկերության առաջադիմության համար»²:

«Արարատ» ամսագիրը շնորհավորելով «օգտավետ և կարևոր
հաստատություն հիմնադրումը», մաղթում է գործին ամենայն
առաջադիմություն և խորհուրդ է տալիս, որ «հրատարակվելիք
գրքերը հասկանալի լինեն», լեզուն՝ «զերծ հասարակ ժողովրդի
գործածած լեզվից», քանի որ նոր լեզվի «միայն ու հիմնական
աղբյուրը գրաբար լեզուն է» և վերջապես, խոստանում է պար-
բերաբար անդրադառնալ ընկերության հրատարակություններին³:
Մակայն ամսագիրը չկատարեց իր խոստումը և երբեք չանդա-
դարձավ ընկերության տպագրած գրքերին: Նա վրդովվեց, քա-

¹ «Մեղու Հայաստանի», 1880 մարտի 8-ի առաջնորդողը:

² «Մեղու Հայաստանի», 1880, № 21:

³ «Արարատ», 1880, № 2, էջ 107—108.

իւր որ Թիֆլիսի ընկերությունն իր քսանամյա գործունեության ընթացքում չհրատարակեց ոչ մի կրօնական գիրք և լեզվաշինարարության հարցում չգիմեց միայն գրաբարին: Ավելին, երբ էջ-միածնի սինոդը 1892-ին գրավոր դիմեց ընկերության խմբագրական մասնաժողովին ճեմարանի համար տպագրելու «Ավետարանը» և «Աստվածաշունչը», ընկերությունը պատասխանեց, որ ինքը կոչված չէ տպագրելու կրօնական գրքեր և չի կարող կատարել սինոդի խնդրանքը¹: Տարիներ անց՝ 1910 թ. Կովկասի հրատարակչական ընկերությունը միաձայն որոշում է ընդունում կանոնադրության մեջ պարզորոշ արտահայտել, թե ինչպիսի գրքեր պետք է տպագրել, որպիսով ընկերության ղեկավար կազմում էզերական ընտրվելու դեպքում չտպագրեն սաղմոս-ավետարան, որովհետև դրանով «մեռելության կղատապարտվի ընկերությունը»²:

Գրիգոր Արծրունին պտնում էր, որ ազգային գրականության նմուշների հետ ընկերությունը մեծ տեղ պետք է հատկացնի նաև թարգմանական գրականությանը, որովհետև ոուս և եվրոպական ուսուցիչս գրողներից շատերը կարողացել են մերկացնել, դատապարտել հասարակության արատավոր կողմերը, պայքարել համազգային թմրության և անտարբերության դեմ: Նա հայ և ուսուցչանքի մեջ տեսնում էր մեծ նմանություն և բարձր գնահատելով ուսուցչական գրականությունը, որին հազորդակից էր մանկուց, առաջին պլանի վրա է դնում այդ գրականության թարգմանական հաբցը:

Գ. Արծրունին պահանջում էր ընկերության ղոները լայն բացել ժողովրդական մասսաների առջև, որովհետև նրանց ակտիվ մասնակցությամբ են պայմանավորված ընկերության նյութական միջոցների հայթայթումը և տպագրած գրքերի իրացումը:

«Մշակի» խմբագիրն իր գաղափարակիցների ազդեցությունը ընկերության ներսում ուժեղացնելու միտումով ձրի տպագրում էր ընկերության հայտարարությունները, ընկերության ընդհանուր ժողովների և նրա օգտին կազմակերպվող հավաքույթների, ներկայացումների, համերգների համար տրամադրում էր թատրոնի իր շենքը:

¹ Հայկ. ՍՍՀ, ԿՊԿԱ, ֆ. 30, գ. 9, Բ. 25:

² Հայկ. ՍՍՀ Գրականության և արվեստի թանգարան, Կովկասի հրատարակչական ընկերության ֆոնդ, Բղթաս. 16:

Ա. Հովհաննիսյանն իր հերթին «Փորձ» և «Արձագանք» պարբերականները դարձրել են Թիֆլիսի հրատարակչականի ոչ պաշտոնական օրգանը: Այնտեղ էին տպագրվում ընկերության վարչության և խմբագրական մասնաժողովի արձանագրությունները, ընկերության անդամների անուն-ազգանունները, կարճ ասած, այն ամենը, ինչ առնչվում էր ընկերության հետ: Նրանք՝ Արծրունին և Հովհաննիսյանը, նման քաղաքականությամբ նախապատրաստական աշխատանք էին տանում ընկերության ընդհանուր ժողովում ձայների մեծամասնություն ստանալու համար: Եվ իրոք, երբ «Մշակը» չկարողացավ հաղթանակ տանել ընկերության 1880 թ. մարտի 9-ի ընդհանուր ժողովում ու զրկվեց ընկերության մեջ ղեկավար դիրք գրավելու հնարավորությունից, ազդարեց բարյացակամ լինել և սկսեց ընկերության նորընտիր ղեկավարների, հատկապես նրա վարչության նախագահ Աբ. Հովհաննիսյանի հասցեին տպագրել կծու հոգվածներ¹:

Աբ. Հովհաննիսյանը անպատասխան չթողեց այդ հարձակումները: «Փորձի» և «Արձագանքի» էջերում նա ցույց տվեց «Մշակի» մեղադրանքների անհիմն լինելը²: Այդ պայքարը փաստորեն հայ պահանջողականների և լիբերալների միջև եղած հակասությունների արտահայտություններից մեկն էր: Լեոն իր «Գրիգոր Արծրունի» ուսումնասիրության մեջ անդրադառնալով այդ պայքարին, մի կողմ է թողնում նրանց գաղափարական հակառակությունների էությունը, և ընկերության նկատմամբ «Մշակի» խմբագրի բռնած դիրքը համարում է միանգամայն ճիշտ ու սկզբունքային³:

Ընկերության շուրջը ծավալված պայքարն ավելի սուր բնույթ էր ընդունում ԶՈ-ական թվականներին երբ «Նոր դար» և «Մուրճ» պարբերականների ղեկավարները իրենց հերթին ցանկանում են բնարվել ընկերության ղեկավար օրգաններում: Ահա թե ինչ է գրում այդ մասին «Մուրճը». «Թիֆլիսի գրական շրջանները սկսեցին մտածել հնարների մասին՝ ընկերության ղեկը խլել Ա. Հովհաննիսյանի խմբից և անցկացնել նոր մարդկանց ձեռքը: Այդ նպատակով բոլոր գրական շրջաններից՝ նորդարականներ, մշա-

¹ Տե՛ս, «Մշակ», 1880, № 40, 41, 1881, № 83, 95, 1882, № 15, 35 և այլն:

² Տե՛ս, «Փորձ», 1880, № 12, «Արձագանք», 1882, № 1, 1884, № 3, 1889, № 14:

³ Տե՛ս, Լեո, Գրիգոր Արծրունի, հատ. 3, էջ 255—259:

կականներ, արձագանքայիններ և... նու, կթե կամենանք, նաև մուրճականներ, անդամ գրվեցին ընդհանուր ժողովից մի քանի ժամանակ առաջ, մեծ թվով Կերկալացի ընդհանուր ժողով և ընտրությունների ժամանակ վարչության և խմբագրական մասնաժողովի անդամներ ընտրեցին բոլորովին ուրիշ մարդկանց, Իհարկե, իրենց շրջանից. միասնականություն չկար կազմի մեջ, որքանով ընտրվածները տարբեր ուղղությունների տեր էին:

«Մշակը», որ հենց սկզբից ընկերությունները համարում էր հասարակական կյանքի առաջատար գործոններից մեկը, բնականաբար, չէր կարող հաշտվել այն մտքի հետ, որ Աբ. Հովհաննիսյանից հետո Թիֆլիսի հրատարակչական ընկերությունը դեկավարներ «նոր դարի» խմբագիրը: «Մշակը» դեռևս 1882 թվականին հուլս ուներ, որ «գոնև ապագայում ընկերության գործերի դեկավարությունը ավելի հմուտ և ընդունակ անձանց ձեռքը անցնելը, որով նա կարողանար մի իրական օգուտ տալ աղքատին մատենագիտության և առհասարակ նպաստեր ընթերցանության տարածմանը»¹: Եվ ահա, երբ «նոր դարը» կարողանում է հաղթանակ տանել ընդդեմ «Արձագանքի», «Մշակը» հարկադրված սուցնում է բացահայտ ճակատամարտի: Այդ պայքարը լավ է նկարագրել Հովհ. Թումանյանը Անուշավան Աբովյանին հասցեագրված՝ 1891 թ. ապրիլի 16-ի նամակում. «Ամսույս 13-ին կաշացավ հրատարակչական ընկերության տարեկան ընդհանուր ժողովը: Այստեղ ամենքն իրենց գույնը դուրս ափին: Սպանդարը («նոր դարի» խմբագիրը— Վ. Վ.) յուր համհարզներից կաղմակերպած վարչությունը ժողովի գալով տեսան, որ «Մշակի» ահագին խումբը, որ նույնիսկ այն երկրոյան էին ստորագրվել (ընկերության անդամ գրվել— Վ. Վ.), խառնվել են դոմալի դահլիճներում, իսկույն խառն ժողով կազմեցին վարչությունից և խմբագրական մասնաժողովից (Իհարկե փակ), իսկ մենք— անդամներս, մոտ 120 հոգի, սպասում ենք դահլիճում: Հանկարծ գալիս է նախագահն իրրե պատգամավոր խառն ժողովի կողմից և հայտնում է, որ ժողովն այսօր չի կայանալու: Չես կարող երեւակայել այն գոռում-գոշումը, ծվոցն ու ծղրտոցը, հրհռոցն ու բղավոցը, ծափն ու ծիծաղը, որ կարող էր սատանաներին դժոխից խրտնացնել ու փախցնել:

Նախագահը դարձյալ գնաց որ վճռի արձանագրությունը շու-

¹ «Մշակ», 1882, № 15:

տով բերի ընդհանուր ժողովի առաջը կարգալու և, ինչ ևս կարծում, վերադարձավ թե... վարչությունը թղթերն առել փախել է. այ քեզ օյին: Այս լրբությունն ավելի ոգևորեց հակառակ կուսակցությանը: Չեմ ուզում բոլորը պատմել, լրագիրներում կրկարդաս, միայն ուզում եմ ասել, որ ընտրությունը յինչով նույն երեկոյան, մշակականները մի շատ ստոր արարքով, որին իրանք առանհրորդական են համարում ու ասում, գրգռեցին շատերի զղվանքը...»¹:

Գր. Արծրունու համառ ջանքերը անցան ապարդյուն՝ նրա կենդանության օրոք ընկերությունը չդարձավ մշակական: Նրա մահից հետո միայն՝ 1896 թվականին ընկերության ղեկավար Երզնաներում ընտրվեցին այն անձինք, որոնց ձեռքումն էր գրտնրվում «Մշակ» թերթը՝ Ալեքսանդր Քալանթարյան, Համբարձում Առաքելյան, Առաքել Բաբախանյան (Լեո): Այս խումբը, հատկապես Ա. Քալանթարյանը, ընկերության ողջ գործունեությունն իր տրամադրության տակ գցելու նպատակով աշխատեց վարկաբեկել ժամանակի ականավոր գրողներին՝ Ղ. Աղայանին, Պ. Պոռշյանին, Հովհ. Թումանյանին և Շիրվանզադեին, և այդ ճանապարհով մեկուսացնել, հեռու պահել նրանց ընկերության աշխատանքներից: Ղ. Աղայանը «Մշակում» հանդես եկավ բողոքով. «Հրատարակչական ընկերության երկարամյա փորձը ցույց է տալիս մեզ, — գրում է նա, — որ ընկերության վարիչների մեջ խմբագրի պաշտոնն ունեցող անձնավորության մոտք գործելը միշտ բարոյական վնաս է հասցրել թե ընկերությանը և թե խմբագրությանը: Խմբագիր մարդ այդ ընկերության մեջ այնպես է վարվում, ինչպես իր խմբագրության մեջ, ուր նա սովոր է մի տեսակ միապետ հանդիսանալու: Այսպես էր մի ժամանակ պ. Աբ. Հովհաննիսյանը, իբրև նախագահ ընկերության վարչության, այնպես և այժմ էլ պ. Ալեքսանդր Քալանթարյանը: Ընկերությունը մի բռնակալի ձեռքից ազատվելով՝ ընկել է երկրորդ բռնակալի ձեռքը: Այս հանգամանքը վնասակար լինելով ընկերությանը, ոչ պակաս վնաս է հասցնում և «Մշակ» լրագրին: Այո, երբ «Մշակը» հարձակողականից դառնում է

¹ Հովհ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 5, Երևան, 1945, էջ 51:

պաշտպանողական, դրանով էա դավաճանում է իր դրոշակին, նա դադարում է հիմնադիրի «Մշակ» լինելուց»¹։

«Նոր դարը» մինչև 1893 թվականը գովաբանում էր ընկերության ամեն մի միջոցառում, այդ մասին տպագրում թերթի աչքի ընկնող տեղում։ Իսկ երբ նրա խմբագիրը 1893 թ. փետրվարի ընտրություններում ձայների մեծամասնությունը չստացավ ու չընտրվեց ընկերության վարչության նախագահ՝ թերթն անցավ հարձակման և սկսեց փրավորել ընկերության ղեկավար կազմում ընտրվածներին։ Այսպես, «Նոր դարի» կարծիքով, 1894 թ. խմբագրական մասնաժողովի անդամները «...կոչված են հայերեն լեզվի մաքրության վրա հսկելու և ընկերության համար պիտանի ու նպատակահարմար գրքեր հրատարակելու։ Այդ համբակներից է կախված մեր ժողովրդի կանոնավոր ու բարոյական գարգացման գործը»²։

Թերթը նկատի ուներ Ղ. Աղայանին, Ա. Բարխուդարյանին, Է. Բաբախանյանին (Լեո), Հ. Առաքելյանին, Բալաղյանին, Ստ. Մալխասյանին և Վ. Լյունկելիին, քանզի 1894 թվականին նրանք էին ընկերության խմբագրական մասնաժողովի անդամները։ Այստեղից էլ «Նոր դարի» միտումնավոր մոտեցումը ընկերության նկատմամբ։ Թերթը չէր նշում խմբագրական մասնաժողովի անդամների անունները, որովհետև հասարակությունը նրանց գիտեր որպես կարող ուժերի։

Բերված փաստերը ցույց են տալիս, որ հայ պարբերական մամուլը որպես սկզբնաղբյուր հայ հրատարակչական ընկերությունների պատմության ուսումնասիրության ընթացքում, պետք է օգտագործել քննադատաբար՝ ելակետ ունենալով ընկերության և պարբերականի փոխհարաբերությունը տվյալ ժամանակաշրջանում։

Պետք է նկատի առնել, որ անկախ ընկերության վարչության նախագահի պաշտոնում այս կամ այն անհատի կուսակցական միտումնավորությունը, այնուամենայնիվ նա իրավասու չէ իր կամքը թելադրելու խմբագրական մասնաժողովի անդամներին, քանի որ, ինչպես նշել ենք, ընկերության կանոնադրության 30-րդ կետի համաձայն վարչությունը վարում էր տնտեսական ղեկա-

¹ «Մշակ», 1897, № 40։

² «Նոր դար», 1894, 26-ը մարտի

վարման գործը, իսկ տպագրական գործը վերապահվում էր խմբագրական մասնաժողովին:

Այդ է պատճառը, որ 1898 թ. Ա. Քալանճարը ընկերության ողջ գործունեությունն իր հսկողության տակ դնելու նպատակով ցանկանում էր ընկերության ղեկավար մարմինները ձուլել մի շրջանի մեջ և ամբողջ ղեկավարությունը կենտրոնացնել նրա ձեռքում: Սակայն ընկերության ներսում եղած դեմոկրատական ճնշման տակ Ա. Քալանճարը չկարողացավ փոփոխության ենթարկել կանոնադրությունը և իրականացնել իր մտադրությունը:

Նման փորձ հետագայում կատարում է նաև Կովկասի հրատարակչական ընկերության վարչության նախագահ Ա. Զարգարյանը: Վերջինս, չհաջտվելով այն մտքի հետ, որ ինքը, ինչպես նաև վարչության մյուս անդամները, տպագրվելիք նյութերի ընտրության հարցում չունեն ձայնի իրավունք, փորձում էր միացնել ընկերության ղեկավար մարմինները և ստեղծել մեկ խորհուրդ՝ բաղկացած 13 անդամից: Այդ նպատակին հասնելու համար Զարգարյանը արգելքներ էր ստեղծում ընկերության մասնաժողովի ընդունած գրքերի տպագրությանը, տարածայնության հրահրում հեղինակներին ու խմբագրական մասնաժողովի անդամներին ձգտելով արդարացնել միանձնյա ղեկավարության անհրաժեշտությունը: Նրա կամայականությունները դառնում են ընկերության ընդհանուր ժողովի քննության առարկա: Զարգարյանի վարած քաղաքականության պաշտպանությամբ են հանդես գալիս Լևոն, Ստ. Լիսիցյանը, Գր. Վարդանյանը, Մ. Աբելյանը: Լևոն, որ դեռևս 1898 թ. Ա. Քալանճարի հետ միասին կողմնակից էր ընկերության ղեկավար մարմինները միացնելուն: 15 տարի անց՝ 1913 թ. պաշտպանում է նույն գաղափարը. «Ծալավ ծանոթ եմ այդ գործին, երկար տարիներ անդամակցել և գործել եմ խմբագրական մարմնի մեջ, ինձ քաջ ծանոթ են այն հարաբերությունները, որոնք ստեղծում էին զանազան թյուրիմացություններ ու անախորժություններ այդ երկու ղեկավար մարմինների մեջ: Շատ անգամ նույնիսկ խնդիրներն այնքան վիճաբանությունների տեղիք էին տալիս, որ ստացված գործն անցնում էր ընդհանուր ժողովին ու նյութ դառնում, ճիշտ այնպես՝ ինչպես այժմ է: Մեզ մնում է մի հնարքով դուրս գալ այդ դրությունից. և ահա այժմյան վարչությունը մտածել է այդ մարմինները ձուլել, միացնել մի մարմնի մեջ, որպեսզի ամեն

բան իր դիտութեամբ, իր վերահսկողութեամբ կատարվի: Այդ ձևը ևս գտնում եմ տեղին, նպատակահարմար, գոնե զանազան թյուրիմացութեանների առջևն առնող»¹:

Զարգարյանի ու նրա համախոհների դեմ 1913 թ. մայիսի 12-ի ընդհանուր ժողովում հանդես են գալիս Հովհ. Թումանյանը, Իս. Հարությունյանը, Դ. Դեմիրճյանը և ուրիշներ: Չնայած անձնական կյանքում մոտ հարաբերութեանների մեջ էին գտնվում Հովհ. Թումանյանն ու Զարգարյանը, բայց վերջինիս վարքագիծն այնքան էր հուզել բանաստեղծին, որ նա ժողովում ելույթ է ունենում չորս անգամ և կոնկրետ փաստերով ցույց տալով վարչութեան գործելակերպին բնորոշ կամայականութեանները, հաստատում, որ «վարչութեանը դուրս է եկել իր իրավասութունից, որի հետևանքով առաջ են եկել անհաճո դեպքեր»²:

Ելնելով Թիֆլիսի հրատարակչական ընկերության փորձից և նրանից, որ ներկա վարչության մեջ ընդգրկված են այնպիսի անձինք (բժիշկներ՝ Զաքարյան, Մինասյան, Մխիթարյան, Հ. Մելիք-Նուբարյան), որոնք ավելի շատ կարող են զբաղվել կառավարչական հարցերով, քան գրական, իսկ խմբագրական մասնաժողովում համախմբված են գրականության մոտ կանգնած մարդիկ (Գյուտ Աղանյան, Ատրպետ, Իս. Հարությունյան, Մարգար, Դ. Դեմիրճյան, Վ. Վալադյան, Սուրխաթյան): Թումանյանը առաջարկում է ոչ թե միացնել երկու ղեկավար մարմինները, այլ «հրավիրել վարչությանը, որ նա գործի կանոնադրության սահմաններում»³:

Ժողովականներն ընդունում են Թումանյանի առաջարկությունը և ղեկավար մարմինների միացման հարցը դուրս է գալիս օրակարգից: Բայց խմբագրական մասնաժողովի անդամների վրա բացասաբար են ազդում իրենց հասցեին եղած անարգար կշտամբանքները և նրանցից ոմանք որոշում են ինքնակամ կերպով հեռանալ մասնաժողովից: Երիտասարդ գրող Դ. Դեմիրճյանը համոզված, որ նման քայլը կարող է վտանգավոր լինել ընկերության հետագա գործունեության համար, հետևյալն է

¹ Կովկասի հայերեն գրքերի հրատարակչական ընկերության «Տեղեկագիր»¹, 1914, էջ 67:

² Նույն տեղը, էջ 54:

³ Նույն տեղը, էջ 56:

դրել մասնաժողովի նախագահ Գ. Աղանյանին. «Ցավում եմ, որ այսօրվա նիստին չեմ կարող ներկա լինել: Եթե այս երկսողք պաշտոնական նշանակություն, կարող է ունենալ, ուստի և ես իմ կողմից համաձայն եմ, որ խմբագրական մասնաժողովը վերսկսի իր գործը: Ինձ համար այժմ պարզվում է այն հանգամանքը, որ եթե մենք հրաժարվենք, ընկերության գործը գործնականում կիսանգարվի, և բացի այդ, նրա թշնամիների համար նոր առիթ կստեղծվի վարկաբեկելու ընկերությունը»¹:

Մենք հանգամանորեն անդրադարձանք Թիֆլիսի հրատարակչական ընկերության կազմակերպական կառուցվածքի բնութագրմանը, գրեթե շրջանցելով Կովկասի ընկերության կառուցվածքի ու նպատակի քննությունը: Բանն այն է, որ Կովկասի ընկերությունը փաստորեն հանդիսացել է Թիֆլիսի ընկերության գործունեության օրգանական շարունակողը: Բավական է ասել, որ այդ ընկերության կանոնադրությունը ըստ էության Թիֆլիսի ընկերության կանոնադրությունն էր՝ աննշան փոփոխություններով: Լուստի ավելորդ կրկնությունից խուսափելու համար տեղին ենք դառնում խոսել միայն այն փոփոխությունների մասին, որոնք տեղ են գտել Կովկասի հրատարակչական ընկերության կանոնադրության մեջ:

Առաջին տարբերությունն այն է, որ Կովկասի հրատարակչականը անվանի գրողներին, գրականագետներին և թարգմանիչներին ընկերության շուրջը համախմբելու նպատակով նրանց ընտրում էր պատվավոր անդամ՝ առանց անդամավճարի: Հայ մտավորականների հավաքագրումը բացատրվում է նրանով, որ նորակազմ ընկերությունը իր տպագրած գրքերի որակը բարձրացնելու համար ցանկատում էր խմբագրական մասնաժողովի կազմում ընտրել գերազանցապես մասնագետների: Երկրորդ՝ Կովկասի ընկերությունն իր հրատարակությունները հայկական գյուղերում տարածելու, անդամների թիվը մեծացնելու, ուսուցչությունը իր աշխատանքների մեջ ներգրավելու նպատակով որոշում է բոլոր անդամներին անդամավճարի (3 ռուբլի) դիմաց առև նույն արժեքի գիրք, քաղաքային ուսուցիչներին՝ 4 ռուբլու, իսկ գյուղական՝ 5:

Փոփոխություններից մեկն էլ այն էր, որ Կովկասի հրատարակչականը հաշվի առնելով Թիֆլիսի ընկերության հասցեին

¹ Հայկ. ՈՍՀ ՊԿՊԱ, ֆ. 318, ց. 1, Գ. 14, Բ. 4:

սյարբերականներում եղած դիտողությունները ստեղծում է վեր-
ստուգիչ հանձնաժողով՝ բաղկացած Յ հոգուց: Հանձնաժողովը
իրավունք ունի ստուգելու ընկերության ելքը, մուտքը և իր եզ-
րակացությունը ներկայացնել ընդհանուր ժողովի՝ հաստատման:
Բացի այդ, Կովկասի և հայ գաղթօջախների ընկերության
շուրջը համախմբելու և տեղերում հրատարակչական գործը զար-
կացնելու նպատակով, Կովկասի ընկերությունը իր կանոնա-
դրության մեջ մտցնում է կետ՝ հայաբնակ վայրերում ընկերու-
թյան մասնաճյուղեր ստեղծելու մասին: Այդ մասնաճյուղերին
իրավունք էր տրվում տեղում տարածել ընկերության հրատա-
րակությունները, հանդես գալ ընկերության նիստերում իրենց
կարծիքներով ու առաջարկություններով, ինչպես նաև խմբա-
գրական հանձնաժողովի դիտությունները տպագրել գրքեր:

Կովկասի ընկերությունը նյութապես օգնում էին Բաքվի (135
աճյուղ), Վլադիկավկազի (67), Վաղարշապատի (58), Գան-
ձակի (53), Երևանի (49), Արդվինի (80) մասնաճյուղերը: Այդ
էջուղերը ոչ միայն անդամավճարներ են մուծում ընկերության
դրամարկղը, այլև այն գումարները, որ գոյանում էին տեղերում
իրենց ուժերով կազմակերպված դասախոսություններից, հա-
ճերգներից ու ներկայացումներից:

Ինչպես տեսնում ենք Կովկասի, ինչպես նաև Թիֆլիսի հրա-
տարակչական ընկերությունների անդամների թվում են եղել
հատկապես այն վայրերի բնակիչները, ուր փոքր ինչ զարգա-
ցած է եղել արդյունաբերությունը: Այսպես՝ Գորիսը, Էջմիածինը,
Սևբարը, Լիճքը, Նղվարդը ունեցել են միայն մեկական անդամ,
շատ գյուղեր՝ ոչ մի, իսկ Ալավերդին՝ 26, Գորիսը՝ 13, Ղարա-
քիլիսան՝ 19:

* *

*

«Մի լավ բան կա՝ էդ ազգերի լավ
հարաբերությունն է, որ հիմնված է
դարերի պատմության վրա»:

Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

Բուրժուական հարաբերությունների զարգացման հետևան-
քով «առանձին ազգերի հոգևոր գործունեության արգասիքը
դառնում է ընդհանուրի սեփականությունը»¹: Առավել քաղաքա-

¹ Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Կոմունիստական պարտիայի մանիֆեստ, Նրե-
յան, 1948, էջ 56:

կիրթ ազգի մշակույթը թարգմանաբար յուրացվելով այլ ազգերի կողմից, խթանում է նրանց մտավոր զարգացմանը, առաջընթացին: Թիֆլիսի և Կովկասի հրատարակչական ընկերությունները լինելով կազմակերպված հայ մշակութային օջախներ, ոչ միայն թարգմանական գրականությամբ նպաստեցին ժողովուրդների գրական կապերի մերձեցմանն ու ընդլայնմանը, այլև իրենց գործունեությամբ որոշակի խթան հանդիսացան այլ ժողովուրդների մշակույթի զարգացմանը:


Հայտնի է, որ կուլտուրական արժեքների փոխանակումը օգնում է տարբեր ազգությունների հոգևոր ընդհանրությունների ձևավորմանը, և միշտ էլ յուրաքանչյուր ազգ մյուս ազգերի կուլտուրական արժեքներից վերցնում է համամարդկայինը, առաջադիմականը և այն ներհյուսում իր ազգային կուլտուրայի կենսունակ ավանդներին: Այդ աբզասավոր պրոցեսի ուժն ու յուրահատկությունը մարմնավորված են նաև այն բանում, որ մի ժողովրդի կուլտուրայի նվաճումները ի վերջո դառնում են ընդհանուր-համամարդկային կուլտուրայի սևիականությունը:

Ինչպես նշել ենք, Թիֆլիսի և Կովկասի հրատարակչական ընկերությունների նպատակը չի եղել նյութական շահը: Նրանք եղան և այս իմաստով օրինակ հանդիսացան ինչպես Անդրկովկասի, նույնպես և Մերձբալթյան ժողովուրդների համար՝ ստեղծելու նմանատիպ հրատարակչական ընկերություն: Այսպես, Հատվիայի Լիպավա քաղաքի մտավորականները ծանոթանալով Թիֆլիսի հրատարակչական ընկերության կառուցվածքին (հավանորեն այնտեղ սովորող հայ ուսանողների կամ ուսսական թերթերի միջոցով) 1895 թ. մայիսի 19-ին ընկերության վարչությանն են դիմում հետևյալ գրությամբ. «Խնդրում ենք ուղարկել Հեր ընկերության կանոնադրությունը, ինչպես նաև ծրագիրը, քանի որ մեզ մոտ Լիպավայում ուզում ենք հիմնադրել նույնանման ընկերություն: Ցանկալի կլինի, որ Դուք խորհուրդներ տալիք այդ նպատակի համար»¹:

Թիֆլիսի ընկերության վարչությունը ոչ միայն կատարում է լատիշ ընկերների պահանջը, այլև ողջունում է նրանց նախաձեռնությունը և ի սրտե հաջողություն մաղթում ստեղծվող հրատարակչական ընկերության գործունեությանը²:

¹ Հայկ. ՄՍՀ ՊԿՊԱ, ֆ. 30, դ. 11, Դ. 39:

² Նույն տեղը, Բ. 63:



Թիֆլիսի և Կովկասի հայոց հրատարակչական ընկերությունների
հրատարակած գրքերը

Մեկ տարի անց՝ 1896 թ. ապրիլի 22-ին, Լիպավայի նորաստեղծ հրատարակչական ընկերության վարչության նախագահ Դավիթ Յուրկովսկին հետևյալն է գրում. «Թիֆլիսի հայկական պրեսի հրատարակչական ընկերությունն այնքան սիրալիր գտնվեցավ, որ ուղարկեց իր կանոնադրության երկու օրինակը, որից մենք օգտվեցինք, հիմնելով մեզ մոտ, Լիպավա քաղաքում լատիշական գրքի հրատարակչության ընկերություն, որը վերջերս հաստատվեց կառավարության կողմից:

Սրանով հայտնելով խորին շնորհակալություն Ձեր կողմից ցույց տված սիրալիր վերաբերմունքի համար, ես համարձակվում եմ կրկին անգամ անհանգստացնել Ձեզ: Ձեր և մեր կանոնադրության 28-րդ կետի համաձայն ընկերության վարչության և խմբագրական հանձնաժողովի հարաբերությունների կարգը որոշվում է փոխադարձ համաձայնությամբ. քանի որ Ձեր ընկերությունը գոյություն ունի արդեն մի քանի տարի, ուրեմն նա, իհարկե, մշակել է վարչության և խմբագրական հանձնաժողովի հարաբերությունների ամենալավ տեսակը, դրա համար կիսնդրերի կրկին սիրալիր լինել, մեզ ուղարկելով գրավոր արտահայտված «հարաբերությունների» կարգը:

Ձեր ծառայության համար հայտնելով իմ խորին շնորհակալությունը, մնում եմ լիակատար հարգող՝ Դավիթ Յուրկովսկի»¹:

Հայ կուլեզաները պատասխան նամակով հակիրճ և որոշակի բավարարում են Դ. Յուրկովսկու պահանջը և միաժամանակ հայտնում, որ «լավագույն ցանկություններով պատրաստ ենք միշտ օգնել լատիշ ալգերի լուսավորության մասին մտածող ընկերությանը»²:

Այս փաստը, որքան մեզ հայտնի է, լինելով առաջին փաստաթուղթը հայ և լատիշ ժողովուրդների կուլտուրական կապերի վերաբերյալ, վկայում է, որ Լատվիայում ստեղծված հրատարակչական ընկերությունը եղել է Թիֆլիսի հայ հրատարակչականի տարբերակը: Դրանում ամենի ենք համոզվում, երբ տեղեկանում ենք, որ նրանք, փոփոխության շենթարկելով կանոնադրությունը և ընդունելով այն նույնությամբ, հետագայում ունեցել են նույն տարածայնությունները, ինչ տարիներ շարունակ

1 Հայկ. ՄՍՀ, ՊԿՊԱ, ֆ. 3, գ. 12, թ. 32:

2 Հայկ. ՄՍՀ ՊԿՊԱ, ֆ. 30, գ. 12, թ. 32:

դոյություն ունեին Թիֆլիսի ընկերության վարչության և խմբագրական մասնաժողովի անդամների միջև:

Լատիշ մտավորականների օրինակին է հետևել նաև Ադրբեջանի մտավորականությունը: Հայտնի է, որ 1912 թ. Բաքու է սևղափոխվում Հովհաննես Հովհաննիսյանը և մինչև 1918 թ. վարում քաղաքային վարչության ուսումնական հանձնաժողովի նախագահի պաշտոնը: Այդ տարիներին բանաստեղծը մտերմական կապ է հաստատում տեղի ազգային մտավորականության և հատկապես զրչակիցներ Նաջավրեկ Վեդիրովի ու Նարիման Նարիմանովի հետ և խրախուսում ազգային հրատարակչական ընկերություն ստեղծելու նրանց ցանկությունը:

Այս մտահոգությամբ նա 1912 թ. հոկտեմբերի 2-ին հետևյալն է գրում Կովկասի հրատարակչական ընկերության խմբագրական մասնաժողովի նախագահ Գյուտ քահանա Աղանյանին. «Այստեղի թուրքերից (ադրբեջանցիներից — Վ. Վ.) մի խումբ միտք էն հղացել Հրատարակչական ընկերություն հիմնելու: Դոքա դիմեցին ինձ և խնդրում են մեր Հրատ. ընկերության կանոնադրությունը, որ օրինակ լինի իրենց համար: Ուստի ես էլ իմ կողմից քեզ եմ խնդրում, որ որքան կարելի է շուտ ուղարկես Հրատ. ընկ. կանոնադրությունը ուսերեն (որքան ես գիտեմ, սովորած կա, մի օրինակ) ինձ գիմող թուրք երիտասարդների ցանկությունը կատարելու համար»¹:

Հ. Հովհաննիսյանի ջանքերը զուր չեն անցնում: Բաքվի ազդերեջանական հրատարակչական ընկերությունը հիմնվում է 1913 թվականին: Նրա հիմքում ես ընկած էին Կովկասի հրատարակչական կանոնադրության սկզբունքները:

Թիֆլիսի և Կովկասի հայ հրատարակչական ընկերությունների գերը ժողովուրդների հոգևոր կուլտուրայի զարգացման գործում չի սահմանափակվում մերը նշածով: Նրանք շոշափելի գործ կատարեցին նաև հարևան ժողովուրդների գրական երևույթների թարգմանության գործում, դրանով իսկ նպաստելով նրանց հոգևոր մերձեցմանն ու բարեկամական կապերի ամրապնդմանը: Արխիվային փաստաթղթերի վկայությամբ, Թիֆլիսի հրատարակչական ընկերությունը տարիներ շարունակ իր հրատարակություններից մեկական օրինակ ձրի ուղարկել է վրացական «Ցիսկարիա», «Իվերիա», «Սաքարթվելոս Մոամբե», «Ցնորիս

¹ Հավն. Հովհաննիսյան, Երկերի ժողովածու, հ. 3, էջ 164:

փութեցելի» պարբերականներին¹։ Չմոռանանք նշել նաև, որ ընկերությունը ձրի էր տալիս վճար հրատարակիչներին նաև իր ուժերով արտասահմանից ձեռք բերած և տպագրած նկարների կլիշեները։ Այսպես, օրինակ, 1897 թ. Թիֆլիսի ընկերությունը Մ. Զուգելուն է հանձնում իր տպագրած Ն. Ռուբակինի «Բնության մեծ և ահեղ երևույթների մասին» գրքում տեղադրած կլիշեները²։ Ավելին, նկատի բռնենալով, որ մոռելիք տարածվել էր Վրաստանի տարածքում և վտանգ էր սպառնում գյուղատնտեսությանը, ընկերությունը հանձնարարում է Ս. Տեր-Ստեփանոսյանին վրացերեն թարգմանել Տեր-Բարսեղյանի «Մոռելիք և նրան ջնջելու հնարները» բրոշյուրը և «500 օրինակ ձրիապես բաժանել այն տեղերը, ուր առավելապես սաստկացած է մոռելիք»³։

Թիֆլիսի և Կովկասի հրատարակչական ընկերությունները կուտորական կապի մեջ էին ռուսական մի շարք մշակութային օջախների հետ։ Թիֆլիսի հրատարակչականը նամակագրական կապ է ունեցել ռուսական մանկական պարբերական «Родник»-ի խմբագրության հետ, իր հրատարակչություններից մեկական օրինակ ձրի ուղարկել է «С.-Петербургское бюро печати»-ին, «Кавказ» և «Новое обозрение» թերթերին։

Ինչպես տեսնում ենք, հայ հրատարակչական ընկերությունները գրական-կուտորական համագործակցության ճանապարհով ձգտել են դուրս գալ ազգային նեղ շրջանակներից, ընդգրկել այլևի լայն սահմաններ, գիտակցելով փոխազդեցությունների դերն ու նշանակությունը ժողովրդի հոգևոր կուտորայի զարգացման գործում։

Այժմ անցնենք հրատարակչական ընկերությունների գործունեության քննական վերլուծությանը ըստ մշակութի պատմության հիմնական ոլորտների՝ գեղարվեստական գրականություն, բանահյուսություն, պատմագրություն, թարգմանական գրականություն։

¹ ՀՄՍՀ, ՊԿՊԱ, ֆ. 30, գ. 13, թ. 1։

² Նույն տեղը, գ. 12, թ. 13։

³ Նույն տեղը, գ. 2, թ. 23։

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1.

«...մեղանում, որպես երևում է,— գրել է Ռաֆֆին,— ամեն ինչ պետք է հեղինակը անե, համ գրե, համ տպագրե, համ աշխատե վաճառել, որ իր ծախսը հետ ստանա»¹։ Սրանով պիտի բացատրել այս հանգամանքը,— լրացնում է Նար-Դոսը,— որ մեր գրողներից շատերն այնքան չեն գրել, որքան որ կարող էին։ Հրատարակչական գործը մեղանում դարձել էր մի տեսակ «բարեգործություն»։ Հեղինակը դիմում էր այս կամ այն «ազգասեր» հարստին, որը երկար չնմուշում անկողց հետո վերջապես համաձայնվում էր հոգալ գրքի տպագրության ծախսերը, ոչ թե «ազատիրությունից», այլ զահլա տանող հեղինակին գլխից ռազ անելու համար։ Հեղինակն էլ ի նշան «երախտագիտության» դիրքը նվիրում էր նրա անվան և գրքի ճակատին գրում՝ «ծախիվք մեծապատիվ այս-ինչի»²։

Ահա ընդհանուր պատկերն այն ժամանակաշրջանի, երբ գործել են Թիֆլիսի և Կովկասի հայ հրատարակչական ընկերությունները։ Բնական է, որ ընկերություններն իրենց հնարավորությունների սահմաններում ի վիճակի չէին հոգալու ազգային ամբողջ մշակույթի արտագրության պրոցեսը, և սակայն մի էական չափով նպաստել են գրական կյանքի կաղմակերպմանը, աջակցել հայ գրողի նյութական ու բարոյական կացության կարգավորմանը։

Հայ գրողների երկերի հրատարակությամբ ընկերությունները առաջնորդվել են հետևյալ սկզբունքով։ Առաջին, որ տպագրվող գործը լինի նորություն, այսինքն՝ տպագրված չլինի առանձին գրքով կամ մամուլում։ Երկրորդ՝ ստեղծագործությունը ունե-

¹ Ռաֆֆի, Գրականության մասին, 1958, էջ 138։

² Գրական ժառանգություն, գիրք առաջին, 1961, էջ 272։

նա «որոշ առաջադիմական հասարակական եզրի և օգնի ժողովրդին հասկանալ իր իրավունքները, բարեկամի իր ֆիզիկական և տնտեսական դրությունը»¹։

Թիֆլիսի հրատարակչականը, իր ծրագրի սոցիալ-քաղաքական բովանդակության հիմքում ունենալով հայ ժողովրդի ազատագրության հարցը, հատուկ ուշադրություն էր դարձնում այն գրողներին, որոնց ստեղծագործությունները միտված էին հայրենասիրական ու ազատագրական գաղափարներով։ Այս խմատով ընկերությունն իր կազմավորման առաջին օրից հատկապես առաջնությունը տալիս էր Բաֆֆու և Լ. Պատկանյանի երկերի հրատարակությանը։ Մասնավորապես Բաֆֆին «ըմբռնում էր օրվա տրամագրությունները,— գրում է Լևոն,— վերարտադրում էր դրանց գեղարվեստական պատկերների մեջ, որոնց միջոցով դնում էր հասարակական մտքի առաջ ոչ միայն տիպեր, այլև ամբողջ ծրագիրներ»²։

Թիֆլիսի հրատարակչականը վիպասանի կենդանության օրոք տակավին իր կազմակերպչական շրջանն էր ապրում և ելնելով իր նյութական սուղ միջոցներից առաջարկում էր Բաֆֆուն տպագրության ներկայացնել միայն փոքր կտավի գործեր։ Բաֆֆին, ինչպես նաև «Մշակի» շուրջը համախմբված մտավորականները, 1880 թ. մարտի 9-ին ընկերության ընդհանուր ժողովում շատանալով ձայների մեծամասնություն և չընտրվելով նրա խմբագրական մասնաժողովի կազմում³, դադարում են ընկերության հետ հույսեր կապելուց։ Նույն թվականին Մելքոն Փանյանցուն հասցեագրած նամակում վիպասանը գրել է. «Հրատարակչական ընկերությունն իր շնչին դրամազլխով իրան նպատակ է դրել հրատարակել մանր, ըստ մեծի մասի մանկավարժական պրքույկներ... բացի դրանից, ընկերության քննիչ մասնաժողովը այնպիսի անձինքներից է բաղկացած, որ հազիվ թե փոքրիշատե իր հեղինակությունը հարգող մի գրող կցանկանար իր աշխատությունները նրանց քննությանը ենթարկել»⁴։

Բաֆֆու մահից հետո Թիֆլիսի հրատարակչականը կրկին ցանկանում է տպագրել նրա գործերը։ Այդ նպատակով 1892

¹ ՀՄՍՀ ՊԿՊԱ, ֆ. 30, դ. 8, թ. 26։

² Լեո, Անցյալից, էջ 42։

³ Տես «Մեղու Հայաստանի», 1880, 29 մարտի համարը։

⁴ Բաֆֆի, Գրականության մասին, Երևան, 1958, էջ 140—141։

Թվականին դիմում է Րաֆֆու այրուն՝ Աննա Րաֆֆուն խմբագրական մասնաժողովին ներկայացնելու պարբերականներում տպագրված և անտիպ ստեղծագործությունները՝ առանձին գրքով հրատարակելու համար: Վիպասանի այրին չի համաձայնում ընկերության առաջարկությանը: Մասնաժողովը փորձում է Գ. Զմշկյանի միջոցով համոզել Աննա Րաֆֆուն, սակայն վերջինս ոչ միայն հաստատ է մնում իր որոշմանը, այլև դիմում է Թիֆլիսի գրաքննչական կոմիտեին, որ առանց իր իմացության ու համաձայնության ոչ ոքի չթույլատրվի առանձին գրքով կամ պարբերականներում տպագրել ամուսնու գործերից¹: Մեզ հաջողվեց նույն բովանդակությամբ մի այլ դիմում ևս հայտնաբերել լենինգրադի պետական կենտրոնական պատմական արխիվում՝ գրած Աննա Րաֆֆու կողմից 1902 թվականին Լոնդոնից: Վիեննայում տպագրելով ամուսնու երկերը, Աննան երկյուղ ուներ, թե կարող են իր հրատարակությունները շտապովել, եթե որևէ անհատ կամ կաղմակերպություն ևս դրանք տպագրի: Նա խընդրում է Պետերբուրգի գլխավոր գրաքննչական կոմիտեին՝ պահպանել հեղինակային իրավունքը և բացի իրենից ոչ-ոքի թույլ չտալ տպագրել Րաֆֆու երկերը²:

Այսպիսով, Րաֆֆու երկերի տպագրության գործում Թիֆլիսի հրատարակչականը չկարողացավ իրականացնել իր մտադրությունը, իսկ ինչ մնում է Ռ. Պատկանյանի հայրենասիրական գաղափարներով հագեցած քաղաքացիական մարտական պոնդիային, ընկերությունը մեկ տարվա ընթացքում լույս ընծայեց բանաստեղծի երեք գրքույկները՝ «Մանկական երգեր» (1880), «Գամառ-Փաթիպայի բանաստեղծությունը» (1881), «Մանկական ոտանավորներ և երգեր» (1881): Տասը տարի անց, 1892 թ. Թիֆլիսի հրատարակչականի խմբագրական մասնաժողովը որոշում է. «Տպագրել Ռ. Պատկանյանի թե գրական լեզվով և թե նոր-Նախիջևանի բարբառով գրված ոտանավորները և արձակ հեղինակություններ»: Այդ նպատակով մասնաժողովը հարկ է համարում «դիմել հեղինակին նախ՝ թույլտվություն ստանալու և իմանալու նրա պայմանները, երկրորդ՝ խնդրել նրանից յուր քուրոր տպված գրվածքների ցուցակը, որտեղ եթե կարելի է տեղեկություններ լինեն, թե ե՞րբ և որտե՞ղ են տպագրված, և եր-

¹ ЦГИА, Груз. ССР, ф. 480, оп. 1, д. 151, стр. 4.

² ЦГИАЛ, ф. 776, оп. 2, д. 669, стр. 27.

բորոք՝ որ նա բարեհաճի ուղարկել յուր անտիպ ձեռագրերը, իսկ տպագրվածներից որոնք կարող է»¹։ Մեզ չհաջողվեց պարզել, թե ինչ է տպատասխանել բանաստեղծը ընկերությունն այդ առաջարկությանը։ Սակայն, նկատի ունենալով, որ նա պատրաստել էր իր «Ընտիր երկասիրությունքը» երկու հատորով տպագրել Վառվարե Բանանյանի միջոցով, հավանաբար գերադասել է լուսնի մատնել ընկերության առաջարկությունը։

Հատկանշականն այն է, որ Թիֆլիսի և Կովկասի հրատարակչականները անհատական վերաբերմունք չունեին ներկայացվող գրական ստեղծագործությունների նկատմամբ և առաջնորդվում էին որոշակի գեղագիտական չափանիշներով։ Ելնելով այդ սկզբունքից՝ ընկերությունների խմբագրական մասնաժողովի անդամները քննադատել, վեր են հանել ներկայացրած ստեղծագործությունների ուժեղ և թույլ կողմերը, առաջարկել հեղինակներին վերանայել գործը, հղիել, վերացնել նկատված թերությունները և նոր միայն տպագրել։ Այսպես, 1884 թ. Ղ. Աղայանի առաջարկությամբ Թիֆլիսի հրատարակչականի համար Շիրվանզադեն գրում է «Նամուս» վեպը և նույն թվականին ներկայացնում խմբագրական մասնաժողովին։ Մասնաժողովի անդամներ Հ. Տեր-Հովհաննիսյանը և Գ. Տեր-Ալեքսանդրյանը վեպն ընթերցում են և հեղինակի ուշադրությունը հրավիրում մի շարք էական թերությունների վրա։ Բեն չենք կարող նշել թերությունների բնույթը, բայց դատելով հեղինակի այն տողերից, թե «Նամուսը» շարունակում են արտագրել փոփոխելով և այն հանգամանքից, որ քննադատությունից հետո Շիրվանզադեն վեպի վրա աշխատել է մոտ չորս ամիս, կարելի է ասել, որ դիտողությունները եղել են լուրջ, սկզբունքային, որոնց վերացմամբ չահել է ստեղծագործությունը։

Եվ այսպես, Շիրվանզադեի մեծ կտավի անդրանիկ գործը, որը գրողի հուշակ բերեց նրան, անցնելով Թիֆլիսի հրատարակչականի քննական բովով, ձեռք է բերել ձևի ու բովանդակության ամբողջական համապատասխանություն, որը վկայում է ընկերության գրական-գեղարվեստական բարձր սկզբունքայնության մասին։

1896 թ. մարտին Պոռչյանը ընկերությանն է ներկայացնում «Նա կամ այցետոմս» խորագիրը կրող պատմվածքը, որի մա-

¹ ՀՍՄԶ, ՊԿՊԱ, ֆ. 30, գ. 7, Թ. 164։

«ին խմբագրական մասնաժողովը արձանագրել է հետևյալը. «Սանդիկանալով դրա բովանդակության հետ և քննադատելով նրա գեղարվեստական և հոգեբանական տեսակետից՝ մասնաժողովը հետևյալ եզրակացությանը եկավ: Գրվածքի նյութը հետաքրքրական, նկարագրած դեպքը շատ սրտաշարժ, բայց դրա մշակությունն ունի շատ թերություններ. գլխավոր նյութը բարդված է շատ ավելորդ մանրամասնություններով, որոնք թուլացնում են ընդհանուր տպավորությունը: Կան շատ անբնական և արհեստական կտորներ, որոնք հոգեբանական և նույնիսկ գեղարվեստական կողմից անհարմար են և սխալ: Այդ հիման վրա մասնաժողովը որոշեց, որ յուր ներկա ձևով գրվածքը չի կարող տպագրվել, իսկ եթե հեղինակն ավելի մշակի այդ նյութը և հանի անբնական կտորները, համառոտելով միևնույն ժամանակ ավելորդ մանրամասնությունները, այն ժամանակ գրվածքը կարող է ընդունվել, իհարկե նորից քննության առնելուց հետո:

Մասնաժողովի անդամներից պ. Լևոն Մանվելյանը հանձն առավ կարդալ հեղինակի հետ գրվածքը և անել յուր բոլոր կարևոր ցուցմունքը՝ ուղղելու համար»¹:

Մի քանի օր հետո, 1896 թ. ապրիլի 7-ին, Լ. Մանվելյանը խմբագրական մասնաժողովին հայտնում է, որ «Պ. Պոռշյանը համաձայն չէ ուղղել յուր գրվածքը՝ մասնաժողովի ցուցմունքների համաձայն, ուստի ետ է վերցնում գրվածքը»²:

Վերը բերված դիտողությունից չի զգացվում, թե խոսքը Պոռշյանի փոքր կտավի որ գործի մասին է, քանի որ այնտեղ յիշել չի ասված պատմվածքի բովանդակության վերաբերյալ և, ինչպես հայտնի է, վիպասանը շունի «նա կամ այցեւորմա» վերնագիրն ունեցող տպագրված ստեղծագործություն:

Մեր պրպտոմները բերին այն համոզման, որ Թիֆլիսի հրատարակչականը քննադատել է վիպասանի «նա» պատմվածքը, որ հեղինակը նույն՝ 1896 թվականին տպագրել է առանձին գրքով, հաշվի չառնելով ընկերության դիտողությունները արժանացել է մամուլի արդարացի քննադատությանը³:

«Նա» պատմվածքում Պոռշյանը նկարագրել է թուրքական յաթաղանից մաղապուրծ եղած Լրբեմնի ունեւոր ծերունու մխի-

¹ ՀՍՍՀ, ՊԿՊԱ, ֆ, 30, գ. 10, թ. 17:

² Նույն տեղը, թ. 18:

³ Տե՛ս «Մուրճ», 1896, № 9, էջ 131—133:

թարությունն ու հույսը հանդիսացող թողան չարքաշ կյանքը։
Ծերութիւնն սովոր չի նկատու մտերալ, մի քանի օր թոռնիկի հետ մնում
է քաղցած։ Սակայն գտնվում են երկու սրտացալ ուսուցիչներ,
որոնք որոշ գումար են տալիս ծերունուն։ Վերջինս հաց է գնում
և շտապում տուն՝ սովից փրկելու թոռնիկին։ Նրան գտնելով մա-
հացած՝ ծերունին անզոր է գտնվում դիմադրել ծանր վշտին և
խնքնասպանութուն է գործում։ Կյանքից վերցրած այդ դէպքը
հեղինակի գրչի տակ շատ դժգոյն է նկարագրված, մեծ և կա-
րեոր տեղ է հատկացվել պատահականությանը, իշխում է եր-
կարաբանութունը, որի հետեանքով ստացվել է կերպարների ան-
էնդանություն։

Խմբագրական մասնաժողովը քննադատելով պատմվածքի
թերութիւնները, իրավացիորեն պահանջում էր ոչ միայն տի-
պական եղելության նկարագրութիւն, այլև եղակիի միջոցով
առաւ այն ընդհանուրը, որը բխում է բաղմամբիւ եղելութիւնների
էութիւնից։

Խոտանը կանխելու ընկերության խմբագրական մասնաժո-
ղովը սկզբունքորեն շտապարեց 80—90-ական թվերին սունկի
պէս աճող ապաշնորհ բանաստեղծների երկերը, և ձեռնարկեց
դասական բանաստեղծության արժեքների՝ Նաղաշ Հովնաթանի,
Սայաթ-Նովայի, Ղ. Ալիշանի, Պ. Դուրյանի, Մ. Պշիկթաշլյանի
ստեղծագործութիւնների հրատարակմանը։

Գ. Հախվերդյանի «Գուսանքի» հրատարակումից 30 տարի
անց, 1882 թ. Թիֆլիսի ընկերութիւնը լույս ընծայեց «Սայաթ-
Նովա—աղգային երգիչ (աշուհ)» ժողովածուն՝ դժվար հասկա-
նալի բառերի բացատրութիւնով և «Մի քանի խոսք Սայաթ-Նո-
վայի մասին» առաջարկումով։ Զբաղարարվելով դրանով, ընկե-
րութիւնը, հիմք ընդունելով Գ. Հախվերդյանի այն հավաստիա-
ցումը, թէ ինքը ժողոված ունի 38 աշուղի երգեր, առակ, ասաց-
վածք և վիճակախաղ՝, որոշում է դիմել «հանգուցյալ Հախվեր-
դյանի ժառանգներին՝ ձեռագրի մնացորդները հանձնել ընկե-
րութիւնը տպելու»¹։ Այդ առաջարկութիւնը չարձագանքվեց Հախ-
վերդյանի ժառանգների կողմից, և ընկերութիւնը անկարող
գտնվեց «ժողովրդական գրականութիւն այդ գանձերը լույս աշ-

1 Տե՛ս Գ. Հախվերդյան, Սայաթ-Նովա, 1853, Առաջաբան։

2 «Արձաղանք», 1882, № 29, էջ 455։

խարհ հանել կարեոր բացատրություններով, ըստ օրինակի Հախ-վերդյանի Սայաթ-Նովայի»:

Սայաթնովադիտության մեջ Թիֆլիսի հրատարակչականի երախտիքն ավելի ընդգծվեց 1885 թվականին՝ կապված Գևորգ Տեր-Նևեքսանդրյանի «Թիֆլիսեցոյ մտավոր կյանքը» աշխատութեան ստագրութեան հետ, ուր հեղինակը ջերմ խոսք է ասում իր «հոգեւոր ուսուցիչ» Գ. Հախվերդյանի հայ դրականութեանը մատուցած ծառայութեանների մասին և տպագրում մեծ բանաստեղծի երկունոր խաղը՝ «Թաքավոր իս դիվանս արա» և «Գեղն ու շոբանք»։ Այդ նոր խաղերը, որոնք տեղ չէին գտել բանաստեղծի 1852 թ. ժողովածուում, այնքան էն ոգևորում Թիֆլիսի հրատարակչականի վարչութեան նախագահին, որ, չսպասելով գրքի հրատարակութեանը, այն տպագրում է «Արձագանքի» 1885 թ. № 1-ում:

Անժխտելի է Սայաթ-Նովայի երգերի մասսայականացման գերծում Թիֆլիսի հրատարակչական ընկերութեան պէրը: «Սայաթ-Նովա» ժողովածուն ժողովրդի լայն զանգվածների շրջանում արագ տարածելու նպատակով ընկերութեանը գինը նշանակում է 5 կոպեկ, 100 օրինակ ուղարկում Թիֆլիսի երկու բանտի կառավարիչներին, որ «նոքա այդ գրքույկները ձրիապես բաժանեն հայ կալանավորներին», իսկ 150 օրինակ նվիրում է Պոլսի Միացյալ ընկերութեան վարչութեանը՝ արեւմտահայ ընթերցողների շրջանում տարածելու համար:

Կողմնորոշումը դեպի Ռ. Պատկանյանը, Սայաթ-Նովան, Շիրվանզադեն և նրանց ստեղծագործութեանների տպագրումն ու տարածումն ունեցավ այն հետեանքը, որ ընկերութեանը դարձավ ավելի մասսայական և կարճ ժամանակամիջոցում վալելեց մեծ ժողովրդականութեան: Այսպես, եթէ 1879—1882 թվականներին ընկերութեանն ուներ 187 անդամ, ապա 1885 թվականին նրանց թիվը եռապատկվեց՝ հասնելով 543-ի¹:

Միջնագաբի մեր վերջին լավագույն բանաստեղծների ստեղծագործութեանների տպագրութեամբ շահագրգռված ընկերութեան խմբագրական մասնաժողովի անդամների պրպտումները անտեղի չանցան: 1890 թ. նրանց հաջողվում է Մ. Հովհաննիսյանից վերցնել Նաղաշ Հովնաթանի անտիպ տետրերը: Ծանոթա-

¹ ՀՍՍՀ, ՊԿՊԱ, ֆ. 30, դ. 30, ք. 8:

նալով նրանց բովանդակության հետ, մասնաժողովի անդամները հանգում են հետևյալ հղրակացության. «Նաղաշ Հովնաթանը Էրզնէ և հորինել է աշխարհաբար լեզվով մի այնպիսի ժամանակ, երբ նոր գրականությունը դեռ սկիզբ չէր դրել, և խոսք անգամ չկար մեր աշխարհաբար ստեղծագործությունների մասին: Հովնաթան Նաղաշի ձեռագիրն այդ կողմից ունի պատմական գրական նշանակություն: Իբրև գրական գործ կամ թույլ կտորներ, որքանով զուտ ժողովրդական չէ, խառն է կրոնականի հետ: Ձեռագրի առաջին մասը գրաբար գրվածքներ են կրոնական բովանդակությամբ, նոցա մի մասն առնված է աղոթարանից և շարականներից: Այդ մասն ամենեկին հետաքրքրական չէ և պետք է հանվի տպագրության ժամանակ:

Ձեռագիրը կորստից փրկելու համար պետք է տպագրել, էյցելով առաջաբան, որ բացատրի գրքի տպագրության շարժառիթները և անի մի քանի հղրակացություններ՝: Մասնաժողովի որոշումը՝ տպագրելու Հովնաթանի ստեղծագործությունները, չի իրականանում, հավանաբար Մ. Հովհաննիսյանը քիչ է համաշուկ ընկերության վարձատրությունը և ետ է վերցրել տետրերը:

Արևմտահայ ականավոր բանաստեղծներ Ղ. Ալիշանի, Պ. Դուրյանի, Մ. Պեշիկթաշլյանի ստեղծագործությունները տպագրելու նպատակով 1894 թ. ընկերության վարչությունը պաշտոնական պրությամբ դիմում է Հովհ. Հովհաննիսյանին կազմել և ներկայացնել խմբագրական մասնաժողովին նրանց լավագույն գործերի ժողովածուն: Չնայած Հովհաննիսյանը ժամանակին կատալում է հանձնարարված աշխատանքը, սակայն ընկերությունից անկախ պատճառներով ժողովածուն լույս չի տեսնում: Իսկ թե ինչու, այդ մասին հետո:

Արևմտահայ դրականության այդ կարկառուն դիմքերի հետ արեւելահայ ընթերցողին ավելի մոտիկից ծանոթացնելու նպատակով խմբագրական մասնաժողովը որոշում է տպագրել նրանց Էրկերը, ինչպես նաև գրական-քննադատական ակնարկները: Այդ նկատառումով ընկերության վարչությունը որոշում է «Մշակում» և Պոլսի հայկական լրագրերում տպագրել հայտարարություն, որին արձագանքում են Հ. Ասատուրը, Աբ. Այվազյանը և

Ա. Զոպանյանը: 1891 թվականի հոկտեմբերին զրականագետ
Հ. Ասատուրը գրել է հրատարակչական ընկերությանը. «Պարոն-
յանի մահն ի վեր հետամուտ եղա ուսումնասիրել այդ նշա-
նավոր երգիծաբանին կյանքն ու գործերը: Անդամ ըլլալով այն
մասնախմբին, որ հանգանականություն ձեռնարկած է ի նպաստ
Պարոնյանի ընտանյաց, մտադիր էի գրել իր կենսագրությունը
և հրատարակել Պոլսո մեջ հօգուտ Պարոնյանի կնոջ ու զավա-
կաց: Սակայն տեղեկանալով, թե ընկերությունդ հրավեր կկար-
դա հայ գրագիտաց՝ պատրաստել ԱԶԳԱՅԻՆ ԶՈՋՆՐՈՒ հեղինա-
ւին կենսագրությունը, զբո կռւէ հրատարակել ի Թիֆլիզ, կը
փափագիմ լուսաբանվիլ հետեյալ կետերուն վրա:

ա. Որչափ ժամանակ կը տրվի այդ կենսագրության պատ-
րաստությունը:

բ. Եթե ընկերությունդ խմբագրական մասնաժողովը հարմար
դատե պատրաստված կենսագրության հրատարակությանը, հե-
ղինակը պիտի զրկվի՞ զայն Պոլսո մեջ տպագրել տալու իրա-
ւունքին:

գ. Թիֆլիզի դավառաբարբառով՝ պիտի հրատարակվի այդ
կենսագրությունը, թե Պոլսո դավառաբարբառով:

դ. Իմ նպատակս է ուսումնասիրել Պարոնյանն իբրեւ մարդ
և իբրեւ գրագետ և պատրաստել ոչ միայն կենսագրություն մը,
որ պիտի ճանչցունե Պարոնյանի կյանքը, այլ խղճմիտ ուսում-
նասիրություն մը Պարոնյանի «ԲՈՒՐՈՒ ԳՐՎԱԾՈՅ»։ այս ուղղու-
թյամբ կատարված աշխատասիրություն մը կը հարմարի ընկե-
րությանդ տեսությանց:

Պարոնյանն անձամբ ճանչցած եմ և միշտ հիացող մը եղած
եմ փր չքնաղ տաղանդին. ներկեք ուրեմն, որ ջերմապես շնոր-
հավորեմ ընկերությանդ, որ ոչ միայն կվերատալե ողբացյալ
գրագետին ՄԵԾԱՊԱՏԻՎ ՄՈՒՐԱՅԿԱՆՆԵՐԸ եւ ԱԶԳԱՅԻՆ ԶՈ-
ՋՆՐԸ, այլև տրամադիր է վերստին հրատարակել տալ անոր մյուս
գործերն ալ, և մանավանդ նյութական զոհողություն հանձն կառ-
նու անոր կենսագրությունը պատրաստել տալու համար:

Վերոհիշյալ կետերու մասին ընկերությանդ պատասխանե
ստանալէ հետո պիտի ներկայիմ ես ալ ընկերությանդ աշխա-
տասիրությունը մի Պարոնյանի կյանքին և գործոց վրա, որոշ-
ված ըլլալով Պարոնյանի ընտանյաց հատկացնել ամբողջապե-
սւն գումարն, զոր պիտի ստանամ իբր հեղինակի իրավունք,

և թե գրվածքս հավանությունն հունի ընկերությանդ խմբագրական մասնաժողովին:

Մնամ հարգանք՝
Հրանտ Ասատուր»¹

Հրատարակչական ընկերությունը առանց հապաղելու, նույն թվականի նոյեմբերի 7-ին հետևյալն է գրել բանասերին. «Մեծապատիվ պ. Հրանտ Ասատուր.

Վարչությունս հաճությամբ ընդունելով Ձեր հոկտ. 16—20 սյրությունը, պատասխանում է, որ հանգուցյալ Պարոնյանի կենսագրությունը, ցանկալի է յոթան կարելի է շուտ պատրաստել, ամենաուշ մինչև առաջիկա հունվար, հեղինակն իրավունք ունի նույնը տպել Կ. Պոլսում, երբ ընկերությանս հրատարակությունը լույս տեսած կլինի. կարելի է գրել Պոլսո բարբառով և հարմարավոր է գրել մի ուսումնասիրություն Պարոնյանի բոլոր գրվածոց»:

Ինչպես տեսնում ենք ընկերությունը Հր. Ասատուրից պահանջում էր մեկ և կես ամսում ներկայացնել Հակոբ Պարոնյանի նման գրողի կյանքին նվիրված ուսումնասիրություն: Բնական է, որ բանասերը երբեք չէր կարող իրագործել ընկերության պայմանը, այդ իսկ պատճառով նա իսկույն ևեթ առաքում է իր պատասխան նամակը.

«Մեծապատիվ ատենապետ Թիֆլիզի հայերեն գրքերի հրատարակիչ ընկերության.

Պատիվ ունեցա ստանալ Ձեր նոյեմբերի 7-ի նամակը և անմիջապես ձեռնարկեցի գրել Պարոնյանի կենսագրությունը: Աշխատությունս բավական ընդաբձակ պիտի ըլլա, քանզի Պարոնյանի կյանքին առիթով հարկ պիտի ըլլա խոսել իր ժամանակին կարգ մը իրողությանց մասին, որք մեծ լույս պիտի սփռի ժամանակակից գրական պատմության վրա. հարկ պիտի ըլլար խոսիլ երգիծաբանության, կատակերգության, ծաղրապատկերների հայոց մեջ (Թուրքիո) ունեցած դերին վրա: Ասկե զատ, Պարոնյանի վրա խղճամիտ ուսումնասիրություն մը կուզեմ ընել ի վեր հանելու համար ոչ միայն մարդը, այլև գրագետը, իբրև հրապարակագիր, իբր բարոյախոս, իբր երգիծաբան, իբր կատակերգակ: Ուսումնասիրությունս հոգեբանական և գեղագիտական տեսակետով միանգամայն պիտի քննե «Ազգային ջոջե-

¹ Հայկ. ՍՍՀ, ՊԿՊԱ, ֆ. 30, գ. 12, թ. 179:

բու» հեղինակը, Լվրոպական քննադատության արգի սկզբանց հետևողությամբ»¹։

Ապա բանասերը շարադրում է այն հիմնական խնդիրները, որ ենթադրում է Պարոնյանի մասին ուսումնասիրությունը և որը մատնացույց է անում նման մի հետազոտություն գրելու դժվարությունը։ Հր. Ասատուրը հնարավորություն ունեցավ ընկերությանը ներկայացնել իր ուսումնասիրությունը միայն 1896 թվականի հունվարին։ Այդ մասին ընկերության արձանագրության մեջ կարդում ենք. «Ստացվեց «Հակոբ Պարոնյան (կյանքը, գործը)» ուսումնասիրությունը, որ գրել է պ. Հր. Ասատուրը՝ 387 էջ։ Ձևագիրը ուղարկվեց խմբագրական մասնաժողովին»։ Սակայն, անհայտ պատճառներով ընկերությունը չտպագրեց այդ ուսումնասիրությունը։ Հավանական է, Հր. Ասատուրի «Պարոնյանի առաջին քայլերը» (1903), «Պարոնյանի թատրոնը» (1907) հետազոտությունները, որոնք նախասովետական շրջանում երգիծաբանի մասին տպագրված լավագույն ուսումնասիրություններից են, ընկերության կողմից չտպագրված աշխատության առանձին գլուխներն են, որոնք պարզաբանում են Պարոնյանի գործունեությունը մինչև 1877 թվականը։

Այլ ընթացք ստացավ «Պետրոս Դուրյան» կենսագրական ուսումնասիրությունը Ա. Չոպանյանի հեղինակությամբ, որ ընկերությունը լույս ընծայեց 1894 թվականին։ Այդ գրքույկը վաղամեծիկ բանաստեղծի մասին գրված առաջին տեսական շարադրանքն է, միաժամանակ պատանի բանասերի անդրանիկ ուսումնասիրությունը։ Գրքույկի տպագրությամբ հաստատվում է ջերմ ու մտերմական կապ Ա. Չոպանյանի և հրատարակչական ընկերության միջև։ 1897 թ. խմբագրական մասնաժողովը նկատելով, որ Հ. Ասատուրը ուշացնում է Հ. Պարոնյանի մասին ուսումնասիրությունը, որոշում է գիմել Ա. Չոպանյանին՝ պատրաստել Հ. Պարոնյանի և Մ. Պեշիկթաշլյանի կյանքն ու գործն ամփոփող աշխատություններ։ «Ես արդեն մտադիր էի Պեշիկթաշլյանի վրա գիրք մը գրել,— պատասխանել է ընկերության առաջարկությանը Ա. Չոպանյանը,— որովհետև այդ մաքուր բանաստեղծին և այդ օսկի սրտով մարդուն համար գործվալից հիացում մը ունիմ։

Գալով Պարոնյանին, արդեն իր գործին վրա ընդարձակ

¹ ՀՍՍՀ, ՊԿՊԱ, ֆ. 30, գ. 7, թ. 91.

ռուսումնասիրություն մը հրատարակած եմ «Ծաղիկ» հանդեսիս մեջ, և կմնա հեղինակի կենսագրությունը մանրամասնորեն ռուսումնասիրել: Ուրեմն ամենեն բնական բան է, որ ընդունիմ Պեշիկթաշլյանի և Պարոնյանի վրա մեկ մեկ գիրք գրելու համար ինձի եղած առաջարկը:

Բայց անմիջապես պետք է հայտարարեմ, թե նյութապես անկարելի է, որ այդ երկու գործը կարենամ ավարտել գոնե երկու տարի առաջ... մանավանդ, որ այդ երկու գրադեւերուն կենսագրության համար պետք պիտի ըլլա երկայնատեղ Պոլիս գտնված մեկ քանի անձերու հետ թղթակցություն ունենալ (քանի որ չեմ կրնար անձամբ Պոլիս երթալ). և ասիկա բավական ժամանակ կուզէ:

Արդ, հակառակ այս ամենուն պիտի ջանամ ժամանակ գտնել և մեկ կողմէն հավաքել այս երկու կենսագրությանց համար հարկավոր տարրերը և ատեն ունեցածիս պէս պիտի գրեմ, նախ Պեշիկթաշլյանինը պիտի սլատրաստեմ, հետո Պարոնյանինը¹:

Երկու տարի հետո, 1899 թ. դեկտեմբերի 12-ին, գրականաշէտը նամակով հայտնում է, որ բազմադարձության պատճառով ի վիճակի չէ գրել Պարոնյանի կենսագրությունը, իսկ ինչ մնում է Պեշիկթաշլյանին, ապա «բացարձակապէս որոշած էմ շարադրել և այդ որոշումս պիտի գործադրեմ, իմ հոգեկան գոհացմանս համար»²: Նա իր խոստումը կատարեց բավականին ուշ, երբ այլեւ չէր գործում Թիֆլիսի հրատարակչականը, և Պեշիկթաշլյանի մասին ռուսումնասիրությունը լույս ընծայեց 1907 թ. Փարիզում:

Այլ ընթացք ունեցավ Հ. Պարոնյանի ստեղծագործությունների տպագրությունը: Մեծ երգիծաբանի մահից երեք ամիս հետո, 1891 թ. սեպտեմբերի 10-ին, Թիֆլիսի հրատարակչական խմբագրական մասնաժողովը լսում է իր անդամներ Հ. Սաղաթելյանի և Ասիլյանի ղեկուցումը Հ. Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանների» և «Ազգային ջոջերի» վերաբերյալ: «Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները» սատիրա է,— գրել է Հ. Սաղաթելյանը,— Կ. Պոլսի այն շրջանների բարձր, որոնք ներկայացուցիչ են հասարակական, կամ ինչպէս այնտեղ ընդունված է ասել, ազգային շահերի և միջոցորդ են եվրոպական

¹ ՀՄՍՀ, ՊԿՊԱ, ֆ. 30, գ. 12, Թ. 362—363:

² Նույն տեղը, գ. 14, Թ. 80:

սկզբունքների տեղական կյանքի մեջ: Սատիրան ցույց է տալիս, որ այդ ներկայացուցիչները շատ հեռու են այդ տեսակ բարձր էությունից և միևնույն ժամանակ գտնվում են այնպիսի նողկալի վիճակի մեջ, այնպիսի ծանր կարոտություն մեջ, որ միայն մուրացկանին վայել միջոցներով կարողանում են պահպանել իրենց գոյությունը այդ ասպարեզում՝ մի կողմի դնելով և անձնական պատիվը և բարոյականության տարրական պահանջները»¹:

Շարագրելով վեպի սյուժեն և դիտելով պարոնյանական ռեալիզմի սոցիալական տարերքն ու երդիծական արվեստի բարձր կատարելությունը, գրախոսը եզրակացնում է թե «մեզ դժվար չի լինի ըմբռնել, որ այս սատիրայում հանգուցյալ Պարոնյանը հարվածում է կ. Պոլսի հասարակությանը, ամբողջովին, որը գտնվում է բարոյապես և մտավորապես այնչափ ստոր վիճակում, որ անընդունակ է ստեղծել այնպիսի պայմաններ, որոնց մեջ հնար լինի մտավոր և հասարակական իսկական գործիչների գոյությունը, ուրիշ խոսքով այդ հասարակությունը ղուրկ է քաղաքակիրթ հասարակությունների հատուկ պահանջներից ու դեկավարվում է դեռ գլխավորապես ստոր ձգտումներով»²:

Ինչ վերաբերում է Ասիլյանին, ապա «Ազգային ջոջերի» վեբաբերյալ խմբագրական մասնաժողովի նիստում նա տվել է հետևյալ կարծիքը. «Երկասիրության մեջ նկարագրված անձնաշարությունները ծնունդ են ըստ մեծ մասի դարուս առաջին կեսի և ոմանց գործունեությունը սկսվում է նույնիսկ այդ շրջանից, հետևաբար դոցա կենսագրությունը մեզ համար ունի և պատմական նշանակություն, որովհետև դոքա գործել և ապրել են տաճկահայոց ներկա դարում պատմական կյանքի ամենանշանավոր ժամանակաշրջանում, ինչպես են սահմանադրության հաստատությունը, հասունյան և հակահասունյան խռովությունները, 1878 թ. հայոց խնդրի շարժումը և այլն...

Պարոնյանը «Ազգային ջոջերի» մեջ ծաղրելով ու նկարագրելով մեկ մասնավոր կամ հասարակական թերություններ, հայացք է ձգում և ընդհանուր երևույթի, և նրա պատճառների վրա. այդպիսի հանգամանքում երգիծաբանության հետ նկատվում է մեկ դառն ու տխուր գիծ, որ արտահայտություն է հիդինակի հասարակական ցավերով տանջված սրտի խորն ղգաց-

¹ ՀՍՍՀ ՊԿՊԱ ֆ. 30, գ. 30, թ. 72:

² Նույն տեղը:

մունքներին: «Աղգային ջոջերի» այդ կողմը ընթերցողի աչքում
ևս առավել բարձրանում է երկասիրության արժանավորություն-
ներ և հասարակական նշանակությունը, ուստի ընթերցողը ոչ
միայն ծիծաղում է և զվարճանում, այլև հեղինակի հետ ստիպ-
ված է երբեմն, երբեմն կանգ առնելու և լրջությամբ խորհելու
հասարակության վերքերի և վշտերի մասին»¹:

Գրախոսը պատմական տեսանկյունով քննելով Պարոնյանի
«Աղգային ջոջերը», ճիշտ է նկատել, որ հեղինակին հաջողվել է
ուսուլիստական ընդհանրացման ճանապարհով վերարտադրել
սոցյալ դարի 70-ական թվականների սոցիալ-քաղաքական իրա-
վիճակը, խարաղանոց սատիրայով ծաղրել հասարակական գոր-
ծիչների խոսքի ու գործի հակասությունը: Հետաքրքիր է այն,
որ Ասիլյանը, տարբերվելով մի շարք գրականագետներից
(որոնք «Աղգային ջոջերի» մեջ տեսել են միայն «ստիրապետող
դասակարգի հավաքական դիմանկար» և այդել, թե հեղինակը
ունեցել է խիստ բացասական վերաբերմունք նրանց բոլորի
նկատմամբ), իրավացիորեն ակնարկում է դրական կերպարնե-
րի առկայությունը: Չնայած գրախոսողը չի բացում փակագծերը,
մեր կարծիքով, նա նկատի ունի Մերենցին, Երանուհի Գարա-
գաշյանին, որոնց մասին գրված տողերից զգացվում է թեթև
հումոր, բայց ոչ անողորմ սատիրա, որ հեղինակն օգտագործել
է մի շարք հետադեմ գործիչների կերպարները գծագրելիս:

Բերված կարծիքները վկայում են, որ Թիֆլիսի հրատարակ-
չականը, լինելով առաջավոր մտավորականության օջախ, կա-
րողացավ ոչ միայն հիմնականում ճիշտ բնութագրել մեծ եր-
գիծաբանին, այլև եղավ Հ. Պարոնյանի երկերը առանձին գրո-
քերով առաջին տպագրողը Արևելահայաստանում:

Թիֆլիսի հրատարակչականը Հ. Պարոնյանի «Մեծապատիվ
մուրացկաններն» ու «Աղգային ջոջերը» պատրաստելով տպա-
դրության, հատուկ կետ է ընդունում հեղինակի օգտագործած
կետագրության վերաբերյալ: Մասնաժողովը գտնում է, որ «պետք
է պահպանել Հ. Պարոնյանի ընդունած կետագրությունը և ուղ-
ղել միայն այն դեպքում, երբ 1) տպագրական սխալ է, 2) սխալ
է նույնիսկ հեղինակի ընդունածը՝ կետագրության կանոնների
տեսակետից և 3) երբ կարող է մտքերի շփոթություն առաջ գալ:
Իսկ ուրիշ գրողների նկատմամբ պետք է ղեկավարվել ռուսահայ

¹ ՀՍՍՀ ՊԿՊԱ, գ. 30, թ. 79—80:

գրականության մեջ ընդունված կետադրության կանոններով, բացառիկ դեպքերը կորոշի յուրաքանչյուր անգամ խմբագրական մասնաժողովը»¹։ Բացի այդ, մասնաժողովը Պարոնյանի ստեղծագործությունները «Ռուսաստանի հայ ընթերցողներին առավել մատչելի լինելու համար գտնում է անհրաժեշտ գրքերի վերջում կցել բառարան այն տառերին անծանոթ բառերի, որոնք կան Նրա գործերում»²։

Ինչպես տեսնում ենք, Թիֆլիսի հրատարակչականը Պարոնյանի երկերի հրատարակման գործում ցուցաբերել է բանիմաց և պատասխանատու վերաբերմունք։ Ընկերությունը տեղյակ լինելով, որ հանգուցյալ գրողի այրին ու երկու տղաները գտնվում էին անմխիթար վիճակում, որոշում է հեղինակի ծառանգներին մեարհել ամենաբարձր հոնորարը՝ տպագրական մամուլին 25 ռուբլի³։

Ընկերության կողմից երգիծաբանի հրատարակած երկերը կարճ ժամանակամիջոցում սպառվում են և Թիֆլիսի ընկերությունը 1895 թ. ձևոնարկում է «Մեծապատիվ մուրացկանների» և «Աղ-ուսյին ջոջերի» վերահրատարակությունը, ապա և տպագրության սյուտրաստում գրողի այն գործերը, որոնք սպառված են կամ ջրված «խիկար», «Թատրոն», «Մեղու», «Ծիածան» սարբերականներում։ Ընկերությունը միաժամանակ 200 ֆրանկ կանխավճար է ուղարկում գրողի եղբորը՝ Սահակ Պարոնյանին, նրանից «Հոսոսի ձեռատետրի»⁴ տպագրության իրավունք ձեռք բերելու համար։ «Ձեռատետրի» հրատարակությամբ ընկերությունը հետապնդում էր որոշակի քաղաքական նպատակ. նրա հիմնական թեման Թուրքիայի ներքին և արտաքին քաղաքականության և արևմտաեվրոպական պետությունների դիվանագիտության սուր քննադատությունն էր՝ կապված հայկական հարցի հետ։ Տպագրելով այդ գործը, ընկերությունը անուղղակի ճանապարհով իր բողոքի ձայնն էր բարձրացնում մի կողմից

¹ ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 30, գ. 7, փ. 164։

² Նույն տեղը, գ. 7, էջ 30։

³ Նույն տեղը, ֆ. 30, փ. 80։

⁴ «Հոսոսի ձեռատետրը» առաջին անգամ տպագրվել է Թիֆլիսում 1880 թ. «Գործ» ամսագրում, սկզբում «Հիշատակարան», հետո «Իմ ձեռատետրս» վերնագրով, և որովհետև Պարոնյանն այդ նյութերի տակ տպագրել է «Հոսոս», ամսագրի խմբագիրը՝ Ար. Հովհաննիսյանը, դարձրել է «Հոսոսի ձեռատետր»։

սուլթանական Թուրքիայի բռնապետության, հայերի նկատմամբ կիրառվող բարբարոսությունների, մյուս կողմից եվրոպական դիվանագիտության երկդիմի քաղաքականության դեմ:

Թիֆլիսի հրատարակչականի լույս ընծայած «Հոսոսի ձեռատետրը» ուներ այն առավելությունը, որ նա ամբողջական էր և ամփոփ: Ար. Հովհաննիսյանը «Փորձի» 1880 թ. հունիս-հուլիս ամիսների միացյալ համարում տպագրելով «Ձեռատետրի» առաջին հատվածը, նրան կցած ծանոթագրության մեջ հայտնում էր, որ սկիզբը դժբախտաբար խմբագրությանը չհասնելու պատճառով, հարկադրված հրատարակում է երկրորդ մասը: Ակնարկված «կորած» հատվածը տեղ է գտնում ընկերության հրատարակած գրքում:

Պարոնյանագետներից ոմանք գտնում են, թե «Ձեռատետրի» «կորած» մասը ընկերությանը հանձնել է Աբ. Հովհաննիսյանը: Այս ենթադրությունը անհիմն է, որովհետև Աբ. Հովհաննիսյանը լինելով Պարոնյանի տաղանդի գնահատողներից և ունենալով տպագրական լայն հնարավորություններ, չէր կարող տարինելով իր մոտ պահել երգիծաբանի անտիպ նյութը: Ուստի, ամենահավանականն այն է, որ ընկերությունը տարիներ շարունակ նամակագրական կապ ունենալով Պարոնյանի ժառանգների հետ, նրանց կանոնավոր ուղարկելով հասանելիք հոնորարը, կարողացել է շահել նրանց վստահությունը, և նրանք էլ տեղեկանալով «Ձեռատետրի» տպագրության վերաբերյալ ընկերության մտադրության մասին՝ ուղարկել են նրան՝ գրողի գործերում եղած «Փորձին» չհասած հատվածը:

Հ. Պարոնյանի ստեղծագործությունների հրատարակումն ու վերահրատարակումը բարձր գնահատվեց ժամանակի հայ մամուլում: Անգամ «Արարատը» ողջունելով ընկերության նախաձեռնությունը, գտնում է, որ Պարոնյանի երկերը «ոչ երրորդ անգամ միայն, այլև շատ անգամներ ցանկալի է հրատարակված տեսնել»:

Լևոն Մանվելյանը «Մուրճ» ամսագրում գրում է. «Մեր հրատարակչական ընկերությունը, լույս ընծայելով պ. Չոպանյանի կենսագրական քննադատական ուսումնասիրությունը Դուրյանի մասին, ղեղեցիկ գործ կատարած կլիներ, եթե նույն ժամայն հրատարակեր և այս բանաստեղծի տաղերը: Հասարակությունը շնորհակալ կլիներ, եթե պ. Չոպանյանը շարունակե կազմել նաև Պեշիկպաշյանի, Պարոնյանի և ուրիշների կենսագրությունները,

որ մեր հրատարակչական ընկերությունը, հուլյսով ենք, ամենայն պատրաստակամությամբ կշտապե լույս ընծայել: Նամանավանդ շնորհակալ և երախտագետ կլինեին մեր նորագույն պրականության ապագա պատմաբանները»¹:

Լ. Մանվելյանը 1896 թվականին ընտրվելով ընկերության խմբագրական մասնաժողովի անդամ, տեղեկանալով, որ Հ. Ասատուրը և Ա. Զոպանյանը ուշացնում են Պեշիկթաշլյանին և Պարոնյանին նվիրված տեսական-քննադատական ուսումնասիրությունները, առաջարկում է՝ «հրատարակել զուտ հայրենասիրական բանաստեղծական գրվածքներ: Դրա համար կարելի է մի փոքրիկ ժողովածու կազմել Պեշիկթաշլյանի, Նալբանդյանի և Ալիշանի ընտիր բանաստեղծություններից, դրան կցել դրանց կենսագրությունները, գործունեության գնահատությունները և պատկերները»²:

Լ. Մանվելյանի այդ առաջարկությունը անշուշտ արձագանքն էր թուրքական բարբարոս կառավարության կողմից 1895 թ. հայերի նկատմամբ կիրառած խոշտանգումների ու մասսայական ապստամբությունների:

Գրաքննչական կոմիտեի արգելքով խափանվում է Լ. Մանվելյանի ակնարկած ժողովածուն, սակայն փաստն ինքնին որոշակի պատկերացում է տալիս հայ կուլտուրական օջախի նախասիրությունների, գրականագիտական ճաշակի, ըմբռնումների, տեսական և հասարակական հարցերի նկատմամբ ունեցած վերաբերմունքի, հայ գրողների մասին արտահայտած մտքերի ու դատողությունների մասին:

2.

Լինելով կամավոր ազգային հաստատություն, Թիֆլիսի հրատարակչական ընկերությունը, սակայն հեռու էր գործունեության անսկզբունք տարերայնությունից և դավանում էր գրական որոշակի քաղաքականություն, որպիսին թեև պարզում էին ազգային-հասարակական կյանքի կոնկրետ հանգամանքները: Այս տեսակետից ուշագրավ է ընկերության խմբագրական մասնաժողովի անդամներից մեկի մեկնաբանությունը. «Գրականու-

¹ «Մուրճ», 1894, № 9, էջ 1667—1671:

² ՀԱՍԶ, ՊԿՊԱ, ֆ. 30, թ. 32:

Թյան մեջ կան զանազան ազգությունների գրվածքներ: Ուղղության զանազանությունը՝ սկզբունքը, աշխարհայեցողությունները, պայմանավորված չեն արտահայտելու ձևով: Իդեալական, ոգևորիչ գրվածքը և սատիրական գրվածքները կարող են ներշնչված լինել միևնույն օրինակ դեմոկրատական, առաջադիմական ոգով: Տգեւտ պետք է լինել մտածելու համար, ինչպես մի հայ վիպասան արավ այդ ընկերության ընդհանուր ժողովում, կարծելով թե ոգևորիչ, իդեալական գրվածքներ հրատարակողը, Լթե միևնույն ժամանակ հրատարակում է մի սատիրական գրվածք՝ նա հակասում է իրեն, իբրև թե Լթե մեկը պաշտում է Շիրիկին, Հյուգոյին, պետք է ատի Շչեդրինին: Հասարակական երևույթների անալիզը, որը ցույց է տալիս հասարակական կազմակերպության բացասական կողմերը, նորա պակասությունները, բողոքը, քննադատությունը՝ չգոհացնող ներկայի դեմ, ավելի որոշ է դառնում այն, ինչին ուզում ենք հասնել, այսինքն իդեալականը: Բայց կարելի է նկարագրել և միմիայն իդեալականը, ոգևորել նրանով, որին ձգտում ենք հասնել: Մի՞թե Վոլտեր, Սվիֆտ, Շչեդրին, Գոգոլ, Պարոնյան իրենց անխնա սատիրայով ավելի պակաս հասարակական կրթիչ նշանակութուն ունեն, ավելի պակաս են նպաստում իդեալականին ձգտելու, քան Շիրիկը, Հյուգոն իրենց բարձր իդեալական գրվածքներով: Սատիրան մի ազգու բողոք է տիրապետող բացասական երևույթների դեմ, անխնա քննադատություն է հասարակական տգեղ կողմերի. քննադատությունն ու բողոքն են տանում դեպի առաջադիմությունը, որը իդեալ է, իսկ իդեալիստ զրոյը, ոգևորված ցույց տալով այդ իդեալը, նույնպես կանչում է դեպի նա: Այդ պատճառով սատիրայի և իդեալական գրվածքի մեջ կա մի խորը փիլիսոփայական կապ:

Ուրեմն արտաքին կողմից չի կարելի ըմբռնել բելետրիստիկական գրվածքների ներքին կապը և ընկերության այս տարվա (1891—1892 թթ.— Վ. Վ.) հրատարակությունների մեջ ուրիշ կապ պետք է գտնել. նոցա մեջ կարմիր թելով անցնում է հասարակական առաջադիմության տենդենցիան, ժողովրդասեր ոգին, առաջադիմական ձգտումները¹:

Հետամուտ գրականության շեշտված դեմոկրատական ըմբռնումներին, խմբագրական մասնաժողովի գնահատման չա-

¹ «Մուրճ», 1892, № 11, էջ 493—494:

փանիշը բուն ժողովրդի կյանքն է իր բաղմադանության մեջ։
 Հրատարակչության համոզմամբ գրականությունը ոչ միայն թե-
 մատիկացով պետք է ժողովրդական լինի, այլ բուն ոգով, էու-
 թյամբ։ Մի կողմ թողնելով «մաքուր արվեստի» գեղագիտական
 սկզբունքները, նրանք տպագրում են ալիպիսի երկեր, որոնք տո-
 ւորված են հայ ժողովրդի ազատագրության և անկախության
 դադափարներով։ Փուլթ չէ, թե Սեկյանի «Խան Միրան» (1892 թ.)
 և Հայկ Ղաղարյանի «Խոն խուր» (1893) ստեղծագործություննե-
 րը գեղարվեստորեն անկատար էին, սակայն դրանք բավակա-
 նաչափ հարուստ նյութ են պարունակում հասարակական արատ-
 ների, ժողովրդի դառն կացության ու նրա պայքարի վերաբեր-
 յալ։ «Խան Միրանի» նյութը վերցված է Թահմազ-Ղուլի շահի
 վասպուրականի արշավանքից, հետևաբար այն 19-րդ դարի
 սուաջին կեսի իրադարձությունների գեղարվեստական շարադը-
 րանքն է։ Այդ մի շրջան էր, երբ պարսիկները, օրեցօր հզորացող
 օսմանցիներին տեղի տալով, աստիճանաբար կորցնում էին
 իրենց իշխանությունը Հայաստանում։ Եվ այսպես խոշտանգվում
 էր պատերազմի թատերաբեմ դարձած երկիրը, համատարած
 բռնադատության մեջ տրոհվում էր հայ ժողովուրդը ու կարծես մա-
 քառման նրա ոգին չկորցնելու համար երբեմն-երբեմն հայտ-
 նվում էին անհատներ, որոնք ձգտում էին անտարբերության
 նիրհով հրապուրված ամբոխին սթափեցնել, և սակայն ոչ մի
 արձագանք չգտնելով, հուսահատված կամ հեռանում էին օտար
 հորիզոններ, կամ դիմում էին նահատակության։ Այդպիսի հե-
 րոսներին մեկն էր Գարեգինը՝ Խան Միրանը։ Գարեգինը սիրում
 էր Ալիվր գյուղի տանուտեր Բալայի աղջկան՝ Նազիկին, որին
 վանի փաշան որոշել էր տանել իր հարեմը։ Նախքան փաշան
 ներագործեր իր մտադրությունը, Գարեգինը նշանվում է և որո-
 շում մի քանի օրից հետո տանել Նազիկին։ Սակայն Թահմազ
 Ղուլի շահը հարձակվում է վասպուրականի վրա, ավերում Ալի-
 վր գյուղը և բազում աղջիկների հետ գերում նաև Նազիկին։
 Շահի հարձակման հանկարծակիության հետևանքով Գարեգինը
 չի կարողանում համախմբել մարդկանց և դիմադրել։ Սիրածին
 փրկելու հույսով նա իր ութ ընկերներով ճեղքում է թշնամու բա-
 նակն ու հասնում Ալիվր այն ժամանակ, երբ գյուղը կորել էր
 ծխի մեջ, իսկ Նազիկն իրեն նետել էր ծովը։ Գարեգինը սիրածի դին
 թաղում է Կառլց անապատում և վրեժխնդրությամբ լի սրտով ըն-
 դունում մահմեդականություն ու իսկ Միրան անունով աշխա-

տանքի անցնում Թահմուզ-Ղուլու ապարանքում: Նա կարճ ժամանակամիջոցում սիրաշահում է շահի սիրտը, ձեռք բերում վստահություն և նոր միայն սկսում կենսագործել իր որոշումը: Գարեգինը (Խան Միրանը) նախ թունավորում է շահի հարազատներին ու մերձավորներին, ապա նաև Թահմուզ-Ղուլուն և վերադառնում Կտուց ու այստեղ էլ մահանում:

Հեղինակն այս ռոմանտիկ արկածային սյուժեն չի ծանրաբեռնում սենտիմենտալ խորհրդածություններով: Նա սրտաշարժ դեպքերի նկարագրությամբ ասելովություն է առաջ բերում ընթերցողների մոտ բռնակալների նկատմամբ: Սկսած աչքից չի վրիպել նաև հայ հոգեկորականությունը: Նա այն միտքն է անցկացնում, որ հայ կենդեցականները սերկացրել են ժողովրդին, նրան քարոզել թշնամու առաջ անմոռնչ մնալու հոգեբանությունը: Հոգեկորականության քննադատությունը ավելի ցայտուն է արտահայտված Հայկ Ղալարյանցի «Խոն-խուր» պատմվածքում, ուր հեղինակը հանձինն խաչատուր վարդապետի տվել է գաղափարական կենդեցականության քաղաքական կողմնորոշման օրինակ՝ աղդի փրկության գործում:

Խաչատուր վարդապետի սխրագործությունները վերաբերում են 19-րդ դարի սկզբներին, երբ երկիրը ավերվում էր պարսիկների, տաճիկների ու քրդերի կողմից: Չնայած նրան, որ խաչատուր վարդապետը կրթությունը սկսեց սամազբքով, Հայսմավուրքով, ճառասացով և ավարտեց Չամչյանի «Հայոց պատմությունով» ու դարձավ Ուլքիլիսեի վանքի միաբան, սակայն նա արհամարհեց կրոնական բողոմաներն ու վանահոր այն խրատը, թե «Ֆարաջադ ուզեն, գլխարկդ էլ տուր»: Նա սրով ազատագրեց իր կյանքը և շենթարկվեց ծոմապահության և ապաշխարանքի: Իր սարկավադի հետ նա հակապատկերն է հին վանականների, որոնք «խույս տալով իր քրտինքով ապրելուց, ընկել է վանքի մի անկյունը, ուրիշների աշխատանքով ապրելու, փորը կշտացնելու համար»:

Խաչատուր վարդապետը նրանց նման չէ: Նա ղենք գործածել գիտե և արիասիրտ է. «Ուրիշ հոգեկորականների պես աբաջի տակից միայն խաչ և Ավետարան կրելով չէր բավականում, այլ դրանց հետ անբաժան կրում էր իր դաշույնը և ատրճանակը...»: Խաչատուրն այն վարդապետներից էր, որ կնտրոկի փոխարեն վառող ծխել և պոպոզի տեղ՝ բոլոզ ծածկել գիտեր: Նա իր քաջագործությունների շնորհիվ վայելում էր ոչ միայն հայերի, այլև

քրդերի հարգանքը, այցելում էր քրդերի շեյխերին և նրանց համայնական ոգի էր քարոզում:

Հեղինակը սոցիալական անարդարություններից դուրս գալու ուղին տեսնում էր միավորման ու պայքարի մեջ: Նա խիստ քրննադատում էր հոգեորականությունը ոչ թե բացասելու, ժխտելու միտումով, այլ ցանկանում էր ստրկամիտ տերաւորներին փոխարինել մարտնչող, պայքարող հոգեորականներով:

Կոահելով ընկերություն մտայնությունը, «Արձագանքը» գրում է. «Թիֆլիսի հրատարակչական ընկերությունը, որ բախտավորեցրեց հայոց ազգը պարզեցնելով նրան «եսան Միրանը», ուր մեր օրենքն ու ավանդական հավատն էր ծաղրած, հետո չի նահանջում և նույն շավիղով ընթանալով՝ հաջորդում է «Խոն-խորը», որ հայ եկեղեցականության հին տիպարն է ծաղրում և նորը ստեղծում: Հեղինակն ու նրա հետ միասին հրատարակչական ընկերությունը կամենում են, որ վանականը ժառանգե արշունարբու մականունը. ահա այդ արշունարբու վանականն է նրանց նախատիպարը, իդեալը»¹: Այնուհետև «Արձագանքը» խորհուրդ է տալիս ընկերությանը, որ «հայ եկեղեցու սրբություններն ու ավանդությունները միակ ժառանգությունն են մեր անցյալից, պոռնջ վերաբերվեցեք նրանց և որ պիտավորն է ծաղրի առարկա չդարձնեն այդ սրբությունը:

«Խոն-խորի» հոգով և նրա ոճով գրվածները կարդալով՝ սկսածայից տխուր պայամներով համակված է մարդ,— գրում է թերթը,— որովհետև տեսնում է համբալներ, որոնց բոլոր արժանիքն իրենց ծայրալիք հանդգնությունն է, որով նրանք սըրբապղծում են գրականության տաճարը»²:

«Արձագանքը» իր դժգոհությունն է հայտնում նաև ընկերության կողմից 1892 թ. Ղ. Աղայանի «Երկու քույր» վեպի վերահրատարակման կապակցությամբ: Սակայն հաշվի առնելով, որ այդ վեպը լավ ընդունելություն է գտել ընթերցողների շրջանում, իր դժգոհությունը արտահայտում է անուղղակի, աշխատելով նսեմացնել ընկերության 1892 թ. գործունեությունը: «Ի՞նչ միտք ունի Ղ. Աղայանցի «Երկու քույրի» հրատարակությունը,— գրում է թերթը,— որ առաջին անգամ տպագրված է իբրև հավելված «Մեղու Հայաստանի» լրագրի և 15—20 տար-

¹ «Արձագանք», 1893, № 102:

² Նույն տեղը:

վան ընթացքում հազիվ սպառվել է: Այժմ այդ գիրքը 1800 օրինակ վերահրատարակելով, ե՞րբ հույս ունին արդյոք սպա-
ռելու: Մենք այս շեշտում ենք հենց նրա համար, որ այժմյան
հրատարակչական ընկերության առաջավորներն աղմուկ են
բարձրացնում, թե մեծ գործ ենք կատարել»¹:

Ճիշտ չէ, թե ընկերության ղեկավարներն աղմուկ են բարձ-
րացրել մեծ գործ կատարելու մասին, եթե մասամբ այդ իրա-
վունքը ունեին, որովհետեւ մեկ տարվա (1891—1892) ընթաց-
քում կարողացել էին հրատարակել 26-անուն գիրք:

1896 թվականին որոշակի փոփոխություն է նկատվում Թիֆ-
լիսի հրատարակչականի գործունեության մեջ: Այդ տարիներին
ընկերության ղեկավար մարմինների մեջ ընտրվում են հայ լե-
զալ նարողնիկներ Ալեքսանդր Քալանթարը, Համ. Առաքելյանը,
Լևոն Սարգսյանը: Նրանք ձգտում են ընկերության աշխատանք-
ները հարմարեցնել իրենց գաղափարախոսությանը և նրա մի-
ջոցով տարածել լեզալ նարողնիկության քաղաքական ու գաղա-
փարական դրույթները, գրականությունը հագեցնել ընթացիկ
քաղաքականության հարցերով: Նրանց կարծիքով, «բուն ժողո-
վրդի կյանքի ուսումնասիրությունը և նրա մտավոր աշխարհի
հոգեբանության ըմբռնումը պետք է կազմե ընկերության էական
սաղմը: Մեր գրականությունը քիչ ուշադրություն է դարձնում
ժողովրդի և հայրենիքի ուսումնասիրության վրա, ուստի հրա-
տարակչական ընկերության նպատակներից մեկն էլ պետք է լինի
զարկ տալ այդ ուսումնասիրությանը և տպագրի ժողովրդակա-
նացված գրքեր²: Ժողովրդականացված գրքերը նրանց հասկացո-
ղությամբ պետք է լինեն երկու տեսակ. նախ՝ ժողովրդի միտքն
ու աշխարհայեցողությունը բացող, զարգացնող և երկրորդ՝ գործ-
նական նպատակներին ծառայող, ժողովրդին իր իրավունքները
բացատրող, օգտակար աեղեկություններ և գյուղատնտեսական
գիտելիքներ մատակարարող³:

Լեզալ նարողնիկությունը, ի տարբերություն հեղափոխական
նարողնիկության քաղաքական ծրագրի, նպատակ ունեւ «կար-
կատել», «բարեկամել» գյուղացիության դրությունը՝ պահպանե-

¹ «Արձագանք», 1893, № 31:

² Տեղեկագիր, 1893, էջ 21:

³ Նույն տեղը:

լուվ հասարակութեան հիմքերը¹։ Նրանք առաջին պլանի վրա էին դնում ժողովրդական արտադրութիւնը և նրան զարգացնելու միջոցառումները, մոռանալով, որ ժողովրդական արտադրութիւնը վեր է ածվում կապիտալիստական արտադրութեան, որ «կապիտալիզմը ոչ թէ ժողովրդական հասարակարգի հակառակն է, այլ դրա, այսինքն՝ մանր ապրանքային արտադրութեան իմա՝ «ժողովրդական արտադրութեան» ուղղակի մերձավորագույն և անմիջական շարունակութիւնն ու զարգացումն է»²։ Սխալ ելակետը նարոդնիկներին դարձնում է մանր արտադրողի, մանր բուրժուազիայի շահերի պաշտպան՝ իր երկդիմի քաղաքականութեամբ։ Ըստ որում, դիմադարձ դեպի անցյալը նրա ռեակցիոն կողմն է, դիմադարձ դեպի կապիտալիստական ուղիով զարգացումը՝ նրա առաջադիմական կողմն է։ Նվ կապիտալիզմի զարգացումը համայնքի ներսում պաշտպանելու նպատակով նարոդնիկները շահագրգռվածութիւն ցուցաբերեցին գյուղատնտեսական տեխնիկայի բարելավման, էժան վարկի և ժողովրդի մեջ գրագիտութիւն և դիտութիւն տարածելու նկատմամբ։ Դրա համար էլ նրանք ընկերութիւնը օգտագործում էին ժողովրդի հասարակական ինքնագիտակցութեան զարգացմանն ու կուլտուրայի առաջընթացին։ Շարունակելով ընկերութեան նախորդ շրջանի ավանդները, հայ լեզալ նարոդնիկները աշխատում էին պրականութիւնը նույնպէս մոտենցնել ժողովրդին, անմիջականորեն կապել նրա ապրելակերպի հետ։ Հատուկ ուշադրութիւն է դարձվում նարոդնիկ-բեկետրիստների և հայ գյուղագիրների ստեղծագործութիւններին, որոնց երկերում հարադատորեն արտացոլված է հատուկ տրամադրաբանի գյուղի մոռյալ իրականութիւնն իր բնորոշ գծերով, բացահայտված են տիրող կյանքի աղաղակող հակասութիւնները։ Նրանք դարձան աշխատավոր գյուղացիութեան տառապանքների, հուշերի ու երազանքների հարադատ թարգմանը և գյուղի բարոյական ճահիճների մաքրման բանալին տեսան լուսավորութեան մեջ։ Նվ միանգամայն արդարացի է բաղմավաստակ գրականագետի այն պնդումը, որ գյուղացիների «աշխարհայացքի մարմնացումը որոշ տիպերի մեջ, ուստի նարոդնիկներից նրանց կրած ազդեցութիւնը, վերջապէս նրանց իդեալների գրական հասարակական արժեքը, ահա խոն-

¹ Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 1, էջ 327։

² Նույն տեղը, էջ 260։

դիրներ, որոնք պետք է մի-մի թեմա հանդիսանան մեր գյուղա-
գիրների գեղարվեստական դեմքը պարզելու համար»¹:

Թիֆլիսի հրատարակչական ընկերության վարչության ան-
դամները նարոդնիկ-բեկետրիստների՝ Կորոլենկոյի, Ուսպենսկու,
Պոտոպենկոյի և այլոց, ստեղծագործությունից բացի ձեռնար-
կեցին տպագրել Ն. Մամիկոնյանի, Հովհ. Մալխասյանի, Հ. Ճու-
ղուրջյանի, Ազարիա Ադելյանի գեղարվեստական գործերը:

Ակնհայտ է հայ ռեալիստական արձակի ղարգացման գոր-
ծում մեր գյուղագիրների կատարած դերը: Թափանցելով հայ
գյուղացու ներքնաշխարհը, գյուղագիրները արտահայտեցին աշ-
խատավոր մասսաների վիշտն ու տառապանքը, նրանց բազմա-
փորձ կյանքի իմաստնությունը, ատելությունը՝ ամեն գույնի հա-
լըստահարիչների նկատմամբ:

Շուտը ղեկավար ստեղծագործության գաղափարական բովան-
դակության վրա, նրանք պատշաճ ուշադրություն չէին դարձնում
գեղարվեստական կողմի վրա և ձգտում էին հրապարակախոսա-
կան կրքոտությամբ բացել վարագույրը և ցուցադրել հայ գյուղի
մութ ու մռայլ անկյունները: Կարճ ասած, նրանց մոտ հասա-
րակական շահը գերակշռում է գրական շահերից: Այդ կարծիքին
չէին հրատարակչական ընկերության խմբագրական մասնաժո-
ղովի կազմում ընտրվածները (Ստ. Լիսիցյան, Ստ. Մալխասյան,
Լ. Մանվելյան, Իս. Հարությունյան, Վ. Լուկեկիչ): Նրանք գե-
ղարվեստական ստեղծագործությունները գնահատելիս հատուկ
ուշադրություն էին դարձնում թե՛ գեղարվեստական կողմին, թե՛
իմաստին, սկզբունքորեն մերժում էին ընկերության վարչության
կողմից ընտրված անմշակ, անկատար գրվածքները:

Ստ. Լիսիցյանը քննության առնելով ընկերության վարչու-
թյան կողմից ներկայացված Հովհ. Մալխասյանի «Երգում» վե-
պը, նկատում է. «Բացակայում են անհատական բնավորություն-
ներն իրենց հոգեկան ապրումներով. հեղինակը չունի վիպասա-
նի համար անհրաժեշտ գեղարվեստական ըմբռնողություն, դրա
համար էլ տենդենցիան, գաղափարը ավելի մեծ դեր է կատա-
րում, քան գեղարվեստական հնարները»:

Խմբագրական մասնաժողովի անդամները նույն սկզբունքով

¹ Ա. Տերտերյան, նկատողություններ մեր գյուղագիրների մասին, ՀՍՍՀ,
Պետհամալսարանի տեղեկագիր, 1927, № 2—3, էջ 258:

² Հայկ. ՍՍՀ, ՊԿՊԱ, ֆ. 30, գ. 17, թ. 31:

են գնահատում ն. Մամիկոնյանի «Հաղարից մեկը» վիպակը: Վերջինիս ուժն ու կենսունակությունը ժողովրդի սոցիալական գոյավիճակի, նրա վշտի, տառապանքների ու դժգոհության բացահայտման, անարդարությունների, շարիքների հետևողական մերկացման մեջ է: Բայց քանի որ հեղինակը «ընթերցողի մեջ հետաքրքրություն է առաջացնում ոչ այնքան պատկերների իրական-հոգեբանական ճշտությամբ, որքան արտաքին էֆեկտներով», մասնաժողովի անդամները անհրաժեշտ չեն գտնում վիպակը տպագրել:

Բնական է, որ մասնաժողովի վերաբերմունքը պետք է բորբոքեր ընկերության վարչության անդամների կրքերը և սրեր նրանց հարաբերությունը: Դժգոհությունն ավելի ակնհայտ է դառնում, երբ մասնաժողովի անդամները մերժում են նաև Ազարիա Աղեկյանի պատմվածքները: 1896 թ. ընկերության վարչության նախագահ Ա. Քալանթարը առաջարկում է Ա. Աղեկյանի «Ծանր խնդիր» և «Նրա ցավը» պատմվածքները տպագրել առանձին գրքով: Մասնաժողովի անդամներ Ստ. Մալխասյանն ու Ստ. Լիսիցյանը առաջարկում են. «Չնայած «Նրա ցավը» պատկերի նյութը շատ հետաքրքրական է և լավ տպավորություն է թողնում, մանավանդ գեղեցիկ կերպով դուրս են բերված գյուղացին ու ինտելիգենտ վաշխառուն, սակայն կան լեզվական անհարթություններ: Հեղինակը երևում է գրելու շնորհ ունի, բայց շատ տեղ բերում է նա յուր տպավորությունները և կարծիքները, նույնիսկ հերոսներին էլ ստիպում է խոսել նույն ոճով. դա չպետք է լինի, մենք պետք է գրվածքից և գործերից կտրակացնենք և ոչ թե լսենք հեղինակի կարծիքները: Բացի այդ, սկզբի գլուխը բոլորովին ավելորդ է, իսկ ինչ մնում է «Ծանր խնդրին», ապա այն բոլորովին անհնար է տպագրել. բովանդակությունը մոլթ է և անիմաստ, տենդենցիան վնասակար է ժողովրդի մեջ տարածելու համար»¹:

Ա. Աղեկյանը «Նրա ցավը» պատմվածքում գյուղի փրկությունը չի տեսնում լուսավորչական ծրագրի իրականացման և ոչ էլ ուժեղ անհատի փրկարար գործունեության մեջ: Նա փաստորեն մի կողմ է թողնում նարոդնիեական ուսմունքի հիմնական գաղափարը և փորձում է յուրովի բացահայտել գյուղի սոցիալատնտեսական քայքայման պատճառները: Նրա ինտելիգենտ հերոսը

¹ ՀՍՍՀ, ՊԿՊԱ, ֆ. 30, գ. 10, թ. 23—24:

գյուղ է գնում ոչ թե գյուղացու դրությունը բարձրեցնելու, այլև ավելի կատարելագործված հնարներով կեղեքելու հայ շինականին: Հեղինակը հանձին Սահակ ապոր եղբոր ինտելիգենտ փեսայի, ցույց է տալիս նոր «բարերարի», որն իր բարեկամին վաշխառուի ձեռքից փրկելու փոխարեն նուրբ, դիվանագիտական վարվելակերպով իր ձեռքն է գցում նրա միակ նեցուկը՝ այգին: Սահակ ապերը, զրկվելով հողից, «ցամաքն ընկած ձկան նման» դիմում է պանդխտության և վերջնական հանգստությունը գտնում սառը գերեզմանում:

Աղելյանը լինելով ուսուցիչ գրող, ղգացել և համոզվել էր, որ գյուղի սոցիալական քայքայման պատճառը մի կողմից առևտրավաշխառուական բուրժուազիան է, մյուս կողմից՝ ցարական պաշտոնյաների կամայականությունները: Սակայն գրողի պրպտող միտքը որոնում է այլ պատճառներ: Եվ նա «Ծանր խնդիր» պատմվածքում աշխատում է ապացուցել, որ գյուղացու տնտեսական պայմանների վատթարացման պատճառներից մեկը բազմաձևությունն է:

— «Դժվար է, շատ դժվար,— ասում է պատմվածքի հերոսը՝ Օվին,— ես ասում եմ մի մարդ, որ իրեն զոռովա պահում, էերակրում, հագցնում նա իսկի կնիկ չպիտի տանի»: Ուսպենսկու նմանողությամբ գրված այս պատմվածքում հեղինակը կնոջ առատաբերությունը համարում է գյուղացու շարքաշ կյանքի պատճառներից մեկը: Պատմվածքի այդ գաղափարն ընկերության խմբագրական մասնաժողովի անդամների կողմից ընդունվեց որպես «վնասակար տենդենց ժողովրդի մեջ տարածելու համար»:

Այսպիսով, Թիֆլիսի հրատարակչական ընկերության խմբագրական մասնաժողովը բարձր է գնահատել հայ գյուղագիրների կողմից գյուղի ճշմարտացի նկարագիրը, թանձր ներկերով պատկերած գյուղացիության տառապանքները, մորմոքներն ու բուռնությունը, և դրա հետ միասին քննադատել նրանց և պահանջել ալ գեղարվեստականորեն մշակված բարձր արվեստի ելակր:

Աղգալին գրականության զարգացման մտահոգությամբ հրատարակչական ընկերությունը ուղիներ էր որոնում գրականության ընդհանուր մակարդակի բարձրացման համար: Այդ նպատակով նա մի կողմից հատուկ ուշադրություն էր դարձնում լրագրմանական գրականության հրատարակությանը, մյուս կողմից սահմանում մրցանակ բարձրարժեք ստեղծագործություն-

ների համար: Այդտեղ էլ դրսևորվում են տարակարծություններ: Սա. Մալխասյանն այն կարծիքն է հայտնում, որ ինքը սկզբունքով դեմ է մրցանակ տալուն, քանի որ «այն լուր արհեստական միջոց, մի գրգիռ է, որ չի կարող զարկ տալ գրականությանը կամ նպաստել նոր գրողների առաջ գալուն»¹:

Լ. Մանվելյանը հակաճառելով Սա. Մալխասյանին, գտնում է, որ շնայած «արհեստական միջոցներով գրականությանը չի կարող առաջ գնալ, բայց քանի որ մեր գրողները նյութական նեղ դրություն մեջ են և անկարող են զբաղվել որևէ թեմայով, ընկերությունը զգալի օժանդակություն կտար շնորհալի, տաղանդավոր մարդկանց, եթե մրցանակաբաշխությունը հաստատվեր»²:

Մրցանակաբաշխության շուրջը ծավալված բանավեճը տեկց շուրջ հինգ տարի՝ 1892 թ. մինչև 1897 թ. վիճաբանության նյութն այն էր, թե մրցանակը ընկերության վարչությունը պետք է հաստատի, թե՞ խմբագրական մասնաժողովը, որ ժանրին պատկանող ստեղծագործությունները պետք է ներկայացվեն Էրցանակի և այլն:

Ի վերջո, 1897 թ. փետրվարի 17-ին ընկերության ընդհանուր ժողովը մրցանակաբաշխությունը դիտելով որպես մեր գրողներին քաջալերելու, գործի կոչելու, խրախուսելու կարևորագույն մի միջոց, անհրաժեշտ է համարում լավագույն ստեղծագործությունների հեղինակներին առ ինչպես դրամական մրցանակ, այնպես էլ մեդալ: Սակայն նկատի ունենալով, որ ընկերության կանոնադրության մեջ ոչ մի հոդված չկա մրցանակաբաշխության և մեդալի մասին, ժողովը որոշում է հարցում անել Պետերբուրգի «Ֆրեորելյան» և «Գրագիտության» ընկերություններին, թե ունեն արդյոք մեդալների և դրամական պարգևատրման մասին հատուկ կետ իրենց կանոնադրության մեջ: Տեղեկանալով, որ նրանց կանոնադրության մեջ նշված է այդ մասին, Թիֆլիսի հրատարակչական, համոված, որ ցարական կառավարությունը հնարավորություն չի տա իրեն մեդալ պարգևել հայ մտավորականին, ձեռնպահ է մնում կրօնական պատրաստելու մտադրությունից, որոշում է պատրաստել մրցանակաբաշխության

1 ՀՍՍՀ, ՊԿՊԱ, ֆ. 30, գ. 13, ք. 46:

2 Նույն տեղում:

կանոնադրութիւնը և ներկայացնել Կովկասի կառավարչապետի հաստատմանը:

Ըստ այդ կանոնադրութեան, հրատարակչական ընկերութիւնը սահմանում է մրցանակաբաշխութիւն՝ գեղարվեստական գրականութեան լավագոյն հեղինակութիւնների երևալուն նպաստելու համար, այն էլ այն ինքնուրույն գործերի, որոնք ժողովրդական բովանդակութիւն ունեն և որոնք ոչ մի տեղ լույս չեն տեսել: Ժողովրդական ասելով ընկերութիւնը նկատի ունի նախ, որ թեման ժողովրդի կյանքից վերցրած լինի և երկրորդ՝ հասկանալի լինի ժողովրդական լայն զանգվածներին:

Ընկերութիւնը գրականութեան ժողովրդայնութեան հետ սերտորեն կապում էր ազգային հարցը, քանի որ ժողովրդայնութեան ամեն մի գիծ իր մասնագիտութեան մեջ ունի տեղական սրտշակի գոյն ու երանդ, որով էլ տարբերվում են տարբեր ժողովուրդների գրական ստեղծագործութիւնները:

Մրցանակաբաշխութեան հարցում սուբյեկտիվ գործոնը վերացնելու միտումով ընկերութիւնը պահանջում է, որ գործերը ներկայացվեն առանց հեղինակի անվան: Գրողի անունը պետք է ներկայացնել առանձին ծրարով, որի վրա պետք է գրված լինի նույն նշանաբանը, ինչ որ աշխատութեան վրա: Ներկայացրած գործը ենթարկվում էր գրավոր գրախոսութեան՝ հինգ մասնագետ անդամների կողմից: Մրցանակը տրվում էր այն դեպքում, երբ հինգ գրախոսները գրական կարծիք էին հայտնում: Հեղինակը, բացի մրցանակից, ստանում է նաև հոնորար, ընկերութեան ընդհանուր կանոններով և գիրքը տպագրվում է «Արժանացել է Թիֆլիսի հայոց հրատարակչական ընկերութեան այդքինչ տարվա մրցանակին» մակագրութեամբ¹:

Որքան մեզ հայտնի է, հայ իրականութեան մեջ թերևս ոչ մի կուլտուրական օջախ նախքան Թիֆլիսի հրատարակչականը, երբեք չի դրել մրցանակաբաշխութեան հարցը նման կուլեգիալ, դեմոկրատական սկզբունքով:

Չնայած ընկերութիւններն իրենց գործունեութեան տարիներին չկարողացան մրցանակ շնորհել հայ մշակույթի որևէ գործչի, բայց և այնպես նրանց նպատակադրումը վկայում է, որ նրանք աշխատել են ամեն կերպ նպաստել ազգային գրականու-

¹ Տեղեկագիր, 1898, էջ 8—9:

թյան զարգացմանը, նյութական օժանդակություն ցույց տվել հայ մտավոր մշակներին:

Թիֆլիսի, Կովկասի հրատարակչական ընկերությունների ուսանելի ավանդներից մեկն էլ այն էր, որ նրանք հայ գրողներին ընկերության հետ կապելու, բարոյապես քաջալերելու համար հատուկ ուշադրություն էին դարձնում հոբելյանական միջոցառումներին: 1885 թ. Թիֆլիսի հրատարակչական ընկերության վարչության և խմբագրական մասնաժողովի համատեղ նիստում միաձայն որոշվում է. «Պատրաստություն տեսնել Գամառ-Քաթիպայի գրական գործունեության 25-ամյա հոբելյանը նշելու: Սա մի պարտք էր, որին ըստ շարիտ կարողության մասնակցելուց հաղիվ թե հրաժարվի հայի անուն կրող որևէ մարդ, որի սրտում գեթ մի անգամ արձագանք է գտել «Մայր Արաքսի» երգչի քնարը»:

Նույն ընկերությունը 1899 թ. մայիսին ըստ արժանվույն նշեց Պ. Պոռշյանի գրական գործունեության հոբելյանը¹:

Թիֆլիսի ընկերությունը ջերմ համակրանք արտահայտեց նաև Սմբատ Շահադիլի նկատմամբ: «Բանաստեղծ և մանկավարժ Սմբատ Շահադիլի 30-ամյա գրական հոբելյանի առթիվ,— կարդում ենք ընկերության արձանագրությունում,— վարչությունը ուղարկել է նրան ընկերության կողմից մի ուղերձ և հոբելյանի օրը՝ 1892 թ. ապրիլի 9-ին, Թիֆլիսի ժողովարանում, ի պատիվ պ. Շահադիլի, տվել երաժշտական երեկույթ»²: Խմբագրական մասնաժողովն իր հերթին որոշում է բանաստեղծի ընտրության մասին՝ ժողովածու, եթե «նորա հոբելյանի պատճառով կազմված հանձնաժողովը մտադիր չէ այդ տնելու»³: Սակայն հայրենասեր մանկավարժ-բանաստեղծը ժողովածուն ներկայացնելու փոխարեն ընկերությանը նվիրում է 400 ռուբլի՝ մանկապատանեական գրականություն տպագրելու համար: Շահադիլի ստեղծագործությունների լույս ընծայման հարցով զբաղվում է նաև Կովկասի հրատարակչական: 1912 թ. սեպտեմբերին խմբագրական մասնաժողովը որոշում է առանձին գրքով տպագրել Սմբատ Շահադիլի «Էկոնի վիշտը»՝ հեղինակի կենսագրության հետ միասին: Այդ կապակցությամբ գրավոր դի-

¹ Տե՛ս ՀՍՍՀ, ՊԿՊԱ, ֆ. 30, գ. 15, թ. 15:

² ՀՍՍՀ, ՊԿՊԱ, ֆ. 30, գ. 8, թ. 28:

³ Նույն տեղը, գ. 7, թ. 155:

մում են Երվանդ Շահադիլին, նրանից տպագրության թույլտվութ-
յուն ստանալու համար: Սակայն Եր. Շահադիլը նպատակ ունե-
նալով իր անվան հետ կապել բանաստեղծի ստեղծագործություն-
ների տպագրությունը՝ մերժում է ընկերության առաջարկու-
թյունը:

Թիֆլիսի հրատարակչականը արձագանքել է նաև Դ. Ալիշանի
և Գ. Այտնյանի հոբելյաններին: Վերջինիս հղած հեռագրում աս-
ված է. «Թիֆլիսի հայոց հրատարակչական ընկերությունը, բար-
ձրը գնահատելով Ձեր բազմաշխատ գրական գործունեությունը,
հայ լեզվագիտության ասպարեկում կատարած ձեր տաղան-
դավոր հետազոտությունները և հրատարակչական ու տպագրա-
կան գործի մեջ մտցրած Ձեր բազմաթիվ բարեփոխությունները,
ամենախորին հարգանքի ջերմ զգացումով շնորհավորում է ան-
խոնջ աշխատողիդ հիսունամյա գործունեության հոբելյանը»¹:

Եթե Թիֆլիսի հրատարակչականը հիմնականում բավարարվել
է ողջունի խոսքով, կազմակերպել երեկույթներ, կամ ամբողջ
կազմով մասնակցել հոբելյարին նվիրված միջոցառումներին,
ապա Կովկասի ընկերությունը աշխատել է ի պատիվ հոբելյա-
նի տպագրել նրանց ստեղծագործությունների ժողովածուները:
Այսպես, 1912 թ. Ստ. Նաղարյանի ծննդյան 100-ամյակի կա-
պակցությամբ ընկերությունը տպագրում է նրա երկերի ժողո-
վածուի առաջին հատորը, իսկ Շիրվանզադեի 30-ամյա գրական
գործունեության առթիվ լույս է ընծայում գրողի երկերը՝ չորս
հատորով: Նույն՝ 1912 թվականին, Կովկասի ընկերության խմբ-
բազրական մասնաժողովը որոշում է «ի պատիվ բանաստեղծ
Հովհաննես Հովհաննիսյանի 30-ամյա հոբելյանի առանձին գրք-
քով տպագրել նրա տպագրված և անտիպ բանաստեղծություն-
ների ժողովածուն և այդ մասին գրել հարգելի հոբելյարին, որ
նա ուղարկի այդ հավաքածուն»²: Բանաստեղծը չէր կարող կա-
տարել խմբագրական մասնաժողովի խնդրանքը, քանի որ 1908 թ.
տպագրված բանաստեղծությունների ժողովածուն գեռես չէր
սպառվել, և ինքը պատրաստ էր այն «փթերով բախկալներին
ծախել»:

Հայտնի է, որ հայ գրողի բաղձանքն է եղել կենդանության
օրոք տեսնել իր ստեղծագործությունների ամփոփ հրատարակու-

¹ Տեղեկագիր, 1895, էջ 12:

² ՀՍՍՀ, ՊԿՊԱ, ֆ. 30, գ. 18, թ. 72:

թյունը: Նրանք պատրաստ են եղել հանուն այդ ցանկության հրաժարվել հոբելյանից: 1894 թ. մարտի 9-ին մի նամակում Ղ. Աղայանն այդ առթիվ գրում է Հովհ. Թումանյանին. «Ինչո՞ւ ես ուզում իմանալ, թե իմ գրական գործունեությունս երբ եմ սկսել: Եթե ԱՄՅԱԿ եք ուզում կատարել, դրա անունը անգամ չտաք... Ժողանակ ամյակ կատարելու, այդպիսի մի հարց տվեք ձեզ, թե՞ Աղայանցը որ մեռնի, նրա աշխատությունները չպիտի՞ տպագրենք: Ուրեմն լավ չի՞ լինիլ, որ իր կենդանության ժամանակ անկնք այդ, որ ինքն էլ օգնի, սրբադրե, կարգավորե և ալլն»¹:

Հայ գրականության նահապետի սրտաբուխ ու ցնցող այս տողերը անջնջելի տպավորություն են թողնում Հովհ. Թումանյանի վրա: Տասնյոթ տարի հետո՝ 1911 թ. երբ այլևս չէր բաբախում Աղայանի սիրտը, Թումանյանը հանդես է գալիս մամուլում հետևյալ առաջարկությամբ: «Ղ. Աղայանն իր կենդանության օրով մի բուռն ցանկություն ունի՝ տեսնել իր ցրված գրվածքների լիակատար ժողովածուն: Արդյոք չէ՞ր կարելի, թեկուզ ֆոնդի փոխարեն, այժմ հավաքել ու հրատարակել այդ ժողովածուն: Եվ չէ՞ր կարող գործը իր վրա առնել Հայոց Հրատարակչական Ընկերությունը:

Գեղեցիկ գործ կլինի կատարած հրատարակչական ընկերությունը և մանավանդ՝ սիրելի Աղայանի կյանքի վախճանի ու նրա գրական գործունեության հիսնամյակին՝ մեծ համակրություն ու աջակցություն կգտնեի հասարակության կողմից»:

Ընկերությունը, որի «վարչության և խմբագրական մասնաժողովն իր ամբողջ կազմով ներկա էր եղել Ղ. Աղայանի թաղմանը, նյութական օժանդակություն էր ցուցաբերել հանգուցյալի ընտանիքին»², այլև ընդունում է Թումանյանի առաջարկը և երկու հատորով լույս ընծայում նրա երկերի ժողովածուն, ապա և որոշում «Աղայանի անվամբ հաշին գյուղում բացվելիք գրադարանի համար մի-մի օրինակ ուղարկել ընկերության հրատարակություններից»³:

Այսպիսով, Թիֆլիսի և Կովկասի հրատարակչական ընկերու-

1 Ղ. Աղայան, Երկերի ժող. հ. IV, 1963, էջ 539:

2 Հովհ. Թումանյան, Երկերի ժող. հ. IV, 1951, էջ 196:

3 Տեղեկագիր, 1912, էջ 59:

4 Նույն տեղը, էջ 58:

խլունները իրենց գործունեութեամբ նյութական ու բարոյական աշատպանութիւն ստեղծեցին հայ գրական գործիչներ ի համար և մեծապէս նպաստեցին ազգային մշակութի զարգացմանը:

3.

Թիֆլիսի և Կովկասի հայերեն գրքերի հրատարակչական ընդերու թշուառներ ի սմբադրական մասնաժողովի անդամները համոզված էին, որ մատաղ սերնդի ուսուցումն ու դաստիարակութիւնը էական նշանակութիւն ունի ազգի բարոյական ու տնտեսական զարգացման գործում: Մեծ տեղ տալով գեղարվեստական խոսքի դաստիարակչական և ուսուցողական նշանակութիւնը, նրանք լուրջ պահանջներ էին դնում գեղարվեստական գրականութեան ու նրա անբաժան մաս կազմող՝ մանկական գրականութեան առջև: Մանկական գրականութիւնը, հասարակական կյանքի նոր հարաբերութիւնների թելադրանքով, բարոյական ու խրատական գաղափարներ արծարծելուց բացի, պետք է աշուղ սերնդին դաստիարակի հայրենասիրական ու ազատասիրական ոգով: Յուշ տա կյանքի անարդարացի երևույթները, քննադատական վերաբերմունք ցուցաբերի ժամանակի արատավոր բարքերի նկատմամբ:

Եւսկէս: Ընկենալով դարի պահանջներն ու մանկավարժութեան ակըրունքները, հայ գրողներն ու մանկավարժները հանդէս էին գալիս տեսական հոգեւածներով, աշխատելով բացահայտել մանկական գրականութեան առանձնահատկութիւնները, ընդհանուր գրականութիւնից նրա տարբերիչ գծերը, նյութի ընտրութիւնը, բովանդակութիւնը, ժանրը, մատուցման եղանակը և այլն:

Դարի մանկավարժական միտքը լուսաբանող պարբերականները՝ «Հայկական աշխարհ» (1865—1878), «Դպրոց» (1874—1876), «Դաստիարակ» (1873—1874), «Մանկավարժական թերթ» (1884—1887), «Մանկավարժանոց» (1884—1887), «Վարժարան» (1882—1884), ժողովրդական կրթութեան ընդհանուր հարցերի, հայ դպրոցի եվրոպական թի ուսական բնույթի, գրական լեզվի ու դասագրքերի, սովորողների բարոյական դաստիարակութեան վերաբերյալ հոգեւածներում ընդգծում էին մանկական գրականութեան դերը սերնդի դաստիարակութեան և ուսուցման գործում, պահանջում էին պատշաճ ուշադրութիւն այդ գրականութեանը:

Մանկական գրականության պատմությունը ցույց է տալիս, որ նրա զարգացումը մշտապես առնչվել է խոշոր գեղագետների ստեղծագործական փորձի հետ: Այդպես եղավ նաև հայ մանկական գրականության պատմության մեջ՝ խաչատուր Աբովյանի, Հակոբ Պարոնյանի¹ և Ռաֆայել Պատկանյանի շնորհիվ:

Մանկական գրականության զարգացման մտահոգությամբ առաջնորդվեց նաև Թիֆլիսի հրատարակչական ընկերությունը: Հիմք ընդունելով այն գրույթը, թե «Ամենայն հասարակություն, ումենայն ժողովուրդ, որ առաջադիմել է կամենում, որ մտածում է ներկայի մեջ ապագան ապահովել, պետք է աշխատի դաստիարակության շնչքը առողջ հիմքերի վրա դնել, նպատակադրվում են, ասպարեզ գալ ջերմ փափագով՝ նպաստել ժողովրդականության, մանավանդ մանկական գրքերի հրատարակությամբ»², ընկերությունը նույն սկզբունքով էլ ձևափոխեց եղավ մանկական գրքերի հրատարակմանը:

Ընկերությունը ձգտում էր մանկան դաստիարակությունը տղատարակ կրոնական ու միստիկական բարոյախոսությունից, բլավ հրապարակախոսությանն արձագանքող գործերից, ճանապարհ հարթել մանկական գրականության զարգացման համար: Ընկերության խմբագրական մասնաժողովը դասապարտում էր բանասերների համար գրված անարվեստ, մերկապարանոց խրատներն ու բանաստեղծական չափատողներով արտահայտված մանկավարժական շոր ու ցամաք խորհուրդներ արտահայտող գործերը:

Առաջին հայ գրողը, որին որպես մանկագրի դիմեց ընկերությունը, Ռաֆայել Պատկանյանն էր: Դա պատահական չէր: Ժամանակի ամենաականավոր բանաստեղծը, հայ ժողովրդի հույսերի ու նվիրական երազանքների արտահայտիչը, արդեն բավականաչափ փորձ ուներ մանկապատանեական գրականության ուղղությամբ: Բաղմաժանը է Պատկանյանի ստեղծած մանկա-

¹ 1876—1878 թթ. 2. Պարոնյանի «Թատրոն բարեկամ մանկանց» երկշարաթաթերթի հրատարակությունը, որը համարվում է առաջին հայ մանկական պարբերականը, խոշոր գործ կատարեց մանկական գրականության ուղղությամբ: Հավատարիմ իր դեմոկրատական աշխարհայացքին, նա կարողացավ երկշարաթաթերթի միջոցով տարածել ժամանակի ոգուն համապատասխան ստեղծագործություններ, դաստիարակել աճող սերնդին հայրենասիրության ու ազատասիրության ոգով:

² «Փորձ», 1880, № 3, էջ 123:

կան գրականությունը (առականեր, հեքիաթներ, պատմվածքներ, բանաստեղծություններ): Նա թարգմանել է նաև համաշխարհային նշանավոր մանկագիրների գործերից: Այսպես, 1857 թ. Պատկանյանի փոխադրությամբ լույս տեսավ Դանիել Դեֆոյի «Ռոբինզոն Կրուզոն»¹, 1859 թվականին՝ «Նզովպոսի առակաները», այնուհետև Պուշկինի «Ոսկե ձկնիկը» և այլն: Մանկական գրականությամբ նա զբաղվել է հատկապես 1866 թվականից հետո, երբ Պետերբուրգից տեղափոխվել էր Նոր Նախիջևան և ձեռնամուխ եղել մանկավարժական գործունեությանը:

Նորակազմ հրատարակչական ընկերության խմբագրական մասնաժողովը 1880 թ. նոյեմբերի նիստում որոշում է. «Աչքի առաջ ունենալով, որ ներկայումս հայոց գրականության մեջ Գամառ-Փաթիպան իր բանաստեղծական գրվածքներով նշանավոր տեղ ունի բռնած և թե նորա գրվածքներն ստացած են ժողովրդականություն և ի նկատի առնելով, որ մանուկների համար գրվածքների հավաքածուն մինչև այժմ ամփոփ հրատարակված չէ, անհրաժեշտ է ի լույս ընծայել հիշյալ հեղինակի բանաստեղծությունները և նշանակել 300 ռուբլի իբրև վարձատրություն: Բազմաշխատ հեղինակի»²:

Ընկերությունը բարձր գնահատելով Պատկանյանի բանաստեղծական տաղանդն ընդհանրապես և մանուկների համար պլված գործերը մասնավորապես, հույս է հայտնում, «որ պատվելի բանաստեղծը չի դադարիլ մեր աղքատիկ մանկական գրականությունը նոր գրվածքներով հարստացնելուց»³:

Ո՞րն է Ու. Պատկանյանի նորարարությունը հայ մանկական պրականության մեջ: Պատկանյանն առաջինն էր, որ, հաշվի առնելով երեխաների տարիքային առանձնահատկությունները, գրեց նախադարձական հասակի երեխաների համար⁴: Բանաստեղծականավարժը մատաղ սերնդի դաստիարակության գործում մեծ

¹ Այդ գրքույկը արժանանում է Մ. Նալբանդյանի ուշադրությանը: Նա «Հյուսիսափայլում» գրում է գրախոսական, հայտնելով թարգմանչին «սրտի անկեղծ շնորհակալություն»:

² «Փորձ», 1880, № 11—12, էջ 183:

³ Գամառ-Փաթիպա, Մանկական երգեր, 1880:

⁴ Սխալ է այն կարծիքը, թե Ռ. Պատկանյանը ե. Աբովյանի նման գրել է զլխավորապես դպրոցականների համար, իսկ Ղ. Աղայանն առաջինն էր, որ նկատի է ունեցել նաև նախադարձականներին», «Հայ նոր գրականության պատմություն», ՀՍՍՀ ԳԱ հրատարակություն, Երևան, 1964, հատոր 3, էջ 302)։

աւել հատկացնելով մանկապարտեզներին և ինքը լինելով նրա
աւագին ակտիւ կազմակերպողներից մեկը, «որ երեխան շատ
կանուխ և համարյա խաղով ու զբուսանքով կսովորի այն, ինչ
ուրիշ հանգամանքների մեջ նա պիտի սովորեր առավել տարեց
հասակի մեջ, անտանելի դժվարութիւններ կրելով և միանգա-
մայն ժամանակն առաջ սպասելով յուր մտավոր և մարմնա-
վոր ուժը, «ձեռնամուխ է լինում այնպիսի գործերի ստեղծմանը,
որոնք պետք է խաղի և երգի միջոցով նպաստելն երեխայի խոս-
քի, մտածողութեան և երեակայութեան զարգացմանը: Պատկան-
յանը, մոտիկից ճանաչելով մանկան ներքնաշխարհը, նրա հո-
գեկան կարողութիւններն ու մտավոր ունակութիւնները, կարո-
ղացով գեղարվեստական խոսքի ուժով ավելի շրջահայաց ու
բանիմաց դարձնել նրանց: Նախադպրոցականների համար դըր-
ւած Պատկանյանի գործերը («Կուռնկներ», «Անճրե», «Կատու»,
«Բադիկ», «Արե», «Արտուտիկ» և այլն) այնքան հմայիչ ու պատ-
կերավոր են, որ անգամ ամենալուսկյաց երեխաներին ստիպում
են խոսել:

Պատկանյանը բանաստեղծութեան իմաստը կամ խրատական
միտքը արտահայտում է ոչ թե ուղղակի, այլ թափանցիկ այլա-
բանութեամբ, որ հեշտութեամբ կուսում է երեխան արդեն իր
կենսամիտքի ճանաչման շրջանակներում:

Ռ. Պատկանյանը գտնում էր, որ մանկական դրականութեան
մեջ պետք է խուսափել ժողովրդական «երգերի մեջ բովանդակ-
ված կոշտ սովորութիւնների և անտեղի, հնացած, կիսալայրե-
նի ավանդութիւնների նկարագրութիւնից»: Դրանց պահպանելը
ամեննին հայութիւն չէ, այլ «թանուսպասի աղղասիրութիւն»¹:
«Ես բոլորովին համոզված եմ,— գրել է բանաստեղծը ընկերու-
թեան վարչութեան նախագահ Ա. Հովհաննիսյանին,— որ ոչ մի
մասնավոր մարդու գրիչ կարող չէ հասնել այն անպաճույճ գե-
ղեցկութեան, որն ունի ժողովրդական երգը, բայց, տարաբախ-
տաբար, տեղական ոճով գրած լինելը արգելում է նոցա հայերի
մեջ ընդհանրութիւն գտնելու»²: Ելնելով այդ ճիշտ սկզբունքից,
Պատկանյանը ժողովրդական բանահյուսութեանը, դնելով իր
մանկական ստեղծագործութիւնների հիմքում, միաժամանակ
մշակում ու հղկում էր այն՝ դրական լեզվի սկզբունքներով:

¹ «Արձագանք», 1892, № 147:

² Նույն տեղը:

Հայտնի է, որ Պատկանյալի հայրենասիրական ու ազատաբաղձ երգերն ավելի ուժգին են հնչել 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի տարիներին ու նրանից հետո: Այդ տարիներին մանուկների համար գրած «Օրորոցի երգը» բանաստեղծու լյան մեջ անգամ ազդի ազատութիւնն է գովերգում: Գեղջկուհու մանկիկը լալիս է անդադար, անգամ, երբ սոխակը նրան սերտեր դառնալու, արեղածագը՝ արեղա, տատրակը՝ սգավոր, իսկ կաշաղակը «սովգաքար» դառնալու խոստումներ են տալիս: Նա ոչինչ չի ցանկանում, բացի ազատութիւնից: Իսկ երբ լսում է բաղեի «ռազմի երգի ձայնը», որը պայքարի է կոչում, ազատութիւն խոստումներով չի, նա հանգստանում է:

Թող որսըդ, արի, քաջասիրտ բաղե,
Քու երկը գուցե իմ որդին կուգե...
Բաղեն որ եկավ՝ որդիս լռեցավ
Ռազմի երգերի ձայնով քննեցավ:

Մանկական բանաստեղծութիւններում Պատկանյանը ծաղրել է օտարամոլութիւնը, անբարոյականութիւնը և հասարակական կյանքի այլ արատավոր երևոյթներ: Բանաստեղծը դիմական է անում սոցիալական անհավասարութիւն արատները, քարոզում ըմբոստացում շահագործման ու անարդարութիւն դեմ, դրվատում մարդկային բարձր առաքինութիւնը:

Թիֆլիսի հրատարակչականը, ելնելով Պատկանյանի բանաստեղծութիւնների հանգերի ու շափերի համապատասխանութիւնից ու նրանց երաժշտականութիւնից, կաղմակերպում է «Անձրե», «Մեղու», «Ձյուն» և «Գարուն» ոտանավորների երաժշտական նոտագրումը և որպէս հավելած կցում «Մանկական երգեր» գրքույկին: Ընկերութիւն խմբագրական մասնաժողովի անդամները, համոզված լինելով, որ երգերի միջոցով միտքն ավելի պարզորոշ տեսք է ընդունում ու հեշտութիւն ընկալվում, շատ ցավում են, որ կարողացան «միայն չորս երգերի նոտաները տպագրել»²: Տպագրած գրքույկը աշակերտութիւն շրջանում տարածելու նպատակով ընկերութիւնը ոչ միայն ցածր է նշանա-

1 Գամառ-Քաթիպա, Մանկական երգեր, 1880, էջ 2:

2 Նույն տեղը, հրատարակչութիւն կողմից:

կում նրա դինը (15 կոպեկ), այլև որոշում է «...500 օրինակ ձրի բաժանել մի քանի հայ ուսումնարաններին»¹։

Նորակալւմ ընկերությունը, ցանկանալով իմանալ Ռ. Պատկանյանի մանկական բանաստեղծությունների մասին հասարակական կարծիքը և գրողների ու մանկավարժների մտորումները առհասարակ մանկապատանեկան գրականության մասին, հիշեցնում էր մամուլի օրգաններին. «Գոնև այս անգամ շլոն» և իրենց էջերում տպագրեն համապատասխան գրախոսականներ²։ Խմբագրական մասնաժողովը չեկատելով, որ պարբերականները չեն արձագանքում, հարկադրված հանձնարարում է մասնաժողովի անդամ, անվանի մանկավարժ Սեդրակ Մանդինյանին հանդես գալ գրախոսականով։

Ս. Մանդինյանի գրախոսությունները³ դուրս են գալիս Պատկանյանի գրքուկների քննարկման սահմաններից և շոշափում ավելի ընդհանուր հարցեր։ Նրա այդ հոդվածները, սրոնք փաստորեն արտահայտում էին ընկերության տեսակետը մանկական գրականության մասին, ամենայն իրավամբ կարող են համարվել առաջին լուրջ քայլերը հայ մանկական գրականության տեսության ուղղությամբ։ Գրախոսողը հանդես է բերում գրականագիտական նուրբ ճաշակ, խորիմաստ մտքի՝ մանկական գրականության վիճակի ու նրա ասպագա ընթացքի վերաբերյալ։

Ժողովրդական բանահյուսությունը համարելով մանկական գրականության սնուցիչ աղբյուր, գրախոսը պահանջում էր նրա ճանարվեստ հատվածները ալվեստի տակ կոկել այնպես, որ համն ու հոտը պահպանվեն⁴։ Այդ ճիշտ սկզբունքով քննելով Պատկանյանի «Մանկական երգերը», Մանդինյանը գտնում է, որ բանաստեղծը վարպետորեն է «ոսկին անջատել հանքանյութից» և «մաքուր վիճակում» հավաքել ու հարստացրել է հայ մանուկի աղքատիկ գրագարանը։

Ս. Մանդինյանը բարձր է գնահատում նաև ժողովրդական

1 Գամառ-Փարիլա, Մանկական երգեր, 1880։

2 Նույն տեղը։

3 Ս. Մանդինյան, Գամառ-Փարիլայի աշխատասիրած «Մանկական երգեր» գրքուկի առթիվ, «Փորձ», 1880, № 2, էջ 41—78 և «Նորագույն մանկական ընթերցանության գրքեր (Բահաթյանի, Գամառ-Փարիլայի և Աղայանի)» «Վարժարան», 1882, № 1—2, էջ 70—83։

4 Փորձ, 1880, № 2, էջ 41։

հեքիաթների դերը երեխաների մտավոր կարողությունների վար-
դացման գործում: Նրա համոզմամբ «միայն ընտիր հեքիաթնե-
րը և ժողովրդական երգերն են մանկան հոգու ընտանիքը», ուս-
տի նախապատվությունը պետք է տալ այդ ժանրի գործերի
հրատարակմանը:

Ինչպես տեսնում ենք, ընկերության խմբագրական մասնա-
ժողովի անդամը ղեկավարվում է շատ ճիշտ սկզբունքով, առա-
ջարկելով օգտվել ժողովրդական բանահյուսությունից: Թիֆլիսի
հրատարակչականը որոշակի սկզբունքներից ելնելով մերժում է
հայտնի դրամատուրգ և արձակագիր Ալեքսանդր Արարատյանի
բանաստեղծությունների անգլիանիկ ժողովածուն՝ «Քնարիկ ման-
կականի» սուպերությունը: Այդ գրքույկի մասին խմբագրական
մասնաժողովում ղեկուցել է Գաբրիել Միրզոյանը: Վերջինիս
կարծիքով մանկական գրքերը պետք է հնուս լինեն նրոնական
միտումներից, մի բան, որ առկա է Արարատյանի ներկայացրած
գրքույկում: «Բացի այդ, — նկատում է Միրզոյանը, — հեղինակը
ամեն բան մանուկներին տալիս է ծամած ծամծամած, հնարավո-
րություն չի տալիս երեխաներին իրենց ներքին կյանքով պակտ-
սորդներ լրացնել: Այստեղ էլ ճշմարտանում է ֆրանսիական
առածը՝ «Տաղտկության դադարներից լրիվ ասելն է»: Գրախոսը
առաջարկում է հանել բանաստեղծությունների իմաստը բացա-
հայտող բոլոր մեկնությունները և որպես ոչինչ չասող՝ «Ջի և
էջ», «Աշխատասերը», «Ով է ուղիղ» ոտանավորները, նրանց փո-
խարեն շատացնել առածներն ու հանելուկները»: Հեղինակը չի
համաձայնվում արած դիտողությունների հետ և հետ է վերցնում
ձեռագիրը: Զորս տարի անց, Արարատյանը ընկերությանն է
ներկայացնում մի այլ ժողովածու՝ «Փնջիկ» վերնագրով: Այստեղ
սրգեն ոչ միայն չկան առաջինի թերությունները, այլև, համե-
մատած «Քնարիկ մանկականի» հետ, ավելի են հագեցած կյան-
քի ճանաչողական պատկերներով: Խմբագրական մասնաժողովը
միաձայն որոշում է սուպերել Արարատյանի «Փնջիկ» ժողովա-
ծուն, ուր տրված է գյուղական կյանքի ճշմարտացի պատկերը՝

¹ Ի դեպ, ճիշտ չէ գրականագետ Մ. Սադյանը, երբ «Քնարիկ մանկակա-
նում» տեսնում է «հիմնականում բնությանը նվիրված մանկական ոտանա-
վորներ» («Հայ նոր գրականության պատմություն», ՀՍՄՀ ԳԱ հրատարակչու-
թյուն, Երևան, 1964, հատ. 3, էջ 704), բանի որ նշված ժողովածուում գե-
տնդված 57 ոտանավորներից (չհաշված հանելուկները, առածները և շուտա-
հեղուկները) միայն յոթն է բնության մասին:

հայ գյուղացու կենցաղն ու առօրյան, նիստ ու կացը, ապրելակերպը՝ սկսած վաղ գարնանից («Սերմնացան») մինչև բերքահավաքը («Պարտքատեր»)։

Յուրացնելով Պատկանյանի և Աղայանի գյուղագրական ու ժողովրդական ավանդները, Արարատյանը յուրովի նկարագրում է Լերմնացանը, կալի աշխատանքը, կով կթելը, խնոցի հարելը և այլն։ Նման գործերը հրեխաների մոտ ոչ միայն սեր էին առաջացնում աշխատանքի նկատմամբ, այլև որոշակի պատկերացում էին տալիս գյուղի աշխատանքների, գյուղատնտեսական տարբեր մթերքների ստացման եղանակի մասին, դրվատում աշխատանքի ու վաստակի ժողովրդական առաքինությունը։

Թիֆլիսի հրատարակչականը չի եղել սոսկ պատվեր կատարող, նա շատ հաճախ հանդես է եկել նախաձեռնողի դերում, թե ինչպիսի գրքեր են անհրաժեշտ աճող սերնդին և ինչ ուղղությամբ պետք է ընթանա մանկական գրականությունը։ Ընկերությունն իմբագրական մասնաժողովը 1880 թ. ապրիլի նիստում որոշում է, քանի որ հայկական դպրոցների «առաջին երեք տարիների մայրենի լեզվի ուսման համար քիչ շատ ընթերցարաններ ունենին, իսկ շորրորդ և հինգերորդ տարիների համար եղածներն իրենց նպատակին չեն ծառայում, ուստի լրագրության միջնորդությամբ ցանկացողներին առաջարկել մի ծաղկաբաղ կազմել 4-րդ և 5-րդ տարիների համար աշխարհաբար լեզվով, որի մեջ ղետեղվեն։

1. Մեր հեղինակներից և ժողովրդական գրականությունից առնված արձակ և ոտանավոր հատվածներ, ժողովրդական հատվածների խորությունները կոկելով, բայց պահպանելով նոցա կենդանի և պատկերացուցիչ լեզուն, 2. Արևմտյան հայ գրականությունից հանած հատվածներ, 3. Պակաս հատվածները լրացնել ռուսական և եվրոպական գրականությունից, 4. Տալ բառերի ստուգաբանական մեկնությունը՝ նոցա նույնանիշները առաջ բերելով»¹։

Ընկերության այդ առաջարկությանը առաջինը արձագանքեց Ս. Մանդինյանը։ Նույն թվականին նա ներկայացրեց «Ազգային ընտանեկան աշխարհ» ընթերցարանը՝ «Գեղարդի վահանի տակ չի ծածկվի» ծածկանունով։ Լինելով իմբագրական մասնաժողովի անդամ, Մանդինյանը կարծում էր, թե հեշտ առ հանգիստ կտպա-

¹ «Փորձ», 1880, № 5, էջ 172։

գլխի իր գրքույկը: Սակայն քննադատական դիտողություններն այնքան շատ են լինում, որ հեղինակը հետ է պահանջում ձեռագիրը¹: Առանց հաշվի առնելու մասնաժողովի դիտողությունները, նա տպագրում է ընթերցարանը, առիթ տալով խիստ քրննադատության: Այսպես, Լեոն, խոսելով Մանդինյանի այդ ընթերցարանի մասին, իրավացիորեն գրում է. «Մանդինյանին էլ չէր տված մանկական գրողի ձիրք: Ընթերցարանի վերամշակման գործը թույլ անհատական կարողություն է ցույց տալիս: Դրա համար լոկ խմբագրություն է, սրբագրություններ, կրճատումներ, շտկումներ: Թեև ճոխ են ժողովրդական դարձվածքները, բայց նյութերը ներկայացնում են չղկված, չմշակված, գոնե մանավանդ մանկական լեզվի և առանձնահատուկ ըմբռնման կնիքը չունեն: Ընթերցողը կարծում է, թե ժողովրդական հեքիաթների մի ժողովածու է կարդում և ոչ թե մանկական մի դասագիրք»²:

Ընկերության խմբագրական մասնաժողովի սլահանջով դասագրքերի բովանդակությունը հիմնականում պետք է կազմեն պատմվածքներ, հեքիաթներ, առակներ, մանկական խաղեր և դյուղական աշխատանքային պրոցեսների ընդօրինակություններ: Այս բոլորը անհրաժեշտ էր տալ պարզ, երևիաներին հասկանալի պատկերներով, գեղարվեստական նկարագրություններով, սովորեցնել երևիաներին սիրել բնությունը, աշխատանքը, լինել ազնիվ, անկեղծ, հոգատար դեպի թույլերը, պայքարել չարի դեմ: Ինչպես տեսնում ենք, ընկերության պահանջները դասագրքերի բովանդակության նկատմամբ ամբողջապես դեմոկրատիզմով ու հումանիզմով են ներծծված: Ելնելով նման ճիշտ սկզբունքից, նա 1883 թվականին տպագրեց միայն Ղ. Աղայանի կազմած 2-րդ և 3-րդ սերիների ընթերցարանը «Արևիկ» խորագրով: Ինքը՝ Աղայանը, «Արևիկ» դասագիրքը գնահատել է որպես «մի կենդանի մանուկ, մանուկների ընկեր, նրանց հետ խոսող, նրանց սրտից ջուր խմող»: Այդ դասագրքերի լեզվի մասին գովեստով են արտահայտվել անգամ նրա գրական հակառակորդները: «Լեզուն պետք է լինի ժողովրդական-ազգային և մանկան հասկանալի և ըմբռնելի,— գրել է Ս. Մանդինյանը,— մեր գրականության մեջ ոչ ոք այնպիսի ընտիր ժողո-

¹ ՀՊԿՊԱ, ֆ. 30, գ. 2, թ. 17:

² «Հորիզոն», 1911, № 154:

վրդական լեզվով և մանկական պահանջին ախորժկի չի խոսել, ինչպես Աղայանն իր փոքրիկ գրքույկի մեջ»¹։

80-ական թվականների սկզբին Ղ. Աղայանը ճանաչված մանկագիր է։ Աշխատելով Սոֆյա Բաբայանի հիմնադրած մանկապարտեզում, նա առանձին նվիրվածություն ու հոգատարություն է հանդես բերում երեխաների հանդեպ, ուսումնասիրում նրանց ներքնաշխարհը, հակումներն ու հետաքրքրությունները։ Մանկապարտեզը նա համարել է մի բանաստեղծական աշխարհ, մի երկնային դրախտ, ուր իրեն «փայփայում էին անմեղ հրեշտակները և գլուխը զարգարում անթառամ ծաղիկներով»։ Այստեղ աշխատելու տարիներին նա գրում է «Սրինգ հովվականը»։

1881 թվականից տպագրվում են Ղ. Աղայանի հեքիաթները՝ «Անահիտ», «Տորք Անգեղ», «Օձամանուկ և Արեհատ», «Լույս և մութ աշխարհ», «Ձանգի-Ջրանգի», «Անտառի մանուկ», «Արեգնազան» և ուրիշներ, որոնք ջերմ ընդունելություն են գտնում ընթերցողների և հատկապես դպրոցականների կողմից։ 1889 թվականին գրողը դիմում է Թիֆլիսի ընկերությանը՝ խնդրելով տպագրել և էժան գնով տարածել ժողովրդի մեջ իր «Բանաստեղծությունների ժողովածուն» և «Անահիտ» հեքիաթը։

Աղայանի ժողովածուի մասին խմբագրական մասնաժողովում ելույթ են ունենում Իսահակ Հարությունյանը, Լեոն Սարգսյանը և Ալեքսանդր Քալանթարը։ Գրախոսները նշում են, որ «Բանաստեղծություններ» խոբագիրը չի համապատասխանում բովանդակությանը, քանի որ այնտեղ կան այնպիսի նյութեր, որոնք շատ հեռու են բանաստեղծություն լինելուց։ Ավելին, աշխատության մեջ բուն բանաստեղծական ոչինչ չկա. չկա մեկը, որ ցույց տա հեղինակի զուտ բանաստեղծական տաղանդը։ Սոքա մեծ մասամբ ժողովրդական զրույցներ են, ոտանավորի ձևով և չափով գրված, ինչպես օրինակ, «Եղիայի հանաքը», «Ցախավելի գաղտնիքը», «Հոնի կորիզը», «Պարզամիտ հովիվը», «Ապահով բնակարան», «Պառավի հորթը» և այլն, և այլն։ Եվ հենց սորա մեջ ենք գտնում այ. Աղայանի տաղանդը, որ նա կարողանում է ժողովրդի ստեղծագործությունն այնպիսի ձևով ներկայացնել ընթերցողին, որ նա սիրով ու հաճույքով է կարդում այդ։ Աղայանն ըմբռնել է հայ գյուղական ժողովրդի ոգին և լե-

1 Ղ. Աղայան, Երկերի ժողովածու, հ. IV, 1963, էջ 238։

զուն, ինքը սնված է այդ ոգով և այդ պատճառով ևս նրա ամենահաջող կտորները նոքա են, որոնք արտահայտում են այդ ոգու գաղափարները:

Ահա այդ արժանավորությունն ի նկատի ունենալով, առաջարկում ենք հարգելի մասնաժողովիդ՝ տպագրել պ. Աղայանի աշխատությունը, բացի այն անհաջող հատվածներից, որոնք մեր կարծիքով կնսեմացնեն աշխատության ամբողջությունը¹: Այնուհետև առաջարկվում է. հանել «Գանգատ», «Հայ Հովսեփ մանուկ Հիսուս», «Առ Հայրիկ խրիմյան», «Շնորհավոր տարի», «Առ Ղևոնդ հայր Ալիշան», «Ճշանակ և ճոռան», «Արությունի կարոտը և զղջումը», «Մուրճը և իր արձագանքը», «Լուսնահաշ», «Սոխակներ» բանաստեղծությունները և այլ հաստվածներ, որոնք արդեն տպագրվել են, ապա «մնացած գործերը դասավորել ըստ բովանդակության (մանկական և ժողովրդական), և աշխատություն վերնագիրը դնել «Ոտանավորներ, զրույցներ և առակներ»²:

Սակայն Ղ. Աղայանը չի համաձայնվում մասնաժողովի հետ՝ նրան վրդովեցնում է հատկապես որոշման այն կետը, որը վերաբերում է ուղղագրությանը՝ «իբրև անհաստատ նորամուծություն»³:

Նշեցինք, որ 80-ական թվականներին հայ մանկական գրականությունը թեև կոխել էր զարգացման նոր էտապ: Թիֆլիսի հրատարակչականը, որպես հասարակական կազմակերպություն, իր պահանջներն է դնում հայ գրողների, մանկավարժների և թարգմանիչների առջև: Ընկերության խմբագրական մասնաժողովի անդամ Իս. Հարությունյանը հանդես է գալիս «Ինչպիսի գրքեր են հարկավոր մեզ»⁴ հոդվածով, ուր շարադրում է ընկերության նպատակները այդ խնդրում: Շեշտելով հարցի կարևորությունը, հոգվածի հեղինակը հավաստում է, որ «քաղաքակրթության պատմությունից հայտնի է, թե որչափ մեծ նշանակություն ունի մի ազգի բարոյական ու տնտեսական զարգացման համար նոր սերնդի ուսումնառումը և դաստիարակությունը», և որքանով «մեր հույսն ու ապավենը մեր մատաղ սերունդն է. մենք պետք է աշխատենք բարվոքել այդ սերնդի դաստիարակության

¹ ՀՊԿՊԱ, ֆ. 30, գ. 10—14:

² Նույն տեղը:

³ Նույն տեղը:

⁴ «Արձագանք», 1889, № 14:

միջոցները և ահա այդ պատիարակիչ միջոցներից մեկն է մանկական ընթերցանության դիրքը»¹:

Հոգվածագիրը առաջարկում է մանուկների համար գրել «թեթև ոճով, նուրբ ճաշակով, շատիարակչական ոգով, բարոյական բարձր սկզբունքներով... և մատչելի բովանդակությամբ գրքեր», ուր գլխավոր հերոսը պետք է լինի առաջին պլանի վրա, որպեսզի «առաջն առնել այն ցրվածության և խառնաշփոթության, որ առհասարակ տեղի են ունենում մանկական գրքերի մեջ, և երկրորդ՝ գրքի նյութը մանկական մտավոր շրջանին մոտիկ լինի, որպեսզի գյուրությամբ յուրացուցանվի և ալդպիսով մի ախորժելի զգացումն պատճառե սանիկին»²:

Իս. Հարությունյանը պահում է, որ ընկերության հրատարակությունները պետք է նպաստեն աճող սերնդին դաստիարակելու մարդկային ազնիվ գծերով՝ կամքի ուժ, սկզբունքայնություն, ճշմարտացիություն, ամեն տեսակի դժվարություններ հաղթահարելու վճռականություն ու եռանդ, պետք է համակեն հպարտության խոր զգացմունքով դեպի հայրենիքը, դեպի մարդը:

Իսկ ի՞նչ սկզբունքով երեխային հասցնել գեղարվեստական ստեղծագործությունը: Այս հարցում ևս ընկերության տեսակետը միանգամայն հիմնավոր է. «Մանկական ընթերցանության նյութը,— գրված է նույն հոգվածում,— պետք է համապատասխանի մանուկի բնական զարգացմանը: Ուղղում եք դրդել մանուկներին դեպի աշխատասիրությունը, ցույց տվեք նրանց աշխատանքը գործողության մեջ իր հետևանքներով, առանց ծածկելու մանուկների առաջ և սյն հառաչանքները, որոնք դուրս են թողում աշխատողների կրծքից... Մի կեղծեք մանուկների առաջ, ցույց տվեք նրանց կյանքի և փշերը, և վարդերը, միայն ասածների մեջ լինի ճշմարտություն»:

Հոգվածագրի համոզմամբ գրքերից ստացած մտովի յուրացումները չեն անհետանում, այլ ժամանակի ընթացքում խմորում են առաջ բերում նրա հոգեբանության մեջ, կազմակերպում են նրա բնավորությունը, այնպես որ այն ինչ այսօր միայն տեսական ճշմարտություն է, ապագայում վերաճելու է գործնական ճշմարտության: «Որչափ առավել սանիկը սովորել է մտքով գործել,— գրում է Իս. Հարությունյանը,— այնչափ ևս կարող

¹ «Արձագանք», 1889, № 14:

² Նույն տեղը:

է նա ապագայում իրականութեան մեջ գործածել, այնչափ ևս ուղիղ և հաստատ կլինի նրա դատողութեանը, այնչափ ևս զարգացած և հաստատ կլինեն նրա ձեռք բերած սկզբունքները և առհասարակ այնչափ ևս լավ պատրաստված կլինի նա յուր ապագա գործունեութեան համար»¹:

Կլանքի և ժամանակի առաջավոր մանկավարժութեան թելադրանքով ստեղծված նման պահանջները իրականացնելու նպատակով ընկերութեանը «անհրաժեշտ համարեց հատուկ խմբադրական մասնաժողով կազմել մանկական գրքերի ընտրութեան հարցերով ղեկավարելու համար»²: Նորընտիր մասնաժողովի կազմում ընդգրկվում են անվանի մանկավարժներ Իս. Հարությունյանը, Ստ. Լիսիցյանը և է. Ղաղարյանը: Ինչպես վկայում են արխիվային վավերագրերը, մասնաժողովն իր գործունեութեան ընթացքում (1889—1895) ղդալիորեն խթանել է ազգային մանկական գրականութեան զարգացմանը, սերտ կապ ստեղծել ճանաչված մանկագիրների հետ, կազմել թարգմանութեան Լեւոնյան մանկական գրքերի նոր ցուցակ և հրապարակել մամուլում:

Քանի որ ճանաչված մանկագիր Ղ. Աղայանը խզել էր իր հարաբերութեանները ընկերության հետ (1892) իր ուղղագրութեանը շրջադրանքները պատճառով³, նորակազմ մասնաժողովը այդ միջադեպը հարթելու և անվանի մանկագրին ընկերութեան հետ կապելու նպատակով, ընդհանուր ժողովում որոշում է ընդունում, որ «հեղինակներին իրավունք է տրվում պահպանել ցանկացած ուղղագրութեանը՝ ու-ով կամ լ-ով»⁴:

Ազգային մանկաստանական գրականութեան որակը բարձրացնելու նպատակով մասնաժողովը առանց բացառութեան մերժում էր այն ստեղծագործութեանները, որոնք չունեին դաստիարակչական-ճանաչողական արժեք: Այդպիսին էին Գ. Բաբուրյանի կողմից ընկերությանը ներկայացրած «Փոքրիկ ընթերցարան» և «Փոքրիկ զրույցներ» գրքույկները, որոնց վերաբերյալ բացասական են արտահայտվել մասնաժողովի անդամները: «Ներկա գրքույկներում հավաքված նյութերը կամ չափազանց անհամ

¹ «Արձագանք», 1389, № 14:

² Տեղեկագիր, 1913, էջ 29:

³ Տե՛ս «Մշակ», 1889, № 39, «Արձագանք», № 27:

⁴ Տե՛ս Ղ. Աղայան, Երկերի ժողովածու, հ. 3, 1963, էջ 155:

⁵ Տեղեկագիր, 1896, էջ 29:

բաներ են կամ ուշադրութեան ոչ արժանի: «Փոքրիկ ընթերցարան» գրքուշկում, — ասված է ընկերութեան արձանագրութեան մեջ, — կա երեք ոտանավոր, մեկը՝ «Իղձ», ուր բանաստեղծը գտնում է հարավը և գտնում է այնտեղ կա «անբավ երկինք», «խնդութուն և կյանք», «անմահ գարուն», մյուսը, որ կրում է «Որբ» վերնագիրը, հեղինակը գրում է. «Ի՞նչ էր շարշարանք, ցավ, վիշտ ու աշխարհ, անծանոթ էին քո խաղաղ հոգուն», — այսքանից հետո էլ որտե՞ղ մնաց որբը: Երրորդը՝ թարգմանություն է, ուր ասված է, թե եթե ուղում ես լավ կյանք անցկացնել, պիտի մեռնակ լինես»: Երկրորդ գրքուշկը ես չի բավարարում խստապահանջ մասնաժողովին, որովհետև հեղինակի սկզբունքն այն է, թե «Մուլլին պետք է խրատել ոչ թե ծեծով, այլ քաղցով»¹:

Գ. Թարուրյանը կտրված լինելով կյանքից, չիմանալով մանկական ներաշխարհը, հակումներն ու հետաքրքրությունները՝ կեղծ ու մտացածին «սյուժե» է ստեղծել, որի համար էլ արժանացել է մասնաժողովի քննադատությանը: Նույն բախտին է արժանանում նաև էմմանուել քահանա Նաղարյանցի «Ոտանավորներ» ժողովածուն: Թե ինչ շարժառիթներից ելնելով է մասնաժողովը մերժել ժողովածուն, այդ մասին ընկերութեան արձանագրություններում չկան մանրամասն տեղեկություններ: Պահպանվել են միայն Նաղարյանցի գրքի վերնագիրը և հետևյալ նամակը: «Մեր նորագույն գրականության մեջ, թե ըստ ծավալի, թե ըստ բովանդակության, նկատվում է մանկական ընթերցանության սով, եթե հաշվի չառնենք եղած հատ ու կենտ գրքերը և թարգմանությունները: Աչքի առաջ ունենալով այդ հանգամանքը և այն, որ հանդավոր գրվածքները ավելի սիրով են կարդացվում, քան անհանգները՝ ես, իբրև փորձ՝ վճռեցի մի երկու ոտանավոր գրել, առանց սակայն մեր բանաստեղծների շարքը խտացնելու հավակնություն ունենալու»²:

Հավանաբար հեղինակը, չհամաձայնելով ընկերության քննադատական դիտողությունների հետ, ետ է վերցրել ձեռագիրը և երեք տարի անց (1903 թ.) լույս ընծայել Մոսկվայում: Գրքի բովանդակությունից ակնհայտ է երևում, որ հաղիվ թե այն համալրության արժանանար ընկերության կողմից:

¹ ՀՊԿՊԱ, ֆ. 30, գ. 15, թ. 32:

² ՀՍՍՀ, ԳԱԹ, Կովկասի հայոց հրատարակչական ընկերության ֆոնդ:

Նախ ժողովածուն ոչ միայն թույլ էր գեղարվեստական տեսակետից ու ճանաչողական նշանակությունից, այլև խորապահանքով էր կրոնական բարոյախոսությունը:

4.

Թիֆլիսի հրատարակչականը, բարձր գնահատելով ժողովրդական հեքիաթների դերը երեխաների մտավոր կարողությունների զարգացման գործում, մանկական գրականության սակասը լրացնելու միտումով դիմեց նաև այդ ժանրին: Ընկերության անդամները ելնում էին ժողովրդական հեքիաթները մանուկներին մատչելի դարձնելու, հեքիաթի դրական հերոսի օրինակով նրանց հայրենասիրություն, խիզախություն, հումանիզմ, ազնվություն և շիտակություն դաստիարակելու սկզբունքից: Մասնաժողովի անդամները պահանջում էին ժողովրդական հեքիաթները անպայման վերապատմել ժամանակակից գրական լեզվով, բոլորին հասկանալի ու կենդանի լեզվով, պատմել պարզ ու պատկերավոր, ինչպես որ ժողովուրդն է պատմում:

19-րդ դարի վերջին քառորդում ոռոս և հայ մանկավարժությունն մեջ սուր կերպով դրվեց հեքիաթի մանկավարժական դաստիարակչական նշանակության հարցը: Եվ չնայած իրարամերձ կարծիքների առկայությանը, 1880 թ. ընկերության մասնաժողովի անդամները, կյնելով այն փաստից, որ Ղ. Աղայանի հեքիաթները ջերմ ընդունելություն են գտել ընթերցողների և հատկապես դպրոցականների շրջանում, որոշում են դիմել Ղ. Աղայանին իր հեքիաթները տպագրության ներկայացնելու խնդրանքով: Մասնաժողովի այս որոշման դեմ հանդես է գալիս Եր. Ղազարյանը: Վերջինս իր կարծիքը տպագրում է նաև «Մուրճ» ամսագրում¹: Այդ քննադատական հոդվածի իմաստն այն էր, որ Ղ. Աղայանի հեքիաթները հակամանկավարժական են և կարող են երեխաներին վախ հարուցել, բայց ոչ դաստիարակել, թե դրանք չի են «անբնական, սարսափելի իրադարձություններով, որոնք կարող են լինել պատմական, բայց վնասակար, փոխանակ օգնելու ժողովրդին ազատվելու տգիտությունից, ընդհակառակն, ավելի են ամրացնում նրա հավատը դեպի սարսափեցնող երևույթները, դեպի գերբնականը»:

¹ Տե՛ս «Մուրճ», 1890, № 3, էջ 413—422:

² Նույն տեղը:

Ճիշտ է, Աղայանի հեքիաթներում ուժեղ են ֆանտաստիկ տարրերը, գերբնական աշխարհն իր հրաշքներով ու կախարդանքներով («Արեքնալան»՝ ցայտուն անտրոպոմորֆիզմով), «Օձամանուկ և Արեհաար»՝ կրոնական կանխատեսումներով ու քնազգականությամբ, բայց բոլոր հեքիաթներում կարմիր թելի պես անցնում է հավատը դեպի բարու հաղթանակն ու շարի կործանումը, մարդկային առաքինությունների ու բարեմասնությունների գոյքը, քաջություն, խիղիարություն, անձնվիրության մեծարումը, սիրո իդեալականացումը: Բնական է, որ Ղ. Աղայանը չէր կարող անպատասխան թողնել այդ քննադատությունը: Նա այդ հոգվածին տվեց կարճ, բայց իմաստալից պատասխան. «Իմ աչքում հեքիաթը բարոյական և մտավոր զարգացման համար շատ և շատ նման է մայրական կաթին... Կաթը կորչում է, բայց նրա արդյունքը չի կորչում: Հեքիաթը մեր երեակայության, մեր տաղանդի և հանձարի կաթն է: Այդ կաթը ինչպես սննդարար է. հղել մեղանից քառասուն դար առաջ, նույնքան սննդարար կլինի և քառասուն դար մեղանից հետո: Մարդու համեմատի և տաղանդի սալմեքը պետք է նրա լսած հեքիաթներում փնտրել:

Եթե ես գիտենայի, թե որպիսի հեքիաթներ լսելով է դարգացել Շեքսպիրի, Սերվանտեսի, Գյոթեի, Շիլլերի, Կոլումբի և սրանց նմանների երեակայությունը, ես նույն հեքիաթները կտալի և իմ քննիչը սիրելի մանուկներին, թեկուզ նրանց լսած հեքիաթները լինեին ավելի ևս ահուկի և զարհուրելի:

— Իմ հպատակն է հղել և է, — շարունակում է Աղայանը, — հեքիաթով հեքիաթական աշխարհ մտցնել երեխային և այդ աշխարհում կրավորական դեր չույլ նրան, այլ ներգործական, որ երեխան իր երեակայությամբ մտնե հերոսի դերի մեջ, այն անե, ինչ որ հերոսն է անում, նրա պես բաշատիրո լինի, նրա պես անվեհեր. նրա պես հնարագետ, նրա պես վեհանձն ու ազնիվ»¹:

Ղ. Աղայանը իրավացիորեն երեակայությունը համարում է Լրեխայի մտավոր զարգացման ամենակարևոր գործոններից մեկը, առաջին հայացքից անհնարինը հնարավոր դարձնելու ճանապարհին հանդիպած խոշոր գոտների հաղթահարման անփոխարինելի զենք: Նա փաստորեն գիտականորեն հիմնավորում է երեակայության նշանակությունը մարդկային իմացության գործում: Դրոք, մեծ շարիք չէ, որ երեխաները ծանոթանում են կախար-

¹ Ղ. Աղայան, Երկերի ժողովածու, հատ. 3, 1963, էջ 213—214:

դական աշխարհի, նրա գեպքերի ու գեմքերի հետ, կարծելով, թե բույսերն ու կենդանիներն էլ խոսել գիտեն: Ժամանակը հարթում է ամեն ինչ, և երեսները իմանում են իսկությունը, ճշմարտությունը, բայց մինչև այդ ժամանակի գալը ժողովուրդը երեսաներին իրերի և երևույթների էությունը բացահայտելու համար յուրովի օգտագործել է իր աշխարհայեցողությունը համապատասխան ձևերն ու միջոցները: Կասկածից վեր է, որ Ղ. Աղայանի՝ այդ «Հայ Անդերսենի» հեքիաթներն իրենց բարերար ազդեցությունն են ունեցել հայ ընթերցողի երևակայության զարգացման վրա: Նա հեքիաթի մշակման գործը դրեց հաստատուն հիմքերի վրա և ապահովեց նրա կատարելագործման հետագա ընթացքը:

Անժխտելի է այն, որ նա առաջինը մտցրեց մեր նոր գրականության մեջ գեղարվեստորեն մշակված հեքիաթի ժանրը: Այդ հեքիաթները «կարևոր տեղ են բռնում մեր մանկական գրականության մեջ... հմայիչ են, քնքուշ ու ժպտուն գույներով... կախարդական, դուրսագնական աշխարհ, ուր խոսում են կենդանիները, ուր հրաշքներից է հյուսված կյանքը, ուր ամբողջական են ապրում, այնտեղ է ուր Աղայանցի գրիչն ու վարպետությունն անմահ են»¹: Չնայած «հեքիաթամերժ» քննադատությունից հետո Աղայանը ոչ միայն ընկերությանը շնորհակալացրեց իր հեքիաթների ամփոփ ժողովածուն, այլև դադարեց հեքիաթ մշակելուց, սակայն հեքիաթը չմեռավ մեր գրականության մեջ, նա նոր գույներով ու երանգներով հանդես եկավ Հովհ. Թումանյանի ու Ալյաբևի խնկոյանի ստեղծագործություններում, միշտ հավատարիմ մնալով իր բուն ակունքին՝ ժողովրդական ստեղծագործությանը:

Թիֆլիսի թե Կովկասի հրատարակչականները, արխիվային փավերագրերի վկայությամբ, խստորեն հետեւում էին հեքիաթի գրական մշակման ստեղծագործության անհրաժեշտությանը: Թիֆլիսի ընկերությունն օրինակ մերժում է Տ. Նազարյանի գրի առած հեքիաթները՝ անմշակ և բարբառով գրված լինելու պատճառով: Նույնպես և բարյացակամ գտնվելով Սարգիս Հայկունու խարբերդի բարբառով գրի առած «Հաթութիկ» հեքիաթի նկատ-

¹ Լեո, Ռուսահայոց գրականություն, Վենետիկ, 1928, էջ 163:

² Տեղեկագիր, 1894, էջ 12:

մամբ՝ ընկերությունը մերժում է Գրիգոր Հայկունու «Սամվել հովիկ» պոեմը, որի սյուժեի հիմքում դրված է «Հաթուֆիկի» հեքիաթը: Եվ չնայած Գ. Հայկունին փորձել է ժողովրդական այդ ավանդության հետ վարվել այնպես, իր իսկ հեղինակի բառերով ասած, «ինչպես կվարվի արվեստագետը այն սիրուն մարմարիոն քարի հետ, որից նա կամենում է սիրո հուշարձան կանգնեցնել»¹: այնուամենայնիվ այդ նրան չի հաջողվում, և արժանանում է ընկերության խմբագրական մասնաժողովի քննադատությանը:

Քանի որ այդ քննադատականում արտահայտվում է նաև ընկերության մոտեցումը ժողովրդական ավանդույթների մշակման սկզբունքին, այն բերում ենք ամբողջությամբ. «Ամենից առաջ մեզ հետաքրքրում է թե այստեղ ժողովրդական փիլիսոփայության հիմնական կետերը վերամշակված են նյութի մեջ, թե՞ ոչ: Երկրորդ՝ ժողովրդական արվեստը իսկությամբ և ավելի գեղեցկացված ձևով դրված է մեր առաջ, թե՞ ոչ: Այս երկու սկզբունքը անհրաժեշտ է, որքանով ինքնուրույն պոեմ կամ գեղարվեստական երկ գրելիս, բանաստեղծը միանգամայն պաշտ է իր թռիչքների, տիպեր ու դեմքեր ստեղծելու մեջ, իսկ ժողովրդականը վերամշակելիս նրա ուղեցույցը պետք է լինի հենց այդ ժողովրդի ստեղծագործությունը:

Սակայն «սիրուն մարմարի» քարը տաշելիս Գ. Հայկունին անփորձ ձեռքով այդ մարմարի վրա գոյացրել է անթիվ ձևեր՝ վածքներ, փոսեր և ապա այդ փոսերն ու ձևերվածքները լցնել ալտառական նյութի շաղախով ու ապա ծածկել է ժանազին, գունավոր կեղծ մետաքսով: Դրա համար էլ նրա գործն իր ամբողջությամբ չափազանց արհեստական է: Դրա համար էլ Ս. Հայկունու «Հաթուֆիկը» ընթերցողը կարգում է լարված հետաքրքրությամբ, ապրում գործող անձերի հետ, հուզվում, չնայած, որ դժվարությամբ է հասկացվում գավառաբարբառը, դարձյալ ընթերցումը շարունակվում է սիրով, իսկ վերամշակված «Սամվել հովիկը» հաղիվ է՝ ընթերցվում, կարգալիս բացակայում է ապրումն ու հուզմունքը»²:

Ինչպես գրում է «Լուծա» հանդեսը, Թիֆլիսի հրատարակչականի գործունեության դադարումից հետո, «մի առ ժամանակ

1 Գ. Հայկունի, Սամվել Հովիկ, Թիֆլիս, 1912 թ., էջ 1:

2 ԳԱԹ, Կովկասի հայոց հրատարակչական ընկերության ֆոնդ:

դադարեց մանկական գրականության տպագրման գործը»¹: Այդ քաջը, մինչև Կովկասի հրատարակչականի կազմակերպումը, մասամբ լրացրել է Մ. Թումանյանի և Ստ. Լիսիցյանի ջանքերով հրատարակվող «Նվեր մանուկների» մատենաշարը:

Կովկասի հրատարակչականը լինելով Թիֆլիսի ընկերության Երինական ժառանգորդն ու նրա գործունեության շարունակողը, բնականաբար պետք է հատուկ ուշադրություն դարձնել մանկապատանեկան գրականության հրատարակման գործին: Ահա թե ինչ է գրված Կովկասի ընկերության տպագիր կոշում² ուղղված հասարակությանը. «Ժողովրդի լուսավորության գործին շոշափելի կերպով ծառայած լինելու համար վարչությունը պահանջ է սպասում ավելի լայն գործունեության և այդ նպատակով ընկերության խմբագրական մասնաժողովի հետ ուսումնասիրելով, թե ինչպիսի գրքերի կարիք ունի հայ ժողովուրդը՝ եկել է այն եզրակացության, որ անհրաժեշտ է տպագրել մեծ քանակությամբ մանկական և պատանեկան հասակին համապատասխան գրքեր, իսկ չափահասների համար՝ հայ և կլասիկ հեղինակների ժողովածուները, Եվրոպական և ռուսական լավագույն գրողների թարգմանությունները...»³:

Պետք է նկատել, որ Կովկասի հրատարակչական ընկերության գործունեության տարիներին հանդամանքները բոլորովին այլ էին: Համաշխարհային պատերազմը, ապա նաև հեղափոխական իրադարձությունները առաջադրում էին նոր խնդիրներ, որոնց ազդեցության տակ շոշափելի փոփոխություններ նկատվեցին նաև մանկապատանեկան գրականության տեսության, ինմատիկայի և ժանրային նկարագրի մեջ: Ավելացել էին մանկական պարբերականների թիվը և հրատարակվող գրքուցկների անուններն ու տպաքանակը: Հանդես էին եկել շնորհալի մանկագիրներ Ստեփան Լիսիցյանը, Աթաբեկ Խնկոյանը, Սիմակը, Հակոբ Աղաբաբը, Մաթևոս Դարբինյանը և ուրիշներ, որոնց շարքում իր տաղանդի մեծությամբ փայլում և ուղղություն էր առաջիւ Հովհ. Թումանյանը:

Եթե Թիֆլիսի հրատարակչականն իր գործունեության շրջանում մանկական գրականության հարցերով դիմում էր Ռաֆայել

¹ «Լուսա», 1909, № 3, էջ 70:

² ԳԱԹ, Կովկասի հայոց հրատարակչական ընկերության ֆոնդ:

Պատկանյանին ու Ղազարոս Աղայանին, որոնք ժամանակի խոշորագույն մանկագիրներն էին, ապա Կովկասի ընկերությունը ճանաչում էր Հովհ. Թումանյանին, որն առաջինն էր, որ պարզ պատկերացնում էր մանկան դաստիարակության հիմնական շղակները՝ կապված նրա տարիքի աճի հետ: Բանաստեղծը ելակետ ունենալով այն ճիշտ սկզբունքը, թե «Մանկությունը մարդու կյանքի էն ամենաընդունակ շրջանն է, երբ նա չորս կողմից ընդունում է, սնունդ է առնում ու զարգանում շարունակ», պահանջում էր «...շարունակ սնունդ տալ նրան, որ միշտ աճի ու զարգանա: Եվ ահա հենց էստեղ էլ հարց է առաջ գալիս. ի՞նչ սնունդ տալ և ի՞նչ ձևով տալ:

Ինչ վերաբերում է սնունդին, ամեն բան, ինչ որ շրջապատում է նրան, ինչ որ գոյություն ունի աշխարհքում, սնունդ է նրա համար: Միայն թե պետք է իմանալ, գտնել էս անսպառ սնունդ տալու ձևը»¹:

Մեծ գրողը ոչ միայն ինքն էր որոնում մանկական ստեղծագործության բաղմաղան ձևեր, այլև տարիներ շարունակ լինելով Կովկասի ընկերության մանկապատանեկան հրատարակությունների գլխավոր խորհրդատուն, ուղղություն և ընթացք էր տալիս նրա գործունեությանը: Թումանյանը «Հասկեր» մանկական ս.մսագրի ամենահեղինակավոր աշխատակիցն ու ղեկավարն էր և բոլորովին պատահական չէ, որ այդ ս.մսագրի հրատարակիչ Ստ. Լիսիցյանը բաժանորդագիրներին ուղղված կոչում նշում էր Թումանյանի անմիջական ղեկավար լինելու հանգամանքը:

1911 թ. մարտին Հովհ. Թումանյանը ելույթ ունենալով ընկերության ընդհանուր ժողովում, նշում է, որ անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել մանկապատանեկան գրքերի հրատարակմանը և իր պատրաստակամությունն է հայտնում մատչելի գնով ընկերությանը հանձնել աճող սերնդի համար գրված գործեր²: Ընկերության խմբագրական մասնաժողովը դահուկանակության մե է ընդունում Հովհ. Թումանյանի այդ առաջարկությունը և դրան պաշտոնական բնույթ տալու նպատակով մայիսի 29-ին դիմում է անվանի գրողին՝ ներկայացնելու իր ստեղծագործությունները: Եվ իրոք, կարճ ժամանակամիջոցում

¹ Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 4, 1951, էջ 328:

² ԳԱԹ, Կովկասի հրատարակչական ֆոնդ:

հաջորդաբար լույս են տեսնում Հովհ. Թումանյանի բալլադները, լեգենդները, հեքիաթներն ու պատմվածքները («Շունն ու կատուն», «Անբախտ վաճառականները», «Խոսող ձուկը», «Գառնիկ ախպերը», «Անհաղթ աքլորը», «Ծիտը», «Ուլիկը», «Աղվեսը», «Տերն ու ծառան», «Քաջ նազարը», «Սասունցի Դավիթը», «Փոքրիկ ձկնորսը», «Լիւլուն կտրած ծիտիկը», «Ոսկի քաղաքը», «Գիքորը»):

Հովհ. Թումանյանի, Հ. Ալաբաբի, Աթ. Խնկոյանի և այլոց մանկապատանեկան և տեղծագործություններով հայ մանկական գրականությունից իսպառ վտարվեց կրոնաբարոյական թեմատիկան, տեղի տալով բնության և գյուղաշխարհի նկարագրությանը: Արևի կենսատու լույսն ու ջերմությունը, գետակի կարկաչունը, հորթը կորցրած Պողոս ու Պետրոսի աղաղակը, գառնուկ դարձած տղայի քրոջ՝ Մանուշի վիշտը, ձագուկները կորցրած կիկուի աղերսանքը, ծառն ու ծաղիկը, դաշտն ու հանգը, այս բոլորը մոտ էին ու հարադատ մանկանը՝ նամանավանդ, որ Թումանյանն այդ ամենը կարողացել էր պատկերել գրավիչ, հյուսիս, պարզ ու պատկերավոր լեզվով:

Հայ պրոլետարական գրականության հիմնադիր Հակոբ Հակոբյանը դիտելով, թե ինչպես են արտահայտված սոցիալական հարցերը և մարդկային հարաբերությունները Հովհ. Թումանյանի մանկապատանեկան և տեղծագործություններում, բարձր է գնահատում նրա բալլադներն ու լեգենդները: Նրա «Շունն ու կատուն» ցույց է տալիս անբարեխիղճ գողին հատուկ անաղնիվ մարդկանց հոգեբանությունը, նրա «Պողոս-Պետրոսը» — շար, խորթ մոր անգթությունը դեպի խորթ, որը մանուկները, նրա «Անբախտ վաճառականները» նամուսից ու պատվից թաքնվող մարդն է հանձինս շղջիկի ու ճայի՝ վաշխառու փշի դիմաց. նրա «Անիծած հարսը» ամոթի սիմվոլն է հոպոպի դերում¹:

Սոցիալական խոր արմատներ ունեն նաև Աթաբեկ Խնկոյանի առակներն ու հեքիաթները:

1913 թ. սեպտեմբերին Աթաբեկ Խնկոյանը ընկերությունը ներկայացնում է «Առակներ» գիրքը, ուր տեղ էին գտել թե ինքնուրույն և թե՛ համաշխարհային խոշոր առակագիրներ Եղովպոսից, Լաֆոնտենից, Կռիլովից կատարած թարգմանությունները: Խնկոյանը թարգմանությունները հարստացրել է տեղական կոլորիտով, հայկական ժողովրդական դարձվածքներով, ասաց-

¹ «Կարմիր ծիւեր», 1923, № 1, էջ 43:

վածքներով: Դրա համար էլ ոչ ոքի մտքով չի անցնում, որ բար-
 ևբը վարպետությանը գրված «Ճպտուն ու մրջյունը», հումորով
 լի «Կկուն ու արևորը» թարգմանություններ կամ փոխադրություն-
 ներ կարող են լինել: Եվ չնայած, որ նա օգտագործել է նաև իր
 նախորդների՝ Ալեկկցու, Մխիթար Գոշի, Աբովյանի թողած հա-
 րուստ ժառանգությունը, բայց մեր նոր գրականության մեջ
 նրան վերադասված է առաջնակարգ տեղ առակի ժանրի գեղար-
 վեստական մշակման գործում: Այս հարցում իր լուսման ունի
 Կովկասի հրատարակչականը: Ընկերությունը, բարձր գնահա-
 տելով ներկայացրած առակների գրքույկը, միաժամանակ նշել
 է, որ «Խնկոյանը հանգի համար լեզվի մեջ անկանոնություն է
 մտցրել: Բռնադժոխիկ խոսքեր է գործածել և քերականական
 սխալներ է արել, որի պատճառով դուրս է գալիս երաժշտական
 անկանոնություն»¹: Այնուհետև խմբագրական մասնաժողովը
 առաջարկում է գրքույկից հանել անհաջող առակները, ավան-
 դությունները և «խնամքով խմբագրելուց հետո» տպագրել: Այդ
 աշխատանքը հանձնարարվում է խմբագրական մասնաժողովի
 անդամներ Տ. Գյուլնազարյանին և Դ. Դեմիրճյանին: 1913 թ.
 հոկտեմբերի 15-ի նիստում, խմբագիրները զեկուցում են, որ
 «Խնկոյանը իր առակները փոփոխման է ենթարկել, մի քանիսը
 խիստ կրճատել, մյուսները նորից մշակել, իսկ մի քանի թույլերն
 էլ դուրս գցել»²: Այսպիսի վերամշակումից հետո նորից ընթերց-
 ւվում և գործնական դիտողություններ են արվում, խմբագրվում
 և նոր միայն տպագրվում: Այս փաստը վկայում է, որ Աթաբեկ
 Խնկոյանի առակների կառուցվածքի՝ պարզ, մատչելի, հակիրճ
 ներդաշնակորեն հյուսված, ինչպես նաև գրական սահուն, մաքուր,
 կայտառ ու թեթև, հուզիչ ու պատկերավոր լեզվի հարցում մեծ
 դեր է կատարել Կովկասի հրատարակչականը: Մեր այս միտքը
 մասամբ վերաբերում է Խնկոյանի նաև այն հեքիաթներին, որոնք
 տպագրել է ընկերությունը: Տարբեր ժամանակաշրջանում Կով-
 կասի ընկերությունը լույս է ընծայել Աթ. Խնկոյանի «Ոսկե իլիկ»,
 «Ուժով մկան և հարուստ ճնճղուկի հեքիաթը», «Քարացած քույ-
 րը», «Աղվեսը և արջը», «Ծիտն ու որբերը» և մի քանի ուրիշ
 հեքիաթներ: Սակայն, քանի որ չեն պահպանվել սևագրությու-
 ները, ընկերության արվեստանոցը, դժվար է ցույց տալ խմբա-

¹ ՀՍՍՀ, ՊԿՊԱ, ֆոնդ 30, գ. 25, թ. 51:

² ՀՍՍՀ, ՊԿՊԱ, ֆոնդ 30, գ. 25, թ. 69:

գրական մասնաժողովի անդամների կատարած բարեփոխութ-
յունների չափն ու աստիճանը:

Այժմ մի քանի խոսք ընկերության վերաբերմունքի մասին
մանկական երգերի նկատմամբ: Ինչպես նշել ենք, Թիֆլիսի ըն-
կերությունը 1880 թ. տպագրելով Ռ. Պատկանյանի «Մանկա-
կան երգեր» գրքուկը, նրանում կցում է «Անձրե», «Մեղու», «Ձյուն»
և «Դարուն» բանաստեղծությունների նոտաները, որով իսկ ցան-
կանում է փոքր-ինչ բարեփոխել հայկական դպրոցների երա-
ժշտական ուսուցման գործը: Սակայն այդ շնորհալի նախաձեռ-
նությունը չունեցավ իր դարգացումը: 13 տարի հետո, 1893 թ.
Վրթ. Փափազյանը մոտ կանգնած լինելով հայ երաժշտությանը,
ցանկանում է բազմաձայն երգեցողություն մտցնել հայկական
դպրոցներում և այդ նպատակով Ժենից (ուր սովորում էր գրողը)
նամանակով հետևյալ առաջարկությունն է անում Թիֆլիսի հրա-
տարակազմական ընկերության վարչությանը: «Մանկական և առ-
հասարակ դպրոցական երգերի պակասությունը սաստիկ զգալի
է հայոց ուսումնարաններում, ուր ուսուցանում են կամ շարա-
կաններ կամ Տեր Եզնիկի մանկական անճուռի երգեր: Մի ամիս
է, որ շվեյցարական ուսումնարանները այցելելուց և այդ մասը
ուսումնասիրելուց հետո, ինձ հաջողվեց ձևոք ձգել մանկական և
դպրոցական ընտիր երգերի երկու ժողովածուներ, որոնց երգերն
են, որ սովորեցնում են շվեյցարական դպրոցներում: Առաջին
ժողովածուն կաղմված է 3—7 տարեկան մանկական պարտեզ-
ների համար, իսկ երկրորդը 7—13 տարեկան տղայոց համար:
Այս ժողովածուն ունի մի շատ լավ առաջաբան, ուր նշանակ-
ված է թե՛ երգերի և թե՛ խաղերի բացատրությունը և ուսուցա-
նելու ձևը: 120 երգ ունի, 22 կատակաստիկ երգեր և 20 խաղ-
երգ և մարմնամարզական երգեր: Երկու ժողովածուներն էլ սկսել
ևմ թարգմանել և հարմարեցնել հայ դպրոցականների համար,
միջից հանելով այնպիսի կտորներ, որոնք ցենզուրայից կար-
ողել են և այնպիսիները, որոնք լավ եղանակներ չունեն»¹:

Այնուհետև Փափազյանը անդրադառնում է մի շարք գործ-
նական խնդիրների և ընկերության տնօրինությանը հայցում իր
նախաձեռնությունն իրականացնելու գործը:

Հայկական դպրոցներում երգուսուցման ողբալի վիճակի
նկատմամբ անտարբեր չգտնվեց Կովկասի հրատարակչականը:

1 Հոկտեմբեր, ֆոնդ 30, գործ 8, թերթ 22,

նմբագրական մասնաժողովը դիմում է վարչությանը, որ անհրաժեշտ է «ըմբռնել այն կարևոր հանգամանքը, որ չի կարելի մանուկներին սովորեցնել այնպիսի երգեր, որոնք նրա սրտին ու մտքին մատչելի չեն: Այդ պակասը շատ մեծ է մեր դպրոցներում: Ուստի պետք է դիմել կարող անձանց կազմել դասագրքեր»¹: Այս նկատառումով ընկերության վարչությունը պաշտոնական գրությամբ դիմում է Ա. Տեր-Հովսեփյանին և Ա. Տեր-Ղևոնդյանին: Երկուսն էլ բարեխղճությամբ կատարում են պատվերը, իսկ Ա. Տեր-Ղևոնդյանը լինելով Պետերբուրգում, հանդես է գալիս որպես ընկերության լիազորը երաժշտական գրքերի տպագրության հարցում: 1914 թ. Պետերբուրգում Կովկասի հրատարակչականի մականիշով լույս է տեսնում Ա. Տեր-Ղևոնդյանի «Մանկական երգերը», նույն խորագրով հրատարակվում է նաև Ա. Տեր-Հովսեփյանի գրքույկը:

Հայ սլարբերականները բարձր են գնահատում այդ գրքերի երևան գալը. «Մեր մանկական երգերի անդաստանն այն աստիճանի ամայի է, — գրում է «Արարատը», — որ Տեր-Ղևոնդյանի այս գրքույկը պետք է համարել մի խրախուսելի քայլ, որպես ձգտում մեր մանկական երգերի թիվը քանակով շատացնելու»²: Ըստ «Մշակի» զրական մի քայլ է Ա. Տեր-Հովսեփյանի «Մանկական երգեր» գրքույկի հրատարակումը ընկերության կողմից, որպես ձայնագրված և եվրոպական նոտաներով (միաձայն) 15 երգ՝ մեծ մասամբ ինքնուրույն: Այդ պարզ եղանակներն իրենց մանկական տեքստերով միանգամայն հարմար են թե տարրական դպրոցների և թե մանկական պարտեզների մանուկների համար»³:

Հայտնի է, որ մանկապատանեկան դրականության կարևոր հարցերից է նաև մանկական գրքերի գեղարվեստական ձևավորումը: Թիֆլիսի և Կովկասի հրատարակչականները այդ հարցը դիտելով որպես երևիաների էսթետիկական ճաշակի, դաստիարակության, նյութի ըմբռնման, երեակայության զարգացման և ուշագործության գրավման կարևորագույն միջոց, միշտ աշխատել են, որ գրքերի գեղարվեստական ձևավորումը լինի շքեղ:

Թիֆլիսի ընկերության կազմակերպման տարիներին Անդր-

¹ Տեղեկագիր, 1911, էջ 29:

² «Արարատ», 1914, էջ 1152:

³ «Մշակ», 1913, №16:

էովկասում նոր էր զարգանում ցինկոգրաֆիան, պոլիգրաֆիան որի համար էլ ընկերությունը սկզբում որոշում է «գիմել ֆարի-պում, Բեռլինում և Ժնևում գտնվող ծանոթներին, որպեսզի տեղում պատվիրենք կլիշաներ՝ մանկական գրքերի համար»¹։ Իսկ հետագայում, հետեւելով հմուտ և փորձված ժուռնալիստ և ակա-նավոր հրատարակիչ Տիգրան Նազարյանի օրինակին, պաշտոնա-կան կապ է ստեղծում Պետերբուրգի, Մոսկվայի և Եվրոպայի մի շարք քաղաքների ֆիրմաների հետ։ Բավական է ասել, որ միայն Շտուտգարտ քաղաքի գեղարվեստական ֆիրմայում պատվիրվում է 43,200 կլիշե՝ մանկական գրքերի համար։ Այդ եռանդուն գործը ունեցավ այն հետեանքը, որ Թիֆլիսի և Կովկասի ընկերությունները մանկապատանեկան գրքի գեղարվեստական ձևավորումը և տեղագրված նկարները իրենց պայծառությամբ, գեղեցկությամբ ու շքեղությամբ ամենապատվավոր տեղն են բռնում նույն ժամա-նակաշրջանում լույս տեսած այլ հրատարակությունների մեջ։ Պատկերը ամբողջական դարձնելու նպատակով բերենք հետեւյալ օրինակը. «Նվեր մանուկներին» մատենաշարի երկրորդ համարի տակ տպագրվել է Հով. Թումանյանի «Գառնիկ ախպեր» հե-քիաթը։ Նույն հեքիաթը տպագրում է նաև Թիֆլիսի ընկերու-թյունը։ Եվ երբ համեմատում ենք այդ հեքիաթի երկու հրատա-րակությունները, նկատում ենք, որ «Նվեր մանուկներին» տպագրած նկարները թողնում են գունատիպ էսքիզների տպա-վորություն։ Կան նկարներ, ուր պակասում է մասերի համաշա-փությունը, եթե մի կողմ թողնենք այն, որ թագավորին խնջույ-քի ժամանակ սպասավորը իբրև ճաշ մատուցում է կենդանի փա-ւիան։ Բոլորովին անհամապատասխան է շորրորդ էջի ամբող-ջական նկարը. «երբ խեղճ Մանուշը վայ է տալիս, լալիս» կսկծի նշույլ անգամ չկա նրա երեսին։ Իսկ երբ նկարը ներ-կայացնում է այն պահը, երբ «Երկու որբեր, քուր ու ախպեր, գառն ու աղջիկ մոլորված, գնում-գնում են կորած», ոչինչ չի արտահայտում քրոջ պարզած ձեռքը, մինչդեռ հոգեպես ընկրճ-ված մոլորված աղջիկը ամբողջապես պետք է գերի դառնա իր սնսպասելի ծանր վշտին։

Այլ տպավորություն է թողնում Թիֆլիսի ընկերության հրա-տարակածը։ Այստեղ նկարները բացահայտում են հեքիաթի էությունը, բովանդակությունը, գրավիչ են, հուշող և տպավո-

¹ «Փորձ», 1880, № 11—12, էջ 184։

բիշ, նույնը կարող ենք ասել Կովկասի հրատարակչականի կողմից լույս տեսած «Գիրքորի» մասին: Սակայն այս առիթով խոսքը ասանք Ավ. Իսահակյանին. «Գրքույլը տպված է հարազատ միջավայրից վերցրած շատ սիրուն և հաջող նկարներով, գունատիպ: Այսպիսի գեղեցիկ հրատարակություն, եթե չեմ մեղանշում, առաջինն է մեր մանկական գրականության մեջ»¹:

Ընկերությունը հաշվի առնելով, որ Հովհ. Թումանյանը ժամանակի ամենասիրված մանկագիրն է, նրա գրքույկներին կցում էր հետևյալ երկտողը, որը էսթետիկական դաստիարակության տեսակետից որոշակի հետաքրքրություն է ներկայացնում. «Ես մի անգամ լսեցի գրողարանի գրքի խոսակցությունը փոքրիկ երեխայի հետ և գրի առա. գիրքն ասում էր. «Սիրելի մանուկ, խնդրում եմ ինձ չվերցնես կեղտոտ ձեռքերով, սաստիկ կամաշեմ, երբ ուրիշ երեխաներ ինձ մաքուր շտեմենն: Մի թող ինձ անձրևի տակ, չէ՞ որ գրքերը նույնպես փոքրիկ երեխաների նման հեշտությամբ կմրսեն: Ինձ վրա չգրես կամ նշան չանես ոչ զրույցով և ոչ մատիտով, դա շատ տգեղ է: Կարգալիս էլ արմունկդ մի դնիր երեսիս, սաստիկ ցավեցնում է, նույնպես բաց մի ձգիր ինձ երեսիս վրա, քեզ դուր չի գա, երբ նույն ձեռով հետդ վարվեն ուրիշները: Թերթերիս մեջ մի դիր ոչ մատիտ և ոչ էլ որևէ հաստ իր՝ բացի բարակ թղթերից, որովհետև դրանցից կփչանա իմ կաղմը»:

Եթե կարգալի վերջացրել ես և վախենում ես կարդացած տեղը կորցնել, հղունգներով նշաններ մի անիր, այլ պահիր իմ մեջ մի թուղթ կամ գեղեցիկ ժապավեն, ծածկիր ինձ և դիր նախկին տեղս: Մի մոռանար, որ քեզանից հետո ես դեռ շատ երեխաների պիտի ալցեմ:

Օգնիր ինձ մնալ մաքուր և գեղեցիկ,

Իսկ ես կօգնեմ լինես երջանիկ...

Թերևս պեղագիտական ճաշակով հրատարակություններն են այն պատճառներից մեկը, որ ընկերության տպագրած մանկապատանեկան գրքերը, ինչպես նաև դասագրքերը, լայն ընդունելություն են գտնում ժամանակակիցների կողմից: Այսպես, 1895 թ. Վրթ. Փափաղյանը վերագրանալով Ժենեից, ռուսացության էր մեկնում Թեհրան: Այդ կապակցությամբ նա հետևյալն է գրում

¹ Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հատ. 4, 1951, էջ 133:

Թիֆլիսի հրատարակչական ընկերության վարչությանը. «Գնում եմ Թեհրան հայոց ուսումնարանին ուսուցչության: Սրանով ինդրում եմ կարգադրել, որ վաղն ինձ տան այդ ուսումնարաններին իբրև նվեր հետևյալ դասագրքերը՝ 1) Հանրամատչելի բանաստեղծություն, 2) Աշխարհագրություն, 3) Աստղագիտություն. 4) Դարվիճիզ, 5) Քիմիա»¹: Նա ցանկանում էր իր հետ տանել այդ գրքերը, քանի որ Արևմտյան Հայաստանի դպրոցներում գործածության մեջ դրված դասագրքերը չէր համարում՝ «Բոլորն էլ այրելու բաներ են»: Իր միտքը հաստատելու համար բերում է հետևյալը՝ «Վերցնենք Բ. Էքսերճյանի «Ամենանոր ռոմի», «Մայրենի լեզուն»: Աշխատասիրողը այս ու այն տպարանից գտել է մի քանի հատ պատկերներ, տպել է տվել և նրանց վրա հոդվածներ գրել՝ ընթերցանության համար:

Տեսնում եք այդ բազեն, որ վաղում է ճնճղուկի հետեից... — մինչդեռ պատկերի մեջ միայն մի քանի հատ ագռավներ կան, սրտնցից մի քանիսը հևու են և մեկը՝ մոտ... Տեսնում եք այդ խոշորը, որ կոչվում է ջալամ, տեսնում եք ինչպես է թռչում նա օդի մեջ...» մինչդեռ պատկերի մեջ նկարված է մի արագիլ և խեղճ աշխատասիրողը դեռ չգիտեր, որ ջալամը չի թռչում...»²:

Նույնպիսի կրքոտությամբ Վրթ. Փափաղյանը քննադատում է նաև աշխարհագրության դասագիրքը: Վերջինս նրա կարծիքով պետք է տեղեկություններ տա հայոց բնօրրանի և հայաբնակ քաղաքների վերաբերյալ, նպաստի երևիսանների մտահորիզոնի ընդարձակմանը, ճիշտ պատկերացում տա միջավայրի, բնության, տեղաչնության մասին, վերջապես սովորողներին ներշնչի հայրենասիրական գաղափարներ. «Սակայն աշխարհագրության եղած դասագրքի մեջ, — գրում է Փափաղյանը, — եթե հարյուր տարի փնտրես, անուններից բացի, ոչինչ չպիտի գտնել. էլ Միացյալ Նահանգներից յուրաքանչյուր Կանտոնի անուն չի մնացել, էլ Զինաստանի, Ավստրալիայի քաղաքների անուններ չեն մնացել... Բոլորը կան նրա մեջ, մինչդեռ ոչ իսկ հետքը կգտնես թե ի՞նչ է Վան, Մուշ կամ նույնիսկ որտեղ են ապրում հայ մանուկները...»³:

¹ ՀՍՍՀ, ՊԿՊԱ, ֆ. 30, գ. 18, թ 39:

² «Մշակ», 1895, № 181:

³ Նույն տեղում:

1887 թ. Թիֆլիսի հրատարակչականը նկատի առնելով, որ հայկական «ծխական և թեմատիկ զարոցներում սովորող մոտ 14000 սովորողների համար անհրաժեշտ է հրատարակել լավ կազմված դասագրքեր մանավանդ ընդհանուր զարգացուցիչ առարկաներից. գրականության, պատմության, բնագիտության», որոշում է «գիմել ս. էջմիածնի Կեորգյան ճեմարանի և Թիֆլիսի ներսիսյան զարոցի վարչություններին, խնդրել նրանցից, որ հայտնեն ի գիտություն ուսումնական խորհրդի անդամներին, որ եթե հնարավոր է յուրաքանչյուրը հոգ տանի իր մասնագիտության գծով ձեռնարկներ հորինել և առաջարկել իրենց ուսումնական խորհրդին, եթե վերջինս նպատակահարմար և օգտակար կհամարի, այնուհետև ներկայացնեն մեզ, մեր կողմից դնահատեյուց հետո կտպագրենք»:

Քանի որ մեր նպատակը դասագրքերի ըննարկումը չէ, ուստի բավարարվում ենք հետևյալ դատողությամբ. ունենալով ճիշտ կողմնորոշում մասնագիտական կարող ուժերի բնորոշության հարցում, Թիֆլիսի հրատարակչականը կարողացավ հրատարակել ժամանակի առաջադեմ մանկավարժության սկզբունքների համապատասխան այնպիսի դասագրքեր, որոնք երկար տարիներ եղան հայ մատող սերնդի կրթության ուսումնական ձեռնարկները, իսկ Բալադյանի կազմած «Դարվինիզմի» ձեռնարկը, որքան մեզ հայտնի է, առաջին միակ տպագրված դասագիրքն է մինչսովետական հայ աշակերտության համար:

Ընդունելով, որ մտավոր, ֆիզիկական, բարոյական ու էսթետիկական դաստիարակության հետ մի ներդաշնակ ամբողջություն է կազմում մարդու ընդհանուր հանրագիտական իմացությունները հետ. Թիֆլիսի հրատարակչականը հատուկ ուշադրություն էր դարձնում նաև տիեզերքի, բնության վերաբերյալ հանրամատչելի գրքույկների տպագրությանը, ինչպես՝ «Վ. Լոնկեի Ներկաշարժ, հրաբուխներ, լեռներ» (1897), «Կենդանիների աշխարհում» (1898), Ռաբուկինի «Տաքություն և օդ» (1895), «Զրույցներ բնության և ահեղ երևույթների մասին» (1896), «Ստորերկրյա կրակ» (1911), Զ. Դարվինի «Անհրեույթ հողագործը» (1893), Հեոբալի «Տարերք բնության գիտությանց» (1894), Կ. Տիմիրյազևի «Բույսերի կյանքը» (1897) և այլն:

ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ժողովրդական բանահյուսության հավաքման ու հրատարակման ասպարեզում որոշակի բեկում են նշանավորում 19-րդ դարի 70-ական թվականները, երբ հետզհետե սկսում է ուժեղանալ ռևոլյուտական գրական շարժումը: Այդ տարիներին արդեն երևում են բարբառների ուսումնասիրության փորձեր, ուշագրություն է դարձվում ժողովրդական ասացվածքներին, ոճերին ու դարձվածքներին, գրի են առնվում ժողովրդի բանավոր խոսքի մասունքները, ուր զբաղեցված են նրա ուրախությունն ու վիշտը, սերն ու ատելությունը, հույսերն ու երազանքները: Կարճ ասած, ժողովուրդն ու նրա բանահյուսությունը դառնում են ուսումնասիրության առարկա: Հովհ. Թումանյանը բանահյուսությունն իրավացիորեն համարում էր գրականության առաջընթացի կարևորագույն լծակներից մեկը: «Մեր լեզվի ու գրականության առողջ զարգացման համար,— գրում է նա,— պետք է մշտական տեղ հատկացնել հայրենի երկրի ժողովրդական բանավոր պահանջությանը, նրա ամեն տեսակ ավանդություններին, հեքիաթներին, առակներին, առածներին...»¹:

Թիֆլիսի ընկերության անդամ Մ. Բարխուդարյանը 1887 թ. «Արձագանքում» տպագրված «Ժողովրդական նյութերի հավաքելու կարևորությունը և ծրագրերը» հոդվածաշարում պահանջում էր շրջել գյուղերը, լինել խրճիթներում ու խուղերում, ուշի-ուշով լսել ժողովրդի խոսակցությունը, հավաքել հեքիաթներ, երգեր, ավանդություններ և այն դարձնել բոլորի սեփականությունը. «Ժողովրդի մտքի արդասիքը, հնության մնացորդները, արպեսդի ազատ միանք գալոց սերնդի նախատինքից, որոնց համար շատ բան անդառնալի կորած կլինի»²:

¹ «Թումանյանը քննադատ», Երևան, 1939, էջ 245:

² «Արձագանք», 1887, № 28:

Սա տեսական մի լուրջ հայեցակետ էր, որ ձայնակցում էր վաթսուներկանների դադափարներին և հայ գրականության վերելքի նոր շրջանում գալիս էր ներուլի իմաստալիորեն ժողովրդական բանահյուսության դերը՝ գրական-հասարակական կյանքում: Բանահյուսության դերի նման ըմբռնումն էր, անշուշտ, սպառնալու, որ Թիֆլիսի հրատարակչականը մեծ արժեք էր տալիս ժողովրդական տվանդությունների հավաքման և տպագրման գործին:

Առաջինը, որ դիմեց Թիֆլիսի ընկերությանը տպագրման հայցով, Կ. Մելիք-Շահնազարյանն էր՝ «Ղըլըցի կանանոց ուղնր-փեշակը» գրքուկով: Խմբագրական մասնաժողովը, քննարկելով ներկայացրած ժողովածուն գտնում է, որ «ժողովրդագրության համար կարևոր են վարք ու բարքի նկարագրության հետ տալ տիպեր, ընդհանուր-հասարակական տիպեր, այլ ոչ միայն հիշել, թե ինչպե՛ս են խոսում կամ թե ինչ է լսել հավաքողը: Հետաքրքրական կլինե՞ր և այն կանանց տիպերը գուրս բերել, եթե միայն հորա ընդհանուր էն: Նվ որքանով աշխատասիրողի մոտ բացակայում են այդ հանգամանքները, լավ կլինի վերադարձնել այն և մշակելուց հետո միայն տպագրել»¹:

Սա միանգամայն ակնհայտ վրիպում էր, որը պարզապես ազգագրական նյութը շփոթում էր անհատականացված գեղարվեստական ստեղծագործության հետ և Կ. Մելիք-Շահնազարյանը գերադասում է ընկերության պահանջները կատարելու փոխարեն տպագրել այն իր ծախսով, և գրքուկը լույս է տեսնում 1882 թ. Տ. Նազարյանի հրատարակությամբ: «Արձագանքը», որի տնօրինության տակ էր գտնվում ընկերությունն այդ տարիներին, լռությամբ չընդունեց գրքի լույս ընծայումը և նույն սխալ էլակետից տպագրեց գրախոսական՝ նշելով նրանում եղած այն «սխալները», որոնք ժամանակին նկատել էր խմբագրական մասնաժողովը²:

Այսպես թե այնպես, բանահյուսական գրքերի տպագրությանը Թիֆլիսի ընկերությունը մոտենում էր որոշ ակադեմիական սկզբունքով, որի արտահայտությունն էին Գ. Տեր-Ալեքսանդրյանի «Թիֆլիսցոց մտավոր կյանքը» (1885) և Շերենցի «Վանա սաղը» (1886) ժողովածուները:

Արխիվային փաստաթղթերը և հենց Գ. Տեր-Ալեքսանդրյանի

¹ ՀՄՍՀ, ՊԿՊԱ, ֆ. 40, գ. 8, թ. 35:

² ՏՃՍ «Արձագանք», 1882, էջ 653:

գրքի վերջաբանը վկայում է, որ ընկերության խմբագրական մասնաժողովի անդամները անմիջական ու գործնական օգնություն մատուցել են տվել բանահավաքներին, կանխելով շատ թերություններ ու վրիպումներ, որի համար և հեղինակները բացահայտ խոստովանել են իրենց «խորին շնորհակալությունը մասնաժողովի անդամներ Աբգար Հովհաննիսյանին, Սեդրակ Սանդիկյանին, Ալեքսանդր Երիցյանին, Ալեքսանդր Քեշիշյանին, Գալուստ Շիրմաղանին՝ Այս և նման փաստերը վկայում են, որ ընկերությունը զբաղվել է ոչ միայն հրատարակությամբ, այլ ևղև է յուրօրինակ գիտական հիմնարկություն, որի խմբագրական մասնաժողովի անդամների բազմակողմանի զարգացած լինելը հնարավորություն է տվել մասնագիտական կարևոր շտկումներ կատարել: Ի դեպ, Գ. Տեր-Ալեքսանդրյանի գիրքը հայ բանահյուսության պատմության բացառիկ արժեքներից է, որը ամփոփվում են 19-րդ դարի երկրորդ կեսի Թիֆլիսաբնակ հայերի երգերն ու խաղերը, ջանգնությունները, աղոթքները, առածները, ասացվածքները, հանելուկները, շուտասելուկները, օրհնանքն ու բարեմաղթությունները, անեծքն ու երգումը, փաղաքշանքն ու սպառնալիքը, ողջունն ու շնորհակալությունը, ծաղրն ու հանաքը, կինտոների բացականչությունները և վերջապես հեքիաթները:

Հայ պարբերական մամուլը բարձր գնահատեց ընկերության այդ նախաձեռնությունը և ցանկություն հայտնեց՝ շարունակել ժողովրդի խելքն ու իմաստությունը, բանաստեղծական զգացմունքների հարստությունը պարունակող գրքերի հրատարակման գործը:

1889 թվականին նորից աշխուժանում են ընկերության աշխատանքները: Վարդան Եղիազարյանը ընկերությանն է ներկայացնում «Փշրանք Ուտեցվոց ժողովրդական սովորությունների և ավանդությունների» ժողովածուն, իսկ Հովհաննես Կոստանյանցը՝ «Փշրանք Շիրակի լեզենդներից և ժողովրդական կյանքից»: Երկու ժողովածուների վերաբերյալ մասնաժողովի անդամներ Լևոն Սարգսյանը, Մելիք Քալանթարը և Ալեքսանդր Քեշիշյանը արտահայտում են այլ տեսակետներ:

1 Գ. Տեր-Ալեքսանդրյան, Թիֆլիսեցոց մտավոր կյանքը, Թիֆլիս, 1886, էջ 427:

2 Տե՛ս «Արձագանք», 1886, էջ 106, «Մշակ», 1886, № 37, «Նոր դար», 1886, № 42:

Մ. Քալանթարը գտնում է, որ հայ իրականության մեջ չկան «Ուստաօրհնների կյանքի, սովորությունների, լեզվի մասին աշխատություններ, մինչդեռ այդ տեսակ աշխատությունը շատ կարևոր է մեր դրականության համար, քանի որ նրանք լինելով մի քանի գլուղերում խմբված փոքր ժողովուրդ, չի կարող երազել և չի էլ ցանկանում փորձել առանձին մի կենցաղակերպ, այլ աստիճանաբար վերացնում է հայկական կենցաղային դործունեությունը, կորցնում է յուր առանձնահատկությունները, ուստի ցանկալի է, որ ուստաօր կյանքը արձանագրվեր և այսպիսով այն, ինչ նա անցել է պատմությունից, դառնար գիտության, աղագրության համար ռեսանսի նյութ»¹:

Ժողովածուն իր մեջ ամփոփում է ուրարտական Նիժ գլուղի յողովրդի կյանքը, աշխատությունները, խաղերը, հանելուկները և այլն: Որպես թերութուն նշելով ուստաօրհնների սովորությունների և լեզվի առանձնահատկությունների ոչ լիարժեք պահպանումը, աշխատահանգիստը, խմբագրական մասնաժողովը որոշում է տարադրել այն «իբրև աղագրի աշխատության առաջին փորձ»: Խմբագրական մասնաժողովը նույնպիսի որոշում է ընդունում նաև Հովհ. Կոստանյանցի ժողովածուի վերաբերյալ, խորհուրդ տալով հեղինակին «ժողովրդական բանաստեղծության դոհարները լավ մշակել, մանավանդ ուշ դարձնել տաղաչափության, լեզվի գեղեցկության և ներդաշնակության վրա»²:

Ներկայացված այս երկու ժողովածուների մասին այլ կարծիք է արտահայտում Լևոն Սարգսյանը: Վերջինս գտնում է, որ երոշ հեղինակներ կա վերցնելով ձեռագրերը, չեն կատարում խմբագրական մասնաժողովի դիտությունները և շատ դեպքերում կորչում, անհետանում են նրանց ուսումնասիրությունները, որոնք հայ դրականության ու նրա պատմության համար մեծագույն գանձեր են: Նա առաջարկում է չվերադարձնել ձեռագրերը, «այլ նոցա մեջ կղած լավ հողվածներն ընտրել և այլ աղագրի աշխատություններից նույնպիսի քաղվածքներ անելով միասին հրատարակել իբրև հում նյութ՝ յուրաքանչյուր տարի նվիրելով այդ հրատարակության համար մի հատոր և մի որոշ գումար»³:

¹ ԸՍՍԶ, ՊԿՊԱ, ֆ. 30, ք. 6, Բ. 35:

² Նույն տեղը:

³ Տեղեկագիր, 1890, էջ 23:

⁴ ԸՍՍԶ, ՊԿՊԱ, ֆ. 30, ք. 6, Բ. 41:

Ընկերության խմբագրական մասնաժողովը ժողովրդական բանաստեղծության համալսարանի և տպագրման աշխատանքների հիմքում դնելով «Ժողովրդի պահանջներին ծառայելու» դեմոկրատական սկզբունքը, հանդես է գալիս նաև նախաձեռնողի դերում: Այսպես, 1890 թ. հոկտեմբերի 12-ին ընկերության նիստում քննարկվում է խմբագրական մասնաժողովի անդամ Մանուկ Աբեղյանի կազմած «Հայոց պատմությունից ժողովրդացված դործերի տպագրության» ծրագիրը, և որոշվում է այն հրատարակել մամուլում, որպեսզի ցանկացողները գրեն Տիգրանի և Ածղահալի, Մեսրոպ Մաշտոցի և գրերի գյուտի, Վահան Մամիկոնյանի, Խորենացու, Նղիշէի և այլոց մասին: Մ. Աբեղյանը մասնաժողովի անդամներին հաղորդում է, որ «Ժողովրդի բանաստեղծությունների ուսումնասիրության համար պետք է դիմել պատմությանը, որովհետև առաջին բանաստեղծությունների բովանդակությունը առասպելն է,— նա է տիրապետում նախնական մարդու աշխարհայեցողությանը»¹: Շեշտը դնելով վիպական-պատմական ժանրի վրա, Մ. Աբեղյանը ցանկանում էր հրատարակել հայ ժողովրդի էթնիկական կերտվածքի բնորոշ կողմերը բացահայտող գործեր:

Ընկերության խմբագրական մասնաժողովը, բացի Մ. Աբեղյանի ներկայացրած ծրագրից, որոշում է նմանատիպ ժողովածուներ կազմելու համար դրավոր դիմել այնպիսի անձանց, որոնք ձևնահաս են այդ գործում: Այդ նպատակով մասնաժողովը պաշտոնական գրովյամբ դիմում է Ղ. Աղայանին, Հ. Առաքելյանին, Առ. Բաբախանյանին (Լեո), Հովհ. Բարխուդարյանին, Գևորգ Բարխուդարյանին, Նբ. Թադիանոսյանին, Ավ. Իսահակյանին, Կ. Յաղուբյանին, Հովհ. Թումանյանին, Ստ. Լիսիցյանին, Հովհ. Հովհաննիսյանին, Տ. Հովհաննիսյանին, Կ. Կուսիկյանին, Ստ. Մալխասյանին, Լ. Մանվելյանին, Շերենցին, Մ. Ղազարյանին, Նր. Շահազիզին, Ե. Լալայանին, Փ. Վարդանյանին, Գ. Տեր-Մկրտչյանին, Մկրտիչ Բարխուդարյանին, Նիկ. Տեր-Հարությունյանին (Հաբո), Լ. Սեդրոսյանին (Շանթ), Վ. Փափաղյանին, Հ. Տեր-Միքայելյանին և Պերճ Պողոսյանին:

Այդ միջոցառման հետևանքով միայն 1896—97 թվականներին մասնաժողովը ստացավ յոթ ժողովածու. Կ. Տեր-Մարկոսյանի

¹ Տեղեկագիր, 1896, էջ 32:

² Տեղեկագիր, 1897, էջ 21—27:

«Ժողովրդական հեքիաթները», Ն. Մովսիսյանի «Ժողովրդական նյութեր» և «Ժողովրդական երգեր», Կ. Վարդանյանի «Աշուղական երգեր» (հավաքածո), Գ. Շերենցի «Վանա սաղ» (Բ հատոր), «Շատախի ավանդությունները», «Ժողովրդական ավանդություններ և բանաստեղծություններ»¹: Այս գործերից մասնաժողովի հավանությունը արժանացավ միայն Շերենցի «Վանա սաղը» (Բ. հատոր), որը ընկերությունը տպագրեց 1896 թվականին, իսկ մյուսները մերժվում են, որովհետև կազմողները «հարավատ չեն մնացել ժողովրդական բնույթին ու էությունը, պատշաճ ուշադրություն չեն դարձրել սկզբնաղբյուրային նշանակությանը: Այդ պատճառով սոքա չեն կարող ծառայել իբրև լեզվագիտական նյութ հայկական բարբառների ուսումնասիրության համար, որովհետև սոքա գրի չեն անված հատկապես լեզվաբանական նպատակով, և խրկորդ բարբառախոսական նյութեր հավաքողը անպատճառ հմուտ պիտի լինի լեզվագիտության և հնչյունագիտության, իսկ ժողովածուների հեղինակները, զժբախտաբար, ղուրկ են մասնագիտական նախապատրաստությունից»²:

Մեր ձեռքի տակ չունենալով այդ ժողովածուները, դժվարաբերում ենք կոնկրետ քննել մասնաժողովի անդամների գիտադրությունների բնույթը, հատկապես հետաքրքրական կլիներ պարզել Ավ. Իսահակյանի կողմից 1897 թվականին ընկերությանը ներկայացրած «Մի խորում խոտ Շիրվան դյուղից» ժողովածուի շտապարվելու պատճառները: 1897 թվականի ապրիլի 17-ին աղատվելով ավելի քան մեկ տարվա բանտաբեկությունից, Իսահակյանը հետևյալն է գրում ընկերության վարչության նախագահին. «Զեր ընկերության 1896 թ. Տեղեկագրում կարդացի, որ հարգելի մասնաժողովին իր նոր ծրագրի գործունեության համար ի նկատի է ունեցել մի խումբ մարդկանց, որոնց մեջ կար ե իմ անունը և որ այդ մարդկանց դիմում է եղել ընկերության կողմից հանձն առնել որոշ առաջարկներ ի կատար ածելու,— բայց ո՛չ մի դիմում չէ եղած երևի այն պատճառով, որ ևս 1896—1897 թթ. բանտարկված էի:

Հիմա, եթե հարմար է գտնում հարգելի մասնաժողովը ինձ

¹ Տե՛ս «Տեղեկագիր», 1897, թ. 21—27:

² ՀՍՍՀ, ՊԿՊԱ, ֆ. 30, գ. 12, էջ 359:

այդ պարոնների շարքում, ես պատրաստ եմ բոլոր ուժերովս՝ աջակցել ծրագրի գործունեությանը:

Գալով իմ ուժերիս — ես կարող եմ մարդաբանական և ազգագրական հետազոտումներ անել մեր աղբի և երկրի նկատմամբ, ունիմ պատրաստի մի քանի փոքրիկ ինքնուրույն գրվածքներ (մեր ընտանեկան-տնտեսական կյանքից և աշխարհագրական տեսակետներից), որոնցից մի քանիսը ես տվել էի Լայպցիգի իմ ուսցչապետ F. Ratzel-ին, որը ժողովածուն հրատարակել է իր «Völker Kunde» եռահատոր գրքի վերջին տպագրության մեջ: Ունեմ և ժողովածուների հայկական ժողովրդական բանահյուսությունից¹: Նամակից պարզվում է, որ բանաստեղծը պատանեկան տարիներից զբաղվել է Շիրակի բանահյուսության հավաքման ու ուսումնասիրման գործով, որի արտացոլումը դժվար չէ նշմարել նրա սրտելիայում: Հավանաբար բանաստեղծի առաջարկությանը մասնաժողովը դրականապես է պատասխանել, քանի որ Իսահակյանը նույն թվականին ուղարկել է «Մի խորում խոտ Շիրվանի գյուղից» ժողովածուն: Ինչպես տեղեկանում ենք ընկերության № 14—15 արձանագրությունից, մի այլ նամակով բանաստեղծը հետաքրքրվել է իր ներկայացրած հավաքածուի ճակատագրով: Անշուշտ, այդ ժողովածուում իրենց արժանի տեղը գտած կլինեին Շիրակի ժողովրդի այն ստեղծագործությունները, որոնք բորբոքել են բանաստեղծի երեակայությունը, ոգևորել ու ոգեշնչել նրան: Այդ մասին պատմում է ինքը՝ բանաստեղծը. «Միրելագույն Շիրակն ինձ համար աիեղեքի կենտրոնն է եղել... Այնտեղ եմ լսել ու սովորել մեր հույակապ մայրենի լեզուն: Այստեղ մեր անուշ տառիկներից լսել եմ հոգի էտխարդող հեքիաթները, մեր փորձաշատ պապիկներից՝ իմաստուն զրույցներ, խոսք ու առակ: Մեր թափառական գուտաններից, գյուղացի աղջիկներից լսել եմ մեր ժողովրդի չքնաղ խաղերը ու տաղերը, մեր մեկոսը, արտահայտիչ երգերը: Մեր հնույաբան խորիմաստ ֆոլկլորը, որին ես այնքան ու այնքան երախտապարտ եմ... մեր հովիվների շվին, մեր աշուղների սալը, մեր զուռնան ու փողը լցրել են իմ սիրտը մարդկային սուրբ զգացմունքներով, վառել են իմ երեակայությունը և թեւավորել են իմ պատանի հոգին»:

Ավ. Իսահակյանի ներկայացրած ժողովածուն չի հրատա-

¹ Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հ. 6, 1979, էջ 21:

Handbuch des Handels
Handels:

Handelsreisende.

Handelsreisende sind in der Regel
Handelsreisende, welche auf
Handelsreisende sind.

Handelsreisende sind in der Regel
Handelsreisende, welche auf
Handelsreisende sind. In der Regel
Handelsreisende sind in der Regel
Handelsreisende, welche auf
Handelsreisende sind. In der Regel
Handelsreisende sind in der Regel
Handelsreisende, welche auf
Handelsreisende sind.

Handelsreisende sind in der Regel
Handelsreisende, welche auf
Handelsreisende sind.

Handelsreisende sind in der Regel
Handelsreisende, welche auf
Handelsreisende sind. In der Regel
Handelsreisende sind in der Regel
Handelsreisende, welche auf
Handelsreisende sind.

Աղյուսակ. Կատարում առկա. Գրանցում
Կատարում. Առկա 6-700 Վր:

Աղյուսակ. Գրանցում Կատարում. Գրանցում
Առկա. Կատարում 3-300 Վր:

Աղյուսակ Կատարում Կատարում Կատարում
Կատարում Կատարում Կատարում Կատարում

Աղյուսակ Կատարում Կատարում Կատարում
Կատարում Կատարում Կատարում Կատարում

Աղյուսակ Կատարում Կատարում Կատարում
Կատարում Կատարում Կատարում Կատարում

Աղյուսակ Կատարում Կատարում Կատարում
Կատարում Կատարում Կատարում Կատարում

Աղյուսակ Կատարում Կատարում Կատարում
Կատարում Կատարում Կատարում Կատարում

Աղյուսակ Կատարում Կատարում Կատարում
Կատարում Կատարում Կատարում Կատարում

Աղյուսակ Կատարում Կատարում Կատարում
Կատարում Կատարում Կատարում Կատարում

Աղյուսակ Կատարում Կատարում Կատարում
Կատարում Կատարում Կատարում Կատարում

բակվում, հավանաբար ինչ-ինչ թերություններ վերացնելու նպատակով վերադարձվել է հեղինակին: Դրանում համոզված ենք այն պատճառով, որ եթե մինչև 1896 թ. խմբագրական մասնաժողովի անդամներն էին խմբագրում ու համեմատում բնագրային տարբերակները, ապա 1897 թվականին մասնաժողովը որոշում է «թողնել նյութերը խմբագրելու և վարիանտները համեմատելու գործը հեղինակներին»:

Ընկերությունը բարձր զնահատելով հայ բանահյուսության ուսման Գարեգին Սրվանձտյանի, Թումանյանի բառերով ասած «մեր անուշ, հայրենախոս բանաստեղծի» ծառայությունը ազգայնության և բանահավաքության ասպարեզում, 1897 թ. նպատակադրվում է հրատարակել նրա գործերը: Տեղեկանալով «Լուսմա» հանդեսից, որ Գյուտ քահանա Աղանյանցը ձեռք է բերել հանգուցյալ Գ. Սրվանձտյանի ժառանգներից նրա բոլոր գրվածքները, որոնց մեջ գտնվում են նաև բազմաթիվ նամակներ և նոր տպագրված նյութեր, վարչությունը որոշում է դիմել Գ. Աղանյանցին և «առաջարկել ղեջանել այդ հրատարակությունը ընկերությանը»¹: Գ. Աղանյանցից ստանալով Սրվանձտյանի անտիպ և տպագրված նյութերի մի հավաքածու, մասնաժողովը ձեռնամուխ է լինում նրա հրատարակությանը, սակայն ընկերության այդ ցանկությունը, նրա շատ այլ ծրագրերի պես մնում է անկատար՝ ցարական կառավարության կողմից ընկերությունը փակելու պատճառով:

Կարևոր է նշել, որ դեռևս 1892 թ. Թիֆլիսի հրատարակչական ընկերության խմբագրական մասնաժողովը դիտակցելով «մեր ժողովրդի՝ երգերի ուսումնասիրության կարևորությունը և այն հանգամանքը, որ մենք չունենք այդ նպատակին ծառայող մասնագիտական հանդես, անհրաժեշտ է գտնում պարբերաբար հրատարակել ժողովածուներ, որոնց մեջ պետք է մտնեն ժողովրդական երգեր, ավանդություններ, սովորություններ և այլ նյութեր»²: Նույն թվականին ընկերությունը լույս է ընծայում Եր. Լալայանցի «Ջավախքի բուրմունքը» և Գարեգին Սարկավազի «Փշրանքները»: Բայց որքանով ընկերության կանոնադրությամբ չէր նախատեսված նման ժողովածու-պարբերականի

¹ Տեղեկագիր, 1897, էջ 17:

² Տեղեկագիր, 1892, էջ 27:

տպագրելը, մասնաժողովը չկարողացաւ իրագործել իր մտադրությունը:

Ավելի ուշ, 1897 թ. հոկտեմբերին, Եր. Լալայանցը կարողանում է հանել Թիֆլիսի հրատարակչականին այդ փակուղոց: Համոզված լինելով, որ ընկերությանը ներկայացվող նյութերի մեջ կան արժեքավոր էջեր, որոնք խնդիրն է նկատառումներով չեն կարող հրատարակել առանձին ժողովածուով, նա հետևյալ առաջարկն է անում ընկերության վարչությանը. «Ցանկանալով կունենալու երևի և բարելավել «Ազգագրական հանդեսի» կիսամյա հրատարակությունը, դիմում եմ Ձեզ խնդրելով բարեհաճել որոշել հանձնել ինձ Ձեր ուղարկած և խմբագրական ժողովից տպագրության արժանի դարձած ժողովրդական ազգագրական նյութեր այն պայմանով՝ որ ես «Ազգագրական հանդեսի» մեջ հրատարակվույց հետո Ձեզ որոշյալ թվով տպագրական օրինակներ տամ, որոնց վրա տպված կլինեն. «Հրատարակչություն Թիֆլիսի հրատարակչության ընկերություն» և «Արտատպած ազգագրական հանդեսից»: Այսպիսով, թե «Ազգագրական հանդեսը» կարող է բարելավել և առաջ գնալ, և թե հարգելի ընկերությունը ավելի է բիշ ծախսած կլինի այնպիսի նյութերի հրատարակության վրա, որոնք միշտ դիֆիցիտ են ունենում»¹:

Ընկերությունը սկզբունքորեն համաձայնում է Լալայանցի առաջարկությանը, և սկսած 1898 թ. Թիֆլիսի հրատարակչականը ազգարում է ազգագրական և ժողովրդական բանավոր ստեղծագործությունների տպագրել: Կովկասի հրատարակչական բնակերությունը նույնպես չլրացվեց բանահյուսության հարցերով, քանի որ նրա գործունեության տարիներին արդեն կազմավորվել էր Ազգագրական ընկերությունը, որը Հայկանուշ Մարտիրոսյանի ծախսով տպագրում էր «Մարգարիտներ հայ բանահյուսության» մատենաշարը²:

2.

Թիֆլիսի հրատարակչականի գործունեության տարիները համընկնում են հայ ազգային-ազատագրական շարժման վերելքի

¹ ՀՍՍՀ, ՊԿՊԱ, ֆ. 30, ց. 1, գ. 17, թ. 575:

² Ի դեպ, հետաքրքրական է իմանալ, որ մատենաշարի «Մարգարիտներ» խորագիրը ոչ միայն ալլաբանական իմաստ ունի, այլև կրում է Հ. Մարտիրոսյանի վաղամեռիկ Մարգարիտ դստեր անունը:

հետ, հանգամանք, որ յուրովի անդրադարձավ գրատպության և նրա քաղաքականության վրա: Նվ քանի որ ժողովրդի ինքնագիտակցության ձևավորման և ազատագրության ձգտումների կազմավորման դորժում ուսանելի դասեր է պարունակում պատմության փորձը, ուստի և ընկերությունը էական նշանակություն է տալիս պատմագիտական գրականության հրատարակությանը:

1880 թ. Հովսեփ Իզմիրյանը Պետերբուրգից հետևյալն է գրում Թիֆլիսի ընկերությանը. «Մեր ազգային դասական մատենագրությունները ժողովրդին մատչելի անելու փափագը թելադրում է զիս առաջարկելու ընկերության տպագրել Մովսես Խորենացու, Ագաթանգեղոսի պատմությունը, որի համար հանձն էլառնեմ նվիրել 200 մանեթ: Ժողովրդին մատչելի անելու համար ըստ կատարվույն էժան գնով ծախեցեք զայն»¹:

Ընկերությունն ընդառաջում է Իզմիրյանի ցանկությունը և որոշ ժամանակ անց Մովսես Խորենացու և Ագաթանգեղոսի «Կատմությունները» լույս են տեսնում Պետերբուրգում՝ Կարապետ Կելլանի անմիջական հսկողությամբ²: Դրան հաջորդում է «Ստեփանոսի Տարօնեցոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական» գիրքը՝ Ստ. Մալխասյանի առաջաբանով ու ծանոթագրությամբ:

Այս տեսակետից միանգամայն արտաոց է որոշ զբաղեցնելի, այդ թվում և Մալխասյանի տեսակետը: Նա գտնում է, որ ընկերությունը իզուր է հրատարակում «Ասողիկների, Ագաթանգեղոսների և Ղևոնդ պատմագիրների» երկերը կամ «առհասարակ այնպիսի գրքեր, որոնք լինե «ինքնըստինքյան լավն են», սակայն «մատչելի չեն մեր այժմյան ժողովրդի մտավոր պատմությանը»: Հովհ. Թումանյանը Ղ. Աղայանին հասցեագրած նամակում անդրադառնալով Մալխասյանի այդ առաջարկությանը, բրավոցիտրեն այն համարում է «...հիմար (այս՞, հիմար) խընդիր»³:

Թիֆլիսի հրատարակչականը դիմում էր պատմությանը՝ ներկան ավելի լավ հասկանալու համար: Այս իմաստով խմբագրական մասնաժողովը անհրաժեշտ է համարում ստպագրել «մեր բոլոր դասական մատենագիրների թարգմանությունն աշխարհիկ լեզվով: Այս հրատարակությանն նպատակը պետք է լինի ծանոթացնել հայ ժողովրդին հայրենի անցյալի հետ՝ «պատմագիր-

¹ ՀՍՍՀ, ՊԿՊԱ, ֆ. 30, գ. 1, էջ 70:

² «Արձագանք», 1885, էջ 236:

³ Հովհ. Թումանյան, հ. 5, 1945, էջ 90:

Ներքին ցուցմունքների միջոցով¹։ Բայց որովհետև պատմիչները առաջիս են հալ ժողովրդի պատմության առանձին հատվածները, խմբագրական մասնաժողովը մտահոգվում է նաև «Հայոց պատմության» ամբողջական սխտեմ ստեղծելու ուղղությամբ։ Նա գտնում է, որ հրապարակի վրա «եղած պատմությունից» Զամչյանն իր շարադրությամբ և լեզվով ամենեին մատչելի չէ, իսկ մնացած գրքերի մեծ մասը տարրական ձևերի վրա լինելով՝ չեն կարող ընթերցողի հետաքրքրությունը հագեցնել²։ Իր կազմավորման երկրորդ տարում՝ 1880 թ. մայիսի 31-ին, ընկերությունը հանձնարարում է Ստ. Պալասանյանին կազմել «Հայաստանի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը» ձևերով և կազմել նույն անունով ամբողջական պատմությունը³։ Ստ. Պալասանյանի ուսումնասիրությունն ավարտվում է 1885-ին, նույն թվականին տպագրվում է և երկար տարիներ շարունակում հայկական դպրոցներում ուսուցիչական դասագիրք։

Ինքնին ուշադրավ է հայոց պատմության վերաբերյալ ընկերության տեսակետը։ «Պատմությունը հայելի է,— կարդում ենք ընկերության խմբագրական մասնաժողովի 1889 թ. ապրիլի 10-ի արձանագրությունում,— որ ցույց է տալիս, թե ի՞նչ է և ի՞նչ կարող է անել որոշ շրջանների մեջ գրված այս կամ այն աղբյուր նայած ցեղական ընդունակություններին, իր թվին, իր կուսակցական պատրաստությանը։ Կարելի այդ բոլորից, արհամարհել այդ բոլորը՝ նշանակում է մնալ առանց դեկի, միշտ առաջանվող, խաղալիք դառնալ, զարնվել քարերին, կտոր-կտոր դառնալ, կտորներով էլ սուղվել, ընդմիջ առհաստատալ ամենակուր ջրալին անդունդների մեջ։ Պետք է սովորեցնել մեր սերունդին իր ժողովրդի պատմությունը, նրա անցյալի բոլոր մասնաճյուղերը, որովհետև հայրենասիրությունն ու հայրենիքը այդ միջոցով կարելի է պահպանել»³։

Այդ նպատակով մասնաժողովը բոլորում է դիմել Ստ. Պալասանյանի ժառանգներին՝ Նատալիա Պալասանյանին և Մարիկ Ստեփանյանին, թույլտվություն վերցնելու հանգուցյալ պատմաբանի «Հայոց պատմության» երկրորդ տպագրության հա-

¹ Տեղեկագիր, 1899, էջ 10։

² ՀՍՍՀ, ՊԿՊԱ, ֆ. 30, գ. 1, թ. 19։

³ Նույն տեղում, գ. 10, թ. 65։

մար և նամակով հայտնել Անտոն Գարազաշյանին, թե արդյոք նա չէ՞ր ցանկանա իր «Քննական պատմություն հայոց» աշխատությունը ներկայացնել ընկերությանը:

Ուշագրավ է, որ Թիֆլիսի հրատարակչականը նույնությամբ չի վերահրատարակում Պալասանյանի աշխատությունը: Իս. Հալոթյունյանը իր ղեկույցում նշում է, որ «Ուրարտուի պատմության վերաբերյալ նոր արձանագրությունների ընթերցումը մերժում են առաջիկա շատ ենթագրություններ, ուստի եթե մենք կամենում ենք Հայաստանում գտնված բեկուագրերի պարունակության մասին գիտության վերջին խոսքն ասել, պետք է փոփոխության ենթարկել Պալասանյանի աշխատության համապատասխան հատվածը, կամ թե ծանոթություն ավելացնենք»¹: Մասնաժողովը միաժամանակ որոշում է Պալասանյանի «Պատմությանը» կցել Հայաստանի քարտեզը:

Հայ պատմագրության բնագավառում ընկերության ավանդն ավելի է ընդգծվում Անտոն Գարազաշյանի «Քննական պատմություն հայոց» արժեքավոր քառահատոր ուսումնասիրության տպագրությամբ: Հայտնի է, որ այդ աշխատության առաջին հատորը լույս է տեսել Կ. Պոլսում 1880 թ.: Սակայն վերահաս քաղաքական դեպքերը հնարավորություն չտվեցին պատմաբանին հրատարակել մնացած երեք հատորը: 1892 թվականին Թիֆլիսի հրատարակչական անտիպ հատորների հետ միասին կարեւոր է համարում նաև առաջինի վերահրատարակությունը: Եվ այսպես, երկու տարվա ընթացքում (1894—1896 թթ.) հրատարակչական ընկերությունը լույս է ընծայում արեւմտահայ առաջագնաց պատմաբանի «Քննական պատմություն հայոց» աշխատությունը՝ չորս հատորով: Այդ ուսումնասիրությունն ավելի լուրջ և գիտական բնույթ տալու նպատակով մասնաժողովը առաջարկում է իր անդամ Ստ. Լիսիցյանին՝ կաղմել քառահատորչակում օգտագործված հատուկ անոնների ցանկը և որպես հավելված կցել յուրաքանչյուր հատորի վերջում: Գարազաշյանի աշխատությունը հիրավի նշանավորեց մի ամբողջ էտապ հայ ժողովրդի գիտական պատմության ասպարեզում:

1891 թ. խմբագրական մասնաժողովը հանձնարարում է Պերճ Պոռշյանին թարգմանել «Հարություն Արարատյանի կյանքը և

¹ ՀՍՍՀ, ՊԿՊԱ, ֆ. 30, 4. 6, թ. 33:

² Նույն տեղը, թ. 43:

արկածները» գիրքը, որը 1813 թ. ուսերեն լեզվով տպագրվել էր Պետերբուրգում և մեծ հետաքրքրություն առաջ բերել։ Այդ դործն ունի ճանաչողական մեծ նշանակություն, քանի որ հեղինակը ականատեսի հայացքով տալիս է 19-րդ դարի սկզբի Անդրկովկասի սոցիալ-տնտեսական վիճակի ընդհանուր պատկերը։ Պ. Պոռշյանը թարգմանում է գիրքը և գրում է առաջաբան, փորձելով պարզաբանել բանավեճի առարկա դարձած որոշ հարցերը՝ ո՞վ էր Հ. Արարատյանը, նրա գիրքը գեղարվեստական դործ է, թե՞ փաստական նյութերի հավաքածու և, վերջապես, գրվածքը բունցե՞լ է հայկական օրինակ, թե՞ ոչ։ 1892 թ. ընկերությունը լույս է ընծայում «Վաղարշապատի Հարություն Արարատյանի կյանքը» խորագրով գիրքը Պոռշյանի առաջաբանով։ Գիրքը առիթ տվեց մեծ աղմուկի։ Արեստակես Սեդրակյանը, 1894 թ. Բաքվում, տպագրեց «Հարություն Արարատյանի կեղծիքը» գրքույկը, որով փորձեց հերքել Պոռշյանի տեսակետը։ Բանավեճի մանրամասնությունների մեջ մտնելը մեզ նպատակից դուրս համարելով, նշենք, որ հիմնականում ճիշտ էին Պոռշյանը և Թիֆլիսի հրատարակչականի խմբագրական մասնաժողովը։

ՅՕ-ական թվականներին Թիֆլիսի հրատարակչականը ծրագրում է լույս ընծայել մենագրական ուսումնասիրություններ հայ ժողովրդի պատմության վիճելի հարցերի վերաբերյալ։ Զխուսափելով բանավեճից ու հիմք ընդունելով այն իմաստությունը, թե կարծիքների պայքարը ավելի շուտ և կարճ ուղիով է տանում դեպի ճշմարտություն, խմբագրական մասնաժողովի անդամները ձգտում էին քննական հայացքի տակ առնել հայոց պատմության հանգուցային հարցերը։ Հայտնի է, որ ժամանակին վիճելի էլություն էին դարձել Մովսես Խորենացու պատմության վավերականության և ընդգրկած ժամանակաշրջանի հարցերը։ Խմբագրական մասնաժողովի անդամ Ստ. Մալխասյանը այդ կապակցությամբ գրում է. «Սեբեոսի պատմությունը և Մովսես Խորենացի» աշխատությունը, ուր փորձում է զիտականորեն հիմնավորել Խորենացու հետ առնչվող մի շարք հարցեր։ Հեղինակի հետ համամիտ են լինում մասնաժողովի մյուս անդամները և 1899 թ. տպագրում են նրա ուսումնասիրությունը։

Ընկերության բռնած այս գիծը դուր չի գալիս «Մուրճ» ամսագրին։ Վերջինս խոսելով Ստ. Մալխասյանի «Սեբեոսի պատմությունը և Մ. Խորենացին» գրքի մասին, իր վարմանքն է հայտնում, թե ինչպես կարելի է «...տպագրել մի գիրք, որի առարկան

վիճելի է և որի հեղինակը վիճելի խնդիրները հեղինակորեն մշտելու համբավ չի վաստակել մինչև այժմ: Դիրքը դեռ նոր է լույս տեսած և դեռ չգիտենք պ. Մալխասյանցը ինչպես է վերաբերվել դեպի գործը, բայց այս բուպեին մեզ զբաղեցնողը սա է. թե՞ այդ ինչպես է պատահում, որ բանակավական շրջանի մեջ գտնվող մի խնդրի վերաբերությամբ Թիֆլիսի հայոց հրատարակչական ընկերությունը մի ամբողջ գիրք է տպում իր հաշվով, մի գիրք, որ ոչ թե ամփոփումն է խնդրին վերաբերյալ բոլոր դժբախտիքների, այլ որը միայն ցույց է տալիս պ. Ստ. Մալխասյանցի մասնակի վերաբերմունքը դեպի մի վիճելի խնդիր»¹: Ահեներե է, որ «Մուրճը» սկզբունքորեն գեմ է բանավեճ վերցնող գրքերի տպագրությանը: Սակայն ընկերությունը իր բռնած ճիշտ ուղուց շեղվեց: Նրան չկարողացավ շեղել անգամ Մայր Խոնարհ: Վերջինս նկատելով, որ Թիֆլիսի հրատարակչականը տպագրում է հայ պատմիչներին և այլ պատմագիտական աշխատություններ, 1890 թ. առաջարկում է հրատարակել նաև ավետարաններ: Չնայած վարչությունը համաձայնում է, սակայն խմբագրական մասնաժողովը մերժում է այդ խնդիրը՝ հետևյալ նուրբ պատճառաբանությամբ. «Ընդունել վարչության և Ս. Էջմիածնի գրությունն ու իբրև որոշում, այլ իբրև մասնավոր առաջարկություն, որովհետև ընկերության կանոնադրության համաձայն տպագրվելիք գրքերի որոշման իրավունքը պատկանում է խմբագրական մասնաժողովին, ուստի վարչությունը իրավունք ունի միայն խնդիր ներկայացնել:

Որքանով Ս. Ավետարանի տպագրության իրավունքը Ս. Էջմիածնին է պատկանում, ուստի խմբագրական մասնաժողովը որոշեց այդ գործի նախաձեռնությունն ու տպագրությունը թողնել Ս. Էջմիածնին»²:

Կովկասի հրատարակչական անտարբեր գտնվեց պատմագրության հանդեպ և արժանացավ մամուլի ու ընկերության անդամների կշտամբանքին: «Ընկերության ծրագրի մեջ, — գրում է «Հորիզոնը» — կան գրական ամեն բարիքներ աշխարհի բոլոր կողմերից՝ սկսած ժերուների Հոմերոսից և Տոլստոյի խոշոր ստեղծագործություններից, բայց ոչ մի համեստ տեղ հայ կյանքի և

¹ «Մուրճ», 1899, № 6, էջ 355:

² ՆՍՍՀ, ՊԿՊԱ, ֆ. 30, գ. 30, թ. 2:

գրականության պատմության համար»¹: «Մշակը» անդրադառնալով նույն հարցին, գրում է. «Ապշեցուցիչ չէ՞ Կովկասի հրատարակչական ընկերության բացարձակ ապատիան դեպի մեր կյանքի տնտեսական երևույթներն ու փաստերը: Որի՞ կաբիքն է հրամայական, օգտակար ու գործնական, կենսական ու այժմեական ունենալ՝ Հոմերոսի, Տոլստոյի, Դիքենսի վեպերի հայերեն թարգմանությունը, թե՞ մի բարեխիղճ ուսումնասիրություն հայ ազգաբնակչության իրական կյանքի բաղմակողմանի պատկերի, ունենալ Ագաթանգեղոսի կամ Ղազար Փարպեցու ֆանտաստիկ նկարագրություններով կրկնակի հրատարակությունները՝ ծանոթագրություններով ու քննական նկատողություններով, իսկապես ավելացնում են սովորաբար, թե՞ մի փաստալից հետազոտություն Շիրակի, Ապարանի կամ Ղարաբաղի գյուղացիության հողալիքն սլավոնների և առհասարակ տնտեսության կացության վերաբերյալ»²:

«Հորիզոնը» և «Մշակը» առաջին պլանի վրա են դնում ազգայինը, անտեսելով համաշխարհային մշակույթի ակնազդոր ներկայացուցիչների՝ Հոմերոսի, Տոլստոյի, Դիքենսի երկերի բարերար ազդեցության նշանակությունը հայ կուլտուրայի վրա: Նրանք համամարդկային կուլտուրայի մեջ մտած կարկառուն դեմքերի երկերի և հայ կյանքի ու նրա պատմությունը լուսաբանող գործերի տպագրության հարցը չէին կարողանում լուծել լուգահեռաբար, մի բան, որ միանգամայն շրջահայաց լուծում է գտնում վ. Տերյանի ու Հովհ. Թումանյանի տեսակետներում: 1911 թվականին «Հորիզոն» թերթում հանդես գալով «Անունը կա, ամանումը չկա» հոդվածով³, Տերյանը ընդգծում է թարգմանական գրականության անհրաժեշտությունը և առաջարկում է ընկերությանը թարգմանել ռուս և եվրոպական դասական գրականության արժեքավոր երկերը և առաջին հերթին մեծահանձար և Տոլստոյի գեղարվեստական երկերը, որոնց յուրացումը, բանաստեղծի կարծիքով, ցուցանիշ է տվյալ ժողովրդի կուլտուրական մակարդակի:

1913 թ. մայիսի 12-ին Կովկասի հրատարակչական ընկերության ընդհանուր ժողովածուում Հովհ. Թումանյանը քննադատում

¹ «Հորիզոն», 1912, № 73:

² «Մշակ», 1913, № 16:

³ Տե՛ս վ. Տերյան, Երկերի ժողովածու, հատոր երկրորդ, 1966, էջ 217—225:

է ընկերութեան վերաբերմունքը պատմագրութեան հանդեպ: Բանաստեղծը հատկապէս էական նշանակութեամբ է ընդգծում հայ կյանքի դիտական հետազոտութեան անհրաժեշտութիւնը և այստեղ իսկ վրդովմունք արտահայտում, որ ընկերութիւնը մերժել է Ա.-Դոյի (Հովհաննէս Տեր-Մարտիրոսյանց) «Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայէթները» աշխատութիւնը: Բանաստեղծի կարծիքով «Ա.-Դոյի գիրքն իր առաջաբանով մի արժեքավոր լուրջ աշխատութիւն է, ինչո՞ւ պետք է ևս դարձնել վարչութիւնը, ինչո՞ւ չպետք է աշխատել, որ հրատարակվեր էգլիսի օգտակար թի գիրք»¹:

Որպէս հայ հրատարակչական ընկերութիւններու գործունեութեան քաջատեղյակ անձնավորութիւն Թումանյանը քննադատում էր ոչ թէ ընկերութեան աշխատանքն ընդհանրապէս, այլ վարչութիւնը, քանի որ տպագրութեան գործով, ինչպէս հայտնի է, զբաղվում էր վարչութիւնը, իսկ գրքերի ընտրութեամբ՝ խմբագրական մասնաժողովը: Եվ իրոք փաստերը վկայում են, որ մասնաժողովը սկզբունքորէն ընդունել է Ա.-Դոյի աշխատութիւնը և առաջարկել վարչութիւնը տպագրել: Քանի որ այդ դրի տպագրութեան համար պահանջվում էր մեծ ծախս՝ 1000 ռուբլի, վարչութիւնը հայտնում է հեղինակին, որ կտպագրի առաջին հնարավորութեան դեպքում²: Ա.-Դոն վիրավորվում է, ետ է վերցնում իր ուսումնասիրութիւնը և պարտքով հրատարակում այն: Գիրքը մի հսկայական անակնկալ էր: Հեղինակը տարինը շարունակ շրջագայելով Վանի, Բիթլիսի և Էրզրումի շրջաններում, հավաքել էր արժեքավոր նյութեր, դասավորել, բերել մի ընդհանուր սխտեմի և արել այնպիսի վիճակագրական տվյալներ ու կորակացութիւններ, որոնք ցրում էին պատրանքները Արեւմտեան Հայաստանի իրական-ողբերգական վիճակի վերաբերյալ:

¹ Տեղեկագիր, Թիֆլիս, 1914, էջ 51:

² Նույն տեղը:

ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1.

Թարգմանական գրականությունը հասարակության հոգևոր վարճացման գործունեներից մեկն է: Նա մի ազգի ծանոթացնում է մյուս ազգերի մշակույթի, բնավորության, մտավոր առաջադիմությանն հետ և այդ ճանապարհով հարստացնում ազգի գրականությունը: Խթանում նրա վարճացմանը: Այս տեսակետից էլ մեծ նշանակություն ունի թարգմանական երկի ընտրությունը, նրա բովանդակության ու իմացական արժեքի օգտակարությունը: Քննելով Թիֆլիսի ու Կովկասի հայերեն ղրբերի հրատարակչական ընկերությունների թարգմանական գործունեությունը, նկատում ենք, որ նրանք առաջնությունը տվել են գերազանցապես այն ստեղծագործություններին, որոնք հագեցած են համամարդկային գաղափարներով, խողովրդասիրությամբ, կյանքի խորը ճանաչողությամբ: Թարգմանական գրականության հարցում ոչ պակաս կարևորություն ունեն նաև թարգմանության որակի, պրոֆեսիոնալ ունակության չափանիշները: Ինչպես հայտնի է մինչև 19-րդ դարի 80-ական թվականները հայ թարգմանական գրականության մեջ իշխում էր հիմնականում փոխադրության սկզբունքը, որը հետամուտ էր ավելի տվյալ երկի «հայացմանը», քան բնագրային թարգմանությանը: Թարգմանությունը տակավին չէր բարձրացվել արվեստի աստիճանի: Խոսքը, իհարկե, չի վերաբերում հայկական կլասիցիզմին, որը ստեղծեց թարգմանության մի հիանալի դպրոց և հայ մշակույթը հարստացրեց համաշխարհային դասականների կատարյալ թարգմանությամբ: Ամեն ոք, անկախ իր թարգմանական շնորհքից, հմտությունից և ռեակությունից, իրեն համարում էր թարգմանիչ և աշխատում լույս աշխարհ հանել իրեն դուր եկած ստեղծագործությունը: Դրա համար էլ շատ դժվար է գուշակել, թե ո՞ւմ համար և ի՞նչ նպատակով է թարգմանվել այս կամ այն գիրքը:

Ընդհանուր սիստեմի բացակայության հետեւանքով հաճախ նույն հեղինակի նույն գործը թարգմանվում էր մի քանի անգամ տարբեր անձանց կողմից:

Թիֆլիսի հրատարակչական ընկերությունն իր գործունեության առաջին իսկ տարում, թարգմանական գրականության աշխատանքները բարելավելու նպատակով, հայ պարբերականներում տպագրեց հայտարարություն այն մասին, որ թարգմանիչները «պարտավոր են նախապես հայտնել ընկերությանը, թե ի՞նչ դիրք են կամենում թարգմանել: Յանկալի է, որ այդ անձինք բարեհաճեն ուղարկել ընկերությանը յուրյանց աշխատության մի քանի թերթ, իբրեւ օրինակ նյութի ընտրության ու լեզվի: Յանկալի է նույնպես ստանալ այնպիսի թարգմանություններ, որ արված լինի նույնիսկ բնագրից, և որը թարգմանության հետ պետք է ուղարկել ընկերությանը»¹:

Ինչպես տեսնում ենք, ընկերությունը «նյութի ընտրության» իրավունքը վերապահելով իրեն, ցանկանում էր կենտրոնացնել թարգմանական գործը, պարզություն, հստակություն մտցնել հրատարակության մեջ: Նրա խմբագրական մասնաժողովը սրտով չյամբ էր դնում նաև հեղինակի ոճի, գեղարվեստական առանձնահատկությունների պահպանման հարցը: Ընկերությունը, ցանկալի դոնելով, որ «թարգմանությունը արած լինի նույնիսկ բնագրից», կամենում էր ի հայտ բերել լավագույն թարգմանիչներին, իր շուրջը համալսել նրանց և որակական բարձր մակարդակի վրա դնել թարգմանության գործը:

Նվ ԼՅՆ 80-ական թվականները հիմնականում հանդիսացան դասական թարգմանությանն անցնելու ժամանակաշրջան, ապա 90-ական թվականները նշանավորվեցին որպես թարգմանական գրականության զարգացման նոր էտապ: Հանդես եկան մի շարք շնորհալի թարգմանիչներ, որոնք յուրացնելով անցյալի փորձը, իրենց բարձրարժեք թարգմանություններով հայ ժողովրդին հաղորդակից դարձրին ռուս և եվրոպական գրականությանը: Դրա համար էլ 90-ական թվականներին Թիֆլիսի հրատարակչական ընկերությունն արդեն ոչ թե «ցանկալի» է համարում բնագրային թարգմանությունը, այլ՝ պարտադիր: Խմբագրական մասնաժողովը խստով չյամբ հետևում է, որ թարգմանիչները չափազանց բնագրի ոճը, պահպանեն նրա հմայքը:

¹ «Մեղու Հայաստանի». 1880, № 37:

1894 թվականի մարտին Թիֆլիսի հրատարակչականը, թարգմանիչների շահագրգռվածությունը բարձրացնելու և նրանց բնկերություն հետ կապելու նպատակով, մեծացնում է թարգմանչության հոնորարի չափը: Այդ որոշումը որոշ դժգոհություն է առաջ բերում հայ գրողների շրջանում: Հովհ. Թումանյանը՝ Աղայանին հասցեագրած իր նամակներից մեկում գրում է, որ ընկերության ընդհանուր ժողովում «...և մի առաջարկություն արի (գուցե այս էլ էր հիմար), խոսեցի թարգմանական հեղեղի դեմ. ասեցի, որ ընդհանրապես գրականության մեջ և մասնավորապես հրատարակչական ընկերությունը սաստիկ նպաստելով թարգմանչությանը, իսկզում և՛ ինքնուրույն գրականությունը: Այդ միջոցը ես համարում եմ ինքնուրույն աշխատանքի ստորդնահատությունը — թարգմանությունը տալիս են 20—25, ինքնուրույնին 25—30, զանազանությունը 5 ռուբլի են դտել: Ամեն մարդ ձեռնհաս լինելով թարգմանություն է անում և փող ստանում — և հեղինակը, որ կարող էր ինքնուրույն բան գրել, մտածում է — մի վեպ գրելու համար պետք է նստեմ ամիսներով շարշարվեմ. որ ստանամ, և՛ թաղրենք, 100 ռուբլի, ավելի լավ չի լինիլ մի շաբաթ նստեմ մի բան թարգմանեմ ավելի շատ կստանամ:

Եւ առաջարկեցի ընկերությանը զանազանել ինքնուրույն գրողի աշխատանքը թարգմանողի աշխատանքից, գրողի տաղանդը թարգմանողի եռանդից, և բարձրացնել ինքնուրույն գրականության գինը, դոնե երկու անգամ ավելի թարգմանականի դնից»¹: Թումանյանի դիտողությունն իհարկե միանգամայն իրավացի է, և՛ ահայն ինքնուրույն թե՛ թարգմանական գրականության դարգացման տեսակետից առաջադրված փաստարկը օժանդակ միջոց է միայն: Իսկ ընկերությունն իր որոշումն արդարացնում է սոսկ գործնական նկատառումներով, որպեսզի նյութական շահագրգռվածությամբ խթանի պրոֆեսիոնալ թարգմանության զարգացմանը:

Թիֆլիսի հրատարակչական ընկերությունը 90-ական թվականներին տպագրում էր գերազանցապես իր թարգմանիչների՝ Պ. Պոռյանի, Ղ. Աղայանի, Հովհ. Թումանյանի, Հովհ. ԽանՄասեհյանի, Գ. Բարխուդարյանի, Հովհ. Հովհաննիսյանի, Ալ. Մատուրյանի, Տ. Հովհաննիսյանի, Փ. Վարդաղարյանի և այլոց գործերը:

¹ Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. 5, 1945, էջ 89—90:

Թարգմանական արվեստի կատարելագործման ու զարգացման բնագավառում Կովկասի հայոց հրատարակչական ընկերությունն զերն աչն է՝ որ նա շարունակելով Թիֆլիսի ընկերության սովանդները և ունենալով փորձված թարգմանիչների բանակ, որոշում է թարգմանությունները տպագրել կոնկուրսային կարգով։ Միևնույն երկի թարգմանելու համար հանձնարարվում էր մեկից ավելի թարգմանիչների և տպագրվում ներկայացրածներից լավագույնը։

Խմբագրական մասնաժողովը դերադանցություն է տվել բնաչրից տրված թարգմանություններին, պահանջելով, որ ռուսական, ֆրանսիական, անգլիական և գերմանական հեղինակների գործերը թարգմանված լինեն անպայման բնագրերից։ Մնացած լեզուների վերաբերյալ (իտալերեն, նորվեգերեն, և այլն), որոնց ախրապետողները համեմատաբար քիչ են մեղանում, կարելի է որոշ զիջումներ անել։ Ինչպես գրված է Կովկասի հրատարակչական ընկերության տեղեկագրում, «մի շարք թարգմանություններ հերթից դուրս են հանվել ու պահվել՝ մինչև որ ստացվեն նրանց բնագրերը։ Ավելորդ գրագրությունից խուսափելու համար, ընկերության խմբագրական մասնաժողովը հայտարարեց ի վերջո, որ առանց բնագրի՝ թարգմանությունը քննության չի առնի։

Թարգմանությունները հաճախ մերժվել են նաև սխալ կամ ոչ հայերեն լինելու պատճառով։ Թարգմանիչները չեն իմացել կամ հայերենը, կամ աչն լեզուն, որից թարգմանել են... ամեն մերժում կանխապես պատճառաբանվել է զրավոր կերպով, նաև թույլ տալով ցանկացողին՝ անձամբ ծանոթանալ մերժումին վերաբերող արձանագրության հետ»¹։

Անհրաժեշտ է նշել, որ 20-րդ դարի առաջին տասնամյակում նկատելիորեն փոխվում է թարգմանական գրականության ու ազգային, ինքնուրույն գրականության փոխհարաբերությունը։ Լեյսպես, երբ ի մի ենք բերում Թիֆլիսի հրատարակչական ընկերության խմբագրական մասնաժողովին՝ 1890—1899 թվականներին և Կովկասի հրատարակչականին 1910—1916 թվականներին ներկայացրած վիճակագրական տվյալները, թե 17 տարվա ընթացքում քանի ինքնուրույն և քանի թարգմանական գրքեր են լույս տեսել, ապա ստացվում է հետևյալ պատկերը.

¹ Տեղեկագիր, 1912, էջ 22—23։

Թիֆլիսի հրատարակչական ընկերություն					Կովկասի հրատարակչական ընկերություն				
Թվականը	Ստացվել է	Խնքնուրույն	Թարգմ.		Թվականը	Ստացվել է	Խնքնուրույն	Թարգմ.	
			ուսմ. գրակ.	աշխատ. գրակ.				ուսմ. գրակ.	աշխատ. գրակ.
1890	29	8	15	6	1910	57	29	19	9
1891	36	9	19	8	1911	76	38	22	16
1892	51	28	14	9	1912	50	28	14	8
1893	53	22	10	21	1913	41	29	8	4
1894	66	26	23	17	1914	32	21	7	4
1895	75	29	31	15	1915	26	18	5	3
1896	66	26	23	11	1916	22	11	6	5
1897	102	49	33	20	—	—	—	—	—
1898	95	34	45	16	—	—	—	—	—
1899	84	32	38	14	—	—	—	—	—
657 263 257 137					304 174 81 49				

(Տվյալները վերցրել ենք Թիֆլիսի և Կովկասի հրատարակչական ընկերությունների արխիվային նյութերից և նրանց հրապարակված «Տեղեկագրերից»):

Եթե Թիֆլիսի և Կովկասի հրատարակչական ընկերություններին ներկայացրած ստեղծագործություններին ավելացնենք նույն ժամանակաշրջանում այլ հրատարակչությունների և առանձին հրատարակիչների կողմից լույս ընծայած գրքերը, կաճի միայն ընդհանուր թիվը, բայց անփոփոխ կմնա թարգմանական և ինքնուրույն գրականությունների միջև եղած հարաբերությունը, մի իրողություն, որ հուշում է օրինաչափությունը: Նախ. եթե 1890—1900-ական թվականներին թարգմանական գրականությունը գերակշռում է ինքնուրույնին և վերջինիս նկատմամբ, Թումանյանի ասած, «հեղեղի» տպավորություն է թողնում, ապա 1910—1916 թթ. ազգային ինքնուրույն գրականությունը ի հայտ է բերում գերակշռությունը: Եվ ապա թարգմանական գրականության բնագավառում հայ մտավորականներն առաջնությունը միշտ տվել են ուս գրականությանը: Նրանք կրկնակի անգամ շատ են

թարգմանիլ ռուս գրողներին, քան արտասահմանյան բոլոր ազգերի գրողներին՝ միասին վերցրած:

Ինչպես նշեցինք, երբ 20-րդ դարի սկզբին ազգային գրականության մեջ աստիճանաբար կասեցվում է թարգմանական գրականության հոսքը, Կովկասի հրատարակչականը որոշում է. «...ինքնուրույն գրվածքների յուրաքանչյուր թերթին վճարել 50 ռուբլի, իսկ թարգմանություններին՝ 25»¹: Բացի այդ թարգմանական աշխատանքը կարգավորելու նպատակով ընկերությունը մամուլում հանդես էր գալիս հայտով, թե ո՞ր գրողի ո՞ր ստեղծագործությունն է անհրաժեշտ թարգմանել:

Այժմ անցնենք թարգմանական գրականության բովանդակային և վիճակագրական քննությանը, թե հատկապես համաշխարհային գրականության ի՞նչ երևույթներ են ներթափանցել հայ հոգևոր կյանքի ոլորտները և ըստ այդմ ի՞նչ դեր են խաղացել հրատարակչական ընկերությունները գրական-կուլտուրական կապերի զարգացման գործում:

2.

Ռուս գրականության և կուլտուրայի ներթափանցումը հայ իրականության մեջ լայն ծավալ է ստանում Հայաստանը Ռուսաստանին միավորվելու քաղաքական իրադարձությունից հետո և արդեն 19-րդ դարի 90-ական թվականներից ռուսական միտքը, արվեստն ու գրականությունը առաջնակարգ նշանակություն են ստանում հայ հասարակական մտքի և գեղարվեստական աշխարհընկալման ձևավորման գործում: «Մշակը» խոսելով Թիֆլիսի հայերեն գրքերի նորակազմ հրատարակչական ընկերության անելիքների մասին, շեշտը դնում է ռուս գրականության վրա: «Ռուս գրականությունը,— գրում է թերթը,— թեև համեմատաբար աղքատ է եվրոպական ուրիշ գրականություններից, բայց այնուամենայնիվ, ունի իր նշանավոր ներկայացուցիչները, որոնց գրվածքները անհամեմատ հեշտ կլինի մեղ համար հասկանալ, քան գերմանական հեղինակությունները: Ոչ ոք չէր կարող ուրանալ այն հանգամանքը, որ մեր հասարակական և ընտանեկան կյանքը հետզհետե զարգանում է, կերպարանափոխվում անմիջապես ռուսաց կյանքի ազդեցության

¹ Կովկասի հայերեն գրքերի հրատարակչական ընկերության տեղեկագիր, 1913, էջ 24:

տակ... Մեր ինտելիգենցիան ամենամոտ կերպով ծանոթ է այդ կյանքի հետ, և մի՞թե մեր կարդացող հասարակության այն մասը, որ ղուրկ է մնացել ռուսերեն լեզվից, որ գիտի միայն մայրենի լեզուն, մի՞թե հնարավոր չէ ծանոթանալ ռուսաց կյանքի հետ, որ պատկերացրած է բազմաթիվ ռուս ռոմանտիկ-րում: Գոգոլն իր անմահ գրվածքներով, Տուրգենև, Գոնչարով Տոլստոյ, Դոստոևսկի, Օստրովսկի,— այդ մի շարք տաղանդավոր հեղինակներն են, որոնք նկարչական կերպով ներկայացնում են ռուս հասարակության բոլոր դասակարգերի կյանքը: Եթե մեր թարգմանիչներն աշխատում են ծանոթացնել հայ հասարակությանը Ֆրանսիայի մինչև անգամ պատմական կյանքի հետ, ինչու ուրեմն նրանք չեն մտածում նույնպես ռուսների ներկա կյանքի մասին, որ մեզ ավելի մոտ է և ավելի հասկանալի: Ցանկալի կլիներ, որ հրատարակչական ընկերությունը ուշադրություն դարձներ և այդ հարցի վրա»¹:

Թիֆլիսի հրատարակչականը սկզբունքով համամիտ լինելով ընկերության անդամ Ս. Դադյանցի վերը բերված հոդվածի գրույթներին, առաջին պլանի վրա է դնում ռուս գրողների մանկապատանեկան ստեղծագործությունների թարգմանությունը: Ընկերությունը որոշում է սկզբում հրատարակել արձակ թարգմանություններ, առաջ բերել ընթերցասիրություն, գեղարվեստական խոսքի ընկալում, ապա անցնել չափածոյին, ուր պոետի խոհերն ու ձգտումները արտահայտված են ընթերցողին դեռևս անմատչելի խոր փիլիսոփայությամբ, բանաստեղծական գեղեցիկ թնոլ:

Ռուս գրողներից առաջինը և Տոլստոյն էր, որին անդրադարձավ Թիֆլիսի հրատարակչականը: 80-ական թվականներին Լ. Ն. Տոլստոյն արդեն մեծ համբավ ուներ հայ իրականության մեջ: Առանձին գրքով և պարբերականներում տպագրվում էին նրա ստեղծագործությունները, լույս էին տեսնում տեսական և քննադատական հոդվածներ նրա կյանքի ու գործի վերաբերյալ: 1891 թվականին ընկերությունը տպագրում է «Աստված գիտե արդարն ու մեղավորը» պատմվածքը, որը առաջ բերեց մամուլի լայն արձագանքը²:

¹ «Մշակ», 1880, № 7:

² Հովն. Սաղաթելյան, Կոմս Լ. Տոլստոյի սկզբունքը, «Մուրճ», 1891, № 60, էջ 777—782, Է. Ղազարյան, Մոռացված խոսքեր, «Մուրճ», 1891, № 12, էջ 1569—1574, Մ. Թերբերյան, Թուրքիկ ակնարկներ, Նոր դար, 1891, № 172:

Չնայած այս պատմվածքում ևս հեղինակը կրկին քարոզում է չարին չհակադրվելու իր սկզբունքը, բայց ընկերությունը տպագրեց, որովհետև վաճառական Ակսակովի կերպարով, որն անարվարացիորեն ցարական դատարանի կողմից ճանաչվել է մարդասպան ու արքայապետ, հեղինակը դատապարտում է ցարական ինքնակալության օրենքների հակամարդկային էությունը:

Թիֆլիսի, հետագայում նաև Կովկասի հրատարակչական ընկերությունները միշտ աշխատել են, որ Լ. Տոլստոյի ստեղծագործությունները թարգմանեն ժամանակին լավագույն գրողներն ու թարգմանիչները: Թիֆլիսի ընկերության մեջ Տոլստոյի երկերի պաշտոնական թարգմանիչ էր ճանաչված Պերժ Պոռչյանը: Նրա թարգմանությունները լույս են տեսնում «Կովկասի գերին» (1894) և «Մանկություն և պատանեկություն» (1899) ստեղծագործությունները: Ավ. Իսահակյանի վկայությամբ, Պ. Պոռչյանը «Մանկություն և պատանեկություն» գրքի թարգմանության ժամանակ հիացմունքով է խոսել Տոլստոյի արվեստի մասին, նրան համարելով «օւլիկանոս»¹: Հրատարակչական ընկերության պատվերով Տոլստոյի երկերը թարգմանել է նաև Նար-Դոսը, Ստեփան Հորչյանը, Դերենիկ Դեմիրճյանը և ուրիշներ: Սակայն տեղին է նշել, որ հաճախ գրաքննչական արգելքների պատճառով ընկերությունը չէր կարողանում իրացնել ուս գրողների երկերի թարգմանությունն ու հրատարակությունը: Բավական է ասել, որ Կովկասի գրաքննչական կոմիտեն 90-ական թվականներին միայն Լ. Ն. Տոլստոյից արգելել է հայերեն թարգմանված 13 գործ²:

Կովկասի հրատարակչական ընկերությունը, որի հիմնադրումը գուգարիպեց Լ. Տոլստոյի մահվան հետ, բնականաբար իր ուշագրություն կենտրոնում պահեց ուս հանճարեղ գրողի կյանքի ու ստեղծագործության վերաբերյալ գրականության հրատարակությունը: Բավական է ասել, որ եթե անցած արվելի քան քսանհինգ սարինների ընթացքում հայ պարբերական մամուլում տպագրվել են երեսունհինգ հոդված, ապա միայն 1910 թվականին, լույս են տեսնում երկու տասնյակից ավելի հոդվածներ³:

1910 թվականին Կովկասի հրատարակչական ընկերությունը

¹ Տե՛ս, Ավ. Իսահակյան, Երկեր, հ. 4, Երևան, 1950, էջ 36:

² Այդ մասին մանրամասն տես մեր հոդվածը՝ «Л. Н. Толстой и Кавказская цензура, Лит. Армения, 1960, № 5, стр. 104—107.

³ Ռ. Հովհաննիսյան, Ռուս գրականությունը հայ հասարակական մտքի գնահատմամբ, Երևան, 1949, էջ 334—337:

որոշում է տպագրել Տոլստոյի «Պատերազմ և խաղաղությունը» և լավագույն երկերի ժողովածուն՝ երկու հատորով: Տերյանը շատ քիչ է համարում ընկերության կողմից նախատեսվածը, քանի որ «Լև Տոլստոյը այնպիսի մի հեղինակ է, որի գրվածքների եթե ոչ լրակատար ժողովածուն, ապա: դո՛ւնի ժողովածուն, ըստ կարելիության լիակատար ժողովածուն պետք է ունենա ամեն մի ժողովուրդ, եթե նա կուտուրական կոչվելու հավակնություն ունի: Ուրեմն, եթե մենք համարում ենք քիչ թե շատ կուտուրական մեղ, անհրաժեշտ է մտածել այդ բանի մասին»¹ Նա առաջ է քաշում Նաև «Աննա Կարենինայի» տպագրության հարցը: Սակայն երբ ընկերությունը որոշեց տպագրել Լ. Տոլստոյի «Պատերազմ և խաղաղություն» վեպը և լավագույն պատմվածքների երկհատորյակը, հրապարակի վրա չկային այդ գործերի թարգմանությունները: 1910 թ. Լ. Տոլստոյի երկերի ճանաչված թարգմանիչ Տ. Հովհաննիսյանը ընկերության ուղարկությունը հրավիրում է այն բանի վրա, որ Բուդաղյանը ցանկանում է Մոսկվայում առանձին գրքերով հրատարակել Տոլստոյի ժողովուրդական պատմվածքները, «ուստի լավ կլիներ, որ ընկերությունը դիմեր նրան խնդրելով հանձնել ընկերության նոցա հրատարակման գերծր, քանի որ մենք ուզում ենք առաջինը հրատարակած լինել այդ գրքերը, որոնք կարժանանան ընթերցողների ընդհանուր հավանությանը»²: Ընկերության բանակցությունները Բուդաղյանի հետ անհաջող վերջացան: Մեկ տարի հետո նա ինքը տպագրեց Տոլստոյի պատմվածքների երկհատորյակը: Նույն 1911 թվականին Կ. Պոլսում լույս են տեսնում Ն. Օտյանի թարգմանությամբ «Աննա Կարենինա» (երկու հատորով) և էդուարդ Ամատունու թարգմանությամբ՝ «Պատերազմ և խաղաղություն» վեպերը: Ընկերությունը փոխում է իր մտադրությունը, քանի որ «առանց այն էլ շատ քիչ շնորհիվ թարգմանիչներ ունենք և եղած գրքերն էլ շատ սահմանափակ շրջան են վայելում,— կարելի է մյուս բարբառով (արևմտահայերենով — Վ. Վ.) տպագրված երկի տարածումը և թարգմանիչն էլ այդ ժամանակը կտրամադրի մի այլ երկի թարգմանության: Կարիք չկա թողնել

¹ Վ. Տերյան, Երկերի ժողովածու, հ. 2, 1961, էջ 220:

² Նույն տեղը, էջ 219:

³ ՀՍՍՀ, ՊԿՊԱ, ֆ. 30, գ. 13, թ. 34:

անճարեղ գրողի շթարգմանված երկը և թարգմանել
հղածը»¹

«Հորիզոնը» անդրադառնալով թարգմանական գրականությունը, նույն միտքն է պաշտպանում. «Շուայություն կլինիր, եթե ուսանողայ թարգմանիչը նորից թարգմաներ Հյուգոյի, Դյումայի, Էն-ժեն Սուի երկերից շատերը, որոնք վաղուց թարգմանվել են Կ. Պոլսում: Թարգմանելու դեպքում մենք նախ՝ ուժերի ջլատում կառաջացնենք, երկրորդ՝ կանտեսներ գրական ասպարեղի սակավաթիվ գործիչներին եւանդը, որ ամենագլխավորն է, հարված կհասցնենք ուսանողայ և թուրքահայ մերձեցման գաղափարին»²:

Վահան Տերյանն իր որոշման մեջ մնում է հետևողական և բրոշում է «Պանթեոն» հրատարակչությամբ լույս ընծայել «Պատերազմ և խաղաղություն» վեպը, ըստ որում առաջին հատորի թարգմանությունը ստանձնում է ինքը (երկրորդը հանձնարարում է Ստեփան Զորյանին, երրորդը՝ Դ. Դեմիրճյանին, չորրորդը՝ Ա. Խոնդկարյանին): Ճիշտ է, ժամանակին բանաստեղծի ցանկությունը չիրականացավ, բայց նրա նախաձեռնությունն իդուր շանցավ. սովետական իշխանության տարիներին այն իրականացրեց Ստ. Զորյանը, աւալով այդ վեպի գեղեցիկ թարգմանությունը՝ շորհ հատորով:

Կովկասի հրատարակչական ընկերությունը տպագրեց նաև «Ինչո՞ւ են կենդանի մարդիկ», «Ամենքի համար Աստվածը մեկ է» և «Հաջի-Մուրադ» երկերը Լ. Դանիելյանի, իսկ «Կենդանի դիակը»՝ Նար-Դոսի թարգմանությամբ:

Ինչպես վկայում են այդ ընկերության արձանագրությունները, տարբեր ժամանակներում թարգմանիչները ներկայացրել են Լ. Տոլստոյի «Դերիները», «Կարմա», «Ինչի՞ համար», «Ֆրանսուազա», «Սեր», «Խավարի իշխանություն», «Կենդանի դիակ» և այլ գործեր, որոնք ընկերության խմբագրական մասնագողովի կողմից մերժվել են «անհաջող թարգմանության համար»:

Ինչպես վկայում են Թիֆլիսի ընկերության արձանագրությունները, գեղարվեստական գործի ընտրությունն ու տպագրությունը ընթացել են գեղագիտական և գաղափարական սկզբունքների բախման մթնոլորտում, որը ժամանակին արձագանք էր

1 Գնթ, Կովկասի հայոց հրատարակչական ընկերության ֆոնդ, № 33:

2 Հորիզոն, 1911, № 271:

գտնում մամուլի էջերում: Այսպես, 1891—1900 թվականներին որոշակի սրությամբ է դրվում ուսն նարոդնիկ գրողների՝ Ն. Միխայլովսկու, Ն. Շիլգունովի, Գ. Ուսպենսկու, Ն. Զլատովրատսկու, Վ. Կորոլենկոյի երկերի թարգմանության հարցը:

1895 թվականին «Մշակի» խմբագիր Ալ. Քալանթարը և նրա շուրջը համախմբված մտավորականներից Հ. Առաքելյանն ու Ա. Բաբախանյանը ընտրվելով Թիֆլիսի հրատարակչական ընկերության ղեկավար կազմում, ձեռնարկում են ընկերության միջոցներով ևս պրոպագանդել նարոդնիկական գեղարվեստական հրականությունը: Այդ նպատակով ընկերության խմբագրական մասնաժողովը որոշում է հրատարակության սլատրաստել Գլեբ Ուսպենսկու, Վլադիմիր Կորոլենկոյի, Զլատովրատսկու և Նարոդնիկական շարժման ահսական մտքերի ներկայացուցիչ Ն. Միխայլովսկու երկերը:

1895 թ. ընկերությունը ծրագրում է հրատարակել Վլ. Կորոլենկոյի «Ակամա մարդասպան», «Գետնափորի երեսաները», «Անտառը խշշում է», «Թաթախման երեկոն», «Դատաստանի օրը», Զլատովրատսկու՝ «Գյուղի վարժուհին», «Մոռացվածը», «Աստվածների կայծը», «Ավրամ» ստեղծագործությունները, իսկ Ն. Միխայլովսկուց՝ «Տուրգենևի մասին», «Պրուդոն և Բեյքենսկի» հոդվածները:

Հայ գրողներից ոչ բոլորն էին համամիտ ընկերության այդ սլանի հետ: Նրանք գտնում էին, որ շատեր է ընկերության ստեղծագործությունների տպագրության վրա: Այսպես, 1896 թ. Շիրվանդադեն ելույթ ունենալով ընկերության ընդհանուր ժողովում, նշում է, որ կարիք չկա հրատարակելու «Զլատովրատսկու, Ուսպենսկու և ուրիշ այդպիսիների աշխատությունները, որոնք երկար չեն կարող նշանակություն ունենալ, այլ պետք է տալ կարևոր, խոշոր կառավարական գրվածքների թարգմանությունները»¹:

Շիրվանդադեի և ընկերության մյուս անդամների դիտողությունները դուր չէին գալիս ընկերության վարչության նախագահ Ալ. Քալանթարին: Վերջինս իր այդ մտադրությունը իրականացնելու նպատակով որոշում է ընկերության աշխատանքներից մեկուսացնել Շիրվանդադեին: Դրա համար նա օգտագործում է.

¹ Թիֆլիսի հայերեն գրքերի հրատարակչական ընկերության Տեղեկագիր, 1896, էջ 17:

հետևյալ հանգամանքը: 1896 թ. Շիրվանղաղեն դիմում է ընկերությանը՝ որևէ գիրք կամ գրքույկ ուսուրենից հայերեն թարգմանելու խնդրանքով: Ալ. Քալանթարը Շիրվանղաղեին հանձնարարում է Վլ. Կորոլենկոյի «Գետնափորի երեսաները» և «Նավից ընկած մարդը» պատմվածքների թարգմանությունը: Գրողը համաձայնում է և կարճ ժամանակ անց թարգմանությունը ներկայացնում է խմբագրական մասնաժողովին: Շիրվանղաղեի, ինչպես նաև Տ. Հովհաննիսյանի կողմից ներկայացրած Վլ. Կորոլենկոյի «Ակամա մարդասպան» պատմվածքների թարգմանությունների որակի մասին խմբագրական մասնաժողովի նիստում ղեկուցում է Ստ. Լիսիցյանը: Լսելով գրախոսին, մասնաժողովը որոշում է տպագրել «Ակամա մարդասպանը» և «Գետնափորի երեսաները», իսկ «Նավից ընկած մարդը» պատմվածքը, լեզուն շտկելու նպատակով, վերադարձնել թարգմանչին¹:

Նախքան թարգմանությունը տպագրելը, Շիրվանղաղեն հրատարակչական ընկերության վարչությունից ստացել էր 50 ուրելի կանխավճար, որը և համարել էր իր աշխատանքի վարձը: Սակայն մի տարի անց, Ալ. Քալանթարը հայտնում է ընկերության ազդեցիկ անդամներին՝ Ղ. Աղայանին և Հովհ. Թումանյանին, որ Շիրվանղաղեն փող է վերցրել ընկերությունից և չի վերադարձրել: Շիրվանղաղեն լսելով այդ, գրում է ընկերության վարչությանը. «Ես որոնեցի իմ բաղձաթիվ պարտատերերի ցուցակում ընկերությանդ անունը՝ չգտա: Չեմ հիշում, որ երբեք ես պարտ լինեմ նրան»²: Ալեուհետև նա բողոքով հանդես է գալիս «Տարազ» շաբաթաթերթում և անարգանքի սյունին դաժնում հրատարակչական ընկերության վարչության նախագահ Ալ. Քալանթարին³: Այդ հարցը ի վերջո դառնում է ընկերության ընդհանուր ժողովի քննության առարկա, որտեղ Շիրվանղաղեին պաշտպանում են Հովհ. Թումանյանը, Ղ. Աղայանը և Պ. Պողոսյանը: Շիրվանղաղեն իր ելույթում ընդգծում է, որ Ալ. Քալանթարի արարքը անընդունելի է, «ուստի ավելի լավ կլինի, որ այդ հարցով զբաղվի մի ավել մասնաժողով»⁴: Սակայն ընդհանուր ժողովը քննում է այդ հարցը և, ինչպես ճիշտ նկատել է Ա. Արասխանյանը, համոզվում, որ ընկերության վարչության նախագահի վերաբեր-

¹ ՀՍՍՀ, ՊԿՊԱ, ֆ. 30, գ. 13, թ. 31:

² Հայկ. ՍՍՀ, ՊԿՊԱ, ֆ. 30, գ. 12, թ. 216:

³ Տե՛ս «Տարազ», 1897, № 7:

⁴ ՏԼՂԵԿԱԳԻՐ, 1899, էջ 41:

մունքը Շիրվանղաղերի նկատմամբ «եղև է օլիմպիական բարձրությունից և այդ վարմունքը դատապարտելի է»¹։ Ալ. Քալանթարը, չբավարարվելով դրանով, Շիրվանղաղերի թարգմանած «Գետնափորի երեսաները» գրքույկի վերաբերյալ «Մշակում» տպագրում է գրախոսական, փորձելով ցույց տալ, որ Շիրվանղաղեն ղուրկ է թարգմանչի շնորհքից։ Գրախոսը բարձր է գնահատում Վլ. Կորոլենկոյի լեզուն, որի պարզությունը, ժողովրդայնությունը թարգմանիչ Տ. Հովհաննիսյանը պահպանել է «Ակամա մարդասպան» պատմվածքում, իսկ «Գետնափորի երեսաների» անհաջող թարգմանության պատճառով Վլ. Կորոլենկոյի իդեաները շեն հասնում ընթերցողին։ «Ժամանակակիցները մի խորհուրդ են տալիս,— ևզրակացնում է գրախոսը,— այսպիսի թարգմանություն չունենալու համար՝ չտպագրել»²։

Չնայած Ալ. Քալանթարը փորձով համոզվեց, որ ճշմարտության դեմ մեղանշելով ոչնչի չես հասնի, բայց ցանկացավ իր ողջ դայրույթը թափել Շիրվանղաղերի պաշտպանների և հատկապես Հովհ. Թումանյանի վրա։ Այդ նպատակով նա «Մշակում» հալածաբարում է, որ Հովհ. Թումանյանը 1893 թվականից պարտ է ընկերությունը 60 ոտբլի³։

Հովհ. Թումանյանը կարգալուծ այդ զրպարտիչ հայտարարությունը, նույն օրը ևեթ Թիֆլիսի հայերեն գրքերի հրատարակչական ընկերության վարչությունը գրում է. «Այս լուրը արասալնորում է իմ պատիվը, ուստի խնդրում եմ հարգելի վարչությանդ ինձ հայտնել, թե ինչու և ինչպես է եղել, որ այն պարտքը, որ ես պարտք եմ ընկերությանը, այսօր դուրս է եկել հրապարակ այն թերթում, որի խմբագիրը վարչությանդ պարոն նախագահն է, և այն էլ զրպարտությամբ հանդերձ, թե ես չեմ տալիս»⁴։

Ալ. Քալանթարը հանդգնում է նույնիսկ Հովհ. Թումանյանին վիրավորել այն աստիճան, որ վերջինս որոշում է իր հարաբերությունները խզել ընկերության հետ։ Հովհ. Թումանյանն ի մի բերելով Ալ. Քալանթարի հարուցած վիրավորանքը հայ գրողների նկատմամբ, 1909 թ., երբ «Կովկասյան կայսերական գյուղատնտեսական ընկերությունը» տոնում էր նրա գյուղատնտե-

¹ Տեղեկագիր, 1899, էջ 41։

² «Մշակ», 1896, № 24։

³ Տե՛ս, նույն տեղը, 1897, 10 ապրիլի։

⁴ ՀՄՍՀ, ՊԿՊԱ, ֆ. 30, դ. 12, թ. 179։

սական գործունեություն 30-ամյա հոբելյանը, գրում է. «Ես իմ պրակտիկական կյանքում մի քանի անգամ դժբախտություն եմ ունեցել էդ թերթի («Մշակի» — Վ. Վ.) «սիրտ ու հարգանքի» դեմ ինձ պաշտպանելու: Իսկ շարունակ ականատես եմ եղել, թե ինչպես սրան ու նրան են աշխատել շարունակ խեղդել ու կեղտոտել իրենց սիրառատ ու մրառատ գրկի մեջ»¹

Շիրվանզադեն, Թումանյանը և Աղայանը դեմ չեն եղել նարոդնիկական գրականության փարգմանությանը: Սակայն նրանք ցանկացել են առաջին հերթին տպագրված տեսնել ուսուցչական գրականության ներկայացուցիչների սակավագործությունները: Շիրվանզադեն «խոշոր կյատիկական գրվածքներ» ասելով նկատի ունի այն գրողներին, որոնք ազդեցություն են ունեցել իր վրա. «Ինձ շարունակ հմայել են Տուրգենևի ոճը, — գրել է նա այլ առիթով, — հոգս խոր: Ըմբռնումը Դոստոևսկու կղմից և Տոլստոյի վեհ, համարձակ դադափարները»: Այդ գրողների երկերն էր ցանկանում տեսնել Շիրվանզադեն հայ ընթերցողի ազդեցության գրադարանում: Ինչ խոսք, անցյալ դարի 90-ական թվականներին հայ հասարակական կյանքում նարոդնիկական գրականության տարածումը ևս անհրաժեշտ էր: Այն օրհեց հայ ընթերցողներին ծանոթանալ նաբոգնիկ գրողների գեղարվեստական խոսքի հետ, նպաստեց հայ նարոդնիկական գեղարվեստական գրականության ստեղծմանն ու զարգացմանը և վերջապես, գիտակցել ավել, որ նարոդնիկների գաղափարները վերաբերում են նաև հայ ժողովրդին:

Նարոդնիկ գրողների ազդեցությունը ակնհայտ է հատկապես հայ գյուղագիրների վրա, և ոմանց մոտ այնքան ուժեղ է եղել, որ գրել են ոչ միայն սյուժետային նմանություններ, այլև անգամ նույն վերնագրի տակ: Այսպես, Աղեյանը, ընդօրինակելով Գլեբ Ուսպենսկու «Задача» և «Большая совесть» գործերը, գրել է «Ծանր խնդիր» և «Հիվանդ խիղճ» պատմվածքները:

Հայտնի է, որ նարոդնիկական գեղարվեստական գրականության մեջ շոշափվում են անհատի ունեցած պարտավորությունների և ժողովրդին ծառայելու հարցերը, որոնք իրենց արտահայտությունն են գտել նաև Տուրգենևի «Ռուդին» և «Նախօրեին» վեպերում: Մեղ թվում է նաև այդ է սյատճառը, որ նարոդնիկական գեղարվեստական գրականության ներկայացուցիչների

¹ Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 6, 1959, էջ 120:

հետ միասին, նույն տասնամյակում Թիֆլիսի հրատարակչական ընկերությունը զբաղվում է Տուրգենևի այդ վեպերի հայերեն հրատարակությամբ: Խմբագրական մասնաժողովը դժգոհ լինելով 1891—1892 թթ. «Տարազում» կրճատումներով տպագրված «Ռուդին» և «Նախօրեին» վեպերի թարգմանության լեզվից ու բնույթից, և տեղյակ լինելով, որ Մոսկվայում լույս են տեսնում Տուրգենևի «Արձակ բանաստեղծությունները», Ալ. Մատուրյանի թարգմանությամբ, որոշում է նրան հանձնարարել Տուրգենևի «Նախօրեին» վեպի թարգմանությունը: Հայ բանաստեղծը ընկերության այդ առաջարկությանը պատասխանում է. «Շատ ցավում եմ, որ արդո վարչությանդ առաջարկությունը՝ թարգմանել Тургенев-ի «Накануне» վեպը չեմ կարող, որովհետև նորերս հիվանդացա, երևացին թոքախտի նշաններ և բժիշկը խստիվ արգելեց առժամանակ գրավոր աշխատանքով զբաղվելու: Ամենայն սիրով և պատրաստակամությամբ կստանձնեի այդ գործը, եթե հիշյալ տխուր և արգելափակ հանգամանքը չլիներ»¹:

Ստանալով Ալ. Մատուրյանից բացասական պատասխան, խմբագրական մասնաժողովը 1897 թ. այդ վեպի թարգմանությունը այս անգամ հանձնարարում է Առաքել Բաբախանյանին (Լեռնին): Վերջինս տալիս է իր համաձայնությունը, բայց թարգմանում է թե՛ ոչ, հայտնի է: Այսպիսով՝ Թիֆլիսի ընկերությունը չկարողացավ հրատարակել Տուրգենևի վեպերը: Այդ բացը 1912 թ. որոշ չափով լրացրեց Կովկասի ընկերությունը՝ Տուրգենևի «Գարնանային ջրերը» տպագրելով և. Դանիելյանի թարգմանությամբ:

90-ական թվականները Թիֆլիսի հրատարակչականի համառոտորոշ են ոչ միայն նարոգնիկական-գեղարվեստական գրականության նկատմամբ ցուցաբերած հետաքրքրությամբ ու գրքերի հրատարակությամբ, այլև նրանով, որ այդ տասնամյակում նա լույս ընծայեց ռուս այն գեղեցիկ երկերը, նրանց ծննդյան կամ մահվան տարեթիցի առիթով, ինչպես օրինակ Ա. Պուշկինի և Ա. Գրիբոյեդովի ծննդյան՝ 100, Վ. Բելինսկու և Մ. Հերմոստովի մահվան 50-ամյակները և այլն, հանգամանք, որ ուղեկցվում էր այդ գրողների երկերի հրատարակությամբ:

Թիֆլիսի հրատարակչականը, նախքան Պուշկինի մահվան 100-ամյակի նշումը, զբաղվել է նրա երկերի թարգմանության

¹ Գրական ժողովություն, Գիրք առաջին, 1961, էջ 43:

ու հրատարակման հարցերով: Առաջին թարգմանություն կատարողը եղավ Արշակ Չոպանյանը, որը 1891 թ. ընկերությունը ներկայացրեց «Պոլտավա» պոեմը: Խմբագրական մասնաժողովը թարգմանությունը մերժում է այն պատճառաբանությամբ, թե թարգմանիչը գրեթե ստրկացրել է Պուշկինին և տվել բառացի թարգմանություն¹:

Խմբագրական մասնաժողովը կարևոր նշանակություն տալով Պուշկինի ստեղծագործություններում եղած նվիրական խոհերին ու տրամադրություններին, ազատասիրական գաղափարներին, իրեն հասցեագրված հարցում—նամակներին միշտ տվել է դրական պատասխան և առաջարկել է հնարավորին չափ շուտ ուղարկել: Ուստի բանաստեղծից կատարած թարգմանությունները: 1894 թ. Հ. Կարապետյանը ներկայացնում է Պուշկինի «Կապիտանի աղջիկը» գործի թարգմանությունը: Խմբագրական մասնաժողովի համոզմամբ, այդ երկը ամենայն հետաքրքրությամբ կընկալվի հայ ընթերցողի կողմից, սակայն անհաջող թարգմանությունները հարկադրում է մասնաժողովին թարգմանչին վերագրել: Առաջինը աշխատանքը հիմնավոր վերամշակման: Թարգմանիչը արհամարհում է ընկերության դիտողությունները և իր միջոցներով հրատարակում 1895 թ. Ալեքսանդրապոլում: Նոր լույս տեսած գիրքը չվրիպեց Պուշկինի ստեղծագործությունը սիրող ու գնահատող հայ գրողների տեսողացուցից: 1896 թ. Հովհ. Հովհաննիսյանը անդրադառնալով այդ թարգմանությանը, գրել է. «Կապիտանի աղջիկը» իրավամբ Պուշկինի արձակ լեզվով գրված ամենալավ գործն է համարվում: Չնայած Պուշկինից հետո մինչև մեր օրերը ռուսաց վիպագրությունն այնպես է առաջադիմել ու զարգացել, որ նույնիսկ եվրոպական գրականության մեջ մինչև այսօր բավականին պատվավոր տեղ է զբաղում, այնուամենայնիվ այժմ ևս «Կապիտանի աղջիկը» հաճութամբ կարդացվում է:

Անշուշտ «Կապիտանի աղջկա» հայերեն թարգմանությունն էլ կկարդացվի և այդ խոսք պատճառով չենք կարող չցավել, որ Կարապետյանի թարգմանությունը մեր թարգմանիչների մեծ մասի սովորական բոլոր թերություններն ունի: Ստրկաբար ռուսերեն բառերը հայերեն դարձնելը թարգմանությունն չէ հարկավ, և պ. Կարապետյանը դժբախտաբար այդպես է վարվում. շատ տեղ

¹ Տեղեկագիր, 1891, էջ 4:

էլ ուղղակի ուսերենը շահականալու ապացույցներ ենք գտնում այս թարգմանության մեջ»¹:

Հովհ. Հովհաննիսյանը այնուհետև բերում է բազմաթիվ օրինակներ ու հիմնավորում իր տեսակետը: Այս և նման փաստերը վկայում են, որ այն թարգմանությունները, որոնք չեն արժանացել ընկերությունների խմբագրական մասնաժողովների հավանություն, և թարգմանիչներն անտեսել են քննադատական գիտողություններն ու իրենց միջոցներով հրատարակել, մեծ մասամբ արժանացել են մամուլի բացասական կարծիքին:

Դժգոհ լինելով իրեն ներկայացրած թարգմանությունների որակից՝ Թիֆլիսի հրատարակչական ընկերությունը մեծ նախապատրաստակցան աշխատանք տարսւ վ Պուշկինի ծննդյան 100-ամյակը նշելու ուղղությամբ: Այդ նպատակով նա որոշում է տպագրել Մտ. Լիսիցյանի «Պուշկին» ուսումնասիրությունը, որը մի շարք թերություններով հանդերձ, հայկական միջավայրում ուսու գրողին ղեահատող առաջին ինքնուրույն մենագրական աշխատությունն էր: Բացի այդ, 1898 թ. ապրիլի 29-ին ընկերության խմբագրական մասնաժողովը հրավիրում է հատուկ նիստ՝ նվիրված Պուշկինի հոբելյանի հետ կապված միջոցառումներին, և որոշում. «1. Հանձնարարել Ալ. Ծատուրյանին, Հովհ. Հովհաննիսյանին և Կ. Կրասիլնիկյանին թարգմանել Պուշկինի մի շարք ոտանավորներ և տպագրել 1800 օրինակ «Քնար Պուշկինի» վերնագրով»:

2. Հանձնարարել Ալ. Ծատուրյանին, տպել տալ Մոսկվայում Պուշկինի երեք պատկերը՝ այդ ժողովածուի մեջ ղետեղելու համար:

3. Խնդրել Լեոյին, հետևել «Քնար Պուշկինի» ժողովածուի տպագրությանը:

4. Տպագրել Պուշկինի «Ավալակ եղբայրները» Տեր-Գևորգյանի թարգմանությամբ»²:

Ընկերության խմբագրական մասնաժողովը 14 օր հետո՝ 1898 թ. մայիսի 13-ին, իր նիստում նորից է անդրադառնում Պուշկինին նվիրված հանդեսի հարցին: Սկզբնական շրջանում որոշված էր հոբելյանը ճոխ ձևով նշելու համար անցկացնել

1 Հովհ. Հովհաննիսյան, Երկերի ժողովածու, հ. 3, 1965, էջ 229:

2 Ի դեպ, նման մեծ տպաքանակով ընկերությունը մինչ այդ ոչ մի գիրք չէր տպագրել:

3 ՀՍՍՀ, ՊԿՊԱ, ֆ. 30, գ. 17, թ. 13:

քաղաքի մեծ դահլիճներից մեկում: Սակայն հրավիրված գերասանները երգելու համար պահանջում են 100 ռ.: Խմբագրական մասնաժողովը, նկատի ունենալով, որ այս գեպքում ընկերությանից շատ ծախս կպահանջվի, որոշում է. «Ավելի պարզ կերպով այդ հանգիսը կատարել գյուղատնտեսական ընկերության դահլիճում, ուր կհրավիրվեն ձրիապես լին հասարակությանը և լին ներսիսյան և ուրիշ հայ դպրոցների աշակերտները: Հրավիրված դպրոցականներից առաջագիմ աշակերտներին նախատեսվում է վարչության կողմից ձրի բաժանել 100 օրինակ «Քնար Պուշկինի» գրքից: Բացի այդ, կազմել Պուշկինի համառոտ կենսագրությունը պատկերի հետ միասին և բաժանել անխտիր ներկա եղողներին»:

Հրատարակչական ընկերությունը նկատի ունենալով Թիֆլիսի տպարանների ծանրաբեռնվածությունը, որոշում է «Քնար Պուշկինի» ժողովածուն տպագրել Քաբվի «Աբոր» տպարանում:

Տարեգարծի նշումը, որը, ինչպես տեսել ենք, ընկերությունների լավագույն նախաձեռնություններից մեկն է, բավականաչափ կարևոր գեր է կատարում ուս գրականությունը հայության մեջ ժողովրդականացնելու, ուս գրականության դնահատման, թարգմանական արվեստի կատարելագործման բնագավառում:

Թիֆլիսի հայ հրատարակչական ընկերությունը բարձր է դնահատել նաև ուսանական հեղափոխական մտքի և գրականության նշանավոր ներկայացուցիչ Սալտիկով-Շչեդրինի ստեղծագործությունները, առանց որի, ինչպես նշել է Մ. Գորկին, անհնարին է հասկանալ Ռուսաստանի 19-րդ դարի երկրորդ կեսի պատմությունը: Շչեդրինի անունը հայ գրականության մեջ առաջին անգամ հիշատակելու և նրա ստեղծագործություններից հայերեն թարգմանելու պատիվը պատկանում է Ալ. Շիրվանզադեին և Ալ. Մատուրջանին: 1884 թ. Շիրվանզադեի թարգմանությունամբ «Գործ» ամսագրում լույս է տեսնում ուս երգիծաբանի խորիմաստ հեքիաթներից մեկը՝ «Անձնազոհ նապաստակը», իսկ Ալ. Մատուրջանի թարգմանությամբ՝ «Հարություն գիշերը»: Ինչպես տեսնում ենք, Շչեդրինի առաջին հայ թարգմանիչները անհայտ, պատահական անձնավորություններ չէին, այլ ժամանակի առաջավոր գաղափարներով ոգեշնչված անվանի գրողներ:

Հայ մտավորականները հրատարակելով Շչեդրինի ստեղծագործությունները հայերեն, նպատակ են ունեցել ուսու երգիծաբանի անողորք քննադատության, նրա մտրակող գրչի միջոցով հանդես գալ ղեմավարական խավերի, կապիտալի լծի տակ տառապող ժողովրդի շահերի պաշտպանության դիրքերում: Նրանք ոչ միայն թարգմանել են, այլև պարբերականներում հանդես են եկել նրան նվիրված հոդվածներով, հրատարակված գործերի վերաբերյալ գրախոսականներով:

Առաջին լուրջ տեսական հոդվածը Շչեդրինի մասին գրել է «Մշակի» խմբագիր Գրիգոր Արծրունին 1889 թվականին՝ «Միմեծ ուս գրողի մահը» խորագրով: Բնութագրելով Շչեդրինի ստեղծագործությունը Արծրունին գրել է. «Սատիրայի միջոցով Լրեսուն տարի շարունակ Շչեդրինը իր կծու, դիտող գրչով անընդհատաբար արթնացնում էր ուսաց հասարակաց կարծիքը նրա սովորական թմրությունից, արձագանք էր սալիս բոլոր ընթացիկ հասարակաց խնդիրներին, իր թարմացնող, սթափեցուցիչ գորեղ ձայնը բարձրացնելով ընդհանուր հետադիմական սեպիցիսի դեմ...»¹: Գ. Արծրունու կարծիքով «Շչեդրինը շատ լավ հասկացավ, որ ճորտության ոգին անհնարին էր ոչնչացնել միմիայն օրենսդրական և վարչական կարգադրություններով, որ այդ ոգին խոր արմատներ էր գցել ուսաց կյանքի և ժողովրդական ոգու մեջ՝ ներգործելով հասարակության մեծամասնության աշխարհայեցողության վրա: Եվ նա սկսում է հալածել այդ ստրկական զգացմունքը...» շնորհիվ իր «մերկացնող անխնա մտրակող սատիրայի»²: Անդրադառնալով մեծ երգիծաբանի ոճի և տիպականացման արվեստի առանձնահատկություններին, Արծրունին ներքում է այն քննադատների առնչակետը, որոնք Շչեդրինի ոճը անվանում էին «հայհոյական և անվայել»³: «Ամեն մի զգայուն գրող,— գրում է նա,— այդ թվում նաև Շչեդրինը, չէր կարող ժամանակակից ապականությունը, ախտերը և բթամտությունը չդրոշմել իր գրվածքներում իրենց պատշաճ անվանակոչություններով»: Շչեդրինի նման հանճարեղ գրողի կորուստը Գ. Արծրունին համարում էր «մի անուղղելի հարված ուս պրականության համար»⁴:

¹ «Մշակ», 1889, № 49:

² Նույն տեղը:

³ Նույն տեղը:

Սալտիկով-Շչեգրինի ստեղծագործությունների պրոպագանդաման, նրա երկերը հայերեն թարգմանելու համար է պայքարել նաև ուսւ գրականության գիտակ Երվանդ Ղաղարյանցը: Վերջինս 1891 թվականին «Մուրճում» հանդես գալով «Մոռացված խոսքեր» հոդվածով, գրում է, որ Լ. Տոլստոյն ու Սալտիկով-Շչեգրինը հիշեցնում են մարդկության կողմից մոռացված այնպիսի խոսքեր, ինչպիսիք են խիղճ, մարդասիրություն: «Նրանց վիշտը մոռացված խոսքերի համար անձնական վիշտ չէ, նրանք ամփոփում են միլիոնավոր մարդկանց պիտույքները և հոգսերը» և «նրանց բողոքը հավասար է միլիոնավոր ամբոխի բողոքին, նրանց ուրախությունը, վիշտը, ցանկությունները և հույսերը արտահայտում են նույն միլիոնավոր բաղմունքի պահանջները, կարիքը, վիշտը»¹:

Տոլստոյի և Շչեգրինի ստեղծագործություններում Երվանդ Ղաղարյանցը միանգամայն իրավացիորեն տեսնում է ժողովրդի պիտակցության բնորոշումն և նրան պայքարի նախապատրաստելու մեծ ուժ: Սալտիկով-Շչեգրինի ստեղծագործությունները աշխատավորների, հատկապես բանվորների վրա թողել են հրեակալական ազդեցություն: Դրա պերճախոս առաջույցը հանդիսանում է Շչեգրինի ալյուրն Թիֆլիսի բանվորների դրած նամակը, ուր ասված է. «Նրա վերջին սրտաբուխ հեքիաթների մեջ, որ մենք սիրում ու մյուս պատմվածքներից ալիքի լավ ենք հասկանում, տեսնում ենք մեզ շրջապատող կյանքի մոլթ և մինչև հիմա անհասկանալի կողմեր: Այդ հեքիաթներն այնպես են ազդում ընթերցողի հոգու վրա, որ նույնիսկ արցունք է առաջանում նրանց աչքերում, անպաշտպան մարդու վիշտն ու վիրավորանքները տեսնելով... Մենք այլևս չենք լսի նրա լավ, համարձակ խոսքերը, բայց նրա ռդին միշտ կապրի մեր մեջ...»²

Սալտիկով-Շչեգրինի ստեղծագործությունների խոր ազդեցության մասին «Տարազ» շաբաթաթերթը 1899 թվականին գրել է. «Դառժպիտ արտասուքով ցողված, կսկիծով շաղախված քրքիջ են հարուցանում մինչև այսօր էլ նրա հումորով լի գրվածքները»: Հայ գրական-հասարակական միտքը հատուկ ուշադրություն է դարձրել Շչեգրինի հիանալի հեքիաթների վրա, որոնք,

¹ «Մուրճ», 1891, № 2, էջ 107—108:

² Այդ մասին ալիքի մանրամասն տես մեր հոդվածը՝ «Սալտիկով-Շչեգրինը և հայ գրական-հասարակական միտքը» («Գիտաինֆորմացիոն բյուլետեն», 1961, № 19, էջ 32—33):

խնչակաւ և նրա բոլոր նշանակալից երկերը, աչքի են ընկնում գաղափարական նպատակասլացութեամբ և բովանդակութեան խորութեամբ:

Ռուս հանճարեղ երգիծաբանի հեքիաթների թարգմանութեան և առանձին գրքով հրատարակելու հարցով մեղանում առաջին անգամ լրջորեն զբաղվել է Թիֆլիսի հրատարակչականը: Վերջինիս խմբագրական մասնաժողովը, որի կազմում 1890 թվականին գտնվում էին ժամանակի գրական անվանի գործիչներ Մ. Աբեղյանը, Լեոն, Ստ. Մալխասյանը, Փ. Վարդանյանը և ուրիշներ, որոշում է հայտարարութեամբ հանդես գալ մամուլում՝ Շչեղրինի երկերի թարգմանութեան և հրատարակութեան վերաբերյալ: 1891 թ. Կարսից Մինաս Ղազարյանը ընկերութեանն է ներկայացնում Շչեղրինի «Մոռացկոտ ոչխարը», «Զատիկի գիշերը», «Ազատամիտը» հեքիաթների թարգմանութեանը, որոնց մասին ընկերութեան խմբագրական մասնաժողովում զեկուցում է Լեոն Սարգսյանը. «Շչեղրինը հայտնի է հասարակութեանն իր բովանդակութեամբ խոր մտքեր և գաղափարներ արտահայտելու շնորհիվ: Ռուս գրողը ելնելով ժամանակի հասարակական հայտնի հանգամանքներից, այդ մտքերը արտահայտել է ավելի աշխատանքներ: Նրա խոսքերն այնքան բարոյական են և միեւնոյն ժամանակ բանաստեղծական, որ ընթերցողի վրա թողնում են ամենալավ քարոզի տպավորութիւն»¹:

Այնուհետև գրախոսը բնութագրում է ներկայացված հեքիաթները, «Մոռացված ոչխար» գրվածքում, — գրում է նա, — այլաբանորեն ներկայացված է ամբոխը, ժողովուրդը, որը երկար մնալով տգիտութեան և ստրկութեան մեջ, արգեն սովորել է իր վրա նայել իբրև ստեղծված ուրիշների հաճուքները գոհացնելու համար և այնքան կորցրած է ինքնությունն ընկերութեանը և ուրիշ ավելի լավ կյանքի մասին գաղափարը, որ եթե մեկը կարողանում է զանազանվել նրանցից իր խելքով և ձգտումներով, նրան ճաղբում են, խելագարի տեղ ընդունում ու փախչում նրանից, իսկ «Ազատամիտ» գրվածքում Շչեղրինը դուրս է բերում այնպիսի գործիչների, որոնք մինչև կյանք մտնելը ռզնորված են ամենաբարձր իդեալներով, բայց հետո կյանքի պահանջների և հասարակութեան կարծիքների ճնշման տակ կամաց-կամաց այնքան

¹ ՀՍՍՀ, ՊԿՊԱ, ֆ. 30, գ. 8, թ. 92:

առհամանափակեամ են իրենց ձգտումները, որ վերջապես հաշտ-
յում են քսովյան և կեղտի հետ»։ Միանգամայն ճիշտ հասկա-
նալով ու բնութագրելով Շչեգրինի հեքիաթների իմաստը, Լ. Սար-
գսյանը վերջում գրում է. «Այս գրվածքները կապված են մի
ընդհանուր տենդենցիայով, որը շատ հարազատ է մեզ համար։
Երեք գրվածքները կարելի է ամփոփել մի հաստորում և տալա-
ցրել»¹։

Խմբագրական մասնաժողովը որոշում է լեզվական թերու-
թյունները վերացնելու նպատակով թարգմանությունը հանձնել
Մանուկ Աբեղյանին խմբագրելու։ Լույս տեսած գրքույկի մասին
«Մուրճում» գրախոսականով հանդես է գալիս Ա. Արասխանյանը։
Նա հիմնականում ընդգծում է ուսու հրգիծաբանի երկերի մաս-
նայականացման անհրաժեշտությունը, տալիս է տալագրված հե-
քիաթների բովանդակության հակիրճ շարադրանքը, ողջունում
ընկերության նախաձեռնությունը և իր հերթին 1892 թ. «Մուր-
ճում» արտատպում է ընկերության հրատարակած «Իդեալիստ
ծածանը», «Իմաստուն ծանծաղուկը» և «Խիղճը կորավ» երկերը
(Թարգմանիչ Մ. Ղազարյան)։

Անցյալ դարի 80—90-ական թվականներին օրակարգի հարց
էր նաև Գոգոլի երկերի հայերեն թարգմանությունը։ 1891 թ.
Շուշում Մ. Հակոբյանցի թարգմանությամբ առաջին անգամ հայ
իրականության մեջ լույս է տեսնում Գոգոլի «Տարաս Բուլբան»։
Չնայած թարգմանիչը աշխատել է հաղթահարել հեղինակի լեզ-
վառճական դժվարությունները, բայց չի հաջողվել։ Անգրագառ-
նալով այդ թարգմանությունը «Մուրճը» գրում է. «Գոգոլը «Տա-
րաս Բուլբա»-ի մեջ նկարագրել է մի ամբողջ ժողովրդի, մի ամ-
բողջ համայնքի կյանքը, իսկ փոխադրողը դուրս է ձգել այն ամե-
նը, ինչ անմիջական հարաբերություն չունի Տարասի և որդեկե-
րանց հետ»։ Գրախոսը գտնում է, որ «այս փոխադրությունը եր-
բեք չի կարող փոխարինել իսկական «Տարաս Բուլբա»-ին, ցան-
կալի է այս վերջինի լիակատար թարգմանությունը»։

Այդ պործը ձևնարկում է Թիֆլիսի հրատարակչականը։ Խմբ-
ագրական մասնաժողովը որոշում է Գոգոլի մահվան 40-ամյա-
կի կապակցությամբ հրատարակել «Տարաս Բուլբան» Ղ. Աղա-
յանի թարգմանությամբ։ Վերջինս ընկերության առաջարկությա-

¹ ՀՍՍՀ, ՊԿՊԱ, ֆ. 30, գ. 5, թ. 53։

² «Մուրճ», 1891, № 10, էջ 1226—1227։

ներ պատասխանել է. «Ես պատրաստ եմ թարգմանել, եթե միայն ասպարեք ուղղագրությամբ»¹:

Խմբագրական մասնաժողովը չի համաձայնվում հետևյալ պատճառաբանությամբ. 1) «Ե» ուղղագրությունը նորամուծություն է և շատերի կարծիքով նույնիսկ սխալ, 2) «Տարաս Բուլբան» այնպիսի գրվածք է, որ կունենա ընթերցողների ընդարձակ շրջան, որի մեջ կմտնեն և մեծ թվով աշակերտներ, 3) Այդ ուղղագրությունը արգելված է դպրոցներում, և գիրքը այդ պատճառով ավելի քիչ թվով կտարածվի, 4) Իսկ տալ Ղ. Աղայանի ուղղագրությունը, մենք նպաստած կլինենք «Ե»-ի ընդունելության, 5) Գրքի թարգմանությունը առաջարկված է խմբագրական մասնաժողովի կողմից, ուրեմն նրա ընդունած ուղղագրությամբ պետք է հրատարակվի»²:

Խմբագրական մասնաժողովի անդամ Բարխուդարյանն այլ կարծիք է արտահայտում: Նա գտնում է, որ Գոգոլի «Տարաս Բուլբան» «Ե»-ով թարգմանելը մի վտանգ չի ներկայացնում, որ գրա համար մերժենք մի թարգմանություն, որը, մենք կսրծում ենք, գեղեցիկ կերպով պետք է կատարվեր Ղ. Աղայանի ձեռքով, որի համար էլ հանձնվել է նրան»³: «Մշակ» թերթն իր հերթին ցավում է, որ մեր գրականությունը զրկվում է «Տարաս Բուլբա»-ի պես լավ գրքից՝ Աղայանի լավ թարգմանությունից»⁴:

Բանավեճերն ու բանակացություններն ապարդյուն են անցնում և ընկերության մասնաժողովը թարգմանությունը հանձնարարում է Մանուկ Աբեղյանին, որը սակայն համաձայնվում է թարգմանել այդ հայրենասիրական երկի ոչ թե կրկրորդ, այլ առաջին տարբերակը: Ինչո՞ւ: «Որովհետև վերջին վարիանտում Գոգոլը փառաբանում է ռուս թագավորին,— բացատրում է Մ. Աբեղյանը:— Ուստի և կարիք չկա, որ մեր դպրոցները փակող, մեր կուլտուրան ճնշող ռուս թագավորների գովքը տանք մեր ժողովրդին: Իսկ առաջին վարիանտում այդ փառաբանություններ չկան»⁵:

Պատճառաբանությունը համոզեցուցիչ էր: Խմբագրական մասնաժողովի անդամները միաձայն համաձայնվում են Ա. Աբեղ-

1 ՀՍՍՀ, ՊԿՊԱ, ֆ. 30, գ. 30, Բ. 69:

2 Նույն տեղը:

3 Նույն տեղը:

4 «Մշակ», 1891, № 146:

5 Ստ. Զորյան, Երկերի ժողովածու, 1985, հ. 11, էջ 207—208:

յանի հետ և ընկերությունը 1892 թ. լույս է ընծայում Գողթի «Տարաւ Բուբան» Մ. Աբեղյանի թարգմանությամբ: Շիրտ է նկատել Ստ. Զորյանը, որ այդ թարգմանությունը «այսօր էլ շատ ուսանելի կողմեր ունի», քանի որ թարգմանիչը կարողացել է այդ «պայծառ ու շլացուցիչ խոշոր պոեզիայով» (Բեկինսկի) գրված երկը թարգմանել ոչ թե բառացի, այլ նրա սիրտը, ուժն ու հոգին, պահպանելով նուրբ հումորը և գեղարվեստական առանձնահատկությունները:

Մ. Աբեղյանն այդ թարգմանությամբ ապացուցեց, որ կարելի է Գողթի երկերը ևս թարգմանել՝ պահպանելով նրա լեզվի ինքնատիւությունը: Այդ է պատճառը, որ երբ ընկերությանը ներկայացնում էին Գողթից կատարած որևէ թարգմանություն, խմբագրական մասնաժողովը գրախոսելու համար այն հանձնում էր Մ. Աբեղյանին: Այսպես, 1891 թ. ընկերության հանձնարարությամբ նա կարդում է Ա. Թադիանոսյանի թարգմանությամբ Գողթի «Շիրտ» պատմվածքը և գտնում, որ «թարգմանությունը ընդհանրապես լավ է, բայց տեղ-տեղ ուղղելու կարիք է զգացվում: Կանոնավոր դործածված չէ բայերի ժամանակը, նախադասությունների անկանոն դասավորությունից առաջ է գալիս մթություն»¹: Մասնաժողովը խորհուրդ է տալիս թարգմանչին շտկել թերությունները և հանձնել տպագրության: Թարգմանիչը ընդունում է դիտողությունները և շտկում, սակայն Կովկասի գրաքննչական կոմիտեն արգելում է պատմվածքի տպագրությունը:

Թիֆլիսի հրատարակչական ընկերությունը, ելնելով այն բանից, որ ազգային գրականության մեջ զգացվում է երգիծական գործերի պակաս, 1892 թ. որոշում է Հակոբ Պարոնյանի ստեղծագործությունների հետ ղուգընթաց տպագրել Գողթի «Ռեկվոր» և Գրիբոյեդովի «Խելքից պատուհաս» կոմեդիաները: Այդ կապակցությամբ խմբագրական մասնաժողովը ընկերության վարչությանը գրում է. «1892 թ. հունիսի 11-ի նիստում որոշվեց ձևոք բերել Գողթի «Ռեկվոր» և Գրիբոյեդովի «Խելքից պատուհաս» կոմեդիաների հայերեն թարգմանությունը: Մասնաժողովի ռենցած տեղեկությունների հիման վրա, այդ կոմեդիաների

¹ ՀՄՍՀ, ՊԿՊԱ, ֆ. 30, գ. 30, թ. 69:

² ՏԵՍ՝ Վրաց. ՄՍՀ ՊԿՊԱ, ֆ. 480, գ. 1893, թ. 68.

թարգմանությունը գտնվում է իշխան Ն. Ամատունու մոտ, ուստի խնդրում ենք տպագրության համար ձեռք բերել այդ ձեռագրերը»¹:

Ընկերության վարչությունը վերցնում է այդ ձեռագրերը, սակայն վատ թարգմանության պատճառով չեն տպագրվում²: Նույն պատճառով 1897 թ. խմբագրական մասնաժողովը մերժում է նաև Գոգոլի «Կյանքը» և «Քիթը» սլաոմվածքների հայերեն հրատարակությունը³:

Գոգոլի ստեղծագործությունների հրատարակման հարցը Կովկասի հրատարակչական ընկերություններում բարձրացնում է Վ. Տերյանը: Գիտակցելով թարգմանական գրականության և հասկապես ուսւ գասական գրականությունից կատարվող թարգմանության դերն ու նշանակությունը ազգային մշակույթի զարգացման գործում, նա հուշում է հրատարակչական ընկերությանը, որ «հայ ընթերցողը պետք է ունենար իր գրադարանում հայերեն լեզվով բոլոր ուսւ գրողների գրվածքները՝ և՛ Գոգոլի, և՛ Պուշկինի, և՛ Տոլստոյի, և՛ Զեխովի— գոնե նրանց «լավագույն գրվածքների ժողովածուները...»⁴: Տերյանը ընդգծում է հասկապես Գոգոլի «Մեռած հոգիներ» վեպի թարգմանության անհրաժեշտությունը:

Ուսւ գրականության պրոպագանդան գործում նշանակալից դեր է կատարել նաև բանաստեղծ, դրամատուրգ և արձակագիր Լեոն Մանվելյանը: Տարիներ շարունակ լինելով Թիֆլիսի հրատարակչական ընկերության խմբագրական մասնաժողովի անդամ, նա խմբագրել ու գրախոսել է ներկայացրած թարգմանությունները:

Ինչպես նշեցինք, 1892 թ. Թիֆլիսի հրատարակչական ընկերությանը չհաջողվեց հրատարակել Գրիբոյեդովի «Խելքից պատուհասը»: Այդ բացը լրացրեց Լ. Մանվելյանը՝ 1913 թ. Կովկասի հրատարակչական ընկերության հրատարակությամբ լույս ընծայելով այդ կոմեդիան: «Այս գրվածքը այնքան մեծ է,— գրում է նա,— որ կարողացա հեղինակին դնել Պուշկինի, Լերմոնտովի և Գոգոլի շարքերում: Նա այնքան գեղարվեստական է, նրա ներկայացրած հասարակությունն ու տիպերն այնքան ճիշտ

¹ ՀՍՍՀ ՊԿՊԱ. ֆ. 30, գ. 8, ք. 97:

² Նույն տեղը, գ. 9, ք. 13:

³ Նույն տեղը:

⁴ Վ. Տերյան, Երկերի ժողովածու, հ. 2, 1961, էջ 221:

են և կենդանի, նրա խոսքն այնքան սուր է և հակիրճ, որ գրվածքի գրեթե կես մասը այժմ ուսուսաց լեզվում ժողովրդականությանը գտած ասացվածքներ և առածներ են դարձել»¹:

Հայտնի է, որ Չեխովն իր բարձր արվեստով և նորարարությամբ զարգացրեց ուս գրականության լավագույն ավանդները՝ ժողովրդայնությունը, հումանիզմն ու ազգասիրությունը: Նա պատկանում է ուս այն գրողների թվին, որոնց ստեղծագործությունները համեմատաբար ավելի շատ են տպագրվել հայ պարբերականներում և առանձին գրքերով: Եվ սակայն Թիֆլիսի հրատարակչական ընկերությունն իր 20-ամյա գործունեության ընթացքում Չեխովից որևէ գործ չկարողացավ հրատարակել: Չնայած 1896 թ. ընկերությունը Միքայիլ Տեր-Մարտիրոսյանցի թարգմանությամբ ստանում է Չեխովի «Կին» պատմելվածքը, բայց ծավալի փոքրության պատճառով հրաժարվում է տպագրել: Թարգմանիչն այն տպագրում է «Մուրճ» ամսագրում²:

1910 թ. Հայկ Տեր-Հակոբյանը Կովկասի հրատարակչական ընկերությանն է ներկայացնում Չեխովի «Վանյա քեռին», իսկ Ռ. Խան-Աղաաբ «Քամելիոն», «Հարկ հղած միջոցներ», «Պատանափոր մարդը», «Շնիկով տիկինը», «Շվեդական լուցիկ» պատմելվածքների ժողովածուն: Ժողովածուն 1913 թ. տպագրվում է, իսկ «Վանյա քեռին» փերագրվում է թարգմանչին լեզվական թերությունները շտկելու համար: «Վանյա քեռին» 1913 թ. թարգմանում է նաև Վ. Փանոսյանը, սակայն այս թարգմանությունը ևս չի արժանանում ընկերության հավանությունը:

Բացի թվարկած գործերից, Հայկ Տեր-Հակոբյանը ներկայացնում է «Նրկյուզ» պատմելվածքը: Սկզբում ընկերության խմբագրական մասնաժողովը որոշում է առայժմ չքննել այդ թարգմանությունը, քանի որ Չեխովից շատ թարգմանություններ են ստացվել: Երկու տարի հետո՝ 1913 թ. ընկերությունը հայտնում է թարգմանչին, որ «պատմելվածքը հավանություն է գտել խմբագրական մասնաժողովի կողմից, սակայն նյութը փոքր լինելու համար ցանկալի է, որ թարգմանիչը ուղադրի այլ նյութեր Չեխովից և այդ պատմելվածքի հետ միասին տպագրել առանձին գրքով»:

¹ ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 30, գ. 23, թ. 14:

² «Մուրճ», 1897, № 7—8, 9:

19-րդ դարի վերջին հայ իրականության մեջ հետաքրքրություններ են ընդունվում վսեմուղ Գարշինի ստեղծագործությունները, Բավական է ասել, որ Գարշինի միայն «Գոռուլ արմավենին» հեքիաթը, ուր այլաբանորեն տրված է ազատության ձգտողի կերպարը, հայերեն տպագրվել է հինգ անգամ, որից չորսը՝ նախասովետական շրջանում: Ըստ որում առանձին դրքով առաջին հրատարակության պատիվը պատկանում է Թիֆլիսի հայերեն գրքերի հրատարակչական ընկերությանը (1895 թ.):

Ֆեոդա 1891 թվականին ընկերությունը նախատեսում է հրատարակել Վ. Գարշինի «Շարքալին Իվանի հիշողություններից» գրվածքը: Այդ մասին հրատարակչական ընկերության խմբագրական մասնաժողովի նիստում գեկուցում է Մանուկ Աբեղյանը: «Գրվածքի նյութը, — ասում է նա, — առնված է ռուս-թուրքական վերջին պատերազմից, որտեղ նկարագրված է ռուսական զորքի արշավանքը Բուլղարիա՝ Թուրքիայի դեմ կռվելու համար՝ սուսնց իմանալու, թե ինչի համար են գնում և կոչում, որովհետև արշավանքին մասնակցող զրեթե բոլոր զինվորները բուլղար ազգի անունն անգամ չեն լսել, այլ միայն գիտեն, որ գնում են Թուրքիային ջարդելու: Գեղեցիկ կերպով նկարագրված է արշավանքի ժամանակ զինվորների կրած տառապանքը՝ արեգակի և ցրտի տակ, նրանց բալբը նյութական և բարոյական նեղությունների, զինվորական խիստ կարգապահությունը: Արժե տպագրել»¹:

Այլ տեսակետ է արտահայտում Մ. Բարխուդարյանը: Նրա համոզմամբ «Շարքալին Իվանի հիշողություններից» ստեղծագործությունում «նկարագրված պատերազմը կաբոդ է թուլացուցիչ ազդեցություն ունենալ... հասարակության վրա, ուստի նպատակահարմար չէ ձեռնարկել այդ գրքի թարգմանությունը»: Բարխուդարյանը համամիտ չէ Գարշինի այն մտքի հետ, թե պատերազմները չարիք են մարդկության համար, քանի որ «այդ միտքը ճիշտ է ոչ անպայման. պատերազմը չարիք է կամ բարիք, նայած թե ինչո՞ւ համար է նա մղվում»: Նրա կարծիքով ռուսների վարած պատերազմը Թուրքիայի դեմ, բարիք է բալկանյան ժողովուրդների համար, սակայն Վ. Գարշինը չի ընդունում այդ հանգամանքը, չի տալիս սովթանական Թուրքիայի՝

Հայ ժողովրդի դարավոր թշնամու պարտությունը, որով նա կարող էր մեծ ոգևորություն առաջացնել Թուրքիայի դաժան ղես-սյուսիզմի ճիրաններում պայքարող ժողովուրդների, այդ թվում՝ հայ ժողովրդի մեջ: Այսպիսով, ընկերության խմբագրական մասնաժողովի անդամների մեծամասնության որոշմամբ հրատարակական պլանից հանվում է Գարշինի «Շաքսային Իվանի հիշողություններից» վիպակը և դրա փոխարեն 1895 թ. հրատարակվում է «Ճանապարհորդ դորոն» և «Գուռը արմավենին» պատմվածքները, որոնց մեջ հեղինակն իրեն հատուկ նուրբ հումորով դատապարտում է դարի սոցիալական անարդարությունները:

3.

Թիֆլիսի և Կովկասի հրատարակական ընկերությունների մի էական բաժինն է կազմել համաշխարհային գրականության դասականների՝ Բայրոնի, Գյոթեի, Շեքսպիրի, Հայնեի, Հյուգոյի, Դոդեի, Զոլայի, Միցկևիչի, Սենկևիչի, Օմեշկոյի և այլոց երկերի թարգմանությունն ու հրատարակությունը:

Հայ պարբերական մամուլը և թարգմանիչները համաշխարհային գրականության դեմքերից ոչ մեկի կյանքին և ստեղծագործությանը թերևս այնքան շատ ու այնքան հաճախ չեն անդրադարձել, որքան Վիկտոր Հյուգոյին¹: Թիֆլիսի և Կովկասի ընկերությունները այս հարցում արդեն քիչ բան ունեին անելու և բնականաբար առավելապես ուշադրություն էին դարձնում Ֆրանսիայի նորագույն շրջանի գրական դեմքերի վրա՝ Ալֆոնս Դոդե, Էմիլ Զոլա, Մոպասան, Անատոլ Ֆրանս և ուրիշներ: Հայտնի է, որ անցյալ դարի 80-ական թվականներին Ալ. Դոդեն ճանաչված գրող էր Հայաստանում: 1881 թ. առանձին գրքով հայերեն լեզվով հրատարակվում է նրա «Փոքրիկը» («Թղուկը») վեպը: 1887 թվին Թիֆլիսում լույս է տեսնում Դոդեի «Հայր և որդին» պատմվածքը, իսկ 1890—1891 թվականներին՝ «Փոքրիկ լրտեսը», «Բեռլինի պաշարումը» և «Խոլերոս» գործերը, որոնք լայն սարածում են գտնում հայ ընթերցողների շրջանում:

1888 թ. Մկրտիչ Բարխուդարյանը նամակով առաջարկում է

¹ Տե՛ս, Շ. Գասպարյան, Վիկտոր Հյուգոն հայ գրականության մեջ, Երևան, 1963 թ.:

Ալ. Ծատուրյանին թարգմանել Դոդեի «Տարասկոնցի Տարտարենը» վեպը: Բանաստեղծը այդ կապակցությամբ գրում է. «Ալֆոնս Դոդեի նման մի նշանավոր և ժողովրդականացած հեղինակի աշխատությունը հայերեն թարգմանել — դա շատ դեղեցիկ միտք է: Բայց թե որքա՛ն օգուտ և որքա՛ն բովանդակություն կստանա հայ ժողովուրդը նրա «Տարասկոնցի Տարտարենի անսովոր արկածները» աշխատությունից — դա փոքր-ինչ կասկածելի է: Ես կարդացել եմ այդ աշխատությունը և ասում եմ կասկածելի է, Մկրտի՛չ, որովհետև այն աղբ, այն համն ու հոտը, որ պարունակում է յուր մեջ այդ գիրքը, երբեք չեն կարող այնչափ քաղցրաճաշակ ու հրապուրիչ լինել հայ մարդու համար, որչափ որ նրանք են տարասկոնցիների համար... Ես մի քննադատական հոգոված կարդացի Ա. Դոդեի մասին, որտեղ, ի միջի այլոց, ասված է, որ «Տարասկոնցի Տարտարենը» լույս տեսնելուց հետո, մի խումբ տարասկոնցիներ սրտամտված եկել են Փարիզ, որպեսզի Դոդեին մի լավ դեքսեն:

Ահա թե որպիսի ազդեցություն է ունեցել այդ կենդանի և մեծ ճարտարությամբ ու սրամտությամբ գրած աշխատությունը տարասկոնցիների վերա — և այդ հասկանալի է... Վերջապես, սուսխ այն է, Մկրտի՛չ, Դոդեի այդ աշխատությունը հաղիվ թե կարողանա հայ ժողովրդի մտավոր կյանքին մի ղգալի օգուտ տա, որովհետև այդ գրվածքի ինտերեսն ավելի մասնավոր է, քան ընդհանուր, համամարդկային: Այո, իհարկե, իմ անձնական կարծիքս է, որ իրավունք ունես, երբ որ էլ կամենաս, ազատ ու համարձակ ականջիդ ետեր գցել»¹:

Հայ բանաստեղծի կարծիքը, թե «Տարասկոնցի Տարտարենը» ավելի մասնավոր է, քան ընդհանուր, համամարդկային ճիշտ չէ: Դոդեի արվեստի կատարելության չափանիշներից մեկն այն է, որ նա անձնական մտորումները, գեղարվեստական զգացումը կարողացել է սերտ շաղկապել հասարակականի հետ, և առաջինը նրա մոտ դառնում է երկրորդի կոնկրետ անհատական արտահայտություն: Դրա շնորհիվ նրա արվեստը ճեղքում է նեղ անձնական ու ազգային շղթան և դառնում համամարդկային:

Նույն կարծիքն են ունեցել Թիֆլիսի հրատարակչականի խմբագրական մասնաժողովի անդամները: Նրանց ըմբռնմամբ

¹ Գրական ժողովություն, հ. 1, 1961, էջ 16—17:

Տարտարենին նվիրված վեպում հեղինակը կարողացել է գեղարվեստականորեն բացահայտել ֆրանսիական բուրժուազիայի աշխանդակ կողմերը, սուր կերպով մերկացնել բուրժուաշահ դեմոկրատիան, պառլամենտն ու մամուլը: 1891 թ. Տ. Ջաքարյանի թարգմանությամբ են լույս ընծայում Դոդեի այդ առեղծապործությունը:

80—90-ական թվականներին Անգրկովկասում բուռն թափով տարդացող բուրժուական հարաբերություններն իրենց հետ բերում են նոր բարքեր ու ըմբռնումներ: Կանխիկ դրամը, մերկ շահը պահում են մարդկային փոխհարաբերությունների հիմքն ու չափանիշը: Անհատի դերը, անհատի և հասարակության փոխհարաբերության հարցը դառնում են գրականության հուզող լիբերալիզմի մեկը: Այդ թեմային են նվիրված նաև Ալ. Դոդեի մի շարք ճշմարտապատում պատմվածքները, ուր գրական հերոսները հակադրվում են գորշ իրականությանը: Ահա թե ինչու Վրթ. Փափազյանը, չորս տարի սովորելով ժնեում և մոտիկից ծանոթանալով ֆրանսիական գրականությանը, վերադառնալով հայրենիք, ցանկություն է հայտնում հաչերեն լեզվով հրատարակել Ալ. Դոդեի պատմվածքները: Պարբերականներից տեղեկանալով, որ նման մտադրություն ունի Թիֆլիսի հրատարակչականը, 1896 թ. մայիսի 12-ին, նա Բաքվից հետևյալն է գրում ընկերությանը. «Մտածելով, որ ցանկալի կլիներ Ալ. Դոդեի մանր, գողտրիկ գրվածքները հրատարակել հաչերեն լեզվով, ևս ձեռնարկել եմ թարգմանություն կատարել ուղղակի ֆրանսերենից»¹:

Հրատարակչական ընկերությունը ընդունում է Վրթ. Փափազյանի առաջարկությունը և իր պատասխան նամակում խնդրում է հնարավորին չափ շուտ ուղարկել թարգմանությունը: 1896 թ. նոյեմբերի 15-ին Վրթ. Փափազյանը Ալ. Դոդեի «Ընտիր պատմվածքները», թվով քսան գործ, հանձնում է հրատարակչական ընկերությանը: Պետք է ասել, որ «Ընտիր պատմվածքներ» վերնագիր ունեցող ժողովածու Ալ. Դոդեն հրեկիցն չի հրատարակել: Հայ հմուտ թարգմանիչը, ընթերցելով Ալ. Դոդեի պատմվածքների երկու մեծ ժողովածուները, որոնցից մեկը կոչվում է «Նրկուշաբթի օրվա պատմվածքներ», իսկ մյուսը՝ «Նամականիք իմ ջրաղացից», ընտրում է այդ պործներից 19 լավագույն պատմվածքներ, իսկ քսաներորդ պատմվածքը՝ «Տանիքների տոներ»,

¹ ՀՍՍՀ, ՊԿՊԱ, ֆ. 30, գ. 11, ք. 259—260:

Վ. Փափաղյանը վերցնում է Ալ. Դոդեի «Ձմեռային պատմություններ» ժողովածուից և ամբողջը հրատարակում «Ընտիր պատմություններ» խորագրով:

Ուշագրավ է այն նամակը, որով Վրթ. Փափաղյանը դիմում է Ալ. Դոդեին պատմվածքները հայերեն հրատարակելու թույլտրվություն համար:

«Սիրելի ուսուցիչ, ձեռնարկել եմ հայերեն լեզվով թարգմանելու Ձեր պատմվածքներից մի հատընտիր ժողովածու, և խոնարհում եմ բարեհաճել Ձեր արտոնությունը հաղորդել ինձ:

Իմ հայ նվաստ պատմիչի նպատակն է դրանով ծանոթացնել հայրենակիցներին, որոնք սիրում են զրույցներ և ունեն շատ շատերն էլ:

Դուք շատ հիացողներ ունիք մեր այն գրագետ երիտասարդության մեջ, որ գիտե և Ձեր լեզուն: Ես ուզում եմ Ձեր գործի հետ ծանոթացնել ժողովրդին — նրանց, որոնք գիտեն խորապես թափանցել զրույցների ոգու մեջ: Մայր մայրերը, աղջիկները, աշխատավորները և մեր ժողովրդական երգիչները՝ այսինքն նրանք, որոնք սիրում, նրանք, որոնք տանջվում են, նրանք, որոնք երգում, նրանք Ձեզ երախտագետ են լինելու Ձեր գողտրիկ զրույցների և Ձեր այն մեծ բարությանը, որով լցրել եք այդ զրույցները:

Մեր ժողովուրդը, որ իր բոլոր վշտերի ժամանակ միշտ սիրել է բանաստեղծությունները և նրանով է պահպանվել, իր հայրենական մի քանի զրույցներով և ավանդություններով, այս րոպեին ենթարկված լինելով ահեղի վշտերի, զուցե մի ժամ միտի թարգմտյուն գտնի Ձեր գործերով, որոնք լի են եղբայրական քրնջշուքյամբ դեպի թշվառությունը:

Մեզ մնում է այժմ դիմել միայն սրտի և մտքի տեր մարդկանց՝ բանաստեղծներին. նրանց միջոցով է, որ մենք ուզել ենք սիրել Արդարությունը և Ազատությունը և մենք ապահով ենք, որ ընդհանուր անտարբերության այս ժամանակամիջոցում, նրանք գոնե մեր կողմն են:

Սպասելով, որ բարեհաճեիք պատվել ինձ Ձեր պատասխանով, խնդրում եմ, սիրելի ուսուցիչ, ընդունել իմ հիացման արտահայտությունը Ձեր պաշտելի և մեծահոգի գործունեության առթիվ:

Վ. Փափաղյան»¹:

¹ ՀՍՍՀ, ՊԿՊՍ, ֆ. 30, դ. 12, ք. 593:

Ալ. Դոդեկն ստանալով հայ գրողի նամակը, իր մահից երկու ամիս առաջ, հետեւյալ երկտողն է գրում. «Պարոն, հոժարութեամբ արտոնում եմ Ձեզ, լույս ընծայելու իմ պատմվածքների հայերեն լեզվով թարգմանութունը:

Այս անվարձ իրավունքը, որ տալիս եմ Ձեզ, մի շատ թույլ ապացույց է դեպի ձեր դժբախտ ազգն ունեցած համակրութեանս»¹:

Վրթ. Փափաղյանը Դոդեկի այդ պատասխան-նամակն իր նամակի հետ միասին ուղարկում է հրատարակչական ընկերության խմբագրական մասնաժողովին և խնդրում, որ երկուսն էլ տեղադրեն հրատարակվող գրքի սկզբում: «Մեծ ուսուցիչ-պատմիչի սիրուն երկտողը,— գրում է Վրթ. Փափաղյանը խմբագրական մասնաժողովին ուղղած նամակում,— որ բխում է սրտից, մեծ զարդ կկազմի թարգմանութեան ճակատի վրա: Բայց հարկ է իմ նամակն էլ ամբողջապես դնել, անշուշտ, վնաս չունի, և թե դրաբնիչը մի քանի բառ իսկ ջնջի նրանից»:

Գիրքը լույս է տեսնում 1897 թվին: Դեռևս Ալ. Դոդեկի պատմվածքները մամուլի տակ էին, երբ Վրթ. Փափաղյանը հպատակագրվում է նույն ընկերության միջոցով հրատարակել նաև էմիլ Զոլայի «Հոռմ» վեպը: Այդ կապակցութեամբ նա հրատարակչական ընկերությանն ուղղված իր նամակներից մեկում գրում է. «առաջարկում եմ թարգմանել մի ուրիշ ավելի կարեւոր աշխատութուն, այն է էմիլ Զոլայի ամենանոր «Հոռմ» վեպը:

Այդ ստվար գիրքը ես կարող եմ սկսել միայն այն ժամանակ, երբ վարչութունը վճռի նրան հրատարակել, յուստի խընդրում եմ, որքան կարելի է շուտով հայտնել ինձ Ձեր պատասխանը, որովհետև «Հոռմը» թարգմանելու համար հարկավոր է լինելու առնվազն երկու ամիս, եթե ոչ ավելի:

Գործը ֆրանսերեն բնագրից եմ թարգմանելու և խոստովանում եմ առանձին խնամք տանել լեզվի վրա: Վեպը Charpentier հայտնի հրատարակութեամբ 751 երեսից բաղկացած բնագրում, անշուշտ նույնքան և գուցե քիչ ավելի (800 երես) կլինի նաև թարգմանութունը: Սպասելով շուտափույթ պատասխանին՝ մնում եմ հարգանքով Վ. Փափաղյան»³:

¹ ՀՍՍՀ, ՊԿՊԱ, ֆ. 30, գ. 12, թ. 593:

² Նույն տեղը:

³ Նույն տեղը, գ. 11, թ. 445—446:

Իսկ ինչո՞ւ «Հռոմը»: Այդ հարցին մի այլ առիթով պատասխանել է ինքը՝ Վ. Փափաղյանը: Զուլայի «Երեք քաղաքներ» եռագրության հերոսը՝ Պիեռ Ֆրոման, լինելով Հռոմում, հանդում է «այն հզորակացության, որ կրոնավորությունը ոչ թե կարող է վերանորոգել մարդկությունը, դարման անել ընկերական թրջվառություններին, այլ որ նա ընդհակառակը, ավելացնում է այդ թշվառությունները՝ գոյացնելով տգիսություն և խավար, և որ ոչ թե կրոնն է, որ պիտի փոփոխության ենթարկի ընկերական ներկա աշխարհը պայմանները, այլ միմիայն գիտությունը և նրանով ձեռք բերած ճշմարտությունը:

Այս է Զուլայի գրքի տենդենցիան և որպիսի զորեղ կերպով արտահայտված: Կան ձգձգված՝ բավական ձանձրացնող կտորներ, բայց շատ կան հրաշալի: էջեր, մանավանդ վերջին գլխի վերջին մի քանի էրեսները»¹:

Սակայն տպագրական ծախսերի և գրքի իրացման նկատառումներով ընկերությունը չի ընդունում Վ. Փափաղյանի առաջարկությունը: 1910 թ. Դիլիջանից Փափաղյանը նորից է նամակով դիմում Կովկասի հրատարակչական ընկերությանը Զուլայի «Ժերմինալ» վեպը թարգմանելու առաջարկով: Ընկերությունը սկզբունքորեն համաձայնում է և խնդրում է ուղարկել թարգմանության նմուշ: Պատասխան-նամակում Փափաղյանը հուշում է ընկերությանը, իբրև նմուշ ի նկատի ունենալ նախ՝ էրկման-Շատիրյանի «Մի գլուղացու պատմության» առաջին երկու համառոտած մասերը, որը տպված է: Երկրորդ՝ ուղարկում եմ Շարլ Մերկի «Հիդրա» դրամայի թարգմանությունը, որը արժանացավ Թիֆլիսի հայոց դրամատիկական ընկերության ժյուրիի Ա մրցանակին»²:

Այս հարցում ընկերությունը ցուցաբերում է մանրախնդրություն և պահանջում է ներկայացնել նմուշ «Ժերմինալ» վեպից: Հայ գրողը հարկադրված կատարում է ընկերության ցանկությունը և ուղարկում հետևյալ ծանոթագրությամբ. «Այսօր ուղարկում եմ Զուլայի գիրքը և նմուշը: Դժվարություններ էլ կան. կանոնավոր բառարաններ չունեմ այստեղ և ոչ էլ պետք եղած տեղեկատու գրքեր, էնցիկլոպեդիա: Քաղաքումն եմ թողել գրադարանս:

¹ «Մուրճ», 1896, № 6, էջ 863:

² ԳԱԹ, Կովկասի հայերեն գրքերի հրատարակչական ընկերության ֆոնդ:

Անհրաժեշտ էմ գտնում ավելացնել, որ թարգմանությունը
ձյարելի է ավելի լավ տանել միայն այն ժամանակ, երբ հնա-
րավորություն ունենամ գտնելու տեխնիկական ածխահանքային,
այլև մեքենաբանական մի քանի բառերի մեկնությունները: Ինչ
հարկավոր է նույնիսկ ծանոթանալ քարածուխ հանելու գործու-
յությունների հետ: Այդ կարող էմ անել միայն քաղաքում»¹:

Այս հարցում ավելի քան որևէ այլ տեղ, դրսևորվեց Կով-
կասի ընկերության ոչ բարյացակամ վերաբերմունքը հայ գրողի
նկատմամբ: Առանց խորանալու հարցի էության մեջ, հաշվի
չառնելով այն պայմանները, բրտեղ նա թարգմանել է մի հատ-
ված «Ժերմինալից» և անտեսելով նրա այն տողերը, որով «խոս-
ւածանում էմ ուղարկածիցը շատ ավելի թարգմանել», անբավա-
րար են գնահատում ուղարկված նմուշը և դրանով իսկ հա-
լընթերցողին ընդմիշտ զրկում «Ժերմինալի» փափազանական
թարգմանությունից:

Հայոց հրատարակչական ընկերության աշխատանքներին ակ-
ախով մասնակցություն է ցուցաբերել Ավ. Իսահակյանը: Ինչպես
պարզվում է ընկերությանը ուղղած նամակներից, նրան շատ է
մտահոգել հայ հրատարակչական գործը: Իսահակյանն սմեն
կերպ աշխատել է օգնել նրա գործունեությանը, սկսած ընկերու-
թյան պատվերով թարգմանություններ կատարելուց, մինչև նրա
հրատարակած գրքերի վաճառքը: Նամակներից պարզվում է նաև
Կնուտ Համստի «Պանը» վեպի թարգմանության ընթացքը, որը
Ավ. Իսահակյանը կատարել է ընկերության պատվերով: Այդ
թարգմանությունը Կովկասի հրատարակչական ընկերությունը
լույս ընծայեց 1913 թվականին: Ուշագրավ է այն, որ Ավ. Իսա-
հակյանն իր նամակներում խորհուրդներ և առաջարկություններ
է արել հրատարակչական ընկերության վարչությանը, թե եվրո-
պական որ գրողի որ երկերը ցանկալի է թարգմանել հայերեն և
սույազրել «Հանրային մատենադարան» մատենաշարով:

1912 թ. հունիսի 4-ին Իսահակյանն ընկերությանը գրել է.
«...միտք ծագեց իմ մեջ առաջարկելու Ձեզ Անատոլ
Ֆրանսի վերջին գործը՝ «Աստվածները ծարավի են». իրավամբ,
մի հոյակապ գործ, որ մեծ աղմուկ և հիացմունք պատճառեց
Նվրոպայում»²:

Ավ. Իսահակյանի այդ առաջարկությունը, այն էլ ուսկցիայի

¹ ԳԱԹ, Կովկասի հայերեն գրքերի հրատարակչական ընկերության ֆոնդ:

² Ավ. Իսահակյան, երկերի ժողովածու, հ. 6, 1979, էջ 124:

աւարիներին, պատահական չէր: Այդտեղ պետք է տեսնել նրա վերաբերմունքը ռուսական առաջին բուրժուադեմոկրատական հեղափոխութեան նկատմամբ, նրա աշխարհայացքում արդեն ձեւավորված քննադատական վերաբերմունքը դեպի ժամանակակից բուրժուական հասարակութիւնը: Հայտնի է, որ Անատոլ Ֆրանսը իր «Աստվածները ծաբավի են» պատմավեպում տվել է ֆրանսիական հեղափոխութեան օբյեկտիվ պատկերը, որոշ իմաստով արդարացրել է հեղափոխական տեւորը՝ նրա անմիջական պատմական անհրաժեշտութեան տեսակետից, տեւոր, որի նպատակն էր ինսուրվենցիայի և ներքին խռովութեանների վերացումը և հեղափոխութեան նվաճումների հաստատումը: Հանձին յակոբինյանների, Ֆրանսը կերտել է նրանց, որոնք ամեն ինչից վեր են դասում ընդհանուրի շահը, և կանգ չառնելով ոչինչի առաջ, անձնաւոր հերպով պայքարում են հանուն հեղափոխութեան:

Ավ. Իսահակյանը օբյեկտիվորեն մոտենալով Ռուսաստանի պատմական իրադարձութիւնների գնահատմանը՝ ձգտում էր Ֆրանսի պատմավեպի հայերեն հրատարակութեամբ յուրովի արձագանքել հեղափոխութեանը: Բայց քանի որ այդ վեպի թարգմանութիւնը ոչ թե Իսահակյանն է ստանձնում, այլ առաջարկում է հանձնել «...Թուրքահայ հայտնի վիպագիր և ստիլիստ Ռուբեն Հարդարյանին, («Թարգմանութիւնը լինելու էր թուրքահայ բարբառով»)¹, ընկերութեան վարչութիւնը մերժում է բանաստեղծի առաջարկը, 1913 թ. հուլիսի 11-ի նամակով Իսահակյանը վերըստին դիմում է ընկերութեան վարչութեան նախագահին, Բյուզնդի «Բարոն Մյունխհաուզենի արկածները», Անդերսենի «Հեքիաթները», Սերվանտեսի «Դոն-Քիշոտը» թարգմանելու առաջարկով: «Այս երեք գործերն էլ,— գրում է նա,— մշտական արժեք կունենան հայ գրականութեան մեջ, Ընկերութիւնը, խոսք չկա, որ պատիվ կբերի:

Եթե սրանցից մեկնումեկի վրա դռն առայժմ համաձայնութիւն կարողանանք կայացնել, խնդրում եմ, ինձ անմիջապէս հայտնեք, որ ձեռնարկեմ գործին: Պայմանների մասին էլ, հարկավ, կգրեք, սակայն այդ էլ երկրորդական է»²: Հրատարակչական ընկերութիւնը դարձյալ շարձագանքեց բանաստեղծի առաջարկութեանը:

¹ Ավ. Իսահակյան, Իրերի ժողովածու, հ. 6, 1979, էջ 124:

² Նույն տեղում, էջ 132—133:

Հայտնի է, որ սկսած անցյալ դարի 20-ական թվականներից հայ իրականության մեջ սկսվում է Շեքսպիրի երկերի թարգմանության պատմությունը, որը նոր թափ է ստանում 80-ական թվականներին: Այդ հարցում իր արժանի ավանդն ունի Թիֆլիսի հայերեն գրքերի հրատարակչական ընկերությունը:

Առաջին թարգմանիչը, որ դիմեց Թիֆլիսի հրատարակչական ընկերությանը, Ստեփան Մալխասյանն էր: 1882 թ. Պետերբուրգից հեռացան է գրել ընկերության վարչությանը: «Այս նամակիս հետ ընկերությանդ անունով ուղարկում եմ Շեքսպիրի «Մակբեթ» ողբերգության հայերեն թարգմանությունս և խնդրում եմ ընկերությանդ այն հրատարակել, եթե արժանավոր դառնա: Թարգմանության մեջ, եթե ընկերությունդ հարկ համարե մի քանի աննշան փոփոխություններ անել՝ ես հարկավ ի համաձայնվիմ, միայն խնդրում եմ, եթե հնար է, անփոփոխ պահել սև, դե, նե, դերանունների իգական սեռի գործածությունը, որի կարևորության և օրինավորությունը ես բավական ընդարձակ բացատրել եմ մեկ ուրիշ թարգմանության մեջ, («Լիր թագավորի» մեջ, որ ուղարկել եմ Ներսիս տպագրելու):

Խնդրում եմ միեկնույն ժամանակ, որ ընկերությունդ հաճի հայտնել ինձ, թե ինչ գրվածքներ կամենում է հայերեն թարգմանել տալ և հրատարակել. ես իմ կողմից պատրաստ եմ ուսման, զերմաներենից և գաղիերենից ընդարձակ կամ համառոտ, չափավոր կամ արձակ գրվածքներ թարգմանել կամ թարգմանորեն կաղմել չափավոր յարձատրությամբ... Այժմ թարգմանում եմ «Համլետը», այն չափով և ուղղությամբ, որով թարգմանել եմ ներկա «Մակբեթը»:

Ուղարկած թարգմանությանս վարձատրության քանակությունը. (եթե միայն ընկերությունդ տպագրելու արժան դառն այն) ես չեմ ուզում որոշել, միայն խնդրում եմ շուտափույթ վարձատրություն, որովհետև նյութական միջոցների կողմից նեղության մեջ եմ ես»¹:

Ստ. Մալխասյանի նամակից պարզվում է «Մակբեթի» և «Լիր թագավորի» թարգմանության ստույգ ժամանակը: Գրականության մեջ այդ ստեղծագործությունների թարգմանության տարեթիվը ընդունված է տպագրության տարեթիվով՝ «Մակբեթը» 1892, «Լիր թագավորը» 1898 թ.: Մինչդեռ պարզվում է, որ երի-

¹ ՀՍԳՂ, ՊԿՊԱ, ֆ. 30, ց. 1, գ. 1, Բ. 93:

տասարդ բանասերը Շեքսպիրի թարգմանությունը ձեռնարկել էր տասնամյակ առաջ: Մալխասյանի թարգմանությամբ «Լիր արքան» առաջին անգամ տպագրվել է ոչ թե Երևանում, ինչպես նախատեսել էր նա, այլ Պետերբուրգում. նախ որպես «Արաքս» գեղարվեստական հանդեսի հավելված, ապա առանձին գրքով: Ինչ վերաբերում է հրատարակչական ընկերությանն ուղարկած «Մակբեթի» թարգմանությանը, ապա այն չի ընդունվել խմբագրական մասնաժողովի կողմից՝ բնագրից թարգմանված չլինելու պատճառով: 1891 թ. Ստ. Մալխասյանը լինելով Թիֆլիսում, ընկերությանը անձամբ ներկայացնում է «Մակբեթի» թարգմանությունը: Այս անգամ, խմբագրական մասնաժողովի անդամ Մ. Աբեղյանը հանդես է գալիս թարգմանության տաղաչափության և ցուցական դերանունների իգական սեռի՝ սե, դե, նե-ի դեմ, համարելով այդ քերականության կողմից անընդունելի նորություն»¹: Թարգմանության վերաբերյալ միանգամայն իրավացի դիտողություն է անում Լ. Մանվելյանը. «Մեղ, հայ ընթերցողներիս, հարկավոր է Մակբեթ, որի մեջ կա կյանք, Մակբեթ, որի յուրաքանչյուր խոսքը հոգեկան շարժումների ճշգրիտ արտահայտություն է: Բայց հայերեն Մակբեթը Մակբեթի ևս չլինի է՝ այն: Ես հավատացած եմ, որ ընթերցողը, նույնիսկ Շեքսպիրի երկրպագուն, չի կարող կարդալ Մալխասյանի այս թարգմանությունը այն հետաքրքրությամբ և այն հաճությամբ, որպես նա պետք է կարդա այս հրաշալի տրագիդիան, գեղարվեստական տեսակետից՝ Շեքսպիրի լավագույն գործը»:

1892 թ. վերջերին փոխվում է իրադրությունը: Ստ. Մալխասյանը ընտրվելով խմբագրական մասնաժողովի կազմում, կարողանում է ներգործել մյուս անգամների վրա ու լույս աշխարհ հանել իր թարգմանած «Մակբեթը»: Այս իրողությունը չի վրիպում ժամանակակիցների ուշադրությունից: «Մակբեթի» թարգմանությունը նորանշան և աղավաղված ենք համարում մենք, — գրում է «Արձագանքի» առաջնորդողը, — որովհետև դա ոչ բնագրից է՝ ոչ էլ միայն մի թարգմանությունից է թարգմանած, այլ ամենից էլ մի-մի մասն է... գլխավորապես աղավաղված և հեղաշրջված է հայկազյան տաղաչափությունը: Ինչ իրավունքով հրատարակչական ընկերությունը տպագրում է այնպիսի գրքեր.

¹ ՀՍՍՀ, ՊԿՊԱ, ֆ. 30, գ. 18, Թ. 65—69:

² «Մուրճ», 1892, էջ 194:

որոնց ուղղագրութիւնն ու լեզուն նորասերերի և հնամուսնի մերաբերմունքին է ենթարկված, գրքեր, որոնք ժամանակին մերժված են եղել նախկին խմբագրական մասնաժողովի կողմից»¹։

Բաւականաչափ ընդարձակ գրախոսական է տպագրում նաև «Մուրճը»²։ Վերջինս իր հերթին ցույց է տալիս այն թերութիւնները, որոնք սեղ են գտել Մալխասյանի թարգմանութեան մեջ։ «Մուրճի» գրախոսի կարծիքով թարգմանչի «թերութիւններն են՝ ծանր և մութ լեզուն և լեզվի խորթութիւնները, երբեմն սխալ թարգմանութիւնները, բառերի անճիշտ դասավորութիւնը, հոգեբանական նրբութիւններ արտահայտելու անկարողութիւնը և վերջապես հռչակավոր հայկական տաղաչափութեան օւտապորժումը»։

Քննադատական դիտողութիւններէի այն տարափը, որ բերեց Մալխասյանի թարգմանած «Մակբեթը», վկայում է այն մասին, որ Թիֆլիսի հրատարակչականի գործունեութիւնը ընթացիկ է հասարակական խիստ հսկողութեան տակ։ Եւ որքան էլ ճիշտ լինեն այդ քննադատութիւնները, այնուամենայնիւ, Մալխասյանի թարգմանութիւնը մի աստիճան բարձր էր Շեքսպիրի երկերի հրատարակի վրա եղած հայերէն թարգմանութիւններից։

1894 թ. Թիֆլիսի հրատարակչականը լույս ընծայեց Շեքսպիրի «Համլետը», Հովհ. Մասեհյանի թարգմանութեամբ, որով նոր սկիզբ է դրվում հայ շեքսպիրագիտութեան պատմութեան մեջ։ Նախքան «Համլետի» հրատարակութիւնը Մասեհյանը նամակով հայտնում էր ընկերութեանը, թե «ունեմ թարգմանած նաև «Մակբեթը», «Անտոնիոս և Կլեոպատրա», «Փոթորիկ» և «Ինչպես կուգեք», որ նմանապես մտադիր եմ հրատարակել, և ավելի ուրախ կլինեմ, որ այդ շորս պիեսն էլ «Համլետի» հետ միասին մի գրքով հրատարակվեն»³։

Ընկերութիւնը հրաժարվում է շորս ստեղծագործութիւնը մի հատորի մեջ ամփոփելու մտքից, քանի որ կմեծանար գրքի արժեքը և դժվար թե սպառվեր։ Միաժամանակ մերժում է Մասեհյանի խնդիրը, «Մակբեթի» լույս ընծայման կապակցութեամբ, առարկելով, թե նոր է տպել Մալխասյանի թարգմանութիւնը-

¹ «Արձագանք», 1893, № 31 (առաջնորդող)։

² «Մուրճ», 1893, № 1, էջ 130—139։

³ ՆՍՄՀ, ՊԿՊԱ, ֆ. 30, գ. 11, թերթ 32։

«Այս առթիվ Հովհ. Թումանյանը մի հոդվածում հեգնական ակնարկ է անում, գրելով, թե Շեքսպիրը կարելի է մեկից ավելի տնգամ թարգմանել: Իսկ ինչ մնում է Շեքսպիրի ամենավերջին ստեղծագործությանը՝ «Փոթորիկին», ապա այն սկզբունքորեն ընդունվում է ընկերության կողմից, սակայն Կովկասի գրաքննադատական կոմիտեն առարկում է¹:

Անգլիական հանճարեղ ողբերգուհի ստեղծագործությունների սնդուգական հայ թարգմանիչը Թիֆլիսի ընկերությանը հասցեագրված իր նամակներում շտապեցրել է ընկերությանը հնարավորին չափ արագ տպագրել ուղարկած թարգմանությունները: Ինչպես հավաստում են այդ նամակները², նա իր թարգմանությունների լույս ընծայման հույսը կապում էր Թիֆլիսի հայերեն գրքերի հրատարակչական ընկերության հետ: «Համլետի» տպագրությունից հետո (որն ի դեպ, լույս տեսավ ուշացումով), Մասեհյանը հետևյալն է գրել հրատարակչական ընկերությանը. «Ես պոհ եմ այն վարձատրությամբ, որ ընկերությունդ վճռած է ինձ տալ իմ Շեքսպիրի թարգմանության համար: Դրամական կողմը այդ խնդրի մեջ իմ գլխավոր մտադրադամը չլինելով, քիչ ավելին կամ քիչ պակասը մեծ նշանակություն չունի. արդեն այդ թարգմանություններով զբաղվիլը ինձ համար ինքնըստինքյան քրամական վնաս է: Իմ նպատակս եղած է մի քանի տարիների ընթացքում, օգուտ քաղելով այժմ իմ ունեցած աղատ ժամանակից (ինչ որ վաղը կարող եմ շունենալ) փոխադրել հայերենում ամբողջ Շեքսպիրը, իսկ այդ հապաղումներով, որով վարչությունդ կամենում է տպագրել իմ թարգմանությունները, քառասուն տարի է հարկավոր մինչև բոլորը տպագրվի:

Ուրեմն ձեր պայմանը ընդունելուց առաջ՝ ես հարկ եմ համարում ձեզ տեղեկացնել, որ անհրաժեշտ է տարին սպառել գոնե չորս պիես: Իսկ եթե այս խնդրի մեջ էլ գրամական կողմը մի արգելք է, ես պատրաստ եմ սպասել մինչև տարվա վերջը, և տարեվերջին միայն ստանալ տպագրված գրքերի իմ վարձատրությունս: Նույնպես բավական թվով գույն գրքեր առնեմ ոչ միայն իմ աշխատություններից, այլ ընկերությանդ լույս ընծայած գրքերից ևս: Եթե այս պայմանը կարող եք ըն-

¹ ЦГНА, Гр. у. ССР, ф. 480, д. 1312, стр. 29.

² Տե՛ս, մեր կողմից հրատարակած Հովհաննես Մասեհյանի անտիպ նամակները՝ հասցեագրված Թիֆլիսի հայոց հրատարակչական ընկերությանը, «Քանդեր. Հայաստանի արխիվներ», 1964 թ., № 2, էջ 79—84:

դունել, ևս ձեզ կուղարկեմ նաև իմ մյուս պիեսները, որոնք արդեն պատրաստ են և վաղուց սպասում են (Վենետիկի վաճառականը, Լիր Արքա և այլն): Արդեն ուղարկում եմ Ռոմեո և Ջուլիետի երկրորդ մասն էլ. արդյոք ստացա՞՞ծ եք»¹:

Ընկերությունը սկզբունքորեն համաձայնվելով Մասեհյանի առաջարկությանը, չորս տարվա ընթացքում (1894—1898) տպագրում է ներկայացված բոլոր թարգմանությունները, բացառությամբ «Մակբեթի» և «Փոթորիկի»: Շեքսպիրի մյուս գործերի թարգմանությունը հավանաբար նա կատարել է ավելի ուշ, այն ժամանակ, երբ դադարեցված էր Թիֆլիսի հրատարակչական ընկերության գործունեությունը:

Մասեհյանն իր թարգմանություններով մի նոր ապացույց տվեց հայոց լեզվի հարստությանը, ճոխությանն ու ճկունությանը: Այս իմաստով պատահական չպետք է համարել Հովհ. Թումանյանի այն խոսքերը, որ նա գրել է «Համլետի» հրատարակությունից երկու տարի հետո՝ 1896 թվականին. «Շեքսպիրը դարձել է մի չափ ազգերի զարգացման աստիճանը որոշելու համար: Եթե մի ժողովուրդ նրան չի թարգմանում, կնշանակե տգետ է, եթե չի հասկանում, կնշանակե տհաս է, եթե մի լեզու երա՛վրա չի դալիս, կնշանակե տկար է:

Այս աստիճանից մենք կարող ենք ասել, թե առաջադիմություն ենք արել, որ, սակայն, ինձ թվում է մի թռիչք, մի հանկարծական թռիչք»²:

Թիֆլիսի հրատարակչական ընկերության խմբագրական մասնաժողովի անդամներն այնքան էին հիացել Մասեհյանի թարգմանությամբ, որ որոշում են պարբերականներում տպագրել հայտարարություն այն մասին, թե այլևս ոչ ոք ընկերությանը չներկայացնի Շեքսպիրի երկերի թարգմանություններից, քանի որ ընկերությունը, հանձին Մասեհյանի, ունի Շեքսպիրի երկերի հատուկ թարգմանիչ:

Հովհ. Թումանյանը, ընդհանրացնելով հայ մտավորականության ստացած տպավորությունը Մասեհյանի թարգմանություններից գրել է. «Պետք է ասել, որ այդ գրքին («Համլետի».— Վ. Վ.) նախընթաց մի ավետավոր լուր էր պատվում Թիֆլիսի գրական շրջաններում, թե՛ Շեքսպիրի մի տաղանդավոր թարգմանիչ է դուրս եկել, և անհամբեր սպասում էին գրքի լույս

¹ ՀՄՍԶ, ՊԿՊՍ, ֆ. 30, գ. 11, թ. 32:

² Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 4, 1951, էջ 25:

տեանելուն: Լույս տեսավ գիրքը և հիրավի, մի շատ սրտալի ընդունելություն գտավ թե մամուլի և թե ընթերցողների կողմից. նրան համեմատեցին մեր ամենալավ թարգմանությունների հետ, իբրև օրինակ առաջարկեցին:

Ես էլ այդ գրքին սրտատրոփ դիմավորողներից մեկն էի: Սրտատրոփ ասացի, որովհետև առաջուց շատ էին գովել թարգմանչի տաղանդը, հրատարակող ընկերությունը ձեռագիրը քննել էր հմուտ մարդկանց ձեռքով, համեմատել էր բնագրի հետ, վերջապես այդ մի թարգմանչի աշխատանք էր, որ անգլերեն բնագրից մեկ տալու էր ամբողջ Շեքսպիրը հայերեն, մի շատ նշանավոր գործ, որ այսքան եռանդով, հետզհետև կատարում է պ. Մասեհյանը»¹:

Շեքսպիրի երկերի հայերեն թարգմանությունը բաժնի է դնահատել նաև Հովհ. Հովհաննիսյանը: Հայ ազնաւոր բանաստեղծները «Համլետի» հայերեն հրատարակության կապակցությամբ հանդես եկան գրախոսություններով, ողջունեցին Մասեհյանի գործը և միաժամանակ որոշ դիտողություններ կատարեցին առանձին հատվածների և տաղաչափական սկզբունքների վերաբերյալ: 1910 թ. Հովհ. Թումանյանը հանդես է գալիս «Թարգմանությունները և հրատարակությունները մեղանում»² հոդվածով, ուր քննության է առնում Թիֆլիսի հրատարակչական ընկերության տպագրած «Համլետը» Հովհ. Մասեհյանի և «Մակբեթը» Ստ. Մալխասյանի թարգմանությունները և համեմատական վերլուծությամբ ցույց է տալիս Թիֆլիսի հրատարակչական ընկերության վրիպումները թարգմանական ասպարեղում և միաժամանակ մատնանշում է այն ուղին, որով պետք է ընթանա նորակազմ Կովկասի հրատարակչական ընկերությունը: Թե ինչո՞ւ Թումանյանը վերցրել է հատկապես այդ հրատարակությունները, այդ հարցի պատասխանը տալիս է հենց ինքը՝ բանաստեղծը. «Ես էս գործերն եմ առնում առանձին սիրով, նախ որ Շեքսպիրն իմ շատ սիրած գրողն է, երկրորդ՝ թարգմանիչները քաջ հայագետ են, ու բարեխիղճ մարդիկ, երրորդ, որ նրանց քննության գործը Հրատարակչական ընկերությունը կատարել է առան-

1 Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 4, 1951, էջ 26:

2 Հովհ. Թումանյանի երկերի ժողովածուի վեցերորդ հատորի ծանոթագրություն կազմողը հոդվածը գրելու: տարեթիվը ընդունել է 1900 թ.: Այդ սխալ է, քանի որ բանաստեղծը նշված հոդվածը գրել է Կովկասի հրատարակչականի բացվելու առթիվ, այսինքն՝ 1910 թվականին:

ձին ղգուշությամբ, ու շորրորդ՝ տպագրությունը արել է առան-
ձին խնամքով»¹:

Բանաստեղծը իրավացիորեն մի կողմ թողնելով երկրորդա-
կան, ոչ կարևոր հատկանիշները և հենվելով էական նշանակու-
թյուն ունեցող գործոնների վրա, ձգտել է ապացուցել, որ մե-
ղանում «...դեպի հրատարակչական գործ ունեցած մեր կարողու-
թյունը, հմտությունն ու բարեխղճությունը դեռ քիչ են նույնիսկ
այն դեպքում, երբ հրապարակ ենք հանում մեր առաջնակարգ
տվյալները, և մեր Հրատարակչական ընկերության խմբագրականի և
վարչական կազմերի քննության բովից անցկացնելուց, խնամքով
տպագրելուց հետո»²:

Թումանյանին վրդովեցրել է այն, որ գործ ունենալով Շեքս-
պիրի նման մի գրողի հետ, «...երի ամեն մի խոսքը շատ է հաս-
տատու ու իր իմաստն ունի», լույս աշխարհ են հանել նրա երկե-
րը վրիպակներով: Ելնելով այդ փաստերից՝ Թումանյանը հայ
հասարակության և նորակազմ կովկասի ընկերության աշխատա-
կիցների առջև խնդիր է դնում մեծ սիրով ու լուրջ ուշադրու-
թյամբ հետևել գրական-հրատարակչական գործին, քան նայել ու
նայում ենք սովորաբար³:

4. •

Հայ գրողներն ու թարգմանիչները առանձին ջերմությամբ են
գերաբերվել լեհական ու բուլղարական գրականության նկատ-
մամբ ընդհանրապես, և օտար նվաճողների, հատկապես հայ
ժողովրդի դարավոր թշնամու՝ սուլթանական Թուրքիայի դեմ
ուղղված պայքարը արտացոլող նրանց երկերին՝ մասնավորա-
պես: Շատ ընդհանրություններ կան հայ, լեհ, բուլղար ժողո-
վուրդների պատմական ճակատագրի միջև: Դարեր շարունակ այդ
ժողովուրդները կրել են օտար տիրապետողների բռնությունն ու
կամայականությունը, մաքառել աղգային գոյություն և հոգևոր
անկախության համար: Ոչ Արաքսի արտասուքները, ոչ էլ Օդե-
րի և Դանուբի արյունախառն ջրերը չեն կարող հագեցնել նեմե-
զիդայի ծարավը: Նա պահանջում է նոր դոհեր և արտասուքներ:
Ճակատագրերի այս ընդհանրությամբ է ահա, որ ձայնակցում էին

¹ Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. 6, Երևան, 1959, էջ 123:

² Նույն տեղը, էջ 125:

³ Նույն տեղը:

հայ, լեհ և բուլղար ժողովուրդների մտածող մարդիկ: Արդեն 80—90-ական թվականներին հայ պարբերականներում և առանձին գրքով երևում են ոչ միայն լեհ գրողների երկերի թարգմանությունները, այլ յուսումնասիրություններ լեհերի ու ինչպես տալիս վերաբերյալ: Հայ մտավորականներից շատերը բարձրագույն կրթություն ստանալով Վարշավայում, հնարավորություն են ունեցել լեհ գրողների հետ ծանոթանալ բնագրի լեզվով: Գերազանց տիրապետելով լեհ գրական լեզվին, նրանք թարգմանությունները կատարել են ուղղակի բնագրից կամ ուսերենից՝ բնագրի հետ համեմատելով, որի համար էլ այդ թարգմանությունները մինչև այսօր պահպանում են իրենց գեղարվեստական արժանիքները:

Լեհ գրողներից առանձին գրքով առաջինը հայերեն հրատարակվեց Հենրիկ Սենկևիչի «Առանց դավանանքի» վեպը, որի լույս ընծայումը կապված է անվանի թարգմանիչ Տիգրան Հովհաննիսյանի հետ: Այդ վեպը, որ անցյալ դարի 90-ական թվականներին մեծ աղմուկ էր հանել, հայության շրջանում այնքան բուռն հետաքրքրություն առաջ բերեց, որ չնայած սկզբում մասամբ տպագրվել է «Մուրճ» ամսագրում և նույն թվականին (1892) առանձին գրքով, սակայն սպառվում է շատ շուտ և ունենում է մի քանի հրատարակություն: Այդ հանդամանքը բացատրվում է նրանով, որ Հ. Սենկևիչը իր վեպի հերոս Լեոն Պլոշկովսկու կերպարով, երևան է բերում ժամանակի ամենակիրթ և ամենազարգացած ներկայացուցչին, որն օժտված է հարափոփոխ ալեծուփ սկեպտիկ բնավորությամբ, զուրկ ամրակուռ և հաստատուն սկզբունքներից: Հեղինակին հաջողվել է տալ տառապող անհատի ներաշխարհի և ժամանակի անկայուն ընթացքը:

Ուշագրավ է, որ «Առանց դավանաքի» վեպը որոշակի ազդեցություն է ունեցել նաև հայ իրականության մեջ մարքսիստական գրականագիտության հիմնադիր, լենինյան գվարդիայի հնագույն անդամ Ստեփան Շահումյանի վրա: Նրիտասարդ Շահումյանը 1897 թ. ծանոթանալով Հ. Սենկևիչի «Առանց դավանանքի» վեպի հետ, որոշում է այդ գրքի ձեռով հիշատակարան պահել: Ահա թե ինչ է գրել նա այդ մասին 1897 թ. փետրվարի 12-ի նամակում, հասցեագրված իր ապագա կնոջը՝ Ք. Տեր-Գրիգորյանին. «Ախ, երանի ես ձեր տեղը լինեի, այսինքն ձեր չափ ազատ ժամանակ ունենալի գրելու, և գիտես ինչ գրեի, ոչ թե պատկերներ կամ ոտանավորներ կամ վեպեր, այլ «Հիշատակա-

րան»։ Ամեն օր կարձանագրելի այն բողոքը, ինչ որ ղգում կամ մտածում եմ և դրանով ևս ամենամեծ ծառայությունը կմատուցելի մարդկությանը. ոչ մի գրվածք, ոչ մի ոտանավոր այնքան չի նպաստում մարդկային կյանքը ուսումնասիրելու գործին, որքան մի մարդու ներքին աշխարհի, այսինքն սրտի ու մտքի անկեղծ պատմությունը, որը կարելի է գրել «Հիշատակարանի» մեջ։ Նս աշխատ կարդում եմ Սենկևիչի «Առանց դավանանքի» վեպը և կարծում եմ, որ գրականության պսակը պետք է համարել այդ գիրքը»¹։

Անվանի մանկավարժ Ստ. Լիսիցյանը բարձրագույն կրթության ստանալով Վարշավայում, լիակատար հնարավորություն է ունեցել մոտիկից ծանոթանալու լեհ գրականության հետ։ Վերագառնալով հայրենիք, նա դարձել է հայ իրականության մեջ լեհ գրողների երկերի ամենաակտիվ մասնաշաղկանացնողներից մեկը։ Մեծ է Լիսիցյանի յլաստակը ոչ միայն Սենկևիչի ստեղծագործությունների հայերեն թարգմանությունների ասպարեղում, այլև նրա մասին գրած տեսական հոգվածներով։ 1896 թ. Թիֆլիսի հայերեն գրքերի հրատարակչական ընկերության ընդհանուր ժողովում Լիսիցյանը հարց է բարձրացնում թարգմանել լեհ դասական գրականության ներկայացուցիչների երկերը, միաժամանակ հայանում իր պատրաստակամությունը բնագրից թարգմանելու Հ. Սենկևիչի նոր լույս տեսած «Յո երթաս» պատմական վեպը։ Այդ առաջարկությունը գոհմանակալությամբ ընդունվում է ներկաների կողմից, իսկ Ալ. Շիրվանզադեն, ելնելով այն հանգամանքից, որ կյանքի խոր ճանաչողության, իրականության ուսուցողական պատկերման, գեղարվեստական բարձր վարպետության, լիարժեք կենդանի կերպար ստեղծելու պահանջները հիանալի ձևով լուծված են Հ. Սենկևիչի «Նրաժիշտ Յանկոն», «Հացի համար», «Էսքիզներ ածխով» երկերում, առաջարկում է տպագրել նաև այդ գործերը։

Հրատարակչական ընկերության խմբագրական մասնաժողովը որոշում է՝ «Հանձնարարել պարոն Ստ. Լիսիցյանին բնագրից թարգմանել ու պատրաստել տպագրության Հենրիկ Սենկևիչի «Յո երթաս», «Նրաժիշտ Յանկոն», «Հացի համար», «Էսքիզներ ածխով» երկերը»²։ Ընկերության փակելու հետևանքով նա-

¹ «Խորհրդային արվեստ», 1936, № 1, էջ 12։

² Տեղեկագիր, 1900, էջ 13։

խատեսված գործերից հնարավոր եղավ 1898 թվականին լույս
ընծայել միայն «Յո երթաս» վեպը։ Ստ. Լիսիցյանը ձևափոխեց
«Յո երթաս» թարգմանությունը, որովհետև նրա կարծիքով այդ
վեպի մեջ հեղինակը ցույց է տալիս, որ իսկական երջանկություն
տվողն այն է, ինչ որ հաստատ համոզմունքի, կյանքի պաշտո-
րոշ նպատակի և մանավանդ եռանդուն հասարակական գործի
հետ է շաղկապված։ Վեպի մեջ նկարագրված քրիստոնեական աշ-
խարհն ապրում է մեկ զգացմունքով և կատարելապես ձուլվում
է անհատական կյանքի հետ, և ոչ մի վարանում, ոչ մի տատա-
նում չկա, կյանքի նպատակը պարզ է։ Այս պրովածքը «համա-
մարդկային սիրո» մի հոյակապ փառաբանություն է սելդբից մին-
չև վերջ և հասարակական կյանքը վերանայվի քրիստոնեական
էջմարտության և սիրո պատվիրանների համաձայն»։

Ստ. Լիսիցյանը իրավացիորեն հակադրում է «Յո երթասը»
«Պոլանեցկիների ընտանիք» վեպին, ուր Սենկևիչը «անհատական
հոգին չի ձուլում ընդհանրական հոգու հետ, այլ այստեղ տեսնում
ենք մի հոլանդական բարոյական այլանդակություն հերոսի մեջ,
որ մի ստոր շահագործող է, զուրկ ամեն բարոյական նորմա-
լից և յուրովրդի դժբախտությունից օգուտ է քաղում սովի
տարին հացի վաճառումի շահագործումով։ Պոլանեցկիների անձ-
նական ու դասակարգային եւականությունը չէր կարող Սենկե-
վիչի իդեալը համարվել և այս եսականության մեջ նա չէր կարող
գտնել լեհական ազգի ապագայի գրավականը»¹։

Սենկևիչը դեղագետի խոշոր տաղանդ է ի հայտ բերել հաև
փոքրածավալ կտավներում։ Նման բնույթի գործերում, որոնք
հագեցված են խոր հայրենասիրությամբ, հումանիստ գրողը
ցուցաբերում է համակրանք դեպի հասարակ, թույլ և անդոր
մարդիկ, դատապարտում Պոլանեցկի, Լալայցիգում և Սելեդիայում
բնակվող իր հայրենակիցների նկատմամբ պրուսական կառա-
վարության անմարդկային վերաբերմունքը։ Այդ ոգով են գրը-
ված նրա «Պոլանեցկի ուսուցչի օրագրից» և «Բարթեկ հաղթողը»
պատմվածքները, որոնց թարգմանության և տպագրության գոր-
ծը վերցնելով իր վրա, Թիֆլիսի հրատարակչականը ցանկալի
աշուղդակի ճանապարհով քննադատել անցյալ դարի վերջերի
ցարական կառավարության կողմից կիրառվող ուսականաբան
քաղաքականությունը Անդրկովկասում։ «Ամերիկյան նովելներ»

¹ Տեղեկագիր, 1900, էջ 13։

շարքում Սենկևիչը շոշափում է պանդուխտ և տարագիր լեհերի շարքաշ կյանքը, նրանց կարոտը հայրենիքի նկատմամբ: 1892 թ. Թիֆլիսի հրատարակչականը որոշում է առանձին գրքով տպագրել «Ամերիկյան նովելներ» շարքից «Հացի համար» և «Փարոսի վրա» նորավեպերը, որոնց թեման հայրենիքից կտրված, բայց հոգով ու սրտով նրա հետ կապված լեհերի աննախանձելի կյանքի նկարագիրն է օտար երկնքի տակ, մի բան, որը շատ մոտ էր աշխարհասփյուռ հայերի հոգեվիճակին:

1900 թ. դեկտեմբերին լայնորեն նշվում է Հենրիկ Սենկևիչի դրական գործունեության 25-ամյակը: Համարյա բոլոր հայ պարբերականները նախքան հոբելյանը տպագրում են ինֆորմացիաներ, իսկ հոբելյանի օրը՝ հոգվածներ, հեռագրեր, Այդ նյութերը ցույց են տալիս լեհ ազգի մեծ դավակի հանդեպ հայ ժողովրդի տածած խոր ու անկեղծ հիացմունքը: «Նոր դարը» նշելով Սենկևիչի տեղն ու դերը լեհ գրականության մեջ, ընդհանրացնում է, որ «նա իբրեւ գրող պատկանում է ոչ միայն իր ազգին, այլև ամբողջ մարդկությանը»¹, «Պատճառը հենց այն է, — գրում է Ստ. Լիւիցյանը, — որ Սենկևիչը կարողացել է զարնել ամեն մի քաղաքակիրթ մարդու հոգեկան լարերին, ցույց տալով նրան այժմյան խարխափող վիճակն ու կանչելով միահամուռ ոգևորության՝ հանուն սիրո պեպի ճնշվածները, զրկվածները, թույլերը, — հանուն բոլոր անձնական, ազգային, եսամոլական ձգտումների ձուլման ընդհանրական բարօրության հետ...»²:

Թիֆլիսի հրատարակչական ընկերությունը 1900 թ. հունվարի 25-ի նիստում միաձայն որոշում է ընդունում Սենկևիչի գրական գործունեության 25-ամյակի կապակցությամբ առանձին գրքով հրատարակել նրա պատմվածքների ժողովածուն³: Հոբելյանի օրերին «Տարազ» երկշաբաթաթերթը տպագրում է հաղորդում այն մասին, թե ինչպես լեհ ժողովուրդը, ի նշան հրախտագիտության, հավաքել է մի պատկանելի գումար և գնել Սենկևիչի համար ամառանոց՝ Լեհաստանի ամենագեղատեսիլ վայրում: Այդ առթիվ Հ. Սենկևիչն ասել է. «Մի բան էր ինձ պակասում՝ հայրենի հողը, որի վրա մենք ամենքս ծնվել ենք: Եվ ահա այսօր ժողովուրդը նվիրեց այն, ինչ որ պակասում էր»: «Տարազը» բերելով այդ խոսքերը, գրում է. «Թող ամաչեն մեր

¹ «Նոր դար», 1900, № 231:

² Տեղեկագիր, 1900, էջ 7:

³ «Մուրճ», 1901, № 1, էջ 108:

հարուստները, որ բոլորովին չեն մտահոգվում կիսաքաղց հայ գրողների մասին»¹։

Լեհ գրականության մեջ քննադատական ռեալիզմի ծագումը կապված է Սենկևիչի, էլիզա Օժեշկոյի անվան հետ և արդեն 90-ական թվականներին հայ իրականության մեջ հայտնվում են առաջին արձագանքները ականավոր գրողի ստեղծագործության վերաբերյալ։ Հայ սյարբերականները տպագրում են էժեշկոյի պատմվածքները, իսկ Թիֆլիսի հրատարակչական ընկերությունը 1891 թ. Մոսկվայում առանձին զրքով լույս է ընծայում նրա «Ա... Բե... Ցե...» պատմվածքը «Բը-ա-բա» վերնագրով։ Պատմվածքում ներկայացված է ժողովրդական ուսուցչուհու կերպարը, մի թեմա, որ ժամանակին արժարժեք էր և նաև հայ վիպագիրները։ Խմբագրական մասնաժողովի անդամ Մ. Աբեղյանը առաջարկում է տպագրել այդ պատմվածքը, քանի որ «նյութը կապ ունի մեր կյանքի հետ և կարգացվում է հետաքրքրությամբ»²։

Էլ. Օժեշկոն իր ստեղծագործություններում մեծ տեղ է հատկացնում ազգային հարցին, քարոզելով իրավահավասարություն և հասարակական բնակվող բոլոր ժողովուրդների համար։ Մասնավորապես իր պատմվածքներում նա պատկերում է հրեա աշխատավորների կյանքը, մերկացնում իշխող դասակարգի ներկայացուցիչներին, որոնք աշխատում էին անլստահություն սերմանել և հրեա աշխատավորության միջև։

90-ական թվականներին Թիֆլիսի հրատարակչական ընկերության խմբագրական մասնաժողովը որոշում է հրատարակել Օժեշկոյի «Հզոր Սամսոն», «Դժգույն իդեալներ» վիպակները և «Սպիտակ ծաղիկներ» ու «Տուր ինձ ծաղիկ» նովելները, որ հրեաների մասին ասված ամեն մի խոսք շնչում է անկեղծությամբ ու ճշմարտացիությամբ։ «Տեսեք,— գրում է Օժեշկոն «Տուր ինձ ծաղիկ» նովելում,— հին շորեր ծախող հրեա խաթունի մասին, որքան փոքրացել, նիհարել, դեմքը կոշտացել, դեղնել, թշերն ու շրթունքները խոր ընկել, երբեմնի նրա սև աչքերը մթնել են ու դեղնել։ Նեղ ճակատը ամբողջովին կնճիռներով է ծածկված։ Նա նման է թրջված թղթի, որին մի անողորմ ձեռք ճմռել, կուշ է բերել։

Իսկ ինչ մնում է այն բանին, որ նա հասարակ դասակարգից

¹ «Տաբադ», 1900, էջ 729, 766։

² ՀՍՍՀ, ՊԿՊԱ, ֆ. 30, գ. 3, ր. 75։

է, կ'արող և մ համաստիացնել ձեղ, որ եթե մարդկանց հասարակական դիրքը չափվեր նրանց կրած շարժարանքով ու աշխատանքով, մեր խաթունն իր վառամյալ հասակում շատ ու շատ բարձր կլինէր կանգնած»:

Հրեա ժողովրդի ճակատագրին է նվիրված նաև Օժեկոյի «Մեյեր Յուդեֆովիչ» վեպը և այլ պատմվածքներ ու նովելներ: Հատկանշական է, որ նա ձեռնարկում է հրեական թեմաներով գրված լեհ գրողների գրվածքների հավաքման գործը, և «Մի հոսանքով» խորագրի տակ լույս է ընծայում ծավալուն ժողովածու, ուր ղեկավարված են լեհ առաջավոր ռեալիստ գրողները՝ էլիզա Օժեկովի, Բուկալա Պրուսի, Մարիա Կոնոպնիցկայա, Կադիմեժ Տետմայերի, Գուստավ Դանիլովսկու պատմվածքները: Այդ ժողովածուները գրավում են հայ մտավորականների ուշագրությունը, քանի որ, ինչպես նշել է առաջին հատորի թարգմանիչը առաջաբանում, «օտար ավգերի հասարակ դասակարգի անճար գրությունը ակամայից հիշեցնում է մեր ժողովրդի համապատասխան վիճակը»: Համեմատությունը լիարժեք և պարզ դարձնելու նպատակով թարգմանիչն ավելի է կոնկրետացնում էր միտքը. «Ե՛նչ է մեր ժողովրդի հասարակ դասակարգի վիճակը քաղաքում, — հարցնում է թարգմանիչը և պատասխանում, — չոր ու ցամաք կյանք, առավոտից մինչև երեկո զբաղված օրվա հացի խնդրով, ծանրաբեռնված ընտանեկան ծանր հոգսերով, երեխաներն առանց դաստիարակության և մեծ մասամբ անկիրթ:

Իսկ մեր գյուղացիությունը, — հին նահապետական վիճակում, սակավահող, մինչև իսկ սավաղաջուր, անտեղյակ կատարված կյանքից... Նա քաշ է տալիս իր սև կյանքը լեռներում ու գետնափոր խրճիթներում — ամառը ուժասպառ լինելով ծանր աշխատանքից, իսկ ձմեռը թմրում անգործությունից»¹:

Լինելով լեհ դեմոկրատական մտավորականության ներկայացուցիչը, Օժեկոն հանդես է եկել կանանց ազատագրման պաշտպանությամբ, քննադատել ընտանեկան բարքերի հնօրյա սովորույթները: Այս առումով որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նրա «Կախարդուհին» պատմվածքը, ուր գեղջկուհի Պետրոսյան դառնում է սոցիալական մեջ ապրող ամբոխի զոհ: Ուշագրավ է, որ այդ գործը ժամանակին արժանացել է Շիրլան-

¹ Էլ. Օժեկո, Մի հոսանքով, 1913, առաջաբան:

զադեի բարձր գնահատականին: Եվ շնայած Հով. Մեղնիկյանի թարգմանությամբ 1896 թ. լույս էր տեսնում «Կախարդուհին» պատմվածքը, բայց և այնպես Թիֆլիսի հրատարակչականը 1899 թ. էլ. Օժեշկոյի «Հղոր Սամսոնը», «Դժգույն հովվերգություն», «Ճասի արկածները» (վերջինը Պերճ Պոռշյանի թարգմանությամբ) ստեղծագործությունների հետ միասին կրկին հրատարակում է «Կախարդուհին», հաջորդ տարում Թիֆլիսի հրատարակչականը լույս է ընծայում էլ. Օժեշկոյի «Յուզիանկան», Պ. Հովյանի թարգմանությամբ. «Սպիտակ ծաղիկը»՝ Ա. Շահվերդյանի, իսկ «Գուհիկը»՝ Վիպակը Արշ. Մխիթարյանի թարգմանությամբ: Այսպիսով նախահեղափոխական շրջանում Օժեշկոյի ստեղծագործություններից առանձին գրքով հրատարակվել է 11 գրքույկ, որից ութը պատկանում է Թիֆլիսի հրատարակչական ընկերությանը:

Լեհական ռևալիստական գրականության ներկայացուցիչների՝ Սենկևիչի և էլ. Օժեշկոյի երկերի լույս ընծայումով Թիֆլիսի հրատարակչականը արտահայտում է լեհ ժողովրդի նկատմամբ հայ հասարակության խոր համակրանքն ու համալզագացությունը: Եվ միանգամայն բնական է, որ երբ, առաջին համաշխարհային պատերազմից հետո Լեհաստանը ազատագրվում է գերմանական տիրապետությունից, Կովկասի հրատարակչական ընկերությունը հեռագրով ողջունում է Սենկևիչի, Օժեշկոյի, Տեռմայերի և մյուս գրողների ազգային տոնը. «Ալեփառ Արարատի ու Արագածի ստորոտներից մենք հայերս ուրախալից ենք ձեզ, լեհացիներ,— ասված է հեռագրում,— և Արաքսի, Ախուրյանի ու Զանգուի ափերից մենք մեր սրտագին ողջույնն ենք ուղարկում ձեզ»:

Մենք նախանձում ենք ձեզ ու սպասում, որ մի օր մեզ էլ յուժ և իրավունք կտրվի ձեզ նման վերացնել մեր ազգի ամբողջությունն անջատող պարիսպները ու միատեղ խմբված վայելել մեծ Ռուսաստանի մարդասեր և գործվալից հովանին»¹:

Կովկասի հրատարակչական ընկերության ուշադրության Կենտրոնում են եղել նաև համաշխարհային գրականության ոսկե ֆոնդ մտած այնպիսի ստեղծագործություններ, ինչպիսիք են Հոմերոսի «Ոդիսականը» և «Իլիականը», Ռուսթավելու «Վազրեն-Նավորը»: Ընկերության խմբագրական մասնաժողովի անդամ-

¹ «Հորիզոն», 1914, 15 օգոստոսի:

ները, զգալով դասական գրողների երկերի թարգմանությունն պատասխանատվությունը, ամենահարմար թեկնածուներ էր համարում «արժանավոր և տաղանդավոր անձանց՝ Հովհ. Թումանյանին և Հովհ. Հովհաննիսյանին»¹։

Այս առթիվ 1910 թ. Վաղարշապատից Հովհաննիսյանը գրել է. «Պատվարժան վարչությանդ հոկտեմբերի 5 թվաթիվ, համար 55 գրությունը պատիվ ունեմ պատասխանելու հետևյալը.

«Իլիական» ու «Ոդիսականը» թարգմանելը շատ ազգերի թարգմանիչների համար ամբողջ կյանքի գործ է եղել. համենայն դեպս ամեն մեկն առանձին մի ֆանի տարվա յուրջ, հարատև, աշխատանք է պահանջում, եթե խոսքը կանոնավոր, գեղարվեստական թարգմանություն մասին պետք է լինի և հարկավ հունարեն բնագրից։

Հոմերոսն իմ սիրտ առարկան է եղել դեռ աշակերտական նստարանի վրա և համալսարանում. տաբիներ հունաց գրականության պատմություն ևմ ավանդել ճեմարանում և մասնավորապես Հոմերոսով զբաղեցրել ևմ ունեղիթրևերիս «մի կարճ ժամանակ նույնիսկ հունարեն բնագրով), վերջապես փորձել ևմ թարգմանել աշխարհաբար «Իլիականը» և եկել ևմ այն եղբայացության, որ մեր գրական լեզվի արդի միճակը և մանավանդ մեր տաղաչափությունը հնարավորություն չեն տալիս այն թարգմանությունը սալու, որ յուր աշխատանքը զնահատող և գիտակցող թարգմանիչը գոհ մնա յուր արածից։

Այս խնդրի մասին երկարաբանելն ավելորդ ևմ համարում այստեղ. միայն այսքանը կասեմ, որ եթե այդ հանգամանքն էլ մի կողմ թողնենք, Հոմերոսի թարգմանությունը հանձն առնողը անշուշտ նյութական հոգսերից ազատ և բացի գրական աշխատանքից՝ ուրիշ ոչ մի գործով չպարապող մարդ պիտի լինի, որ կարողանա մի ֆանի տարվա ընթացքում գլուխ բերել այդ թարգմանությունը, ուրիշ խոսքով Դուք մի 5—6 տարի առնվազն՝ տարեկան 2000 ո. (երկու հազար) ռոճիկով պիտի ապահովացնեք թարգմանչին, եթե նա յուր ընտանիքի ապրուստը ուրիշ աշխատանքով է հալթալթում։ Կարո՞ղ է հրատարակչական ընկ. այդպիսի պայման հանձն առնել։ Իմ կարծիքով այս նվազագույն պահանջն է, որ կարող է Հոմերոսի թարգմանությունն հանձն առնողը Ձեզ առաջարկել։ Եթե ես համալսարանն ավարտելուց հե-

¹ «Հորիզոն», 1910, № 251։

առ տաբին տասներկու ամիս լծի եղան նման դատապարտված շլինեի իմ աշխատանքին, միայն ապավինած ընտանիքիս ապրուստի համար չարչարվելու, ևս՝ եթե ոչ ուրիշ բան, գեթ «Իլիա-կանը» վաղուց, այսպես թե այնպես, թարգմանած կլինեի, բայց habent fata sua ... auctores.¹ զրական աշխատանքն ինձ համար եղել է և երկրորդական, և երրորդական, ազատ, հոգսերից ազատ ժամերի գործ, որովհետև երեսնաներիս փորը չէ կշտացրել և մերկությունը չէ ծածկել:

Այսօր էլ պատրաստ եմ երկու տարի առաջ սուպագրած ոտա-նավորներիս ժողովածուն բախկալներին փթով ծախելու. հար-յուրավոր օրինակներ ունիմ (սուպագրության ծախքն էլ դեռ իսպառ ծածկված չէ), թուղթը բավականին ամուր է և լավ տոպրակ-ներ կշինվի շամիչ-նոխուտ լցնելու համար...

Հարգանյոք Հովհ. Հովհաննիսյան²:

Հովհաննես Թումանյանը իր հերթին գրել է. «Ի սլատասխան հարգելի վարչությանդ և խմբագրական մասնաժողովի խառն ժողովի 56 գրությանմբ ինձ արած առաջարկությանը, թե քանի ժամանակում և ինչ պայմաններով հայերենի կթարգմանեմ Շոթա Ռուսթավելու «Ընձենավորը» հռչակավոր վիպագրությունը, պատիվ ունեմ հայտնելու, որ թարգմանությունը կանեմ հինգ տարվա ընթացքում, յուրաքանչյուր տողին կառնեմ մի ուրբի, գործը կմնա սեփականություն ընկերությանը»³:

Ինչպես տեսնում ենք ընկերությունը միանգամայն ճիշտ էր ընտրել թարգմանիչներին: Նրա խորը համոզմամբ միայն Թումանյանը և Հովհաննիսյանը կարող էին կատարել այդ գեղե-ցիկ և բարձրարվեստ ստեղծագործությունների թարգմանությունը: Ընկերության նախաձեռնությանը ողջունում է Շիրվանզադեն: «Հայոց հրատարակչական ընկերությունը առաջարկել է բանաստեղծ Թումանյանին թարգմանել Շոթա Ռուսթավելու «Ընձի մորթը» նշանավոր պոեման: Այդ դասական երկը վրաց հին և նոր գրականության գլխավոր պարծանքն է, որի մասին այնքան լսել ենք և կարդացել»:

«Մշակ» թերթի վկայությամբ ընկերությունը Ռուսթավելու «Ընձենավորը» երկի 700-ամյա հոբելյանը մեր՝ հայերիս կողմից

¹ Հեղինակներն ունեն իրենց ճակատագիրը (լատ.):

² Հովհ. Հովհաննիսյան, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 142—143:

³ Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 5, էջ 336:

հավերժացնելու դիտավորությունը ցանկանում է ղեկի բերել այդ թարգմանության հրատարակության պորժը: Սրանով մենք հարգած կլինենք մեր վրաց եղբայրակիցներին և անմահ Ռուս-թավելու հիշատակը»¹:

Զնայած հրատարակչական ընկերությունը սկզբունքորեն համաձայնում է թարգմանիչների պայմաններին, բայց հնարավորություն չի ունենում վճարելու պահանջվող գումարը: Այդ իսկ պատճառով նա չկարողացավ իրականացնել իր նախաձեռնությունը²:

Ընկերության վարչության նախագահը ընդհանրացնելով ստեղծված իրավիճակը, գրել է. «Ռուսթավելու թարգմանիչը պահանջում է 6—7 հազար ռուբլի և խոստանում է կատարել թարգմանությունը 5 տարվա ընթացքում, իսկ Հոմերոսի «Իլիականի» և «Ոդիսականի» համար թարգմանիչը 5—6 տարի, նշանակում է տարեկան 2000 ռուբլի ոռճիկով, այսինքն 10—12 հազար ռուբլի: Այս ոչ առասպելական թվեր են, այլ համեստ, որքանով մեր հեղինակներից ոչ մեկը չի կարողանում իր և իր ընտանիքի ուսրուստը հայթայթել իր գրչի աշխատանքով, և միշտ ստիպված է լինում դիմելու այլ աշխատանքի, որից սաստիկ տուժում է գրականությունը»³:

Ռուսթավելու և Հոմերոսի ստեղծագործությունների թարգմանության ու տպագրության շուրջը ստեղծված աղմուկը ունեցավ տյն հետևանքը, որ ընկերությունը կարողացավ որոշ գումար հավաքել և «Հանրային մատենադարան» մատենաշարով ու առանձին գրքով 1910—1915 թթ. լույս բնծայել հետևյալ գրքերը. Ուոլեսի «Բեն-հուրը» և Դիքենսի «Դավիթ Կուպերֆիլդը»

¹ «Մշակ», 1910, 226:

² Այս կապակցությամբ գրականության մեջ երկու սխալ կարծիք գոյություն ունի. ոմանք մեղադրում են Թումանյանին, որ իրը թե նա «հնարավորություն չի ունեցել իրականացնելու հայ պրոգրեսիվ մտավորականության ցանկությունը» (տե՛ս, Ս. Զավաբյան, Ուրվագծեր հայ-վրաց գրական կուլտուրական կապերի պատմության», 1959, էջ 134, և Վ. Սանթրյանի հոդվածը տպագրված «Ավանգարդ» թերթում՝ 3 հոկտեմբերի 1966 թ.), ոմանք էլ՝ ընկերությանը, քանի որ նրա օվարչությունը չհամաձայնից Թումանյանի առաջարկած պայմանին, ուստի և թարգմանությունը չկատարվեց» (տե՛ս, Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. 5, էջ 336): Իրողությունն ան է, որ նորակազմ ընկերության նյութական սուղ միջոցների պատճառով է ձախողվել այդ թարգմանությունը:

³ «Հորիզոն», 1910, № 267:

(Փ. Վարդանյան), Վոյնիշի «Բոռը» (Շանթ), Էրկման-Շատրիանի «Մի գյուղացու պատմությունը» (Վրթ. Փափազյան), Իբսենի «Ուրվականները» (Մ. Հարությունյան), Բայրոնի «Մանֆրեդը» (Տիրալը վարդապետ)։ Էմիլ Զոլայի «Ժերմինալը» (Ս. Հակոբյան), Զուգերմանի «Հոգսը» (Գ. Ալթունյան), Մոպսսանի «Զարդը» «Ճարպագունդը» (Խան-Աղատ), Գրիմմ եղբայրների «Հեքիաթները» (Հովհ. Թումանյան) և այլն։

Նրկրի սոցիալ-տնտեսական դրությունը, համաշխարհային պատերազմը աստիճանաբար կաղմալուծում են Կոմկասի հայոց հրատարակչական ընկերությունը։ Անգամ «գործաւարը պատերազմի պատճառով զենքի տակ կանչված լինելով, առանց ներկայացնելու հրատարակված և վաճառված գրքերի մասին հաշվարքը՝ հեռանում է քաղաքից»։ Այդ ամենը հարկադրում է ընկերության ղեկավար մարմինների 1915 թ. դեկտեմբերի 15-ին հետևյալ որոշումն ընդունել. «Նա վերադարձնել հեղինակներին ընդունված ձեռագրերը, քանի որ այլևս ի վիճակի չենք գիրք տպագրել»։ Այսպես էլ չեն տպագրվում Գյոթեի «Նրիտասարդ Վերթերի վշտերից» (Թարգմ. Ս. Վարդ. Մաքսուտյան), Օսկար Ուայլդի «Սալոմե» (Թարգմ. Վ. Տերյան), Մ. Մետեռլինգի «Մահը» (Թարգմ. Զ. Նսալյան), Տետմայերի «Անդունդը» (Թարգմ. է. Միրյանյան) և այլ թարգմանություններ։

Այսպիսով, ի մի բերելով Թիֆլիսի և Կոմկասի հրատարակչական ընկերությունների թարգմանական գրականության տպագրած և նախաձեռնած գրքերի ցանկը, նկատում ենք, որ գրական լեզվի ընտրության հարցում նրանց չափանիշը եղել է ոչ թե գրողի ստեղծագործական մեթոդը կամ գրական հոսանքին պատկանելը, այլ տվյալ ստեղծագործության գաղափարական միտումը։ Այդ պատճառով նրանք խտրություն չդրեցին ռոմանտիկ Վիկտոր Հյուգոյի, ռեալիստ Մոպսսանի, նատուրալիստ Էմիլ Զոլայի, սիմվոլիստ Մետեռլինգի միջև։ Ընկերությունների խմբագրական մասնաժողովի անդամները նման մոտեցում են ունեցել ոչ միայն ֆրանսիական գրականության նկատմամբ, այլև՝ համաշխարհային։ Հետևաբար, ընտրության նման չափանիշը ընկերությունների գիտակցված սկզբունքներից մեկն է եղել, սկզբունք, որը գեղագիտական լուրջ հանցակետ է և գալիս է հասարակական կյանքի վրա գրականության ակտիվ դերի ըմբռնումից։

ՀՐԱՏԱՐԱԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԵՎ

ՅԱՐԱԿԱՆ ԳՐԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

1886 թ. նոյեմբերին ցարական կառավարութիւնը, հրատարակութիւնների նկատմամբ հսկողութիւնն է՛լ ավելի ուժեղացնելու և պատասխանատվութիւնը մեծացնելու նպատակով կենտրոնացնում է բոլոր կոմիտեները, ստեղծում մեկ գրաքննչական մարմին իր ստորաբաժանումներով: «Մշակը» արտահայտվելով նոր օրենքի մասին, Միլտոնի խոսքերով է բնութագրել ստեղծված իրավիճակը. «Ի՞նչ կարող է լինել մի չափահաս մարդու համար ավելի վիրավորիչ, քան թի մինչև կյանքի վերջը միշտ համարվել աշակերտ, որ իր տնտրակաները պետք է ներկայացնի վարժապետի քննութեանը: Այդ դրութեան մեջ է հեղինակը, լրագրապետը ցենզորի առաջ: Երեւակայեցեք ձեզ մի մարդ, որ ուսում է առել, աշխատել է իր ամբողջ կյանքում, հեղինակել է մի գրքովածք կամ մի հոդված լամ մտածելուց, աշխատելուց, յուրաքանչյուր միտք, յուրաքանչյուր բառ կշռելուց հետո, և հանկարծ մի պաշտոնյա, որ նրա չափ գիտութիւն չունի. որ չի կարող զլլալ այն, ինչ որ նա զգում, ջնջում է նրա ստեղծագործութիւնը, նրա սրտից բխած խոսքը, նրա մտքի զավակը, նրա ուղեղի թարմ արտահայտութիւնը: Զգալ իրեն ամբողջ կյանքը տարրական դպրոցում, կախված լինել մի խիստ ուսուցչից, որ դրսուտում է կամ ջնջում է աշակերտի տնտրակաները, ահա հեղինակի դրութիւնը»¹: Բայց դեռ ավելին. 1883 թ. ներքին գործերի մինիստրի ստորագրութեամբ գաղտնի գրութիւն է իջեցնում Պետերբուրգի և Կովկասի գրաքննչական կոմիտեներին՝ պահանջելով խիստ հսկողութիւն սահմանել հայկական գրքերի ու պարբերականների նկատմամբ, որպեսզի ոչինչ չտպագրվի այսպես կոչված «Հայկական հարցի» արեւմտահայերի վիճակի ու Բեռլինի կոնգ-

¹ «Մշակ», 1880, № 207:

բնսից հետո Թուրքիայում կիրառվող ռեֆորմների վերաբեր-
յալ»¹:

Հիմք ընդունելով այդ կարգադրությունը, Կոմկասի գրա-
քննչական կոմիտեն մշակում է միջոցառումներ, որով ավելի է
խստացնում հայ տպագիր խոսքի նկատմամբ եղած հսկողու-
թյունը: Նա բոլոր հրատարակիչներից (տվյալ դեպքում Թիֆլիսի
հրատարակչական ընկերության նախագահից) պահանջեց, որ բա-
ցի գրավոր այն պարտավորագրից, որ ինքը գիտե գրաքննչական
օրենքները, ոչ մի գիրք չտպագրվի առանց կոմիտեի իմացու-
թյան և պարտավոր է նախապես ներկայացնել տպագրված գրք-
քերի ցանկը, տպաքանակը, արժեքը, ընկերության անդամների
անունն ու աղգանունն ըստ բնակավայրի, ինչպես նաև մանրա-
կրկիտ տեղեկություն ընկերության ֆինանսական վիճակի մա-
սին²: Այսպիսով, ընկերության ողջ գործունեությունը գրվում է
գրաքննչական կոմիտեի հսկողության տակ: Ինքնին արտառոց
փաստ է, որ նույնիսկ ռուս գրողների ստեղծագործությունների
հրապարակումը դուր չէր գալիս ոչ միայն ցարական կառավա-
րությանը, այլև նրա պաշտոնական ռեակցիոն մամուլին, այդ-
թվում՝ Թիֆլիսում գործող «Кавказ» թերթին: Վերջինս սկզբ-
բունքորեն պնդում լինելով ռուս դրակահության թարգմանական
հրատարակությանը, տպագրում է Ստարցևի հոդվածը, որտեղ
հեղինակը գտնում է, որ «հայ ինտելիգենցիան չպետք է մտահոգ-
վի ռուս գրողների ստեղծագործությունների տպագրության հար-
ցով»: Ի պատասխան Ստարցևի, «Մուրճ» ամսագիրը փորձում է
տպագրել Լ-ի «Հայ ինտելիգենցիայի փաստաբանը» հոդվածը,
ուր հեղինակը գրում է. «Ձեռք կարող ասել, թե Տոլստոյը, Սալ-
տիկովը միայն ռուսների համար են գրել: Դրանք պատկանում են
բոլոր ազգերին: Եվ ո՞վ պետք է ծանոթացնի հային Տոլստոյի
հետ, վրացուն՝ Սալտիկովի հետ, Տուրգենևին՝ ադրբեջանցու
հետ:

— Իհարկե, ինտելիգենցիան»³:

Չնայած հոդվածը շարված էր և պատրաստ տպագրության,
սակայն Կոմկասի գրաքննչությունը արգելում է: Այդ փաստը ակ-
նառու վկայությունն է այն բանի, որ հայ հրատարակչական ըն-

¹ ЦГИА, Груз. ССР, ф. 460, оп. 1, д. 562, стр. 7.

² ՀՄՍԶ, ֆ. 30, դ. 8, թ. 34:

³ ЦГИА, Груз. ССР, ф. 480, д. 3101, стр. 45.

Ակերությունները ուստի նշանավոր գրողների ստեղծագործությունները տապադրելու համար հարկադրված են եղել հաղթահարել շատ դժվարություններ: Այլևհին, նման դեպքերում ընկերությունը կրում էր ոչ միայն բարոյական, այլև նյութական վնաս, գրաքննիչը մերժում էր ոչ թե ձեռագիր օրինակը, այլ՝ շարվածքը: Չնայած ընկերությունը դիմում է գրաքննչական կոմիտեին՝ խնդրելով տապադրվելիք գրքերը գրաքննության ենթարկել ձեռագիր վիճակում, սակայն կոմիտեն պատճառաբանում է, թե գոյություն ունեցող կանոնադրության համաձայն պարտավոր են գրքերը ներկայացնել միայն տապադրված¹: Ընկերությունը հարկադրված որոշում է ընդունում «հեղինակներին ու թարգմանիչներին կանխավճար չտալ, մինչև ցենզուրական կոմիտեից թույլտվություն չլինի»²:

Դա բացասաբար է անդրադառնում ընկերությունների գործունեությանը: Ինչպես նկատել է Հովհ. Թումանյանը, դա որոշ առիթ տվեց շատ կարող ուժերի հեռանալու ընկերությունից: Թարգմանիչները երկյուղով են կատարում ընկերության պատվերները, կամ ուղղակի հրաժարվում էին: Այսպես, 1895 թ. ընկերությունը, ելնելով հայ գրականության վարդապետան գործում ուստի հեղափոխական-դեմոկրատների գրականագիտական հողվածների կարևոր նշանակութունից, ծրագրում է մի զբոսը՝ հրատարակել Բելինսկու «Ռոմանտիզմի մասին», «Լերմոնտովի մասին», «Պոեզիայի սեռային տարբերությունները» և Դոբրոլյուբովի «Ե՛րբ է գալու իսկական օրը», «Լուսիի շողը խառնարի թագաւորությունում» հոդվածները: Բելինսկու հոդվածների թարգմանությունը հանձնարարվում է Հովհ. Հովհաննիսյանին, իսկ Դոբրոլյուբովին՝ Երվանդ Շահաղիզին: Սակայն երկու թարգմանիչներն էլ հրաժարվում են: Իր արարքն այսպես է պատճառաբանում Ե. Շահաղիզը՝ ընկերությանը հասցեագրված նամակում. «Պետք է աշխատանք թափվի թարգմանության վրա և վերջիվերջո նշանակված վարձատրության միայն երրորդ մասն ստանամ, այն էլ դեռ գրաքննիչի թույլտվութունից հետո: Բայց ամենայն հավանականությամբ կարելի է ասել, որ գրաքննիչը թույլ չէր տա նրան իբրև մի հեղինակի հոդված, որ երկար ժամանակ բոլորովին արգելված է եղել, որ այժմ էլ դեռ իրա-

¹ ՀՍՍՀ, ՊԿՊԱ, ֆ. 30, գ. 30, ք. 116:

² Տեղեկագիր, 1896, էջ 21:

վումք չկա այահեւ ժողովրդական ընթերցարաններում և դպրոցական մատենադարաններում և, վերջապես, որի մեջ մի հայտնի «սենդկենցիա» է նկատվում: Ուստի դժբախտաբար պետք է քաջաստիճան ալատասխան տամ»¹:

Նույն բախտին է արժանանում նաև Լ. Տոլստոյի «Հարություն» վեպը: 1889 թ. նոր էր սկսվել վեպի տպագրությունը մամուլում: Թարգմանիչ Մխիթարյանը ընկերությանը գրում է. «Ռուսաց շաբաթաթերթում սկսել է տպագրվել Տոլստոյի «Հարություն» վեպը՝ պատկերազարդ: Վեպը սկսվում է շատ հետաքրքիր կերպով և ինչպես երևում է, շոշափվելու են հասարակական կարևոր հարցեր: Նս պատրաստ եմ այն թարգմանել, միայն նախօրոք կցանկանայի իմանալ՝ ընկերությունդ կձեռնարկի՞ր այդ վեպի հրատարակման գործը»:

Ընկերության խմբագրական մասնաժողովի անդամները պատասխանում են. «Նթև գրաքննչական պայմանները թույլ տան, ընկերությունը կարող է հանձն առնել «Հարություն» վեպի թարգմանության տպագրությունը»²:

Ընկերությունը, ինչպես նաև թարգմանիչը «Հարություն» վեպը հրատարակելու համար դիմում են Կովկասի գրաքննչական կոմիտեին, սակայն վերջինս մերժում է: Այդ վեպը հայերեն լույս տեսավ 12 տարի հետո՝ 1911 թ. Տիգրան Հովհաննիսյանի թարգմանությամբ, այն էլ գրաքննչության կողմից 3 մամուլից ավելի կրճատումով:

Շատ հաճախ կողմնակի արգելքներ ստեղծելու նկատառումով գրաքննչական կոմիտեն հրատարակչական ընկերությունից պահանջում էր հեղինակի կամ նրա ժառանգների գրավոր համաձայնությունը: Հայ թարգմանիչները շատ լավ իմանալով կոմիտեի այդ պահանջի անօրինական լինելը (նման օրենք գոյութուն չունի Ռուսաստանում) հանդես են գալիս բողոք-դիմումով: Ահա թե ինչ է գրել Կովկասի գրաքննչական կոմիտեին հրատարակչության վարչության անդամ Ա. Բարխուդարյանը 1892 թ. «Զեդ հայտնի է, — գրել է նա, — որ Ռուսաստանում օտար գրողի գրքի թարգմանության համար հարկավոր չէ հեղինակի թույլտվությունը, որքանով Ռուսաստանը չի մասնակցել գրական այն կոն-

¹ ՀՍՍՀ, ՊԿՊԱ, ֆ. 30, գ. 14, թ. 69:

² ՀՍՍՀ, ՊԿՊԱ, ֆ. 30, գ. 15, թ. 36:

վենցիաներին, որտեղ մշակվել են հեղինակային իրավունքները՝ նա չմասնակցեց նաև 1896 թվականին Բեռլինում կայացած գրական կոնվենցիային, որի համար էլ արտասահմանում տպագրված ամեն մի գիրք կարելի է ազատ թարգմանել Ռուսաստանում, հարկավորություն չունենալով թույլտվություն ստանալ հեղինակից։ Ուրեմն, եթե այդ ընդունված է Ռուսաստանում, ապա ինչո՞ւ նույն կարգը չպետք է լինի մեզ՝ հայերիս համար»¹։

Նվ իրոք, նույն մեթոդով գրաքննիչը փորձում է արգելել օրինակ, Պոտապոկնիցի «Գաղափարական քահանա» վիպակի հրատարակումը այն պարագայում, երբ հեղինակը հայտնել էր ընկերությունը, թե ամենայն ուրախությամբ տալիս է իր համաձայնությունը, և թե ինքը իր կողմից գիրքը նվիրում է սիրելի բարեկամ Պետրոս Աղամյանի հիշատակին²։

Թիֆլիսի հայերեն գրքերի հրատարակչական ընկերությունը՝ ելնելով հայկական դպրոցների վերակառուցման պահանջից, որոշում է հայ մանկավարժներին և աշակերտությանը տալ որակյալ դասագրքեր։ Այդ նպատակով ընկերությունը 1896 թ. հանձնարարում է Հովհ. Հովհաննիսյանին կազմել ժողովածու թեմական և երկդասյա դպրոցների համար։ Հովհաննիսյանը սիրով ընդունում է առաջարկը և կազմում ժողովածուն, որտեղ են գտնում Ռ. Պատկանյանի, Ղ. Աղայանի, Ալ. Մատուրյանի, Պեշկեթաշլյանի, Ալիշանի, Աշուղ Զիվանու, կազմողի և այլ գրողների հայրենասիրական բանաստեղծությունները։ Այդ ժողովածուի մասին իմանում է էջմիածնի հայկոսպոսներից մեկը՝ Հակոբ Յաղջյանը։ Նա իսկույն գրում է գրաքննական կոմիտեին, որ, դատելով ժողովածուի բովանդակությունից, այն չի կարելի տարածել հայկական եկեղեցական դպրոցներում և պահանջում է արգելել գրքի հրատարակումը։ Այդպես էլ արվում է։ Գրաքննիչ Գ. Կարախանովը՝ Հովհաննիսյանի դասընկերը (ի դեպ, դրա հետ բոլոր հույսեր էր կապում բանաստեղծը և Մոսկվայից Ղ. Աղայանին գրած իր նամակում նրա վիճակովն էր հետաքրքրվում³), արգելում է ժողովածուն՝ «համաձայն գրաքննչական կանոնադրության 102 և 104 հոդվածի»⁴։

¹ ЦГИА, Гр.з. ССР, ф. 480, д. 7023, стр. 38.

² ՀՍՍՀ, ԳԿՊԱ, ֆ. 30, դ. 12, թ. 593։

³ ՏԵՄ, Հովհ. Հովհաննիսյան, Երկեր, 1959, էջ 334։

⁴ ЦГИА, Гр.з. ССР, ф. 480, д. 1312, стр. 29.

Մի կողմից՝ այդ երկու գրքերի հետ պատահած միջադեպը, մյուս կողմից՝ պարբերականներին ներկայացրած առանձին բանաստեղծությունների արգելումը, Հովհ. Հովհաննիսյանին բերում են այն համոզման, որ կարելի է տպագրվել «Արարատ» ամսագրում, քանի որ այն, իբրև էջմիածնի պաշտոնական օրգան, չէր ենթարկվում աշխարհիկ գրաքննիչին:

Սակայն էջմիածնին շնորհված այդ «աղատությունը» ևս երկար չտևեց: Ցարական կառավարությունը Կովկասի կառավարչապետ նշանակելով Գուլիցինին, 1897 թ. մայիսի 9-ին նրան է ուղղում հետևյալ դադտնի գրությունը. «Ներքին գործերի մինիստրությունը վերջին ժամանակներս հատուկ ուշադրություն դարձնելով հրատարակություններում նկատվող հայկական ազգային-քաղաքական ագիտացիային, հանձնարարված է խնդրել ձեր գերազանցությանը, որ Կովկասում հայկական ստեղծագործությունների քննության ժամանակ, հատկապես հոգևորականության տնօրինության տակ գտնվող հրատարակությունների, ուշադրության կենտրոնում ունենալ տպագրվող գործի ուղղությունն ու ոգին, հեղինակի նպատակն ու ձգտումները»¹:

Այդ գրության հիման վրա Գուլիցինը կարգադրում է՝ «էջմիածնի բոլոր հրատարակություններն, անգամ կրոնական բնույթի, պետք է քննության ենթարկվեն աշխարհիկ ցենզուրայի կողմից: Ինչ վերաբերում է ներքին գործերի մինիստրության որոշումը տպագրված գրքերին, որոնք ցայժմ գտնվում են տպարանի պահեստներում, ապա նրանց յուրաքանչյուր հարցը պետք է պարզել գրաքննիչուց հետո»:

Սույն կարգադրությունը ճշտությամբ կատարելու նպատակով էջմիածնի նահանգապետը անձամբ ներկայանում է տպարանի կառավարչին, նրանից գրավոր պարտավորություն վերցնում՝ տպագրվող բոլոր գրքերը Կովկասի գրաքննչական կոմիտեին ներկայացնելու մասին, և գրանցում պահեստում եղած գրքերը:

Գուլիցինին ավելի քան լավ է բնութագրել ռուս աստիճանավոր, Թիֆլիսի բանտի դիրեկտորը իր «Կովկասի գրաքննությունը» հոդվածում, որը տպագրվել է 1912 թ. «Исторический вестник» հանդեսի № 6-ում: Ինձ միշտ տարորինակ ու տրամա-

¹ ЦГИА, Груз. ССР, ф. 480, д. 1312, стр. 29.

բանորեն միանգամայն անհասկանալի է թվացել, թե ինչպես կարելի էր մի ամբողջ ընդարձակ երկրի կառավարությունը, որպիսին Կովկասն է, հանձնել մի այդպիսի զարմանալի՝ իրեն նմանը շունեցող սամոդուրի, որպիսին իշխան Գուլիցինն էր։ Ես սամոդուր եմ անվանում նրան միմիայն նրա համար, որովհետև չեմ գտնում ավելի հարմար բառ բնորոշելու այդ կիսահիվանդ մարդուն, որ բոլորովին անհեռուդական էր իր բոլոր գործերի մեջ, որ նաչում էր իր կառավարած երկրի վրա որպես թշնամու բանակի, իսկ տեղացիներին՝ որպես դիմակալություն թշնամիների, որ միշտ ամենուրեք դավադրություն և ապստամբություն են որոնում, որ գրգռվող է, դյուրաբորբոք մինչև գիտակցությունը կորցնելու աստիճան»¹։ Այնուհետև հոգվածագիրը նշում է, որ «սամոդուրի» իշխանության տարիներին (1896—1904) «վրացական և հայկական մամուլը լիակատար ճնշման էպոխա էր ապրում»։

Ավելի ուշ, անվանի հայ հրատարակիչ Տիգրան Նազարյանը անդրադառնալով գուլիցինյան ուժիմի տարիներին, դառնությունը գրել է. «Գրաքննական ստյանը համարյա քար ու երկաթ էր մադում և մեր գլխին։ Բերթել պիսի ստյանի արխիվները, որպեսզի ունեցի լինեն տասնյակ տարիներ մեր քաջած դաժան, համառ պայքարն ու վշտերը»²։

Ստեղծված աննպաստ իրադրությունը չընկճեց Թիֆլիսի հրատարակչական ընկերության կամքը։ Նրա շուրջը համախմբված մտավորականները որոշում են թարգմանել և տաբածել ցարական կառավարության՝ 1836 թ. մարտի 1-ի հայտնի «Положение»-ն, որով հայերին տրվում էր կուլտուրական կյանքի կառավարման, մայրենի լեզվով դպրոցներ ունենալու իրավունք, սակայն գրաքննչական ստյանը արգելում է ինչպես «Положение»-ի, նույնպես և «Զորակոչիկների կանոնադրության» հրատարակությունը, պատճառաբանելով, թե ընկերությունը իրավունք չունի տպագրել պետական պաշտոնական փաստաթղթեր³։

Նույն ժամանակամրջոցում՝ 1895—1896 թվականներին, Թիֆլիսի ընկերությունը ձեռնարկում է ավելի մեծ պլաններ։ Նա որոշում է առանձին գրքերով հրատարակել ևս. Աբովյանի, Ստ.

¹ Արարատ, 1912, № 7—8, էջ 685։

² Տ. Նազարյան, *Խոսք և դործ։ Թիֆլիս, 1914*, էջ 5։

³ ЦГИА, Гр. уз. ССР, ф. 40, оп. 2, д. 1015, стр. 47.

Նաղարյանի, Միք. Նալբանդյանի, Ռ. Պատկանյանի, Հ. Պարոնյանի ստեղծագործությունները: Սակայն, կարողացավ թույլտրվել ստանալ և հրատարակել միայն Հ. Պարոնյանի երկերը: Պետք է նկատել, որ ընկերության նախաձեռնությունն իզուր չանցավ, քանի որ Միք. Նալբանդյանի երկհատորյակը հրատարակվեց 1906 թվականին Ռոստովում, իսկ Ստ. Նաղարյանին՝ քիչ ուշացումով՝ 1911 թվականին, Կովկասի հայոց հրատարակչական ընկերության կողմից:

1895 թվականին Թիֆլիսի ընկերությունը մեծ լուսավորչի «Վերք Հայաստանին» տպագրելու նպատակով դիմում է Կովկասի գրաքննիչին և ստանում բացասական պատասխան: Ընկերությունը բողոքի կարգով դիմում է Պետերբուրգի գլխավոր գրաքննչական կոմիտեին՝ պատճառաբանելով, որ այդ գիրքը տպագրվել է դեռևս 1858 թվականին, գրաքննիչի թույլտվությամբ, իսկ հարկ չկա այժմ արգելելու: Ահա թե ինչ է գրել «Վերք Հայաստանի» մասին գրաքննիչ Դրոգոմիրսկին: «Պետերբուրգի գրաքննչական կոմիտե ներկայացրած գիրքը՝ Խ. Աբովյանի «Վերք Հայաստանին» իր մեջ պարունակում է Թուրքահայաստանում կատարվող բոլոր սարսափելի դեպքերի նկարագրությունը, ըստ որում, նրա հեղինակն ամեն կերպ աշխատում է արթնացնել հայ բնակչության մեջ այնպիսի կրքոտ երեակայություն, որ կրքոտությամբ ատի թուրքական կառավարությանը և հիշեցնում է հայերին իրենց քաղաքական ինքնուրույնության իրավունքի մասին: Ենթևում վերը շարադրվածից, գտնում եմ, որ իրավացի է վարվել Կովկասի գրաքննչական կոմիտեն՝ նշված գրքի արգելման հարցում՝:

1880 թվականին Թիֆլիսի հրատարակչականը որոշում է ընդունում. «Աչքի առաջ ունենալով, որ ներկայումս հայ գրականության մեջ Գամառ-Փաթիպան չուր բանաստեղծությամբ նշանավոր տեղ ունի բռնած և թե նորա գրվածքները ստացած են ժողովրդականություն և նկատի ունենալով, որ նորա գրվածքների հավաքածուն մինչև այժմ ամփոփ չի հրատարակված և հին հրատարակությունք այժմ սպառված են և հազվագյուտ են համարվում, անհրաժեշտ է հիշյալ հեղինակի բանաստեղծությունք հրատարակել, հանդերձ նորա պատկերով»:

¹ ЦГИАЛ, ф. 777, оп. 22, д. 1061, стр. 43.

² ЗУУЗ, ԴԿՊԱ, ֆ. 30, ց. 1, գ. 2, էջ 30:

Ռ. Պատկանյանը կարճ ժամանակամիջոցում ընկերությունն է ներկայացնում ժողովածուն և ընկերությունը բարվոք է համարում գիրք տպագրել Մոսկվայում՝ Գ. Խալաթյանի վերահսկողությամբ: Ժողովածուն լույս է տեսնում և սակայն գրաքննիչը դուրս է թողնում առաջին անգամ տպագրվող ինը բանաստեղծություններից չորսը՝ «Անտենը», «Զոհհերը», «ՅԼ-րդ հողված», «Աստղիկ և փամփուշտ»¹, իսկ «Ամիրան» (որը տպագրվել էր 1880 թ. «Փորձում») հրատարակվում է կրճատ:

Ժողովածուն լույս տեսնելուց հետո Գ. Խալաթյանին հասցեագրված 1881 թ. հունիսի 22-ի նամակում Պատկանյանը դարձանք է հայտնում. «Ինչո՞ւ «Ամիրան» կրճատության էք տակ, ըստ օրինակի «Փորձ» խմբագրության, և ոչ ամբողջապես: Այդպես տպված ամենեկին իմաստ չունի և յուր նպատակին չի հասնում»: Գ. Խալաթյանը, որ առիթ է ունեցել բաղմիցս շփվելու գրաքննչական կոմիտեի հետ, ավելի ուշ՝ 1892 թ., նույն առիթով գրել է. «Մենք դուրան էլ պետք է շնորհակալ լինենք, ինչ որ թույլ են տվել դա էլ շատ մեծ բան է»:

Բանաստեղծի մահից հետո՝ 1897 թ. Թիֆլիսի ընկերությունը կրկին ձեռնարկում է նրա երկերի ժողովածուի հրատարակումը: Այս անգամ գրաքննիչը արգելում է ոչ թե առանձին բանաստեղծություններ, այլև ամբողջ հատորը: «Ժողովածուի հեղինակը՝ Ռ. Պատկանյանը, — գրել է գրաքննիչը, — ողբում է հայ ժողովրդի բաղմադարյան շարշարանքն ու հալածանքը և իր հայրենակիցներին կոչ է անում հայ ժողովրդի թշնամիների դեմ արյունահեղ պայքարի:

Համաձայն գլխավոր գրաքննչական կոմիտեի 1895 թ. մայիսի 8-ի № 2799 շրջաբերականի արգելելը»³:

1905 թվականին «Մուրճ» ամսագիրը, անդրադառնալով Թիֆլիսի հրատարակչականին, գրել է. «Ընկերության ամեն մի ձեռնարկության համար պետք է քաղաքական իշխանությունից թույլտվություն խնդրել՝ շատ անգամ դժվար է լինում իրավունք առնել: Որպեսզի մի ընկերություն ծաղկել կարողանա, անհրաժեշտ է, որ նա գործունեության լիակատար ազատություն ունե-

¹ Ղ. Աղայան, նույն վերնագրով և նմանությամբ 1894 թ. գրում է բանաստեղծություն «Աղբյուրի» համար, սակայն գրաքննիչը արգելում է:

² Ռ. Պատկանյան, երկերի ժողովածու, 1983, հ. 1, էջ 305:

³ ЦГИАЛ, ф. 777, оп. 20, д. 731, стр. 31—33.

Նա: Սևանց այն էլ ստրկութունը ապրում է անտարբեր դրության մեջ, երբ որոշ անհարմարությունների գալիս են գործը դժվարացնելու, այն ժամանակ նրա ակտիվ գործունեությունը ընկերական կյանքի համար ավելի ևս թուլանում է»¹:

Լեւոն ալսպիսի պայմաններում են ապրել ու ստեղծագործել հայ գրողներն ու թարգմանիչները, ալսպիսի հանգամանքներում ձեն աշխատել հայ հրատարակչական ընկերությունները: Թիֆլիսի ընկերության փակման հարցով տեղի նահանգապետը սկսել է դադարել դեռևս 1894 թվականից: Նույն թվականի մարտի 15-ին նա Կովկասի փոխարքային գրել է. «Թիֆլիսի հայերեն գրքերի հրատարակչական ընկերությունը ոչ մի անհրաժեշտություն չի ներկայացնում, մանավանդ, որ հայկական բարեգործական ընկերությունը նույնպես ունի հրատարակման ֆունկցիա, հետևաբար առաջինի գոյությունն անհրաժեշտ չէ: Բացի այդ, ձեր կողմից հաստատված նրա կանոնադրությունում չկան նշված ընկերության փակման պայմանները, ուստի կարելի է փակել»: Հասցեատերը այդ գրության վրա մակագրել է. «Հիմնավորել փաստերով՝ տալ հրատարակած վտանգավոր գրքերի ցուցակը, անոտացիան և այլն»²:

Նահանգապետը չէր կարող կատարել և չկատարեց փոխարքայի պահանջը, որովհետև գրաքննության նոր պահանջի համաձայն (1893 թվականից) դիրքը նախապես քննության էր ենթարկվում ձեռագիր վիճակում և միայն թույլտվություն ստանալուց հետո էր հանձնվում տպագրության: Ուրեմն, ընկերությունը, եթե նույնիսկ կամենար, չէր կարող ոչ մի «վտանգավոր» դիրք հրատարակել:

Համարյա նույն բովանդակությամբ մի այլ փաստաթուղթ մենք հայտնաբերեցինք Լենինգրադում, որից պարզվում է, որ 1894 թ. ընկերության փակման հարցով շահագրգռված է եղել նաև գլխավոր գրաքննչական կոմիտեն³: Չնայած ընկերության գործունեության մեջ ոչինչ չհայտնաբերեցին հակապետական, բայց և այնպես փակեցին:

«Ինչո՞ւ փակեցին:— Հարցնում է Ստ. Մալխասյանը,— մեր-դիկին հարցնում են, թե ինչու ևս մոռնում: Խեղադարության մրրի-

¹ «Մուրճ», 1895, № 10, էջ 36:

² ЦГИА, Гр. у. ССР, ф. 480, д. 179, стр. 43.

³ ЦГИАЛ, ф. 776, оп. 20, д. 1419, стр. 18.

կը, կյանքի ընթացքը կանգնեցնելու մի խողական միտք մռնչում է տարիների ընթացքում ամբողջ լայնածավալ մուսաստանում, նրա կատաղի հուզվը շնչեց և կովկասում, և նրա սասանող թափից տապալվեցին շատ հիմնարկություններ՝ ինչպես մեր, այնպես կովկասում ապրող ուրիշ ազգերի մեջ:

...Մենք մեզ զգացինք որբացած, մի սիրելի անձի դագաղի առաջ կանգնած, մենք կատարյալ սքավոր էինք»¹:

Ընկերության փակումը ճնշող ազդեցություն ունեցավ նաև հայ պարբերականների վրա: Նրանք ցավով տապադրեցին հետևյալ հայտարարութիւնը. «Լսելով ներքին գործերի մինիստրի գրութիւնը 1900 թ. մայիսի 30-ի № 1270-ը Թիֆլիսի հայերեն գրքերի հրատարակչական ընկերության փակվելու մասին մինիստրների կոմիտեի կարծիք հայտնեց այս առաջարկութիւնը հաստատել:

Ինչպես պարզվում է կովկասի փոխարքայի 1900 թվականի օգոստոսի 25-ի գրութիւնից՝ հասցեագրված Թիֆլիսի քաղաքագլխին, ներքին գործերի մինիստրը հայ հրատարակչական ընկերության փակման համար հիմք է ընդունել գեներալ Գուլիցինի ղեկուցագիրը՝ «Ընկերության վտանգավոր գործունեության մասին»²:

Ընկերության փակվելու կապակցութեամբ վարչութիւնը որոշում է պահեստում եղած գրքերը վաճառել և գոյացած գումարը որպէս նպաստ՝ տալ Երեւանի թեմական դպրոցներին: Գրաքննչական կոմիտեն արգելում է գրքերի վաճառքը: Ընկերութիւնը, հարկադրված, գրքերն ուղարկում է Երեւան, որպէս նմեր տեղի հայկական դպրոցներին: Գրաքննչական կոմիտեն այդ մասին տեղեկանալով հատուկ գրութեամբ պահանջում է Երեւանի ոստիկանապետից ստուգել ստացած գրքերը, կազմել ցուցակ, իսկ Ռ. Պատկանյանի «Բանաստեղծութիւնները», Շերենցի «Վանա սաղը», Գարեգին Սարկավագի «Սասնա ծռերը», Սևկյանի «Խան Միրանը» և Ղազարյանի «Խոն-խուրը» գրքերը ուղարկել կոմիտեի տնօրինութեան տակ: Երեւանի ոստիկանապետը հայտնում է, որ նշված գրքերից ոչ մի օրինակ չկար ստացվածների մեջ: Ինչպէս տեսնում ենք, գրաքննչական կոմիտեն հիմնականում

¹ «Մշակ», 1910, № 33:

² ЦГИА, Гр. уз. ССР, ф. 17, оп. 1, л. 4388, стр. 19.

հետապնդել և հետ է պահանջել այն գրքերը, որոնք ժամանակին իր թույլտվությամբ տպագրվել են կրճատումներով:

Ջնայած կարճ կյանք ունեցան և ազատ չկարողացան գործել, բայց հրատարակչական ընկերություններն իրենց գործունեությամբ հայ կյանքում թողեցին լավագույն ավանդներ, և հայ մտավորականները ցանկացան նոր ընկերություններ հիմնելու միջոցով շարունակել սկսած գործը: Այսպես, Ավ. Արասխանյանցը և Երվանդ Լալայանը 1902 թվականին որոշեցին կազմակերպել «Մամուլի հրատարակչական ընկերություն»: Հասարակայնությանը նոր ընկերության սկզբունքներին ծանոթացնելու նպատակներով հրատարակիչները բաղմացրին իրենց համաձայնագիրն ու տարածեցին: Կովկասի փոխարքան, ծանոթանալով այդ համաձայնագրին, գրաքննչական կոմիտեից պահանջում է բացատրագիր, թե ինչի հիման վրա է թույլատրված նոր ընկերության գործունեությունը¹:

Կոմիտեն 1902 թվականի դեկտեմբերի 16-ի պատասխանագրությամբ հայտնում է, որ նոր ընկերության բացման մասին տեղեկություն չի ունեցել և իմանալուց հետո կասեցվել է այն, իսկ տպարանատեր Ռոտինյանցը տուգանվել է՝ իր տպարանում առանց կոմիտեի թույլտվության 500 օրինակ համաձայնագիր տպագրելու համար²:

Թիֆլիսի և Կովկասի հայերեն գրքերի հրատարակչական ընկերությունների գործունեության ուսումնասիրությունը բերում է հետևյալ եզրակացության.


Գործելով գրական-մշակութային կյանքի և ազգային-ազատագրական շարժումների վերելքի շրջանում, նրանք եղան հայ իրականության մեջ առաջադիմական գաղափարների տարածման կազմակերպված օջախներ և խորապես նպաստեցին հայ ժողովրդի հոգևոր զարգացմանը և իրենց նշանակությամբ միանգամայն արժանի տեղ ունեցան ազգային կուլտուրայի պատմության մեջ:

¹ ЦГИА, Грыз. ССР, ф. 480, оп. 2, д. 189, стр. 5, 6, 8.

² Նույն տեղը, էջ 154:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	3
Արևելահայ հրատարակչական ընկերությունները . . .	16
Թիֆլիսի և Կովկասի հրատարակչական ընկերությունները	25
Գեղարվեստական գրականություն	48
Բանաստեղծություն և սլաոմագրություն	107
Թարգմանական գրականություն	125
Հրատարակչական ընկերությունները և ցարական ցրաքննությունը	178



Վլադիմիր Միխայիլի Վարդանյան
ՀԱՅ ԳՐԱՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Владимир Михайлович Варданян
ИЗ ИСТОРИИ АРМЯНСКОГО КНИГОИЗДАНИЯ

(На армянском языке)
Ереван «Айтастан» 1987

Հրատ. խմբագիր՝ Ռ. Պ. Նազարյան
Նկարիչ՝ Լ. Մանասեթյան
Գեղ. խմբագիր՝ Դ. Պապոյան
Տեխն. խմբագիր՝ Հ. Յ. Վարդանյան
Վերստուգող սրբագրիչ՝ Լ. Ս. Դևոբյան

ИБ 5208

Հանձնված է շարվածքի 3.03.1987 թ.: Ստորագրված է տպագր. 2.06.1987 թ.:
ՎՋ 01130: Ֆորմատ՝ 84×108¹/₃₂: Թուղթ տպագրական № 1: Տառատեսակ՝
«Գրքի սովորական»: Տպագրություն՝ բարձր, 10,08 պայմ. տպագր. մամ.,
10,96 հրատ. մամ.: Տպաքանակ՝ 2000: Պատվեր՝ 187: Գինը՝ 2 ռ.:

«Հայաստան» հրատարակչություն, Երևան—9, Ա. Իսահակյան 28:

Издательство «Айастан», Ереван-9, ул. А. Исаакяна, 28.

ՀՄՄՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պե-
տական կոմիտեի № 6 տպարան, Երևան, Թումանյան 23/1

Типография № 6 Госкомитета по делам издательств,
полиграфии и книжной торговли Арм ССР.

Ереван, ул. Туманяна, 23/1.







A $\frac{11}{75419}$